



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2782

g(47.925)

p-54

2012





9(47-925)

19 AUG 2006

ՀԱՄԱՌՈՏ

5448

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՇԱՐԱԳՐԵՑ

ՀԱՄԱՁԱՍՊ ԹԵՐԶԻՄԱՆԵԱՆ
ԱԽԻԹԱՐԵԱՆՑ

Handwritten signature

ԵՐՐՈՐ ԶԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԸ

1860

1004
2691

7

1009 31A 97

115400-42



Handwritten characters, possibly in a non-Latin script, appearing as dark ink strokes.

Handwritten symbol or character, possibly a stylized '4' or a similar mark.

~~14576-58~~

Handwritten text at the top of the page, including the number 14.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն

Յայտնի ու ամենէն ծանուցեալ ճշմարտութիւն մըն է, թէ գործք մը ամենուն միօրինակ հաճոյ ընելը՝ եթէ անկարելի ալ չըսենք, բայց ամենազօտար բան է: Աս զօտարութիւնս տարակոյս չկայ որ անհամեմատ կ'աւելնայ զրբի մը համար, մանաւանդ այնպիսի զրբի մը որ յատուկ ազգային ըլլալով, ինչպէս է ազգային պատմութիւն մը, բոլոր ազգը իրաւունք ունի քննելու, և առաւել որ դասատեար ալ ըլլալով ինքը պիտի ըլլայ բոլոր ազգին տղոցը ազգայնութեան հողին տպաւորողը. և չէ թէ միայն ընդհանուր ազգին՝ հասա իւրաքանչիւր գործոց ու ինչ և իցէ կերպով ա-

նուանի եզող անհատիցն ալ արժանաւոր
դադափարը տուող ու յարգը ճանչցնող :
Աս պատճառաւ որչափ ջանք և փոյթ ըլլայ
ասանկ գրքի մը կատարելութեանը համար
դեռ քիչ է : Եւ մենք որ այս պղտիկ բայց
կարևոր գործքիս ձեռք դարկինք , չզիտեմ
թէ կրցանք արդեօք այն պահանջուած կա-
տարելութիւնը տալ այս փոքրիկ դասա-
տետրիս : Չանացինք իրաւ եւելցնել ըստ
տեղւոյն յարմար ու հարկաւոր խորհրդա-
ծութիւններ , առանց որոնց անօգուտ ու
նիւթական ուսմունք մը կ'ըլլար պատմու-
թիւնը տղայոց : Չանացինք նմանապէս
յայտնել ու ատելի ընել՝ չարաց , որ ամէն
ազգի մէջ չեն պակսիր , փնասակար պակա-
սութիւններն ու ախտերը առանց անիրա-
ւելու և ընդհանուր ազգին տալու այն մաս-
նաւորաց պակասութիւնները : Չանացինք
վերջապէս փոխանակ ընդունայն պար-
ժանքներու՝ յայտնել այն ամենայն ազգայ-
ին կատարելութիւնները ու գեղեցիկ յատ-
կութիւնները որ ազգի մը ճշմարիտ պար-
ժանք են և որոնցմով սիրելի ու յարգոյ կ'ըլ-
լայ պատմութիւնը ազգայնոց ու օտարաց :
Եւ որովհետեւ մեր փախճանն էր տղայոց
և ժողովրդեան առ հասարակ դիրքնթեո-
նլի ընել ազգային պատմութիւնը , աւելորդ
սեպեցինք ծանրաբեռնել զանի երկրորդա-

կան պարագաներով մե այնպիսի մասնա-
ւոր ու առանձնական դէպքերով, որ ազ-
գային պատմութեան հետ անմիջապէս վե-
րաբերութիւն մը չունին :

Յախտաւոր կը համարինք զմեզ՝ թէ որ
կրցանք քիչ շատ դիտած վախճաններնուս
հասնելով օգտակար ընել զասիկայ եթէ
տղայոց և եթէ վարժապետաց, որոնց 'ի
դիւրութիւն ընծայելով, կը յուսանք որ թե-
րութեանցն ալ ներողամիտ կ'ըլլան :

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 10 horizontal lines.

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Հ Ա Յ Ո Ց





ԻՇԽԱՆՈՒԹԻՒՒՆ

Հ Ա Յ Կ Ա Զ Ա Ն Ց

Գ Ա Ս Ա .

Հայկեն սկսեալ ինչոռան Արամ :

Հ . Մեր Հայոց ազգը սուսկից առաջ եկած է .
Պ . Նոյ նահապետին Յաբեթ որդին :

Հ . Ո՛վ եղաւ մեր ազգին նահապետը .
Պ . Հայկ , որ էր թորգոմայ որդին . թորգոմն
ալ Գամերայ , Գամերն ալ Յաբեթայ :

Հ . Ի՞նչպէս մեր ազգին նահապետ եղաւ Հայկ .
Պ . Իր ազգատոհմին վրայ տէր և գլուխ ըլլալով ,
և զանոնք իր անուամբը Հայք անուանելով . որոնց
մէ մենք ալ ինչպէս ենք :

Հ . Ե՞րբ սկսաւ մեր ազգին տէրութիւնը .
Պ . Անմիջապէս ջրհեղեղէն քիչ մը ետքը :

Հ. Ի՞նչ կերպով սկսաւ Հայկ իր տէրութիւնը .

Պ. Երբոր Բաբելոն գացող և աշտարակը շինել ուզող մարդկանց լեզուն խառնուեցաւ, և ազգերը պիտի ցրուէին, Բէլ ուզեց ամենուն վրայ բռնութեամբ իշխել ու Աստուծոյ պէս պաշտուիլ . Հայկ ալ աս բանիս չգիմացաւ, ու Հայաստան դարձաւ իր իրեք հարիւր կարիճներովը, որ էին իրեն որդիքը, թոռուները, և անոնց ընկերացած հաւատարիմ մարդիկներ (2346) :

Հ. Բէլ երբոր աս բանս լսեց ի՞նչ ըրաւ .

Պ. Հագարտութեամբ պատգամ խաւրեց Հայկայ որ գայ հնազանդի իրեն, թէ չէ անով տեղով զինքը թրէ կ'անցընէ :

Հ. Հայկ աս բաներս լսելով հնազանդեցաւ Բելայ .

Պ. Չէ . հապա իրեն կարիճ տղաքներովը, ծառաներովը և ուրիշ հաւատարիմ մարդիկներով Բելայ անհամար բազմութեանը դէմ ելաւ, որոնք եկեր էին իր վրայ :

Հ. Ի՞նչպէս պատերազմեցան Հայկն ու Բելը .

Պ. Նախ Հայկ յաղթեց Բելայ զօրքերուն . վերջը երբոր Բէլ ետ կը քաշուէր քիչ զօրքով, Հայկ մեկէն վրան վազեց զարկաւ նետովը, ու հոն ըսպաննած փռեց ամբարտաւան հսկան, Աստուծոյ և մարդկութեան թշնամին :

Հ. Հայկ Բելայ մարմինը ի՞նչ ըրաւ .

Պ. Չմտնել տալով տարաւ Հայաստանի հարք ըսուած երկիրը, ու բլրի մը վրայ թաղեց, ուզելով որ ամէնքն ալ տեսնեն և իմանան ամբարտաւան մարդուն վիճակը . և իրեն ալ աշխարհքիս ըրած բարեբը :

Տ. Հայկ Բէլը սպաննելէն ետքը ի՞նչ ըրաւ. ու որչափ ապրեցաւ .

Պ. Ուզելով խնայրնել իր արդարասէր և անաշխարհակալ ոգին՝ թշնամին հալածելէն ետքը դարձաւ Հայաստան եկաւ. քաղաքներ շինեց ու բարեկարգութիւններ ըրաւ ու 400 տարիի չափ ապրելէն ետքը խաղաղութեամբ մեռաւ (2265) :

Տ. Ի՞նչ բնութիւն և ի՞նչ ձիրքեր ունէր Հայկ .

Պ. Մարմնով կարիճ մարդ էր, մեծահասակ եւ գեղեցիկ, գոուզ մազերով, կարմիր երեսով, վառ վառն աչքերով. ձեռքով ալ շատ ճարպիկ ու արագաշարժ . խսկ մտօք՝ բարակամիտ, հնարագէտ, աշխարհաշէն և անվախ սրտով :

Տ. Հայկայ ատեն ի՞նչ մասնաւոր բան պատահեցաւ Հայաստանի մէջ .

Պ. Նոյ 950 տարուան վախճանեցաւ, ու թաղուեցաւ ինչպէս կ'ըսուի՝ Նսպա լերան վրայ . նոյնպէս Նոյեմզարա՝ Նոյայ կինն ալ թաղուեցաւ Մարանդ գաւառը :

Տ. Հայկայ տեղը ո՞վ անցաւ .

Պ. Արմենակ Հայկայ քաջ և հայրենասէր անդրանիկ որդին :

Տ. Արմենակ ի՞նչ գործ ըրաւ իր հայրենասիրութեանը վայել .

Պ. Իր խոտ եւ Մանաւազ կղբայրները Հարք գաւառը թողուց ու ինքը արևելեան կողմերը դնաց, հոն տեղուանքն ալ շէնցուց :

Տ. Արմենակայ մէկալ եղբարքը ի՞նչ եղան .

Պ. Երկու եղբարքն ալ անանկ բազմացան, որ հազարաւոր տարի ցեղերնին դիմացաւ իրենց ա-

նունովը խորխուռունիք ու Մանաւաղեանք ըսուելով: Նոյնպէս Բազ Արմենակայ որդւոյն ցեղն ալ իր անունովը Բզնունիք ըսուեցաւ:

Հ. Արմենակայ ո՞վ յաջորդեց .

Պ. Արամայիս իր որդին, որ Արմաւիր քաղաքը շինեց Երասխ գետին քով (1975):

Հ. Ո՞վ էր Շարա .

Պ. Շարա Արամայիսի որդւոց մէկն է որ շատ կերուխում կը սիրէր, հայրն ալ զինքը բարեբեր երկիր մը խաւրեց որ իր անունովը Շիրակ կոչուեցաւ:

Հ. Արամայիսին տեղը ո՞վ անցաւ .

Պ. Ամասիա իրեն որդին, որ իր անունովը՝ Մասիա անուանեց Արարատ լեռը:

Հ. Ամասիայի որդւոց վրայ ի՞նչ գիտելիք կայ .

Պ. Ամասիա իրեք տղայ ունէր Փառոս, Յուլակ եւ Գեղամ. առջի երկուքին համար մէյմէկ քաղաք շինեց որ անոնց անունովը Փառախոտ եւ Յուլակերա ըսուեցան. իսկ երրորդը Գեղամ իր տեղը յաջորդեց:

Հ. Գեղամայ վրայ ի՞նչ կը պատմուի .

Պ. Քանի մը տարի իշխելէն ետքը՝ յանձնեց տէրութիւնը իր հարմա տղուն, ու ինքը Սեան ծովին եզերքները բնակելով ան տեղը իր անունովը կոչեց Գեղարքունիք ու ծովն ալ Գեղամայ ծով:

Հ. Սիսակ Գեղամայ որդւոյն վրայ ի՞նչ գիտելիք կայ .

Պ. Սիսակ իր քաղցր նայուածքին եւ խօսուած

քին համար Ազու ըսուեցաւ . ասոր ընտկած ան-
զին անունը Սիսական ըսուեցաւ կամ Սիւնիք :

Հ . Ո՞վ էր Հարսնա և իր վրայ ի՞նչ մասնաւոր
գործք մը կը պատմուի .

Պ . Գեղամաց որդին էր . ասոր ասեմը սկսան
Թշնամիք հայաստանի վրայ վազել ու տիրել , ու
րոնք որ հայկայ և իրեն որդւոցը քաջութեան
գործքերը ըսելով առաջ վախցեր ու Թուլցեր էին .
բայց ասեն անցնելով մոռցուեր էր աս իրաւացի
վախը ինչուան որ Արամ նորէն վախ ձգեց անոնց
սիրտը :

Գ Ա Ս Բ .

Արամէն ինչուան Պարոյր :

Հ . Ո՞վ էր Արամ .

Պ . Հարսնայի որդին եւ յաջորդը :

Հ . Արամին առջի Թշնամին ո՞վ եղաւ .

Պ . Կիւքար Մարաց իշխանը , որուն գէմ երթա-
լով Արամ յիսուն հազար զօրքով , յաղթեց ու
զինքը բռնեց աշտարակի մը ծայրը գամեց (1828) :

Հ . Հայոց երկրորդ Թշնամին ո՞վ էր .

Պ . Բարշամ Բաբեղացւոյ իշխանը որ նոյնպէս
յաղթուելով սպաննուեցաւ Արամէն :

Հ . Հապա երրորդ Թշնամին ո՞վ էր .

Պ . Պայտակա Վապագովիոյ իշխանը որ յաղ-
թուելով փախաւ Միջերկրական ծովուն կղզիներ
րէն մեկը :

Հ. Արամ Պայապիսին երկիրները ի՞նչ ըրաւ .

Պ. Բաղրին ալ տիրելով Մշակ անունով մէկը իշխան գրաւ հոն, ու պատուիրեց որ ամէնքն ալ հայերէն խօսին . որով ան տեղին անունն ալ Փոքր հայք ըսուեցաւ, Մշակայ բնակած տեղն ալ Մա-
ժակ, որ է Պայսերի քաղաքը :

Հ. Արամայ վրայ ուրիշ ի՞նչ գիտնալու բան կայ .

Պ. Կինոս Ասորեստանցւոյ Թագաւորէն մար-
գարաազարդ պատկ մը ընդունեցաւ, եւ անոր եր-
կրորդը կոչուեցաւ :

Հ. Ի՞նչ պատճառաւ Կինոս տա Թագը խաւրեց .

Պ. Վասն զի Արամայ քաջութիւններէն տկնա-
ծելով ուզեց անոր բարեկամութիւնը ստանալ :

Հ. Արամ որչափ ատեն իշխեց ու երբ մեռաւ .

Պ. Յիսուներութը տարի իշխեց ու մեռնելով ի-
րեն յաջորդ Թողուց Արայ որդին :

Հ. Արայ ի՞նչու համար պատերազմի ելաւ Հա-
միքամայ դէմ :

Պ. Արայ շատ գեղեցիկ ըլլալով Համիքամ Ա-
սորեստանցւոյ ախաամոլ Թագուհին ուզեց հետը
կարգուիլ . բայց Արայ յանձն չառաւ ու պատե-
րազմի ելաւ :

Հ. Պատերազմին վերջը ի՞նչպէս եղաւ .

Պ. Արայ քաջութեամբ կուռեցաւ, բայց պա-
տերազմին տաքցած ատենը զարնուեցաւ ու մե-
ռաւ . Թէպէտ և Համիքամ ապապրեր էր իր զօրա-
ջը որ զինքը չսպաննեն ողջ բռնեն (1769) :

Հ. Համիքամ ի՞նչ ըրաւ հայաստանի մէջ .

Պ. Հաւնելով մեր աշխարհքին դրիցը և օգին դեղեցիութեանը, ամուր քաղաք մը և բերդ մը շինել տուաւ Շամիրամակերտ անունով որ Վան ալ կըսուի. և ինչուան հիմայ կեցած են ան ատենուան շինած պատերը :

Հ. Արայի ո՞վ յաջորդեց .

Պ. Շամիրամ Հայոց վրայ իշխան դրաւ Արայի Կարգոս որդին :

Հ. Շամիրամ ու Կարգոս ինչպէս մեռան .

Պ. Շամիրամ ու Կարգոս 'Աինուաայ վրայ պատերազմի ելան' որ Շամիրամին որդին էր, ու իրմէ ապստամբած քայց յաղթուելով երկուքն ալ մեռան :

Հ. Կարգոսին ո՞վ յաջորդեց .

Պ. Անուշաւան իր որդին, որ թէպէտ և գերի ընկած էր 'Աինուաայ ձեռքը, քայց սիրելի ըլլալով անոր, ազատեցաւ գերութենէն, ու եկաւ տիրեց իր հայրենեացը . երկար ատեն իշխեց շատ խելքով ու մեռաւ :

Հ. Ո՞վ էր Պարեա .

Պ. Հայկայ մէկալ որդւոց ցեղերէն իջած կրարի՞մ մըն էր որ Անուշաւանին տեղը նահապեա եղաւ . որովհետեւ Անուշաւան որդի չունէր (1662) :

Հ. Պարեաին վրայ ինչ գիտելք կայ, ու իրեն ո՞վ յաջորդեց .

Պ. Ասիկայ շատ քաջութիւններ ըրած ունի . իրեն յաջորդեց Արբակ :

Հ. Արբակին ո՞վ յաջորդեց .

Պ. Զաւան : Զաւանին յաջորդեց Փաննակ : Փաննակին Սուր :

Հ. Սուր նահապետին վրայ ինչ գիտելիք կայ .

Պ. Սուր որ իրեն քաջութեանցը համար առ առ նունը ժառանգեց, շատ յաղթութիւններ ըրաւ ընդդէմ թշնամեաց : Ասոր ատենը Քանանացիք Իսրայելացիներէն հալածուելով ոմանք Հայաստան եկան, որոնցմէ ձեացաւ Քանանիդեանց կամ Գընթունեաց նախարարութիւնը :

Հ. Սուրայ սիվ յաջորդեց .

Պ. Եսակ ետև յաջորդեցին Հաւանակ և Աւարտակ, որոնց վրայ պատմութիւն չունինք :

Հ. Հայկակ Ա. նահապետը ինչ քաջութեան գործք ըրած ունի .

Պ. Աթինդէս Ասորոց թագաւորին յաղթեց . բայց անոր Բելքոսս յաջորդէն յաղթուեցաւ ու մեռաւ (1369) :

Հ. Որսնք յաջորդեցին Հայկակէն ետև .

Պ. Երկու հարիւր տարուան չափ միջոցի մէջ իշխեցին Հայոց վրայ ասոնք . Ամբակ Ա, Առնակ, Շաւարշ Ա, Նորայր, Աստամ, Կար, Գոռակ, Հրանտ, Ընձակ, Գղակ և Հօրոյ որոնց վրայ գիտելիք մը չկայ :

Հ. Չարմայրի վրայ ինչ կը պատմուի .

Պ. Տրոյացոց օգնութեան գնաց ու շատ քաջութիւններ ըրաւ . բայց Աքիլէսի հետ պատերազմելով մեռաւ (1182) :

Հ. Չարմայրէն ինչուան Հսկայորդի սրչափ նահապետներ նստան .

Պ. Գրեթէ չորս հարիւր տարուան միջոցի մէջ ասանի չափ նահապետներ նստան, որոնց վրայ տեղեկութիւն մը չունինք . և են ասոնք . Շա-

ւարչ Բ, Պերճ Ա, Արբուն, Պերճ Բ, Բազուկ,
Հոյ, Յուսակ, Ամբակ Բ, Փառնաւազ Ա, Փառ-
նակ Բ, ու Հսկայորդի:

ԳԱՍ Գ.

Պարոյրէն ինչուան Հայկազանց քաղաւորաւ-
րեան կործանելը . և կուսակալաց իշխաւ-
տարիւնը:

Հ. Ա զ էր Պարոյր .

Պ. Հսկայորդւոյն որդին էր, որ Հայոց առաջին
Թագաւորը եղաւ:

Հ. Ի՞նչ պատճառաւ Թագաւոր պսակուեցաւ .

Պ. Սարգանարազ Ատրուոց Թագաւորին գեմ-
օցնու թիւն գնաց Վարբակէս իշխանին ու միաբան
յազթեցին անոր . ու ինքը Վարբակէսէն Թագ ա-
ւաւ (746):

Հ. Պարոյրին ասենը ուրիշ ի՞նչ գիտնալու ար-
ժանի բան եղաւ .

Պ. Ազրամէլէք և Սանասար Ատրեստանցոց
Թագաւորին տղաքը Հայաստան փախան, որոնք
վերջէն մեծամեծ նախարարութիւններ եղան, այս-
ինքն Արծրունիք և Սանասուք կամ Սանցիք:

Հ. Պարոյրէն ետև որո՞նք Թագաւորեցին .

Պ. Հարիւր տարուան չափ միջոցի մէջ Հինգ
Թագաւոր նստեցան, որոնց վրայ յիշատակութիւն
մը չունինք . ասոնք են Հրաչեայ, Փառնաւազ Բ,
Պաճոյճ, Կոսնակ, Փաւոս:

14546-58
20691

Հ. Հայկակ Բին վրայ ինչ գիտելիք կայ.

Պ. Նաբուգոդոնոսորին հետ Երուսաղեմի վրայ գնաց, ու հանկէ Հայաստան բերաւ Շամբատ աւանով իշխան մը, ուսկից սերեցաւ Բագրատունեաց ցեղը Բագարատ երևելի իշխանին անունէն աննելով (605):

Հ. Ո՞վ յաջորդեց Հայկակին.

Պ. Իր որդին Երուանդ առաջին որ չորս տարի միայն թագաւորելով մեռաւ, անոր համար Սահաւակեաց ըսուեցաւ (565):

Հ. Ո՞վ է Տիգրան Ա.

Պ. Երուանդայ տղան ու Հայկազանց ամենէն երևելի թագաւորը:

Հ. Ինչո՞ւ համար Վճղահակ Մարաց թագաւորը Տիգրանայ հետ թշնամացաւ.

Պ. Վասն զի Տիգրան բարեկամութիւն ըրաւ Վերոսի հետ՝ որ իր թշնամին էր:

Հ. Վճղահակ ինչ վարպետութիւն բանեցուց Տիգրանը մեռցնելու.

Պ. Տիգրանին Տիգրանուհի քոյրը իրեն կին առաւ, ու անոր ձեռքովը ուղեցնականնել զՏիգրան:

Հ. Վճղահակայ չարութեան խորհուրդը առաջ գնաց:

Պ. Չէ. վասն զի Տիգրանուհին Վճղահակայ խորհուրդը ծածուկ խնայուց իր եղբորը:

Հ. Ետով Տիգրանուհին մտաւ մը եղան.

Պ. Չէ. որովհետեւ Տիգրան պատերազմը ուշացուց որ քոյրը ասկէն դաննելով փախչի Վճղահակին քովէն:

Հ. Պատերազմը ինչպէս եղաւ .

Պ. Երբօր Կիւրոս իր զօրքովը եկաւ հասաւ, Տիգրան անոր հետ մէկտեղ Աժդահակայ գէմ ելաւ . պատերազմին էն տաք միջոցը Տիգրան քալութեամբ սպաննեց զԱժդահակ, որով պատերազմը լմնցաւ :

Հ. Տիգրան պատերազմէն դառնալէն ետքը ինչ ըրաւ .

Պ. Աժդահակին կինն, ընտանիքը և ուրիշ գերիները հայաստանի մէջ բնակեցուց, ուսկից սերեցան Ախաղագղունք կամ Մուրացան ըսուած ցեղը : Իսկ Տիգրանուհի քոյրը Տիգրանակերտի կողմերը բնակեցուց, ուսկից որ սերեցաւ Ոստան կամ Ոստանիկ ըսուած ազատ ցեղը :

Հ. Տիգրան ինչպէս թագաւորութիւն քշեց .

Պ. Շատ խելքով, շատ շինութիւններ ու բարեկարգութիւններ ըրաւ . և քառասունուհինգ տարի թագաւորելէն ետեւ մեռաւ . իրեն տեղը յաջորդեց Ահազան իր որդին :

Հ. Ահազանի վրայ ինչ բան կը պատմուի .

Պ. Խիստ քաջ ըլլալուն համար՝ վրան շատ առասպելներ գրուցեցին . և Արացիք զինքը կը պաշտէին : Ասոր ցեղը Ահազանիք ըսուեցաւ (320) :

Հ. Ահազանի ո՞վ յաջորդեց .

Պ. Որդւոց որդի յաջորդեցին Առաւան, Կերսես, Զարես, Արգամ, Բայգամ, Աան և Աահէ (351) :

Հ. Ինչո՞ւ համար Աղեքսանդր Աահէին վրայ եկաւ .

Պ. Աան զի Դարես Պարսից թագաւորին օգնութիւն խաւրեր էր Աահէ :

Հ. Ի՞նչպէս մեռաւ Վահէ .

Պ. Աղէքսանդրի դէմ պատերազմելով շատ քաջութիւններ ընելէն ետքը՝ պատերազմին մէջ ընկաւ մեռաւ, ու ասով Հայկազանց Թագաւորութիւնը վերջացաւ 1800 տարի դիմանալէն ետքը (328) :

Հ. Վահէէն վերջը Հայաստանի ո՞վ կ'իշխէր .

Պ. Մակեդոնացւոց կամ Ասորոց Թագաւորները մէկ իշխան մը կը խաւրէին որ Հայաստանը կառավարէ . աս իշխանները Վուսահալք կ'ըսուին :

Հ. Ո՞վ եղաւ առջի կուսակալը .

Պ. Միհրան, որն որ Աղէքսանդրէն խրկուեցաւ ու հինգ տարի կենալէն ետքը ետ կանչուեցաւ (319) :

Հ. Միհրանայ տեղ ո՞վ եղաւ կուսակալ .

Պ. Նէոպաղոսէոս, որ Հայոց վրայ գէշ աչքով կը նայէր, ան պատճառաւ շատ նեղութիւններ առաւ Հայոց :

Հ. Ո՞վ ազատեց զիրենք աս նեղութենէն .

Պ. Ազուարդ մեր քաջ նախարարը, որ Նէոպաղոսէոսը փախուց Հայաստանէն :

Հ. Ազուարդ մինակ իշխեց Հայոց վրայ .

Պ. Չէ . Վասն զի Եւմենէս մակեդոնացի իշխանին միջնորդութեամբը նորէն եկաւ Նէոպաղոսէոս ու իբրև Ազուարդին երկրորդը կը կենար (317) :

Հ. Ազուարդ որչափ ատեն իշխեց .

Պ. Ուրիշ շատ քաջութիւններ ընելէն ետքը Հայաստանուեցաւ իր իշխանութեանը մէջ, ու երեսուէն և երեք տարի իշխելէն ետքը մեռաւ :

Հ. Ազուարդին տեղը ո՞վ խաւրուեցաւ կուսակալ .

Պ. Հրանա . ասոր ալ յաջորգեց Արտաւազ ա-
նունով իշխան մը , որ ապստամբելով Սելեկիա-
ցոց ¹ Անտիոքոս Գ . Թագաւորէն՝ ինքնագլուխ
իշխեց :

Հ. Յաջորդեցաւ Արտաւազին ապստամբութիւնը .

Պ. Վախնալով Անտիոքոսէն շատ ընծաներով
խոստացաւ հարկը տալ , ու անով նորէն հուսա-
կալ եղաւ :

Հ. Արտաւազին տեղը ո՞վ գրուեցաւ հուսակալ :

Պ. Արտաշիաս և Չահրաս հայ իշխանները :

Հ. Չահրաս և Արտաշիաս ինչուան վերջը հա-
ւատարիմ մնացին Սելեկիացոց .

Պ. Չէ . հապա հռովմայեցոց օգնութեամբը
ապստամբեցան ու երկուքն ալ Թագաւորեցին :
Չահրաս Փոքր Հայոց վրայ , Արտաշիաս ալ մեծ
Հայոց վրայ . ուր որ Անտիոքոս Վարդեգոնացի մեծ
զորապետին խրատովը Արտաշաս քաղաքը չինեց :

Հ. Անտիոքոս Եպիփան երբոր լսեց աս բանս
ինչ քրաւ .

Պ. Արտաշիասին վրայ սրտտերազմի ելլելով բռ-
նութեամբ հնազանդեցուց :

Հ. Արտաշիասէն և Չահրասէն վերջը որո՞նք
իշխեցին Հայոց .

Պ. Ասոնցմէ վերջը քանի մը Թագաւորներ ալ
նստան Հայաստան ինչուան Արշակունեկաց ատե-
նը , բայց սրտամութիւննին շիտթ ըլլալով որոշ
բան մը չիգիտցրելի վրանին : Միայն թէ անոնց
վերջի Թագաւորը եղաւ Մորիելուղիկէս Չահրա-
սին տղան (159) :

¹ Ասորիք՝ Սելեկիացիք ալ բունեցան իրենց առաջին
Թագաւորին Սելեկոսին անուամբը :

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ն Ե Ա Յ

Գ Ա Ս Գ .

Վաղարշակէն սկսեալ ինչո՞ւան Արտաւազդ Ա :

Հ . Ո՞վ էին Արշակունիք .

Պ . Պարթև ըսուած ազգէն էին , որոնցմէ Արշակ անունով կարի՞ճ մը թագաւոր եղաւ իր ազգին . իր թոռը Արշակ ալ շատ զօրաւոր ըլլալով թագաւորութիւնը մեծցուց , Հայաստանին ալ տիրեց . և իր Վաղարշակ եղբայրը հոն թագաւոր դրաւ (149) :

Հ . Վաղարշակ թագաւոր ըլլալէն ետքը ինչ պատերազմ ըրաւ .

Պ . Մորֆիւզիկեսի հետ պատերազմ ընելով զինքը սպաննեց ու անով բոլոր Հայոց տիրեց :

Հ . Վաղարշակ ո՞ւր դրաւ իր աթոռը .

Պ . Մծրին քաղաքը , որ Ասորոց երկրին և Հայաստանին մէջ տեղուանքն է :

Հ . Վաղարշակ Հայերը սիրեց .

Պ . Տեսնելով անոնց քաջութիւնը և տիրասի .

բութիւնն ան աստիճան սիրեց զՀայերը, որ ե-
տե՛կ եղաւ զիսնալ ու իսնանալ այնպիսի պատուա-
կան ազգին պատմութիւնը :

Հ. Ուրեմն Ազղարչակ գտա՞ւ ուզած պատմու-
թիւնները .

Պ. Հայաստանի մէջ չգտնելով, Մարիրաս Կա-
տինա անուանով մէկը խաւրեց Վինուէ, որ երթայ
Հոն գրաստան մէջէն գտնէ Հայոց պատմութիւնը,
ինչպէս որ գտաւ ալ :

Հ. Ազղարչակ ուրիշ ի՞նչ բարեկարգութիւն-
ներ ըրաւ .

Պ. Կախարարաց և արքունեաց մէջ շատ կար-
գեր գնեղէն ետքը, որոշեց ալ որ թագաւորին
հետ միայն անդրանիկ որդին մնայ, մեկաշները ու-
րիշ տեղ կենան :

Հ. Ազղարչակայ ո՞վ յաջորդեց .

Պ. Արշակ Ա. իւր որդին, որ շատ բարեկարգու-
թիւններ ու քաջութիւններ ըրաւ (127) :

Հ. Գլխաւոր քաջութիւնը ո՞րն է :

Պ. Պոնտացիները նուաճեց ու իրեն յաղթու-
թեան նշան կսթառ մը անկեց ծովուն եզերքը . ու
նիզակը զարնելով ծակեց քարը :

Հ. Արշակայ Աին ո՞վ յաջորդեց .

Պ. Իր որդին Արտաշէս Ա. որ Յունաստանի և
բոլոր Փոքր Ասիոյ սիրեց :

Հ. Ի՞նչ բան ըրաւ Պարսկաստանի մէջ .

Պ. Իր անուանօք ստակ կոխեց . ու Պարսից թա-
գաւորը որ ինչուան ան ատեն պատուով առաջին
էր՝ իրեն երկրորդը ըրաւ :

Հ. Արտաշէսի զօրաց բազմութեանը վրայ ի՞նչ
կը պատմուի .

Պ. Կ'ըսեն թէ երբոր ամէնքը միաբան նեա նե-
ակին՝ արևը կը խափանէր ու թէ որ մէյմէկ քար
նեակին՝ բլուր մը կը ձևանար :

Հ. Արտաշէս ի՞նչպէս մեռաւ .

Պ. Զօրացը մէջ խռովութիւն իյնալով զինքը
սպաննեցին (87) :

Հ. Արտաշէսին ո՞վ յաջորդեց :

Պ. Տեղբան իր օրդին որ արգէն երկու տարիէ
ի վեր հօրը հետ կը թագաւորէր :

Հ. Տեղբան Բին առջի գործքը ի՞նչ եղաւ .

Պ. Յոյները նուաճեց , որոնք Արտաշէսի մահը
լսելով ապստամբեր էին :

Հ. Տեղբան զո՞վ գրաւ իրեն փոխանորդ Պոնտո-
սի մէջ , ու Յոյները նուաճող .

Պ. Իր Միհրդատ անունով քեռայրը , որ քաջ
ու խելացի մարդ էր :

Հ. Տեղբան Բ. ի՞նչ կրօնական գործողութիւն
ներ ըրաւ .

Պ. Այլ և այլ տեղեր մեհեաններ շինելով Յու-
նաստանէն բերած աստուածներու արձանները
կանգնեց ու անոնց քուրմեր հաստատեց :

Հ. Ասորաց երկիրը ի՞նչ բան ըրաւ Տեղբան .

Պ. Ասորաց երկրին տիրեց և անոնց Սեզինէ
Թագուհին բռնեց սպաննեց . վասն զի Սելևկիա-
ցիքը յորդորեր էր Տեղբանէն ապստամբելու :

Հ. Հրէայք երբոր լսեցին Սեզինէ Թագուհւոյն
սպաննուիլը ի՞նչ ըրին .

Պ. Հաս ընծաներ տուին Տիգրանայ որ իրենց Աղեքսանդրա թագուհին փաս մը չհասցրնէ :

Հ. Ի՞նչ պատճառաւ Հոովմայեցիք Միհրդատայ հետ թշնամացան .

Պ. Վասն զի Միհրդատս Կապագոպկիոյ էշխելով իր Արիարաթ ազան անոնց թագաւոր դրաւ . Կապագոպկացիք ալ Հոովմայեցւոյ դիմեցին :

Հ. Հոովմայեցիք ալ ի՞նչ ըրին .

Պ. Մէկէն Սիլլա քաջ զորապետը խաւրեցին որ եկաւ Արիարաթը և իրեն Գորդիաս զորապետը վանտեց , և Արիոբարդան Կապագոպկացին թագաւորեցուց :

Հ. Միհրդատ ան ատեն ի՞նչ ըրաւ .

Պ. Տիգրանէն օգնութիւն ատնելով նորէն վաճառեց Հոովմայեցիները և Արիարաթը թագաւորեցուց :

Հ. Հոովմայեցիք նորէն զօրք խաւրեցին Միհրդատայ վրայ .

Պ. Այլ և այլ զօրավարներ խաւրեցին որոնց շատ անգամ յաղթեց Միհրդատս , և Ալիւզաս զօրավարին սպաննեց բերնէն վար հալած ոսկի լեցրնելով :

Հ. Հոովմայեցիք զո՞վ խաւրեցին զօրավար .

Պ. Լուկուլլոսը որ շատ հեղ կռուելով երբեմն յաղթուեցաւ երբեմն ալ յաղթեց Միհրդատայ :

Հ. Ինչո՞ւ համար Տիգրան Միհրդատայ վրայ բարկացաւ .

Պ. Վասն զի անգամ մը չարաչար յաղթուելով Լուկուլլոսէն փախաւ Տիգրանայ քով և Լուկուլլոսը

լու շատ տեղերու տիրեց . բայց վերջէն նորէն հաշտուեցաւ Տիգրան :

Հ . Տիգրան ինչ պատերազմի մէջ յաղթուեցաւ Լուկուլլոսէն .

Պ . Լուկուլլոս Հայաստան մտաւ Տիգրանակերտը պաշարեց . Տիգրան Հռովմայեցւոց քիչուորութիւնը տեսնելով անհող կեցեր էր . բայց Լուկուլլոս յանկարծ վրայ վազելով Տիգրանին զօրքերը հալածեց ու Տիգրանակերտը առաւ :

Հ . Լուկուլլոս կրցաւ իր յաղթութեանը վրայ ուրախանալ .

Պ . Չէ . վասն զի լսեց որ Տիգրան՝ իր ուրիշ տեղ թողուցած զօրացը վրայ հասնելով լաւ մը ջարդ տուեր էր . ու քիչ մը ատենէն իր վրան ալ հասնելով Միհրդատին հետ , վերջապէս Հայաստանէն հալածեց :

Հ . Հռովմայեցիք Լուկուլլոսին տեղը զով խաբեցին .

Պ . Պոմպէոսը , ու Լուկուլլոսը ետ կանչեցին :

Հ . Միհրդատ ինչու ինքզինքը սպաննեց .

Պ . Իր Փառնակէս օրդին և Կաստոր նախարարը կաշառք առած Հռովմայեցւոց կողմը անցան . ինքն ալ բերգի մը մէջ անօգնական պաշարուելով ինքզինքը սպաննեց Պոմպէոսին ձեռքը շինալու համար (59) :

Հ . Տիգրան երբոր լսեց Միհրդատոյ մեռնիլը ինչ ըրաւ .

Պ . Տեսնելով որ իր Տիրան օրդին ալ ապստամբեր է իրմէ ու ինքն ալ ծեբացած , հաշտութիւն ըրաւ Պոմպէոսի հետ , ու ասով պատերազմը ընդացաւ :

Հ. Տիգրան Պոմպէոսի երթալէն ետքը Հռովմայեցւոցմէ վրէժը առաւ .

Պ. Միջագետաց նորէն տիրեց , ու Գաբիանոս Հռովմայեցւոց զորապետը Եգիպտոս փախուց :

Հ. Տիգրան ինչո՞ւ Արշէզ Պարսից Թագաւորին տուաւ նորէն նախագահութեան պատիւը .

Պ. Վասն զի տեսաւ որ Հռովմայեցիք նորէն Ասորւոց ու Միջագետաց տիրելով իր վրայ կուգային որոնց չէր կրնար դէմ դնել ծերութեանը պատճառաւ , ուստի Արշէզի տուաւ նախագահութիւնը՝ որ իրեն օգնէ :

Հ. Հռովմայեցիք Գաբիանոսին տեղը զո՞վ խաւրեցին .

Պ. Կրաստոր որ յաղթուելով սպաննուեցաւ Հայերէն ու Պարթևներէն :

Հ. Ո՞վ եղաւ Հայոց զորավար Տիգրանայ ծերութեան տանն .

Պ. Բարդափրան քաջ նախարարը որ Հայոց և Պարսից բանակին ընդհանուր սպարապետն էր :

Հ. Բարդափրան ի՞նչ դործողութիւններ ըրաւ Ասորւոց երկրին մէջ .

Պ. Բոլոր Ասորւոց երկրին տիրեց , և Երուսաղէմն ալ առաւ խարէութեամբ . Թէպէտ և վերջը նորէն առին Հռովմայեցիք Հայոց ձեռքէն :

Հ. Աս յաղթութիւններէն ետքը Տիգրան ո՞րչափ ասրեցաւ .

Պ. Խիստ քիչ . ու թսուներհինգ տարուան մեռաւ յիսուներչորս տարի Թագաւորելէն ետքը (35) :

ԳԱՍ Ե

Արտաւազդ Ա. Արշաւ և Արգար :

Հ. Ո՞վ յաջորդեց Տիգրանայ .

Պ. Արտաւազդ Ա. Տիգրանայ որդին :

Հ. Արտաւազդ ի՞նչ ճամբայ բանեց .

Պ. Ինքզինքը կերուխումի տուաւ որով Վասնինոս Հասկմայեցւոց զօրապետը բոլոր Ասորոց երկրին և ուրիշ անդերու տիրեց :

Հ. Վասնինոս ի՞նչ պատճառաւ Արտաւազդայ հետ թշնամացաւ .

Պ. Վասն զի Արտաւազդ ընդգէմ իրեն խոսամանը ծածուկ Պարսից օգներ էր, փոխանակ զի Վասնինոսին օգնելու խօսք տուեր էր :

Հ. Վասնինոս ի՞նչ կերպով Արտաւազդը բռնեց .

Պ. Աւելի խաբիւրբելով քան թէ քաջութեամբ բանեց զինքը ու սակիկ շղթայի զարկած Եգիպտոս տարաւ (30) :

Հ. Արտաւազդին բանուէլէն ետքը հայաստանի վիճակը ի՞նչ եղաւ .

Պ. Վասնինոս տիրեց Հայաստանի ու Ստորին Հայքը իր Աղեքսանդր տղուն տուաւ, և Վերինը Մարաց :

Հ. Արտաւազդը ո՞վ սպաննեց .

Պ. Կղէտագատրա թագուհին, որ գլուխը կտրել
տուաւ :

Հ. Ո՞րչափ ատեն Հոովմայեցիք Հայաստանի
տիրեցին .

Պ. Խիստ քիչ . վասն զի Արշամ Տիգրանին եղ-
բորորդին՝ Պարսից օգնութեամբը Հոովմայեցիներ
ը վանեց ու ինչուան Կեսարիա տիրեց (28) :

Հ. Ինչո՞ւ համար Արշամ սկսաւ Հոովմայեցւոց
հարկ տալ .

Պ. Օգոստոսէն խնդրեց Արտաւազդայ երկու
տղաքը որ հոովմ գերի էին . երբոր անիկայ չխառ-
ւաւ, ան ատեն Արշամ յանձն տաւ հարկ տալ,
միայն թէ անոնք ազատին . ինչպէս որ ազատեցան :

Հ. Ի՞նչ պատճառաւ Հայոց թագաւորութիւնը
երկու բաժնուեցաւ, այսինքն Վերին և Ստորին .

Պ. Վասն զի Վերին Հայաստանի Հայերը որ
Պարսից տակն էին, ձանձրացած անոնց տուած
բռնութիւններէն, Օգոստոս կայսեր զիմեցին . ան
ալ Արտաւազդայ տղան Տիգրանը թագաւոր դրաւ
անոնց որ Փոքր Տիգրանը ըսուեցաւ : Աս Վերին
Հայոց թագաւորութիւնը յիսունը-ինը տարի քը-
չելէն ետքը, Երուանդ Ստորին Հայոց թագաւո-
րութեան հետ միացուց :

Հ. Արշամ որչափ ատեն թագաւոր եղաւ .

Պ. Քսանդրինը տարի խաղաղութեամբ թագա-
ւորեց :

Հ. Արգար Արշամայ որդին իր հօրը յաջորդե-
լով ի՞նչ անուն հանեց .

Պ. Իր խելացիութեանը և հեղաբարոյութեանը
համար ամէնքն ալ սկսան Աւագ սյր ըսել իրեն,
որ վերջէն ազաւաղելով Արգար ըսուեցաւ :

Հ. Ինչո՞ւ համար Հերովդէս Արգարու հետ
Թշնամացաւ .

Պ. Այսին ղի Հերովդէս կ'ուզէր որ իր պաա-
կերն ալ Օգոստոսի պատկերին հետ մէկտեղ մե-
հեաններուն մէջը կախուի. Արգար աս բանս յանձն
չառաւ , ու պատերազմ բացուելով մէջերնին՝ Հե-
րովդէս չարաչար յաղթուեցաւ :

Հ. Ինչո՞ւ համար Արգար Հռովմ գնաց .

Պ. Այսին ղի Հերովդէսի կողմը եզոյները սխ
պահելով Արգարու վրայ ամբաստանութիւններ
ըրին Օգոստոս կայսեր . ան ալ Հռովմ գնաց ու
կնքզինքը արգարացուց :

Հ. Ինչո՞ւ համար Թագաւորական աթոռը Մըծ-
րինէն Եգեսիա փոխադրուեցաւ .

Պ. Այսին ղի Արգար կ'ուզէր Հռովմայեցւոցմէ
ապստամբիլ . ուստի աթոռը Եգեսիա փոխեց ու
սկսաւ ամբացնել զանիկայ :

Հ. Ի՞նչ բանէն զրգուեցաւ Արգար ապրա-
տամբելու Հռովմայեցւոցմէ .

Պ. Տիրերիոս կայսեր ուրախակցութեան հա-
մար խրկուած Հայ գեապանները անարգուեցան
Հռովմայեցւոցմէ փուճ պատճառի մը համար :

Հ. Ի՞նչ արգելք եղաւ որ Արգար չկրցաւ ա-
պրատամբիլ .

Պ. Արտաշիւր Պարսից Թագաւորը մեռնելով
Նոյն օրերը , Պարսկաստան գնաց Արգար , ու ա-
նոր որդւոյը մէջ կնկած խռովութիւնը խաղաղ-
ցուց , Գրխատոսի 21 թուին :

Հ. Ի՞նչ ճախարհութիւն հանդիպեցաւ Արգա-
րու Պարսկաստան .

Պ. Սաստիկ բորոտեցաւ որ բժիշկները չկրցան
առողջացնել. վերջը Թադէոս առաքեալը բժշկեց :

Հ. Ի՞նչ կերպով Աբգար Քրիստոսի ծանօ-
թացաւ .

Պ. Իմանալով որ իր ապստամբութեան խոր-
հուրդը Տիբերիոս կայսեր ականջը հասեր է, գեա-
պաններ խրկեց Հռովմայեցոց Պաղեստին կեցող
զօրապետին, որ զինքը արգարացնեն. գեապան-
ները տեսնելով հոն Քրիստոսի ըրած հրաշագոր-
ծութիւնները՝ եկան պատմեցին իրեն :

Հ. Աբգար ի՞նչ ըրաւ ան ատեն .

Պ. Թուղթ գրեց Քրիստոսի և իր Ամանէ սուր-
հանդակն ալ խաւրեց որ երթայ աղաչէ Քրիստո-
սի հայաստան գալ ու զինքը բժշկել. իսկ թէ որ
չկարենայ գալ, Քրիստոսի դիմաց պատկերը օրի-
նակէ ու բերէ :

Հ. Քրիստոս կատարեց Աբգարու խնդիրը .

Պ. Չէ. բայց պատասխան գրեց Աբգարու, ու
խօսք տուաւ որ համբաւանալէն ետքը իր աշխերա-
ներէն մեկը կը խաւրէ որ զինքը բժշկէ. ինչպէս
որ եղաւ Թադէոս առաքելոյն ձեռքովը Քրիստոսի
31 թուին :

Հ. Աբգար Քրիստոսի հաւատալէն ու բժշկուե-
լէն ետե ի՞նչ ըրաւ .

Պ. Իրեք տարի ալ սուրբեցաւ ու մէյմէկ թուղթ
գրեց Տիբեր կայսեր, Պարսից և Ասորոց Թագա-
ւորներուն՝ ցուցնելով Քրիստոսի աստուածու-
թիւնը. ու ընդ ամենը երեսունը տարի Թա-
գաւորելէն ետե սրբութեամբ մեաւ :

ԴԱՍ Զ.

Ահանե՛, Սանատրուկ և Երուսաղեմ :

Հ. Աբգարու մեռնելէն ետե ինչո՞ւ խառվութիւն ինկաւ Հայաստանի մէջ .

Պ. Վասն զի Ահանե՛ Աբգարու որդին Եզեսայոյ մէջ թագաւորեց ու նորէն կաապաշառութիւն սկըսաւ . իսկ Սանատրուկ Աբգարու քեռորդին Շաւարշանի մէջ թագաւորեց ու կ'ուզէր բոլոր Հայաստանի տիրել :

Հ. Ահանե՛ ի՞նչպէս մեռաւ .

Պ. Երբոր իր թագաւորական պալատը նորոզել կուտար, սինն մը կնալով վրան սպաննեց զինքը, չորս տարի թագաւորելէն ետքը (38) :

Հ. Ահանե՛ի մեռնելէն ետե ո՞վ թագաւոր եղաւ Հայաստանի .

Պ. Սանատրուկ՝ որ Եզեսայոց երգում տուաւ՝ թողու որ ազատ պաշտեն զՔրիստոս . թէպէտ վերջէն ստեց իր երգմանը ու շատ մարդ նահատակեց, ինչպէս նաև իր Սանգուխտ ազլիկը :

Հ. Սանատրուկ քաղաքական շինութեանց մէջ ի՞նչ երեւելի գործք ըրաւ .

Պ. Մծբինը՝ որ երկրաշարժէ մը աւրուեր էր, սքանչելի կերպով նորոզեց, ու քաղքին մէջ տեղը իր արձանը կանգնեց ձեռքը դրամ մը տուած . իմացնել ուզելով որ բոլոր ունեցածը ծախեր է :

Հ. Սանատրուկ ինչ կերպով մեռաւ .

Պ. Որսի ասան զիպուածով նեռէ մը զարնուելով մեռաւ, երեսունըչորս տարի թագաւորելէն ետքը :

Հ. Սանատրուկին ո՞վ յաջորդեց .

Պ. Երուանդ Բ. որ թէպէտ և Արշակունի էր, բայց թագաւորական ցեղէ չէր :

Հ. Երուանդ ինչպէս թագաւոր եղաւ .

Պ. Իրեն ըրած քաջութիւններովը և քաղցրաբարոյութեամբը ամենուն սիրտը իրեն քաշեց, որով Սանատրուկի մեռնելէն ետե զինքը թագաւոր դրին նախարարները :

Հ. Երուանդ իր թագաւորութիւնը ապահով ջընեջու համար ինչ բան ըրաւ .

Պ. Բոլոր Սանատրուկի ցեղը թրէ անցնել տրւաւ, որոնցմէ միայն Արտաշէս անունով ազան Պարսկաստան փախաւ Սմբատ Բագրատունիին ձեռքովը :

Հ. Ինչո՞ւ համար Երուանդ Միջագետքը հսով մայեցւոց տուաւ ու ինքը Ալեքին հայքը առաւ .

Պ. Ասան զի լսեց Արտաշէսի Պարսկաստան փախչելը և ուզեց իր թագաւորութիւնը աս կերպով զօրացնել. աս սպառնառաւ աթոռն ալ Արմաւիր փոխադրեց :

Հ. Երուանդայ ըրած շինութիւններուն մէջ ո՞րն է երևելին .

Պ. Երուանդաշառ քաղաքը իրեն գեղեցիկութեանը համար, ուր որ վերջէն աթոռն ալ փոխադրեց, ու Բագարանը՝ իրեն մեհեաններուն համար :

Հ. Ի՞նչ կերպով Արտաշէս իր Թագաւորութիւնը առաւ .

Պ. Դարեհ Պարսից Թագաւորին օգնութեամբը, որուն միջնորդ եղան Սմբատ և Պարսից նախարարները (88) :

Հ. Երբոր Երուանդ լսեց Արտաշէսի գալը իր վրայ ի՞նչ ըրաւ .

Պ. Որովհետև Ուտէացոց վրայ պատերազմի գացած էր, մէկէն հաշտութիւն ըրաւ ու առաւ վարձքով շատ զօրք ժողոված սկսաւ Արտաշէսի վրայ երթալ :

Հ. Երբոր Հայերը լսեցին Արտաշէսի գալը՝ ի՞նչ կերպով ընդունեցան զինքը .

Պ. Հաս ուրախութեամբ. որով շատ նախարարներ ամբողջ իրենց գնդովը Արտաշէսի կողմը անցան, որոնցմէ մէկն էր Արգամ որ խիստ քաջ մարդ էր :

Հ. Ո՞ր կողմը յաղթեց .

Պ. Արտաշէսի կողմը, որով ստիպուեցաւ Երուանդ փախչիլ Երուանդաշատ :

Հ. Երուանդ ի՞նչպէս մեռաւ .

Պ. Կորէն պատերազմը սաստկանալով Երուանդաշատը անուեցաւ, ու հոն իր պալատին մէջ Երուանդն ալ սպաննուեցաւ Արտաշէսի զօրքերէն (89) :

ԴԱՍ Է.

Արտաշէս երկրորդին ինչո՞ւսն Տրդատ :

Ն. Արտաշէս Բ. թագաւորելով իր առջի գործքը ինչ ըրաւ .

Պ. Իրեն բարերարները մեծ պարգևներով պատուեց . Սմբատը ընդհանուր սպարապետ ըրաւ . Արգամը իրեն երկրորդ :

Ն. Ուրիշ որո՞ւ բարիք ըրաւ Արտաշէս .

Պ. Գիսակ նախարարին Ներսէս անուանով որդւոյն որն որ մեծ նախարարութիւն ըրաւ Դինաք սեան կամ Կամեարահան անուանելով . որովհետև որ Գիսակ գէմբին կէսը կորսնցուցեր էր պատերազմի մէջ Արտաշէսը ազատելու համար :

Ն. Արտաշէս որո՞նց հետ պատերազմ ըրաւ .

Պ. Աշանաց հետ որոնց յաղթեց և թագաւորին ազան պատերազմի մէջ բռնեց :

Ն. Ինչպէս ըմնցաւ պատերազմը .

Պ. Աշանաց թագաւորին Սաթինիկ աղջիկը Արտաշէսի ազաչելով իր եղբայրը ազատեց ու պատերազմը ըմնցուց , և ինքն ալ Արտաշէսի թագուհի եղաւ :

Ն. Արտաշէս քաղաքահան բաներու մէջ ինչ բարեկարգութիւններ ըրաւ .

Պ. Ամենայն բանի կարգ կանոն դրաւ և ծաղկեցուց Հայաստանը . որով իրեններուն սիրելի և օ.

տարաց նախանձելի եղաւ թէ ինքը և թէ իր աշխարհքը :

Հ. Ի՞նչ մասնաւոր նախարարութիւն հաստատեց Արտաշէս .

Պ. Աշխարհայ կողմանէ Սաթիւկայ համար եկած հարսնածուները մասնաւոր ցեղ որոշեց Առաւելեան անուանելով :

Հ. Արտաշէս ետե՛ կղաւ հատկացեցիներէն սպասամբելու .

Պ. Հաս ջանք ըրաւ առ բանին . Տրայխանոսի սուրբ տալը գազրեցուց, և հատկացեցուց զօրացը քանի մը անգամ յաղթեց :

Հ. Արտաշէս Բ. կրցաւ իր խորհուրդը առաջ տանիլ .

Պ. Չէ . վասն զի երբոր լսեց Տրայխանոսի անթիւ բազմութեամբ գալը, վախնալով շատ ընծաներ առած զխմացը ելաւ ու անոր բարկութիւնը իջեցուց :

Հ. Ո՛ւր մեռաւ Արտաշէս .

Պ. Մարանդ գաւառը՝ Մարաց կողմերէն գաւնալու ստե՛ն քառասունումէկ տարի թագաւորելէն ետքը . այնպէս սգացին զինքը Հայերն՝ որ շատը իրենք զիրենք սպաննեցին գերեզմանին վրայ (129) :

Հ. Արտաւազգ Բ. իր հօրը տեղը յաջորդելով ի՞նչ գործողութիւն ըրաւ .

Պ. Չքօտասէր և անկարգ կեանք ունեցաւ . բոլոր իր եղբայրները քովէն վանեց, միայն Տիրանը քովը սպահեց, իրեն յաջորդեցնելու համար :

Հ. Արտաւազդ ինչպէս մեռաւ .

Պ. Որսի ելած ասեներ վհի մը մէջ ինկաւ ու կորսուեցաւ , երկու տարի թագաւորելէն ետքը :

Հ. Տիրան Ա. իր եղբօրը յաջորդելով ինչ ճամբայ բռնեց .

Պ. Եղբօրը անկարգ և անհոգ ճամբան . ան պատճառաւ տասուիրեք տարի թագաւորելէն ետե կառավարութիւնը Երասնաւու անունով իշխանին յանձնեց ու ինքը Եկեղեաց գաւառը քաշուեցաւ :

Հ. Ասոր ասեներ Հաովնայեցիք ինչպէս էին Հայոց հետ .

Պ. Երբոր Անանինոս Պիոս կայսր եղաւ , Տիրան խնդակցութեան գեապան խրկեց իրեն հարկն ալ մեկանդ . Անանինոս սիրով ընդունեցաւ , և թագ ու ծիրանի խաւրեց Տիրանայ՝ և ստակ մը կոխել առաւ ձեռքը Տիրանայ ուսին վրայ գրած :

Հ. Տիրան ինչպէս մեռաւ .

Պ. Քսանուերկու տարի թագաւորելէն ետքը որ մը ճամբայ ընելու ասեն՝ ձեան հիւս մը վրան փլաւ ու խղզեց զինքը (151) :

Հ. Տիրանին ո՞վ յաջորդեց .

Պ. Տիգրան Գ. իր պզտի եղբայրը , որ Պերոզ Պարսից թագաւորին հետ միացած յաղթեց Հրատվայեցոց և Սեւրիանոս զօրավարնին ալ ըսպաննեց .

Հ. Տիգրան աս յաղթութենէն ետքը ինչ ճախորդութեան հանդիպեցաւ .

Պ. Որեզիոս կայսրը լսելով աս եղածները՝ Վերոս Ղուկիոս իր կայսերակիցը խաւրեց որ եկաւ .

իր թշնամիներուն յաղթեց, ու Տիգրանին վրան խղճալով գերութենէ ազատեց, որ կենդանէ մը խաբուելով բանուեր էր Միջագետքի կողմերը գացած ասունը :

Ն. Տիգրան Գ.ին սով յաջորդեց .

Պ. Վաղարշ իր որդին . ասոր ասունը Հայաստանի վրայ եկան Հիւսիսային ազգերը, ինքն ալ քաջութեամբ պատերազմելով վանաեց . բայց ինքն ալ զարնուելով մեղաւ, քսան տարի թագաւորեւէն ետքը :

Ն. Խոսրով Ա. թագաւորեւէն ետե իր առջի գործողութիւնը սրն եղաւ .

Պ. Հիւսիսային ազգաց վրայ պատերազմի ելաւ, իր հօրը մահուան վրէժը առնելու համար ու յաղթեց (214) :

Ն. Անտոնիոս Կարակալլա Խոսրովու ինչ բան ըրաւ .

Պ. Կարակալլա երբոր Միջագետքի կողմերը եկեր էր, Խոսրով զիմացը գնաց պատուելու համար զինքը . բայց Կարակալլա զինքը չթողուց որ դանդայ, ինչուան որ Հայերը կատաղած սկսան Կարակալլային վրայ վազել :

Ն. Ինչո՞ւ համար Արտաշէր Պարսից թագաւորը ետեէ եղաւ Խոսրովը սպաննելու .

Պ. Արտաշէր Պարսից Արտաւան թագաւորը սպաննեց որ Արշակունի էր ազգաւ ու ինքը թագաւոր եղաւ . առ բանիս համար Խոսրով անոր դէմ ելաւ, և շատ անգամ յաղթելով ինչուան Հնդկաստան փախուց զինքը և չէր թողուր որ հանգիստ թագաւորէ :

Հ. Արտաշիր երբոր պատերազմով շիրցաւ խաւ-
րովու յազմել ինչ ըրաւ .

Պ. Մեծամեծ բաներ խոստացաւ ան մարզուն
որ Հայաստան երթալով խոսրովք սպաննէ :

Հ. Ո՞վ յանձն առաւ սա բանս .

Պ. Անակ Պահլաւունին , որ Հայաստան եկաւ ,
ձեացնելով որ Արտաշիր բանութիւններէն փա-
խեր է : Ճամբան գալու ատենը որդի մը ունեցաւ ,
այն խկ է մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը :

Հ. Անակ ինչպէս կատարեց իր շարութեան
խորհուրդը .

Պ. Օր մը որսի ատեն նետով զարկաւ սպան-
նեց խոսրովք , ու երբոր թագաւորին քովի մար-
զիկները զինքը կ'ուզէին սպաննել , փախչելու ա-
տեն գեար ինկաւ ու խեղդուեցաւ (239) :

ԴԱՍ Ը .

Տրդատ և Խոսրով Բ :

Հ. Մեծին խոսրովու մեռնելէն ետև Հայոց վի-
ճակը ինչպէս եղաւ .

Պ. Եկաւ Արտաշիր ու բռնոր Հայոց ախրեց և
խոսրովու ցեղը ջնջել առաւ , որոնցմէ Տրդատ ա-
նունով մանչ մը և անոր խոսրովիգութաւ քոյրը ա-
զատեցան Արտաւազց Մանգակունիին և Օտա Ա-
մասունիին ձեռքովք :

Հ. Տրդատը ո՞ր փախուց Արտաւազց Մանգա-
կունիին .

Պ. Նախ Կեաարիա ու վերջը Հոովմ, ուր շատ քաջութիւններ ընելով մեծ պատուոյ հասաւ :

Հ. Արաաշիր սրչափ ասուն տիրեց Հայոց վրայ և ինչ գործողութիւն ըրաւ .

Պ. Արաաշեսի անկամ սահմանագլխի քարերուն վրայի արձանագրութիւնները աւրել տալով իր անունը գրել տուաւ պարսկերէն . քսանըվեց տարի իշխեց Հայոց և Պարսից վրայ ու մեռաւ :

Հ. Արաաշիին ո՞վ յաջորդեց .

Պ. Իր Շապուհ որդին, որուն ասունը Տրդատ Հոովմայեցի զօրքով եկաւ ու առաւ իր հայրենական ժառանգութիւնը :

Հ. Տրդատ ինչ արգիւնք ըրաւ որ Հոովմայեցիք իրեն օգնութիւն տուին .

Պ. Դիսկղեախանուսի կողմանէ Գոթացւոց Հռչէ հսկայ ու քաջ թագաւորին հետ մենամարտութիւն ընելով, յաղթեց անոր ու Հոովմայեցիքը մեծ նախատինքէ մը ազատեց :

Հ. Երբոր Տրդատ Կեաարիա հասաւ՝ Հայերը ինչպէս ընդունեցան զինքը .

Պ. Ամէն նախարարները զիմացը ելլելով զինքը նորէն թագաւոր գրին, ու բոլոր Հայաստան մեծ խնամով եղաւ (286) :

Հ. Տրդատ Հայաստանի տիրելէն առաջ ուրիշ ինչ գործողութիւն ըրաւ .

Պ. Եկեղեաց դաւառը դնաց Անահայայ շնորհակալութիւն ընելու համար, և հոն խմանալով որ Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնեայ ու Անահայ որդին է, շատ շարշարելէն ետե զինքը խոր վերապի մը մէջ ձգել տուաւ :

Հ. Ի՞նչպէս Տրդատ Շապուհը վանակց Հայաստանէն .

Պ. Իրեք անգամ Շապուհ պատերազմի ելաւ, բայց իրեք անգամ ալ յաղթուելով Հայաստանը ձգեց ու ինչուան Ատրպատական աշխարհքը փախաւ : Ուրիշ շատ յաղթութիւններ և քաջութիւններ ընելով Տրդատ բոլոր մօտակայ ազգերուն սիրտը վախ ձգեց :

Հ. Տրդատ քրիստոնեաները հալածելուն համար ի՞նչ պատիժ կրեց .

Պ. Որովհետև Հոովմէն եկած Հոխիսիսեան կուսանքները նահատակեց, ինքն ալ Աստուծմէ պատժուելով որսի ատեն խողի կերպարանք փոխուեցաւ ու վայրենացաւ . իշխաններէն շատն ալ նոյն պատիժները ունեցան :

Հ. Ա՞՞՞՞՞՞՞ թժշկեց զՏրդատը .

Պ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, որ տասներչորս տարի վերապր կենալէն ետքն ալ գեռ ողջ էր Աստուծոյ հրաշքովք . վերապէն ելլելով թժշկեց ըզՏրդատը և բոլոր նախարարները, և զՔրիստոս քարոզելով զամէնքը մկրտեց . ինքն ալ Վեսարիա խրկուելով արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ :

Հ. Տրդատ քրիստոնեայ ըլլալէն ետև ի՞նչ մասնաւոր գործողութիւն ըրաւ .

Պ. Լսելով որ Կոստանդիանոս ալ քրիստոնեայ եղեր է, սրբոյն Գրիգորի հետ մեկտեղ Հոովմ գրնաց, ուր որ սուրբ Սեղբեսարոս պապը հրաման տուաւ որ Լուսաւորչայ ամթոնն ալ պատրիարքական ամթոս սեպուի (319) :

Հ. Տրդատ Հոովմէն գառնալէն ետև ի՞նչպէս դատաւ Հայաստանը .

Պ. Հապուհ Հիւսիսային ազգաց հետ միացած Հայաստանի վրայ վազէր էր . Տրդատ շուտով մը պատերազմի պատրաստուելով զամենքը վանտեց , և Հիւսիսային ազգաց Գեղահէնն անու՛նով քաջ զօրավարը մէկ զարնուածքով ձիովը մէկտեղ երկու ձգքեց : Աս պատերազմներով Տրդատ բոլոր Հայոց քաղաքները ազատեց Պարսից ձեռքէն՝ որոնց որ բանութեամբ տիրեր էին :

Հ. Ինչպէս մեռաւ Տրդատ .

Պ. Տեսնելով նախարարաց անկարգութիւնները , թողուց թագաւորութիւնը ու լուսաւորչայ ձգնարանը քաշուելով հոն կը բնակէր . նախարարները կրկին անգամ զինքը կանչելէն ետքը թոյն առին իրեն . ու սասնկով մեռուցին յսուներկեց տարի թագաւորելէն ետքը (344) :

Հ. Տրդատայ մեռնելէն ետև ինչ խոտվութիւններ եղան Հայաստանի մէջ .

Պ. Աղուանք ապստամբեցան ու Մանաւորուկ անունով մէկը իրենց վրայ թագաւոր դրին . նոյնպէս նաև Բակուր Աղձնեաց իշխանը . իսկ Բղինունիք , Մանաւազիանք և Արգունիք իրարու դէմ ելլելով մէկզմէկ ջարդեցին :

Հ. Տրդատայ ո՞վ յաջորդեց .

Պ. Նախարարները տեսնելով առ անկարգութիւնները սուրբ Ալթթանէս կաթաղիկոսին հետ միացած Տրդատայ որդին խոսրով Բ . թագաւոր դրին Կոստանդ կայսեր հաճութեամբը , որն որ թագ ու ծիրանի խաւրեց :

Հ. խոսրով Բ . թագաւորելէն ետև ինչ գործադրութիւններ ըրաւ .

Պ. Իրեն մեղկութեամբն ու անհոգութեամբը

ամենեին յիշատակի արժանի գործողութիւն մը ըրբաւ . Դուին (ԳԲ . ԲԼ-Բ .) քաղաքը շինեց ու ակթուրը հոն փոխադրեց :

Տ . Խոսրովու ասէն ինչ երևելի զօրավար կար հայաստան .

Պ . Վահան Ամատունին , որ մեծ յաղթութիւն մը ըրաւ Շապհոյ և Հիւսիսային ազգաց դէմ , որոնք առաջ Խոսրովու յաղթելով ինչուան Վաղարշապատ հասեր էին :

Տ . Խոսրով սրչափ ասէն թագաւորեց .

Պ . Ինք տարի . երէն յաշորգեց իր սրգին Տէրան Բ . (333) :

ԴԱՍ Թ .

Տիրան և Արշակ :

Տ . Տիրան ինչ կերպով թագաւորեց .

Պ . Սուրբ Վրթանեսին հետ Ստամբուլ գնաց ու հոն Կոստանդ կայսրը թագաւորեցուց զինքը :

Տ . Շապուհ երբոր լսեց Տիրանայ Ստամբուլ երթալը ինչ ըրաւ .

Պ . Անթիւ զօրք աաւով իր Ներսէս հոգբորը ձեռքը հայաստան խաւրեց որ երթայ թագաւորէ հայոց վրայ . բայց Արշակի Կամսարախան , որուն որ յանձնուած էր հայաստանը , նախարարները միացնելով յաղթեց ու վճռակց զՆերսէսը :

Տ . Տիրան երբոր հայաստան գարձաւ ինչպէս սկսաւ կառավարել իր անբութիւնը .

Պ. Բոլորովին անկարգութեամբ ու թուրութեամբ ան պատճառաւ Շապուհին հետ հաշտութիւն խօսեցաւ ու սկսաւ տուրք տալ անոր ալ, ինչպէս Յունաց կուտար :

Հ. Տիրան ինչո՞ւ համար սուրբ Յուսիկ հայրապետը սպաննեց ,

Պ. Ղան զի երբոր Յուլիանոս ուրացող կայսրը Պարսից վրայ կ'երթար, իր պիղծ պատիերը խաւրեց Տիրանայ որ եկեղեցւոյ մէջը կախէ . երբոր սուրբ Յուսիկ գէժ գրաւ աս բանիս և պատիերքը ոտքին տակը տանելով կտորտեց, թագաւորը բարկութենէն այնչափ ծեծել տուաւ սուրբ հայրապետը՝ որ մեռաւ :

Հ. Ինչո՞ւ համար Շապուհ Տիրանին աչքերը փորել տուաւ .

Պ. Ղան զի Տիրան իր երգմանը գէժ Յուլիանոսին օգներ էր Պարսից վրայ երթալու ատեն . Շապուհ ալ աս բանիս վրէժը աննելու համար խաբէութեամբ իրեն կանչեց Տիրանը ու աչքերը փորել տալով Վուաշ աւանը խաւրեց (362) :

Հ. Տիրան ինչպէս մեռաւ .

Պ. Մեզամ մը Տիրան իր Արշակ տղուն յանդիմանութեան թուղթ մը գրեց . Արշակ ալ բարկանալով սպաննել տուաւ զհայրը :

Հ. Արշակ իր հօրը տեղը յաջորդելով ինչպէս կառավարութիւն ունեցաւ .

Պ. Հօրը պէս անկարգ և քան զայն ալ գեշ . որով ազգին մէջի եղած ամէն տեսակ խեղճութեանց և անկարգութեանց պատճառ և յառաջացուցիչ եղաւ :

Հ. Արշակայ ատեն ինչ երևելի մարդ կար Հայաստանու մէջ .

Պ. Մեծն Ներսէս մեր սուրբ Հայրապետը որ լուսաւորչայ թոռանը թոռն էր , որն որ շատ մեծամեծ բարիքներ ըրաւ թէ ազգին և թէ թագաւորու թեան :

Հ. Ինչո՞ւ համար Վաղենախանոս Արշակայ վերայ պատերազմ բացաւ .

Պ. Վասն զի Արշակ Վաղենախանոսի խաւրած դեսպանները , որոնք եկեր էին համոզել զԱրշակը որ Պարսից ծառայութենէն ետ կենայ՝ արհամարհեց . ան ատեն Վաղենախանոս ալ մեծ պատրաստութեամբ իր թէոզոս զօրապետը խաւրեց որ երթայ աս արհամարհանաց վրէժը լուծանէ :

Հ. Ո՞վ իջեցուց Վաղենախանոսի բարկութիւնը .

Պ. Մեծն Ներսէս որ Ստամբոլ գնաց ու իրեն սքանչելի և քաղցր խօսուածքովը թագաւորը համոզեց , ու ամէն բան կարգի դրաւ :

Հ. Արշակայ ըրած անիրաւ սպանութիւնը որն է .

Պ. Իր Տրդատ եղբօրը Գնէլ որդւոյն սպանութիւնը , ունեցած հարստութեանն ու կնկանը վրայ նախանձելով . որով Գնէլայ Փառանձեմ կինը իրեն երկրորդ կին առաւ . ան ալ Ուլիմպիազա Արշակին կինը թունաւորեց :

Հ. Արշակ ինչպէս շէնցուց Արշակաւան քաղաքը .

Պ. Աս քաղաքը իր անունովը շինել սկսաւ և հրաման հանեց որ ամէն անդգամ և չարագործ մարդիկ հոն փախչելով ազատին , որով քիչ ատենի մէջ բոլոր քաղաքը լեցուեցաւ :

Հ. Աս անիրաւ հրամանին հետեանքէն ինչ ելաւ.

Պ. Կախարարները բարկացած Շապուհը իրենց օգնութիւն կանչեցին, ու անոր օգնութեամբը Արշակաւանը կործանեցին, բնակիչները ջարդեցին բաց ՚ի պղտի տղոցմէ, և Արշակն ալ փախուցին որ գնաց Արաց ապաւինեցաւ :

Հ. Արշակ Արացուցմէ օգնութիւն գտաւ.

Պ. Ըստ մը զօրք ժողոված նախարարներուն հետ սկսաւ պատերազմիլ. և երկու տարիի շափ երկու կողմէն ալ մեծամեծ ջարդեր եղան. ան միջոցին Ազդէս կայսրն ալ Արշակայ դէմ զօրք խաւրեց իմանալով որ Շապուհին օգներ է Յունաց դէմ :

Հ. Արշակ երբոր ամէն կողմանէ թշնամիներէ պաշարուեցաւ, ինչ հնարք մտածեց.

Պ. Ուրիշ անդամներուն պէս նորէն սուրբ Կերսեսի ապաւինեցաւ. ան ալ շատ զժուարութեամբ նախարարները հաշտեցուց թագաւորին հետ, և վերջը Արշակին որդին Պապը պատանդ առած՝ Ստամպուլ Ազդէս կայսեր գնաց. բայց Ազդէս արիստեան ըլլալով մէկէն քշել տուաւ սուրբ Կերսէսը և գաշիւքն ալ շքնդունեցաւ :

Հ. Երբոր լսեց Արշակ սուրբ Կերսեսի արտօրուիլը ինչ ըրաւ.

Պ. Սկսաւ արձակ համարձակ իր անկարգութիւնները ընել. շատ մտրդ անիրաւութեամբ ըսպաննեց, որով նորէն խռովութիւններ սկսան :

Հ. Արշակ ինչպէս բռնուեցաւ.

Պ. Շապուհ սիս ունենալով Արշակայ վրայ՝ նորէն շատ զօրք խաւրեց որոնց հետ միացան նաև նախարարներն, ու Արշակը ան աստիճան նեղը խոթեցին որ Պարսից անձնատուր եղաւ :

Հ. Շապուհ ինչ բրաւ զԱրշակը .

Պ. Լաւ մը յանգիմանելէն ետքը Անյուշ ըսուած բերգը խաւրեց :

Հ. Շապուհ ինչ կերպով ետեկ եղաւ Հայերը արևապաշտ ընելու .

Պ. Մերուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան ուրացող նախարարներուն թագ խոստացաւ և շատ զօրք տուաւ ձեռքերնին որ երթան Հայերը արևապաշտ ընեն . անոնք ալ ամէն չարիք հասուցին Հայոց (378) :

Հ. Արշակ ինչպէս մեռաւ .

Պ. Լսելով բոլոր աս եղած չարիքները՝ յուսահատելով ինքզինքը սպաննեց, քսան տարիի չափ թագաւորելէն ետքը :

Գ Ա Ս Ժ .

Պապ և Վարազդրատ :

Հ. Ինչ կերպով Հայերը աս թշուառութիւններէն ազատեցան .

Պ. Սրբոյն Ներսէսի աղաչանքովը՝ Մեծն Թէոդոս Արշակին որդին Պապը թագաւոր դրաւ Հայոց վրայ, և Յունաց զօրքով Հայաստան խաւրեց, որոնք եկան Պարսիկները վնասեցին (381) :

Հ. Աս պատերազմին ատենը սուրբ Ներսէս ինչպէս օգնեց Հայոց բանակին .

Պ. Երբոր երկու կողմէն ալ ահեղ պատրաստութեամբ կը պատերազմէին՝ սուրբ Ներսէս Նըպատ լեռան վրայ ելաւ ու բազկատարած սկսաւ

աղօթել, որով քամի մը ելաւ ու Պարսից նեաւերը
իրենց վրայ կը գարձներ. և արեւուն գէմը ամպ մը
գալով արեւը ծածկեց որ Հայերը չինեղէ :

Հ. Ո՞վ ըմպուց պատերազմը :

Պ. Սմբատ Բագրատունին, որ Մերուժան Հայ
ուրացող իշխանին ետեւէն փաղելով բռնեց զինքը
ու ապրցուցած շամփուրի երկաթը պատկաձե գլու-
խը գնելով բաւ. « Եսով կը պատկեմ զքեզ, Մե-
րուժան, որ կ'ուզէիր Թագաւոր ըլլալ Հայոց » .
ու այնպէսով սպաննեց զինքը, որով և պատերազ-
մը ըմպաւ :

Հ. Պապ երբոր Թագաւորեց ինչ գործողութիւն
ըրաւ .

Պ. Յունաց զօրքը առաւ պարգևով եւ ճամ-
բեց, և ինքը ու նախարարներն ալ մէկտեղ խօսք
տալին սրբոյն Ներսէսի որ անկէ ետքը հաւատար-
մութեամբ ծառայէն Աստուծոյ :

Հ. Ինչո՞ւ համար Պապ սուրբ Ներսէսի Թոյն
տուաւ .

Պ. Այն զի սկսաւ իրեն ըրած շարութիւններն
և անկարգութիւնները յանդիմանել. Պապ չկրնա-
լով յայանի մեռցնել՝ Թոյն տուաւ անոր (383) :

Հ. Ինչո՞ւ համար Թէոդոս կայսր Պապը սպան-
նել տուաւ .

Պ. Այն զի Պապ՝ կայսերէն ապստամբելով,
Տերնախանոս կայսեր զօրավարը՝ վանտեց Հայաս-
տանէն. բայց վերջը յաղթուելով բռնուեցաւ. Թէո-
դոս կայսրն ալ գլուխը կարել տուաւ իրեք տարի
Թագաւորելէն ետքը :

Հ. Պապին տեղը ո՞վ յաջորդեց .

Պ. Թէոդոս Վարազդատ Արշակունի կարիճը
Թագաւորեցուց, որ իրեն քաջութիւններովը ե-
րևելի եղած էր Յունաց մէջ:

Հ. Վարազդատայ գլխաւոր քաջութիւնները
որոնք են.

Պ. Թագաւոր չեղած՝ անգամ մը հինգ Լոնդո-
բարաացիի դէմ ելլալով մէկմէկու ետեւէ հինգն ալ
սպաննեց. բերդի մը վրայ վաղելով տասնրեօթը
հոգի ետեւէ ետեւ նետով սպաննեց ու ինքը չմնա-
տուեցաւ. դարձեալ քսանուերկու կանգուն դետի
մը վրայէն մէկ շնչով ցաթկեց:

Հ. Ինչո՞ւ համար Վարազդատ կայսերէն ապրա-
տամբեցաւ.

Պ. Տեսնելով որ Յունաց զօրավարները կ'ուզեն
իր վրայ իշխել՝ չդիմանալով աս բանին, Շապու-
հին օգնութեամբը ուզեց ապստամբիլ:

Հ. Առաջ գնաց Վարազդատայ ապստամբու-
թեան խորհուրդը.

Պ. Չէ. վասն զի լսելով որ կայսրը իմացեր է աս
բանս, Կոստանդնուպօլիս գնաց որ զինքը արդա-
բացնէ. կայսրը բարկութենէն առանց տեսնալու
մէկէն բշէլ տուաւ զինքը հետու կղզի մը:

Հ. Վարազդատայ արսորուելէն ետքը ի՞նչ փո-
փոխութիւն եղաւ Հայոց Թագաւորութեան մէջ.

Պ. Թէոդոս՝ Պապայ երկու որդիքը այսինքն Ար-
շակն ու Վաղարշակը Թագաւոր դրաւ Հայոց վը-
րայ, որպէս զի թէ որ մէկը ապստամբի՝ մէկալը
հաւատարիմ մնայ:

Հ. Աս երկու Թագաւորները ո՞ւր դրին իրենց
աթոռները.

Պ. Արշակ Դուին գրաւ իր աթոռը. իսկ Ալազարշակ Երիզա գրաւ, որն որ և ոչ տարի մը թագաւորելով մեռաւ (388):

Հ. Ալազարշակին մեռնելէն ետև՝ ուրիշ ինչ նոր փոփոխութիւն եղաւ .

Պ. Յոյնք և Պարսիկք որոշեցին նոյն միջոցին որ Հայաստանին Արևելեան կտորը Պարսից իշխանութեան տակը ըլլայ՝ Արևմտեանը Յունաց . ապա առաջառաւ Արշակ չուզելով Պարսից ծառայել՝ Յունաց մասը գնաց ու աթոռը Երիզա փոխեց :

ԴԱՍ ԺԱ .

Խոսարով Գ. Վառաճապոռնի և Արտաշէս Գ. :

Հ. Երբոր Արշակ իրեն նախարարներովը մեկտեղ Յունաց մասը գնաց, Պարսիկք զով գրին թագաւոր իրենց մասին մէջ .

Պ. Խոսարով անունով մեկը Արշակունեաց ցեղէն :

Հ. Ինչո՞ւ համար Արշակայ և Խոսարովու մէջ պատերազմ բացուեցաւ .

Պ. Ասան զի քանի մը նախարարներ Արշակայ կողմէն Խոսարովին մասը անցնելու առեննին, յափրշտակեցին Արշակայ գանձերը և Խոսարովին տարին : Արշակ աղաչանքով ուզեց իր գանձերը, բայց երբոր Խոսարով մտիկ չըրաւ, պատերազմ բացուեցաւ մէջերնին :

Հ. Ո՞ր կողմը յաղթեց .

Պ. Երկու կողմանէ ալ սաստիկ ջարդ ըլլաւէն

եաքը՝ խոսրով յաղթեց : Արշակ քիչ մը ասե՛ն
ալ սպրեւէն ետքը մեռաւ :

Հ . Արշակայ տեղը զո՞վ թագաւոր դրին Յոյ-
ները .

Պ . Թագաւորի տեղ յոյն կոմս մը դրին ու Գա-
զաւոն քաջ հայ իշխանն ալ սպարապետ :

Հ . Յունաց բաժնին հայերը աս բանս երբոր
տեսան ի՞նչ ըրին .

Պ . Նախարարները աղաչեցին խոսրովու որ զի-
րենք ալ իր մասին մէջը ընդունի և իրենց առջի
կալուածները տայ . խոսրով յանձն առաւ և ա-
սով զօրացած կայսեր խօսք տուաւ , որ բոլոր հար-
կը կը վճարէ թէ որ ինքը իշխէ Յունաց բաժնին
ալ . կայսրն ալ հաւանեցաւ :

Հ . Ինչո՞ւ համար Շապուհ խոսրովին վրայ խաւ-
րեց իր Արտաշէր որդին .

Պ . Նախարարներէն ոմանք թշնամութիւն ու-
նենալով խոսրովին հետ , գացին սուտ ամբաստա-
նութիւն ըրին Շապուհին թէ խոսրով կ'ուզէ ա-
պրտամբիլ . ան ալ շատ զօրքով իր Արտաշէր որ-
դին խաւրեց :

Հ . Արտաշէր ի՞նչ կերպով բռնեց խոսրովը .

Պ . խոսրով տեսնելով որ ամէն կողմանէ անօգ-
նական մնաց՝ Արտաշէրի քով գնաց . ան ալ շղթայի
զարկած Անյուշ բերդը խաւրեց զինքը ու խոսրո-
վին վճառապուհ եղբայրը թագաւորեցուց (392) :

Հ . Վճառապուհ ի՞նչպէս թագաւորութիւն ը-
րաւ .

Պ . Խաղաղութեամբ ու խելացի կերպով , և ի-
րեն հաւատարիմ հպատակութեամբը Պարսից
Վճամկրման թագաւորին ալ շատ սիրելի եղաւ :

Հ. Առամկերտան ինչ փոխարէն ըրաւ Առամչապուհին հաւատարմութեանը .

Պ. Իբ խոսրով եղբայրը Աջուշ բերդէն հանեց ու պատուով կը պահէր :

Հ. Առամչապուհի ատենը ինչ ուսումնական յառաջագիտութիւն ըրաւ ազգերնիս .

Պ. Սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ տեանելով ազգին խաղաղութիւնը և Առամչապուհին ուսումնասիրութիւնը ետեւէ եղան հայերէն գիրերը գրանալու, ու գպրոցներ բանալով ազգին ուսումնական կենդանութիւն ատւին (406) :

Հ. Առամչապուհ սրչափ ատեն թագաւորեց .

Պ. Քամնըմէկ տարի՝ ամենայն բարեկարգութիւն և ուղղութիւն ընելով :

Հ. Առամչապուհին տեղը ո՞վ թագաւորեց .

Պ. Կորէն խոսրով թագաւորեց երկրորդ անգամ, որովհետեւ Առամչապուհին Արտաշէս որդին գեռ պղտիկ էր :

Հ. Խոսրով Պ. երկրորդ անգամ սրչափ ատեն թագաւորեց .

Պ. Մէկ տարի միայն ու մեռաւ (414) :

Հ. Խոսրով Պ. էն ետքը ինչ պատճառաւ Հայաստան տակնուվրայ եղաւ .

Պ. Ասան զի Յազկերտ ուղելով որ Հայերը կրա կապաշա ընէ, իբ որդին Շապուհը Հայոց թագաւոր գրաւ :

Հ. Ինչ կերպով Յազկերտի աս խորհուրդը առաջ չցնաց .

Պ. Քանի մը տարիէն Յազկերտ հիւանդացաւ .

ան պատճառաւ Շապուհ ալ Պարսկաստան գնաց
որ Թագաւորութիւնը սանկէ . բայց Յաղկերա մե-
ռաւ ու ինքն ալ սպաննուեցաւ :

Հ . Շապուհին երթալէն ետե նախարարները
ինչ ըրին .

Պ . Շապուհին թողուցած զօրացը վրայ վազե-
ցին ու աղէկ ջարդ մը տալով փախուցին . բայց
Վասմ Պարսից Թագաւորէն վախնալով ամէնքն
ալ ջրուեցան ու իրենց բերդերը քաշուեցան :

Հ . Վասմ Խոսրովին անոր զով Թագաւոր գրաւ
Հայոց վրայ .

Պ . Աղգերնիս լաւ մը շարչարելէն ետքը , Թա-
գաւոր գրաւ Վասմշապուհին Արտաշէս որդին
տասներու թը տարուան , ու անունն ալ փոխելով
Արտաշիր գրաւ :

Հ . Արտաշէս կամ Արտաշիր ինչպիսի կառա-
վարութիւն ունեցաւ .

Պ . Անկարգ ու մոլի ըլլալով ամենուն ասակե-
կաւ :

Հ . Ի՞նչպէս վերջացաւ Արշակունեաց Թագա-
ւորութիւնը .

Պ . Նախարարները ձանձրացած Արտաշէսի ան-
կարգութիւններէն , Վասմին աղաչեցին որ Թա-
գաւորութիւննին վերջնէ ու իրենց վրայ պարսիկ
մարդպան մը գնէ . Վասմ ալ կատարեց ինչպիսիք-
նին :

Հ . Չեղան մեկը որ Թագաւորութեան վերջու-
լուն գէտ կենայ .

Պ . Սուրբ Սահակ Հայրապետը շատ ջանաց նա-
խարարներուն չար միտքը փոխել , նաև Վասմայ

առջևն ալ պաշտպանեց Արաաշէսը . բայց Վասմ
մտիկ չընելով բանա դնել առաւ զինքը ու Ար-
աաշէսն ալ պստրեց (428) :

Ն . Արաաշէս որչափ ատեն թագաւորեց .

Պ . Վ եց տարի . սպստրուէլէն վերջն ալ քանի
մը տարի ապրեցաւ ու մեռաւ :

ՄՍ.ՏԶ.ՊԱ.ՆԱ.Ց ԺԱ.ՄԱ.ՆԱ.ԿԸ

Դ Ա Ս Ժ Բ . .

Վ ԵՆԸ ԽՆՐՀԱՊՈՒՆ Ե ՎԱՐԴԱՆԵԱՆԵՅ ԱԿԱՆՆԵՐԱԳՈՐ:

Հ. Արշակունեաց Թագաւորութիւնը վերնալէն ետեւ Հայաստանի ո՞վ կ'իշխէր .

Պ. Պարսից Թագաւորը իր կողմէն իշխան մը կը խրկէր որ Հայաստանի հարկը ժողովէ, և հոն նըստելով աչք ունենայ Հայոց հաւատարմութեանը վրայ . աս իշխանը Մարզպան կ'ըսուէր:

Հ. Ո՞վ եղաւ առաջին Մարզպանը .

Պ. ՎԵՏՄԻՏՐՀԱՊՈՒՆՏ անունով պարսիկ մը:

Հ. Ի՞նչ աչքով կը նայէր ասիկայ Հայոց վրայ .

Պ. Բնութեամբ ըստ մարդ ըլլալով խիստ աղէկ նայեցաւ ազգը, տասներչորս տարի:

Հ. ՎԵՏՄԻՏՐՀԱՊՈՒՆՏին տեղը ո՞վ գրուեցաւ մարզպան .

Պ. Վասակ Սիւնեաց իշխանը, որ իր ազգին ամենայն շարիք հասուց (442):

Հ. Ի՞նչ պատճառաւ Յազկերտ պարսիկ մարզպանի տեղ Վասակը գրաւ .

Պ. Որպէս զի անով Հայոց սիրաբը վաստակի և վերջը ուզածը ընէ :

Հ. Ուրիշ ի՞նչ հարբ բանեցուց Յազկերտ Հայերը կրակապաշտ ընելու .

Պ. Հրաման հանեց որ Հայերը իրեն զօրք տան , որպէս զի ասով ազգին մեծերը և պատերազմական զօրութիւնը հեռացրնէ որ չկարենան իրեն գէժ գնել :

Հ. Հայերը Յազկերտին հրամանը կատարեցին .

Պ. Միաբան խորհրդով բազմաթիւ գունդ մը խաւրեցին . որոնց հետ մէկտեղ գացին խել մը նախարարներ ու քահանաներ :

Հ. Ի՞նչ ըրաւ Յազկերտ աս զօրքերը .

Պ. Հոնաց վրայ պատերազմի տարաւ , ուր որ վեց եօթը տարի պատերազմով յոգնեցրնէլէն ետեւ, սկսաւ զամէնքն ալ կրակապաշտութեան ստիպել :

Հ. Նախարարներէն ո՞վ յայտնի թագաւորին հրամանին գէժ գնելով նահատակուեցաւ .

Պ. Գարեգին քաջ նախարարը որ թագաւորին ըսածներուն գէժ գնելով խաղբ ըրաւ զինքը ու նահատակուեցաւ :

Հ. Ուրիշ որո՞նք նահատակուեցան .

Պ. Ատովմ Գնունի և Մանաճիհր Ոչտունի իրենց զօրքերովք . որոնք տեսնելով Յազկերտին աւորէն հրամանը փախեր էին . բայց Յազկերտ ետենէն զօրք զսկեց ու զամէնքն ալ թրէ անցրնել տուաւ :

Հ. Ան միջոցին որ նախարարներէն ամանք Պարսկաստան էին՝ Հայաստան ի՞նչ վիճակի մէջ էր .

Պ. Յազկերտ Դենշապուհ անուետ Քննիչ մը խաւրեց՝ որ Հայերը շատ նեղեց ու բաց ասկէ թուղթ մ' ալ գրել տուաւ Հայոց՝ ստիպելով որ կամ պատասխանը տան և կամ Պարսից կրօնքը ընդունին. Յովսէփ կաթուղիկոս աղջին միաբան հաւանութեամբը թղթին պատասխանը գրեց :

Հ. Յազկերտ երբոր առաւ թղթին պատասխանը ինչ ըրաւ .

Պ. Սասաիկ բարկացաւ ու հրաման գրեց որ բոլոր աղջին մեծամեծ նախարարները Պարսկաստան գան :

Հ. Նախարարները հնազանդեցան .

Պ. Ճարերնին հասնելով ելան գացին՝ սրոնց գլխաւորներն էին Վ շատկ և Վ շորգան :

Հ. Երբոր նախարարները Պարսկաստան հասան՝ Յազկերտ հեաերնին ինչպէս վարուեցաւ .

Պ. Մէկէն բանա գնել տուաւ ու սկսաւ ստիպել որ կամ հաւատքնին ուրանան ու իրենց առջի պատուոյն հասնին , և կամ մեռնին :

Հ. Նախարարները աս երկուքէն ո՞րը յանձն առին .

Պ. Տեսնելով որ եթէ իրենք մեռնին Հայաստան տաքի տակ կ'երթայ , գրտուանց յանձն առին ու արեւու երկրպագութիւն ըրին , և շատ մոգերով Հայաստան դարձան :

Հ. Հայերը երբոր խմացան մոգերուն գալը ինչ ըրին .

Պ. Սուրբ Ղևոնգ և ուրիշ աստուածընտիր քահանաներ ժողովրդեան հետ միացած վրանին վազեցին ու լաւ մը ջարդ տալով լեղասպատառ փախուցին մոգակար իրեն մոգերովը :

Ն. Ի՞նչ կերպով հանդարտեցաւ ժողովուրդը .

Պ. Սուրբ Աւարդան Յովսէփ կաթուղիկոսին օտարը կննալով իրեն մեղացը թողութիւն խնդրեց . իսկ Ասասկ սառութեամբ համոզեց քահանաները որ առ ժամն գէժ չդնեն մտքերուն՝ որպէս զի Յազկերտի առջև յանցաւոր չսեպուին , ու վերջը կամաց կամաց վանան :

Ն. Ասասկայ առ խորհուրդը ի՞նչ հետեանք ունեցաւ .

Պ. Հախարարները տեսնելով որ կամաց կամաց կրակապաշտութիւնը կը հաստատուի Հայաստանի մէջ ու Ասասկ Պարսից հետ միացած շարիքներ կը հասցընէ Հայոց , վրան վազեցին փախուցին Պարսիկները ու զինքն ալ բռնեցին . բայց աւետարանին վրայ երգում ընելուն համար՝ նորէն ազաթ թողուցին :

Ն. Հայերը իրենց առ նեղութիւններուն մէջ ուրիշներէ օգնութիւն չուզեցին .

Պ. Յունաց Թէոդոս փոքր կայսրէն օգնութիւն խնդրեցին . բայց երբոր անիկայ մեռաւ , իր յաջորդը Մարկիանոս չօգնեց :

Ն. Երբոր Հայերը յոյսերնին կարեցին Յոյներէն ի՞նչ ըրին .

Պ. Հարիւր հազարի չափ մարդիկ Շահապիվան քաղաքը ժողովուրդով իրեք գունդ բաժնեցին բոլոր զօրքը :

Ն. Աս գունդերուն զօրավար որո՞նք գրուեցան .

Պ. Պարսից գէժ կենալու գնդին զօրավար զըրուեցաւ Ներշասուհ Արծրունի . երկրորդին Աւարդան որ Աղուանից օգնութիւն գնաց , ու երրորդ

զունդը տունն Վասակայ Հայաստանը պահելու
համար :

Հ. Վարդան Աղուանից երկիրը ինչ քաջու-
թիւն ըրաւ .

Պ. Պարսից զօրքերը փախուց՝ մոգերը ջարդեց
ու համարձակ քրիստոնէութիւնը պաշտել տուաւ :

Հ. Ան միջոցին որ Վարդան Աղուանից կողմերն
էր, Վասակ ինչ կ'ընէր Հայաստան .

Պ. Հաւատքը ուրացած նորէն սկսաւ եկեղեցի-
ները աւրել ու կրակապաշտութիւն խոթել Հայ-
աստանի մէջ :

Հ. Յազկերտ տեսնելով Հայոց պատրաստու-
թիւնները ինչ ըրաւ .

Պ. Միհրնբերսէհ անունով պարսիկ հազարապե-
տը խաւրեց որ երթայ պատերազմը ըմբռնէ, որուն
կողմը անցաւ համարձակ Վասակ ու ինքը վրան
առած պատերազմին հոգը ամէն չարիք կ'ընէր :

Հ. Հայերը վերջի պատերազմին ինչպէս պատ-
րաստուեցան .

Պ. Վարդանայ հրամանաւը վաթսուն հազար
հոգի ժողովուեցան, և պատերազմի պատրաստուե-
ցան Աւարայր գեղին քովերը :

Հ. Ինչպէս ըմբցաւ աս վերջի պատերազմը .

Պ. Մեծն Վարդան և իրեն ընկերները շառ քա-
ջութիւններ ընելէն ետքը՝ Վարդան քաջութեամբ
զարնուելով մեռաւ, և երկու հարիւր իննսուն հո-
գի ալ իր ընկերներէն մեռան նոյն օրը . բաց ա-
սանցմէ նոյն օրերը բոլոր հաւատքի և հայրենեաց
վրայ մեռնողներուն թիւը եղաւ հազար երեսունը
վեց հոգի (451) :

Տ. Վասակ ուրիշ ի՞նչ չարիք հասուց հայոց .

Պ. Ձեռքը ինկածը կամ կ' սպաննէր և կամ հաւատքը ուրացնել կուտար . նոյնպէս բռնեց ան պատուաւոր քահանաները որոնք սուրբ Ղևոնդի անունովը Ղևոնդեանք բսուեցան ու շղթայակապ կը պահէր, որ վերջը Պարսկաստան տարուելով հոն նահատակուեցան :

Տ. Վասակ իրեն չարութեան պատիժը ի՞նչպէս գտաւ .

Պ. Յանցաւոր գտնուելով Յազկերտի առջև որ աս ամէն չարիքէն ետքը չկրցաւ հայերը արևապաշտ ընել, բանաւ գրուեցաւ ուր որ որդնոտելով մեռաւ ու կորսուեցաւ :

ԳՍՍ ԺԳ.

Ատրորմիզդ և Ատրոյշնասայ և Վահանայ բրաժ պատերազմները :

Տ. Վասակին տեղը ո՞վ գրուեցաւ մարզպան .

Պ. Ատրորմիզդ, որ խել մը քահանաներ բռնեց ու շղթայի զարկաւ :

Տ. Ատրորմիզդայ ատենը քրիստոնէութիւնը ի՞նչ վիճակի մէջ էր .

Պ. Առ արտաքս հրաման տուաւ որ ամէնքը իրենց հաւատքը պաշտեն, թէպէտ և կրակատուններն ալ պահաս չէին : Աս ընելով սկսաւ նախաբարները ստիպել որ Յազկերտին երթան առանց վախի՝ երդուրննալով որ իրենց վտանգ մը չըլլար :

Հ. Կախարարները երբոր Պարսկաստան հասան՝
Յազկերտ ինչ կերպով ընդունեցաւ զիրենք .

Պ. Մէկէն բանա զնել տուաւ ու սկսաւ զիրենք
ստիպել որ հաւատքնին ուրանան . բայց և ոչ մէկը
թուլցաւ հաւատքէն :

Հ. Կախարարները որչափ ատեն բանաք կեցան .

Պ. Երկար ատեն բանաք կենայէն և շատ տան-
ջանքներ քաշելէն ետև՝ Շղո՛հապուհ անունով իշ-
խանին աղաչանքովը աղատեցան բանտէն ու Պարս-
կաստան կը կենային .

Հ. Դեռ որչափ ատեն ալ Պարսկաստան կեցան
նախարարները .

Պ. Ութը տարի ալ կենայէն ետև երբոր Ատրը-
վըշնասպ մարզպան կուգար Հայաստան , իրենք ալ
մէկտեղ եկան (464) :

Հ. Ո՛վ էր մեծն Ահհան .

Պ. Մեծին Արդանայ Հմայեակ եղբորը մեծ
որդին էր :

Հ. Ինչո՞ւ համար Ահհան հաւատքը ուրացաւ .

Պ. Ասան զի իրեն անթիւ կատարելութիւննե-
րովը ամենուն սիրելի էր . ուստի Պարսկաստան
գտնուող ուրացեալ նախարարները վրան նախան-
ձելով զինքը ամբաստանեցին Պերոզի . Ահհան ալ
անոր աջքէն չկնալու համար հաւատքը ուրացաւ :

Հ. Ահհան ինչպէս նորէն քրիստոնէութեան
հաւատքը դարձաւ .

Պ. Լսելով որ Ախիթանկ Արայ թագաւորը
Պարսիկներէն ապստամբեր է , իրեն հետ եղած
Հայերն ալ յորդորեց որ իրենք ալ ապստամբին
ու նորէն քրիստոնէութեան համար սրտերազմին :

Հ. Վահանայ ըրած առաջարկութիւնը յանձն առին :

Պ. Շատերը յանձն առին ու Վահանը սպարապետ դրին՝ և Սահակ Բագրատունին ալ մարզպան Ատրիշնասպայ տեղը՝ զորն որ սպատերազմի մէջ քսպաննեցին (481) :

Հ. Վահան երբոր ուրիշ նախարարներու ալ իմացուց իրեն ապստամբելը ինչ ըրին անոնք .

Պ. Փոխանակ օգնելու՝ ուրիշ գացողներու ալ արգելք եղան ու ետևեն վազելով խափանեցին . բայց քանի մը հոգի իրեն հետ միաբան կեցան :

Հ. Պերոզ երբոր ըսեց Վահանայ ապստամբելը ինչ ըրաւ .

Պ. Արներսեսին ձեռքովը շատ զօրք խաւրեց ապսպրելով որ Վահանը ողջ բռնեն :

Հ. Վահան Արներսեսին դէմ քանի՞ հոգւով գնաց .

Պ. Խիստ քիչ հոգւով, Յովհան Մանգակունին ալ հետը առած . անոր համար քաջութեան հետ աստուածային զօրութիւնը և հաւատքը օգնական առած՝ մեծ ջարդ մը տուաւ թշնամեաց բանակին :

Հ. Ո՞վ խաւրուեցաւ նորէն Վահանայ դէմ .

Պ. Միհրանը, Հայրց և Վախթանկ Վրաց թաղաւորին դէմ :

Հ. Վահան ինչո՞ւ համար Վրաստան գնաց .

Պ. Վասն զի Վախթանկ օգնութիւն ուղեր էր Հայերէն Պարսից դէմ գնելու . Վահան ալ գնաց իրեն խոստմանը դէմ չընելու համար :

Հ. Վախժանիկ ինչ խարդախութիւն ըրաւ Վա-
հանայ .

Պ. Միհրանայ հեա խօսքը մէկ ընելով, Վահա-
նը տնտընացուց ան տեղուանքը, ինչուան որ Միհ-
րան իր անթիւ զօրքերովը հասաւ ու Վահան յան-
կարծակիի գալով չկրցաւ պատրաստուիլ որով և
յաղթուեցաւ :

Հ. Ինչ երևելի մարդիկ մեռան աս պատերազ-
միս մէջ .

Պ. Սահակ Բագրատունին ու Վասակ Վահա-
նայ եղբայրը . իսկ մնացածներէն շատը Միհրանայ
կողմը անցան ու մնաց հարիւր հոգի որոնք Տայոց
կողմերը փախան :

Հ. Միհրանին տեղ ո՞վ սպարապետ դրուեցաւ .

Պ. Զարմիհր Հաղարաւուխտ որ նոյնպէս չկրցաւ
Վահանայ անպարտելի արութեանը յաղթել :

Հ. Վահան Հաղարաւուխտին ձեռքէն ինչպէս
ազատեցաւ .

Պ. Հաղարաւուխտ իմանալով որ Վահան Դուին
փախեր է, գնաց Դուինը պաշարեց . Վահան չու-
ղելով որ իր պատճառաւ քաղքին փնաս մը հաս-
նի, իրեն քիչ մարդիկներովը ելաւ քաղքէն ու
Պարսիկները ճղքելով գնաց Շաղագոմ գաւառը :

Հ. Հաղարաւուխտին տեղը ո՞վ խրկուեցաւ .

Պ. Շապուհ Միհրանեան սրարսիկը, որ իմանա-
լով Վահանայ ուր տեղ ըլլալը՝ եկաւ պաշարեց :

Հ. Վահան ինչ կերպով ազատեցաւ Շապու-
հին ձեռքէն .

Պ. Խել մը գեղացոց ձեռքը վահաններ ու բա-
հեր տալով իր կեցած տեղը շարեց, ու ինքը ուրիշ

ճամբով Պարսից վրայ վազեց գիշերանց, ու խոս-
վութիւն ձգելով Պարսից բանակին մէջ վեց հա-
րիւր հոգիի չափ մեռուց ու մնացածներն ալ փա-
խան :

Հ. Ահա՛ն ուրիշ ի՞նչ քաջութիւններ ըրած
ունի .

Պ. Անգամ մը երեսուն հոգևով Շապուհին դէմ
ուրիշ մեծ յաղթութիւն մ'ալ ըրաւ նոյնպէս յան-
կարծակի վրանին վազելով երբոր անոնք անսխոյժ
կեցեր էին տեսնելով Ահա՛նին զօրացը քիչուս-
րութիւնը :

Հ. Պարսիկք ի՞նչ կերպով Ահա՛նայ հետ հաշ-
տուեցան .

Պ. Երբոր Պերոզ մեռաւ ու Աղարշ իր եղ-
բայրը թագաւորեց, ասիկայ լսած ըլլալով Ահ-
հանայ քաջութիւնները ու իրեն արդար պահանջ-
մունքը, ուղեց հաշտուիլ հետը . ուստի Նիխոր ա-
նունով խաղաղասէր մարգը խաւրեց որ երթայ աս
բանս կատարէ :

Հ. Ի՞նչ կերպով կատարուեցաւ աս հաշտու-
թիւնը .

Պ. Ահա՛ն դաշինք գրաւ Նիխորայ հետ, որոնց
զլխաւորն էր թէ քրիստոնէութիւնը ազատ պաշ-
տուի Հայաստանի մէջ ու Պարսիկք բնաւ չխառ-
նուին : Նիխոր յանձն առաւ . ան ատեն Ահա՛ն
գնաց Պարսից դուռը ու նորէն երգում առաւ թա-
գաւորէն, և ընդհանուր սպարապետ գրուելով
գարձաւ Հայաստան :

Հ. Ի՞նչպէս մարդպան եղաւ Ահա՛ն .

Պ. Երբոր Անդեկան մարդպանը Պարսկաստան
գարձաւ այնչափ գովեց զԱհա՛նը, որ Աղարշ

ալ զինքը մարդպան գրաւ , ու Վահանին Վարդ
եղբայրն ալ սպարապետ :

Հ . Ինչո՞ւ համար վերջը նորէն Վահանին տեղը
Պարսիկ մարդպան գրուեցաւ .

Պ . Երբոր Վաղարշ մեռաւ , Պերոզին որդին Վա-
ւաաը թագաւորեց . ասիկայ մոգերէն յորդորուած
Վահանայ տեղ Պարսիկ մարդպան մը խաւրեց և
հետն ալ շատ քուրմեր . ասով նորէն խռովութիւն
ինկաւ հայաստան :

Հ . Հայերը ընդունեցան նոր մարդպանն ու քուր-
մերը .

Պ . Վահան ուրիշ նախարարաց հետ միաբանե-
լով վազեց նոր մարդպանին վրայ ու վճնտեց հայ-
աստանէն :

Հ . Վահան որչափ տանն մարդպանութիւն ը-
րաւ .

Պ . Քսանը վեց տարի ամէն գովելի հանգամանք-
ներով (491) :

ԳԱՍ ԺԳ .

Վարդէն ինչուսն Սմբատին կիւրապադատու-
րիւնը :

Հ . Վահանին տեղը ո՞վ գրուեցաւ մարդպան .

Պ . Վարդ Վահանին պզտի եղբայրը որ չորս
տարիէն մարդպանութենէն ինկաւ , վրան սուտ
ամբաստանութիւններ ընկելուն համար :

Հ . Վարդին տեղը ո՞վ գրուեցաւ .

Պ. Բուրղանն անուևով անպիտան պարսիկը որ իրեք տարի Հայերը շատ նեղեց :

Հ. Ի՞նչ մարդ է Մժեժ Գնուևի .

Պ. Կարիճ՝ մարդ մըն էր , որ երբոր Հոնք Հայաստանի վրայ վազելով աւերմունք կ'ընէին , դէմերնին ելլելով յաղթեց անոնց ու վնասեց Հայաստանէն :

Հ. Մժեժ իրեն աս արդեանցը համար ի՞նչ փոխարէն ընդունեցաւ Կաւատէն .

Պ. Բուրղանին տեղը մարդպան գրուեցաւ՝ որն որ երեսուն տարի մարդպանութիւն ըրաւ .

Հ. Մժեժին տեղը որոնք մարդպան գրուեցան .

Պ. Դենշապուհ պարսիկը որ Հայերը շատ կը նեղէր հաւատքի համար , որն որ Մովսէս կաթուղիկոսին աղաչանքովք փոխուեցաւ ու տեղը ուրիշ մը եկաւ . վերջը զրկուեցաւ Սուրէն Ճիհր որ Հայերը շատ նեղեց :

Հ. Աս միջոցներուն ի՞նչ նշանաւոր փոփոխութեան բան եղաւ Հայաստանի մէջ .

Պ. Մովսէս կաթուղիկոս Հայոց տօմարը նորոգելով նոր թուական հաստատեց , ուսկից սկսեալ ինչուան հիմա 1309 տարի է :

Հ. Սուրէն մարդպանը ի՞նչպէս սպաննուեցաւ .

Պ. Սուրէն՝ Վարդան Մամիկոնեանին Մանուէլ էղբայրը սպաննեց . Վարդան աս բանիս վրայ բարկացած՝ զօրք ժողովեց վազեց Դուին քաղքին վրայ ու քաղաքը ատնելով Սուրէնը սպաննեց ու զօրքն ալ ջարդեց ու ցրուեց (564) :

Հ. Երբոր Վարդանայ աս ըրած գործքը հասաւ .

Խոսարով Պարսից Թագաւորին ահանջը, ինչ ըրաւ Խոսարով .

Պ . Ըստ զօրք խաւրեց Վարդանայ վրայ . բայց Վարդան վարպետութեամբ պատերազմելով յազմեց անոնց ու զրուեց :

Հ . Երբոր Խոսարով աւելի մեծ բանակ մը խաւրեց, Վարդան ինչ ըրաւ .

Պ . Տեսնելով որ իր քովիներէն շատը փախան զատուեցան, ինքն ալ Ստամբուլ գնաց և Յուստինիանոս կայսրէն օգնութիւն ուզեց . Յուստինիանոս ալ տուաւ :

Հ . Վարդան Յունաց օգնութեամբը կրցան Պարսից յազմել .

Պ . Խոսարով ինքը անձամբ հարիւր քառասուն հազար զօրքով Վարդանայ և Յունաց վրայ եկաւ . և երկու կողմէն ալ շատ ջարդ ըլլալէն ետեւ, նորէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան :

Հ . Երբոր նորէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան սփ եղաւ մարզպան .

Պ . Ճիհր Վզոն խաղաղապէր Պարսիկը՝ տասնըհինգ տարի : Ասիկայ էն վերջի Պարսիկ մարզպանը եղաւ (578) :

Հ . Ճիհր Վզոնին տեղը սփ եղաւ մարզպան .

Պ . Սմբատ Բաղմայազմ իրեն քաջութիւններուն համար, որն որ ութը տարի մարզպանութիւն ըրաւ :

Հ . Իրեն սփ յաջորդեց .

Պ . Դաւիթ Սահառունի որ քսանըչորս տարի մարզպանութիւն ընելէն ետքը, վախնալով Պարսիկներէն թողուց իշխանութիւնը և Վաստանգնուպօլիս փախաւ :

Հ. Դաւիթ Սահառունիին ասենք ի՞նչ յիշատակի արժանի գործողութիւն եղաւ Հայաստանի մէջ :

Պ. Մուշեղ Մամիկոնեան իշխանին և Գայլ Աւահանին Պարսից հետ ըրած պատերազմները :

Հ. Ի՞նչ պատճառաւ եղան առ պատերազմները :

Պ. Խոսքով պատճառաւ մը թշնամանալով Մուշեղայ հետ, վրան պատերազմի ելաւ . Մուշեղ ալ իրեն օգնութիւն կանչեց Աւահան իբր ազգականը, որ իր վարպետութիւններուն համար Գայլ ըսուեցաւ :

Հ. Գայլ Աւահանին քաջութեանցը ու վարպետութեանցը ո՞վ հեռևոյ եղաւ .

Պ. Իբր որդին Սմբատը որ Պարսից շատ անգամ յաղթեց ու չորս երևելի զօրավարներ սպաննեց :

Հ. Դաւիթ Սահառունիին տեղ ո՞վ մարզպան գրուեցաւ .

Պ. Արաղափրոց Սմբատ Բաղմայաղթին որդին, որ եօթը տարի մարզպանութիւն ընելէն ետքը իր ընտանիքովը Ստամբուլ փախաւ :

Հ. Ո՞վ եղաւ առջի կիւրապաղատ .

Պ. Դաւիթ Սահառունիին :

Հ. Ի՞նչպէս եղաւ որ Դաւիթ կիւրապաղատ խրկուեցաւ .

Պ. Առ միջոցներուն Պարսից մէջ խռովութիւն ինալով, Հայերը Յոյներուն ապաւինեցան ու իրենցմէ իշխան մը ուզեցին . անոնք ալ Դաւիթը խաւրեցին կիւրապաղատ անուանելով որ իշխանութեան անուն մըն է . բայց չորս տարիէն նորէն Հայերը վանեցին զԴաւիթը :

Հ. Պարսիկներէն զատ ուրիշ ինչ թշնամի սկը-
տաւ վազէլ Հայաստանի վրայ առ միջոցներուն .

Պ. Հագարացիք՝ որ Պարսիկներէն աւելի շատ
չարիք հասուցին Հայոց :

Հ. Հագարացւոց արշաւանացը եղան նախա-
րարներ որ դէմ գնեն .

Պ. Թէոգորոս Ռշտունի և Վահան Վամսարա-
կան ութը հազար զօրքով (676) :

Հ. Վահանին այսպիսի ազգասիրական գործո-
ղուժեանը որոնք արգելք եղան .

Պ. Երբոր Հագարացւոց դէմ պատերազմի ելեր
էր, Սահուռ Մեծեացին և ուրիշները Հագարա-
ցւոց կողմը անցնելով սկսան Տաճիկներուն հետ
մեկտեղ Հայերը ջարդել և այսպէսով ցրուեցին
Վահանայ զօրքերը :

Հ. Հագարացիք Վահանայ զօրքը ջարդելէն ետև
ինչ ըրին .

Պ. Շատ մարդ թրէ անցնելէն ետև, երեսունը-
հինգ հազար հոգի ալ գերի տարին :

Հ. Հագարացւոց առ քրած ջարդէն ետև ով խոր-
կուէցաւ կիւրապազատ Յունաց կողմանէ .

Պ. Վարազաիրոց որ տարիէ մը մեռաւ և իրեն
յաջորդեց իր աղան Սմբատ :

ԳՍՍ ԺԵ.

Սմբատ կիւրապաղատէ ինչո՞ւսն Բագրատու-
նեաց քաղաւորութեան կանգնուիլը :

Հ. Սմբատին կիւրապաղատութեան ատեն Հայե-
րը հանգիստ անցուցին .

Պ. Սմբատին կիւրապաղատութեան երրորդ
տարին Հագարացիք վազեցին Հայաստանի վրայ
ու շատ կոտորածներ ըրին . նախարարները միա-
բան հնազանդեցան Հագարացւոց և Յունաց իշխա-
նութենէն ելան , որուն Յոյները շատ նեղացան
(683) :

Հ. Սմբատին տեղը ո՞վ եղաւ իշխան .

Պ. Համազասպ Մամիկոնեան որ քիչ մը ատե-
նէն նորէն Յունաց հնազանդելով անոնցմէ Պա-
տրիկ ըսուած իշխանութիւնը առաւ : Ամիրապետը
բոլոր իրեն քովի եղած Հայ պատանդները թրե-
անցնել տուաւ . անոր յաջորդին նորէն հնազան-
դեցան Հայերը , ու քիչ ատենէն Համազասպն ալ
մեռնելով իրեն տեղը պատրիկ դրուեցաւ իր եղ-
բայրը Գրիգոր :

Հ. Գրիգոր ո՞րչափ ատեն պատրիկ եղաւ ու ի-
րեն ո՞վ յաջորդեց .

Պ. Քասանդուրոս տարի . ու վերջը պատերազմի
մէջ մեռաւ : Երկու տարի տակն ու վրայ եղաւ
Հայաստան , ինչուան որ Աշոտ Բագրատունին զօ-
րանալով թշնամեաց դէմ դրաւ Հագարացւոց հարկ
տալով :

Հ. Աշոտ սրչափ ատեն պատրիութիւն ըրաւ .

Պ. Յոյները իմանալով որ Հայերը Հագարացւոց հարկատու եղեր են, շատ զօրք խաւրելով մեծամեծ աւերմունքներ ըրին Հայաստան . Հագարացիք ալ ընդհակառակն կարծելով որ Հայերը Յունաց հնազանդեր են՝ իրենք ալ նոյնպէս շատ մնասներ հասուցին Հայոց . Աշոտ ասոնց դէմ դրաւ քաջութեամբ, բայց ինքն ալ զարնուելով մեռաւ իրեք տարի իշխելէն ետքը (692) :

Հ. Աշոտին մեռնելէն ետև ո՞վ իշխեց Հայոց .

Պ. Հագարացիք, որոնք Քրիստոսի 693 թուականին սկսան Հագարացի իշխան մը խաւրել Ոստիկան անուանով, որոնց առջինը եղաւ Աբղղա :

Հ. Աբղղային առջի գործողութիւնը ո՞րն եղաւ .

Պ. Նախարարները և Սահակ կաթուղիկոսը բռնեց ու Դամասկոս խաւրեց : Քիչ մը ատենէն Սըմբատ Բիւրատեանը վճռեց զինքը Հայաստանէն Յունաց օգնութեամբ :

Հ. Հագարացիք Սմբատայ աս ըրած գործողութեան վրէժը ի՞նչպէս հանեցին .

Պ. Մոհմատ անուանով զօրավարը խաւրեցին որ շատ մնաս հասուց . ու վերջը Սահակ կաթուղիկոսին աղաչանաց թղթովք խաղաղութիւն ըրաւ ու գերիները ազատեց :

Հ. Նախարարաց ազատելէն ետև կաշմ ոստիկանը ի՞նչ չարիք հասուց Հայոց .

Պ. Նախարարները և ուրիշ ազգին մեծերը Նախջուանի եկեղեցւոյն մէջը այրել տուաւ (704) :

Հ. կաշմին ակզը որոնք գրուեցան ոստիկան .

Պ. Վ իլթ ու Մահմետ, որոնք շատ չարիք հա-

տուցին . և Աբղղազիզ որ քաղցրութեամբ խնամեց ազգը :

Հ . Ասոնց տեղն ալ որոնք գրուեցան սասիկան .

Պ . Մրուան որ երկու տարինն Աշտար իշխան գնելով ինքը գնաց ամիրապետ եղաւ . բայց երբոր Մրուան մեռաւ , Աշտարն տեղը Եզխա անունով շար մարդը սասիկան գրուեցաւ որ Հայերը շատ նեղեց (758) :

Հ . Եզխաին տեղը ո՞վ իշխեց Հայոց .

Պ . Սահակ Բագրատունի բարեպաշտ մարդը պատրիկ գրուեցաւ , որուն վեցերորդ տարին Սիւլէյմանը սասիկան խրկուեցաւ . քիչ մը ատենէն եկաւ Պեքիր անազորս մարդը , ու վերջն ալ Հասան՝ որ ամենէն աւելի նեղեց Հայերը :

Հ . Հասանին ատենը Հայերը ի՞նչ գործողութիւն ըրին .

Պ . Մուշեղ Մամիկոնեան իշխանը Հասանին գորքերը լաւ մը շարդեց ու զինքն ալ Դուինէն փախուց . նոյնպէս նաև Աշտար Մասիկեր իշխանը քանի մը անգամ յաղթեց Հագարացոց , ինչուան որ Եզխա Բ . շատ զօրքով նորէն նուաձեց Հայերը ու շատ շարիք հասուց որուն նմանը չէր եղած Հայաստանի մէջ (787) :

Հ . Եզխան ետքը Հայերը ի՞նչ վիճակ ունեցան .

Պ . Քիչ մը հանգստացան , որովհետեւ որ Խուզիմա և Հոլ սասիկանները որ ետեւ ետեւ նստեցան՝ այնչափ չնեղեցին զՀայերը :

Հ . Հոյին տեղը ո՞վ իշխեց Հայոց .

Պ . Նախարարաց աղաչանքովք պատրիկ գրուեցաւ Բագարատ Բագրատունին , որ վերջէն տե-

բութեան ասիւ յանցաւոր գանուելով աչքէ ընկաւ :

Ն. Բազարապին տեղը ո՞վ խրկուեցաւ սասիկան .

Պ. Ապուսեթ, որ Բազարապը բռնեց ու Ղաւթասիոս խաւրեց : Աս բանիս բարկացած Սասունցիք՝ Ապուսեթին վրայ վազեցին ու սպաննեցին (849) :

Ն. Ամիրապետը երբոր ըսեց Ապուսեթին սպաննուիլը՝ ի՞նչ ըրաւ .

Պ. Բուզա սասիկանը խաւրեց հրաման տալով որ ձեռքէն եկած շարիքը հասցընէ Հայոց . որն որ բոլոր հայաստան արիւն լուայ ըրաւ :

Ն. Նախարարներէն չեղան մարդ մը որ Բուզային ընդգիմանայ .

Պ. Աշոտ Արծրունին կ'ուզէր ընդգիմանալ . բայց տեսնելով որ ուրիշ նախարարները չեն օգներ, ինքն ալ շատ ընծաներով գնաց Բուզային սիրտը տանելու . բայց փոխանակ պատիւ ընգունելու տնով տեղով գերի գնաց :

Ն. Նախարարներէն ո՞վ եղաւ որ Բուզային առաջնորդեց որպէս զի ինքը պատուոյ հասնի .

Պ. Սժբատ սպարապետը . բայց Բուզա ամէն շարութիւն ընելէն ետքը փոխանակ պատուոյ հասցընելու շղթայի զարկաւ ու Պաղտատ գերի տարաւ, իր տեղը Շխիտ անունով Պարսիկը սասիկան գնելով :

Ն. Նախարարները և ուրիշ գերիները հոն ի՞նչ եղան .

Պ. Ամիրապետին բռնութիւններէն օմանք հաւատքնին ու բացան ու շատն ալ նահատակուեցան .

Սմբատաւ մեղացը վրայ զգջալով բանտին մէջը մե-
ռաւ ու խոստովանող ըսուեցաւ (856) :

Հ. Հայոց սյուշափ թշուառութեանց պատճառ
որոնք եղան .

Պ. Ոչ այնչափ Յոյները և Պարսիկները կամ
Հագարացիք, որչափ նոյն միջոցուան մեր ազգին
նախանձու, ատելութեան, անմարանութեան և
որ մեծն է անկրթութեան և անձնասիրութեան
զորացած ատեւերը : Ասոնցմէ ամէն կրթեալ ազգե-
րը խորշեր են, ինչպէս նաև մեր ազգն ալ իրեն
կրթութեան ատենը :

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Բ Ա Գ Ր Ա Տ Ո Ւ Ն Ե Ա Յ

Գ

—

Պ

Գ Ա Ս Ժ Զ

Աշտա Ա. և Ամբասա Ա.:

Հ. Բաղրատունեաց իշխանութեան առջի թագաւորը ո՞վ եղաւ .

Պ. Աշտա՝ Ամբասա խոստովանողին օրդին :

Հ. Ի՞նչ կերպով Աշտա առ իշխանութեան հասաւ .

Պ. Շեխինն ստախկանութեան ատենը Հայաստանի վրայ հոգ տանելով և Հաղարացւոց հաւատարմութիւն ցուցրնելով, Շեխինն տեղը վերակացու եղաւ Հայաստանի (859) :

Հ. Ի՞նչպէս թագաւոր եղաւ Աշտա .

Պ. Նախարարները Գեորգ կաթուղիկոսին հետ միաբանած ամիրապետէն խնդրեցին որ իրենց թագաւոր զնէ Աշտաը, խոստանալով որ հաւատարիմ կը կենան . ամիրապետը Աշտային լաւութիւնները լսած ընտրով կատարեց խնդրեցինն :

Հ. Աշտա ի՞նչ պատիւ գտաւ Վանն կայսերէն, ու ի՞նչպէս մեռաւ .

Պ. Հայաստանի ամեն կողմերը խաղաղցրենելէն
եւաքը Ստամբուլ գնաց Սեան կայսեր յարգութեան
համար, ուր որ մեծամեծ պատիւներ գտաւ. վեր-
ջը Հայաստան գառնալու ատենը Շիրակ համե-
լով ծանր հիւանդացաւ, ու ամէն հոգեւորական
պատարասաութիւնները ընելով մեռաւ 71 տարե-
կան, 24 տարի իշխելէն ու հինգ տարի թագաւո-
րելէն ետքը:

Հ. Սմբատ կրօնը հօրը տեղը անցաւ, ով եղաւ
որ թագաւորութեան աչք ձգէ:

Պ. Աբաս իր հօրեղբայրը շատ զօրք ժողոված
կուղեր ինքը թագաւորել. բայց երկու անգամ
յաղթուեցաւ. Սմբատ Աբասին տեղը սպարապետ
գրաւ իր Շապուհ եղբայրը:

Հ. Սմբատ Աբասը նուաձնելէն ետեւ ուրիշ ինչ
թշնամի ունեցաւ:

Պ. Ափշին Պարսից ոստիկանը նախանձելով Սըմ-
բատայ մեծնալուն վրայ երեսուն հազար զօրքով
վրան պատերազմի ելաւ. Սմբատ քաղցրութեամբ
Ափշինին սիրար իջեցուց ու հաշտուեցաւ հետը:

Հ. Ափշին որչափ ատեն հաստատուն մնաց իր
գաշինքին վրայ:

Պ. Խիստ բիշ. վասն զի զգժալով բրած հաշտու-
թեանը վրայ, խաբէութեամբ Սմբատայ վրայ վա-
ղեց ու ապի բերան շատ շարիք հասուց. Սմբատ
շատ զօրք ժողկեց ու փախուց Ափշինը:

Հ. Սմբատ Ափշինին յաղթելէն ետքը ուրիշ
ինչ թշնամի ունեցաւ:

Պ. Ահմատ Միջազեաաց ոստիկանը, որուն հետ
միացաւ նաև Գաղիկ Արծրունին Սմբատայ աչ-
գականներէն մէկը, ու Ահմատին առաջնորդ եղաւ:

Սմբատ Թէպէա ե յանկարծակիի եկաւ . բայց քա-
ջու Թեամբ պատերազմելով յաղթեց Ահմատին ու
փախուց իր տեղը :

Հ . Սմբատ Ահմատին ալ յաղթելէն ետքը հան-
գիտա մնաց .

Պ . Չէ . Վ ան զի Ափշին նորէն պատերազմի ե-
լաւ վրան , ու Սմբատ ալ անողնակաւն մնալով պա-
տանդ տուաւ իր որդին . բայց Ափշին երբոր ուրիշ
չարիք ալ կ'ուզէր հասցընել , ինքը սոսկալի մա-
հուամբ մեռաւ , ու իրեն տեղը յաջորդեց Զուտուփ
իւր եղբայրը :

Հ . Սմբատ սասիկաններուն բանութենէն ազա-
տելու համար ի՞նչ ճար գտաւ .

Պ . Ամիրապետէն խնդրեց որ փոխանակ տուր-
քերը սասիկաններուն ձեռքովը տալու , ուղղակի
ամիրապետին խաւրէ ինքը :

Հ . Ինչո՞ւ համար Ատրնեքսէ՛ս Վրաց Թագաւո-
րը ու նախարարները Սմբատայ զեմ էլան .

Պ . Եգեբրացոց Վաստանգին Թագաւորը սպրա-
տովներ էր Սմբատէն . Սմբատ Ատրնեքսէ՛սին հեռ
մէկտեղ վրան պատերազմի ելաւ , ու զինքը Ատր-
նեքսէ՛սին ձեռքովը բանել տալով Ափի ամրոցը
գրաւ . չորս տմսէն վրան գթալով բանաէն հանեց
ու արձրկեց իր տերութիւնը : Աս բանս նախարար-
ները իրենց նախաափնք սեպելով ապստամբեցան :

Հ . Նախարարներուն ապստամբութիւնը ի՞նչ
վերջ ունեցաւ .

Պ . Ըրած դարանքնին պարապը ելլելով չարա-
չար յաղթուեցան . Սմբատ նախարարներուն շա-
տին աչքը կուրցուց , ու Ատրնեքսէ՛սին վրայ գթա-
լով ազատեց :

Հ. Մմբատ նախարարներուն յաղթելէն ետքը, ինչ նոր խառվածիւն ընկաւ Հայաստանի մէջ .

Պ. Գագիկ Արծրունի Մմբատայ քեորդին ապրատամբելով իրմէ, գնաց Յուսուփին քով . Յուսուփ ալ որպէս զի Հայաստանի մէջ խառվածիւն ձգէ՝ զինքը թագաւոր ըրաւ (908) :

Հ. Գագիկայ թագաւորութենէն ինչ շար Հեւեանքներ ելան .

Պ. Գագիկ և Յուսուփ միացած վաղեցին Մմբատայ վրայ, որոնց կողմը անցան նաև նախարարներէն շատը . Մմբատ ալ տեսնելով որ մինակ գէտ չիրնար դնել, Գուգարացոց երկիրը փախաւ :

Հ. Մմբատ Գուգարացոց քովէն ո՛ւր գնաց քաշուեցաւ .

Պ. Երբոր տեսաւ որ իր Աշոտ ու Մուշեղ արզաքն ալ յաղթուեցան Սևորդիներուն մասանութեամբը, ինքն ալ յուսահատած Կապոյտ ըսուած ամաւր բերդը գնաց քաշուեցաւ :

Հ. Յուսուփ ինչպէս առաւ Կապոյտ բերդը .

Պ. Մմբատ տեսնելով որ իր սրաածառաւը սաստիկ չարգ կ'ըլլայ, անձնատուր եղաւ Յուսուփին՝ երգումն ասնելով որ իր անձին մնաս չհասցընէ :

Հ. Յուսուփ Մմբատայ ինչ ըրաւ .

Պ. Կախ դրաւանց պատիւ ջըցուց ու նաև ազատ ալ թողուց . բայց վերջը նորէն խարդախութեամբ կանչելով սկսաւ տանջել ու շարշարել որ կամ հաւատքը ուրանայ և կամ մեռնի . սոսկալի տանջանքներ տալէն վերջը մորթել ու դուփն ալ կարել տուաւ՝ տանը շորս տարի թշուառութեամբ թագաւորելէն ետքը (913) :

ԴԱՍ ԺԷ.

Աշոտ Բ. Երկար և Աբսառ :

Հ. Սմբատին մեռնելէն ետքը Հայոց վիճակը ինչպէս եղաւ .

Պ. Յուսուփ Երնջակ ամուր բերգը ամնելով, բնակիչներուն մեծ մասը ջարդեց ու շատն ալ դերի տարաւ . ու ասով բոլոր Հայաստանի տիրելով պահապաններ թողուց ու ինքը Պարսկաստան գընաց :

Հ. Երբոր լսեց Աշոտ Սմբատայ տղան իր հօրը մեռնելը ինչ ըրաւ .

Պ. Վեցհարիւր հոգուց շափ մարդիկ ժողվելով, վազեց Յուսուփին թողուցած պահապաններուն վրայ ու սաստիկ ջարդ տալով զամէնքն ալ փախուց :

Հ. Հայերը Աշոտ երկաթին քաջութիւնները տեսնելով ինչ ըրին .

Պ. Միաբանեցան ու զինքը թագաւոր գրինբայց քիչ մը ասեմէն նախարարներէն ունայք վերան նախանձելով, սպասամբեցան իրմէ ու նորէն խռովեցին աշխարհքը : Ար բաներէս զօրացած Յուսուփ շատ շարիք հասուց Հայոց :

Հ. Հայոց սա թշուառութիւններուն մէջ, չեղանմեկը որ սղործի ու խաղաղեցնել ջանայ .

Պ. Կոստանդին Պերփետուսիէն Յունաց կայսրը, որ լսելով Հայոց խեղճութիւնները Աշոտը Ստամբուլ կանչեց, ու շատ պատուելէն ետքը՝ Յունաց

զորքով զինքը իր Թագաւորութեանը գարձուց
(921) :

Հ. Աշոտ ասանկ փառքով Հայաստան գտնա-
լին վերջը կրցան խաղաղ Թագաւորել .

Պ. Չէ . վասն զի Յուսուփ Աշոտ երկաթին հօր-
եղբորը տղան Աշոտը Թագաւորեցուց որ Բանա-
ւոր ըսուեցաւ . ասով նորէն խառնութիւն ընկաւ
Հայոց մէջ . ու մասաիկ շարգեր եղան երկու կող-
մէն ալ , ինչուան որ Յովհաննէս կաթուղիկոս հաշ-
տեցուց զիրենք :

Հ. Աշոտ երկաթ Աշոտ բանաւորէն զաս ուրիշ
ի՞նչ թշնամիներ ունեցաւ .

Պ. Անկրթութեան և անկարգութեան հոգի մը-
տամ ըլլալով . ամենքը կ'ուզէին ինքնիշխան Թա-
գաւոր ըլլալ . ինչուան նաև Աբաս՝ Աշոտի եղբայրն
ալ սպասամբեցաւ , ու պատերազմներ ըրաւ եղ-
բորը հետ . Աշոտ ալ յուսահատամ գնաց Սևան
կղզին քաշուեցաւ հարիւր հարում :

Հ. Աշոտ Սևան կղզին քաշուելէն առաջ ի՞նչ
քաջութիւն ըրաւ Յիկ Ամրամին զէմ .

Պ. Երբոր որ մը Աշոտ զուարճութեան համար
Ուտեաշուոց կողմը գնացեր էր , ըսելով անոնց իշ-
խանին Յիկ Ամրամին սպասամբութիւնը , Եգե-
րացուոց Թագաւորէն քիչ մը զօրք օգնութիւն ա-
ռաւ ու գնաց ամուր բերգի մը մէջ պահուըտե-
ցաւ . Ամրամ՝ եկաւ պաշարեց զինքը . Աշոտին քո-
փի մարդիկը տեսնելով որ խալըսում չկայ , մէջեր-
նին որոշեցին որ Աշոտը բանեն Ամրամին մտանեն
ու իրենք ազատին . Աշոտ խմանալով անոնց շա-
րութիւնը՝ զիշերանց ձի հեծաւ ու թշնամեաց մէջէն
քաջութեամբ անցնելով փախաւ Սևան կղզին գնաց-
աւոր նման շատ քաջութիւններ ըրաւ Աշոտ :

Հ. Երբոր Աշտա Սեան կզգին քաշուեր էր, Հայաստան ինչ վիճակի մէջ էր.

Պ. Յուսուփ Նարս անունով վերահացու մը խաւրեց որ շատ չարիք հասուց Հայոց, իրենց անմխարանութեանը ցաւալի և արժանաւոր պատիժ :

Հ. Աշտա Երկաթ ինչպէս յազմեց Բըշր ոստիկանին .

Պ. Նարսին տեղը Բըշր խրկուեցաւ . ստիկայ իմանալով որ Աշտա Սեան կզգին քաշուեր է՝ ուզեց բանել . բայց Աշտա իրեն քիչուոր մարդիկը այլ և այլ նաւակներու մէջ բաժնելով նետաձգութեամբ շատ մարդ սպաննեց, որով թշնամիները սկսան փախչիլ . ինքն ալ ետենին խնալով հալածեց, ու դարձաւ իր տեղը :

Հ. Աշտա ինչուան էրբ Սեան կզգին քաշուած մնաց .

Պ. Տեսնելով որ կամաց կամաց խաղաղացաւ Հայաստան, ինքն եկաւ իր թագաւորութիւնը ձեռք առաւ ու հաշտութիւն ըրաւ Արաս եղ բորը հետ . և քանորչորս ասրի ընդհատ ու անհանգիստ կերպով թագաւորելէն ետքը մեռաւ : Արիկայ Շահընշահ (Թագաւորներու թագաւոր) ալ ըսուեցաւ :

Հ. Արաս եղ բորը տեղը յաջորդելով ինչ կերպով կառավարեց ազգը .

Պ. Աթոքը Կարս դրաւ . իր զգոնութեամբը թշնամիներուն յազմեց ու խաղաղութիւն ըրաւ, որով Հայաստան սկսաւ ծաղկիլ :

Հ. Արաս ինչ էրեւելի պատերազմ ըրած ունի .

Պ. Իւր Արաց և Ափխազաց թագաւորը պատերազմի ելաւ Արասին դէմ, ու ծաղկելով պատգամ խաւրեց որ Կարսին մայր եկեղեցին ինքը պիտի

գայ օրհնէ Արաց ծխով. Աբաս դէմն ելաւ յազ-
Թեց ու բանեց և կարս բերելով ցրցուց ան եկե-
ղեցին որ կ'ուզէր օրհնել, ու վերջը աչքերը կուր-
ցուց :

Հ. Աբաս որչափ ատեն Թագաւորեց .

Պ. Քասնըչորս տարի խելքով ու խաղաղու-
Թեամբ (953) :

ԴԱՍ ԺԸ .

Արծրունեաց կամ Վասպուրական աշխարհին
բազաւորութիւնը : Աշտա Ռդորսւած ու Սըւ-
բաս Բ :

Հ. Ո՛վ եղաւ Արծրունեաց առաջին Թագաւորը .

Պ. Գագիկ, Սմբատ առաջինին քեւորդին, ինչ-
պէս որ վերը ըսինք :

Հ. Գագիկին որոնք յաջորդեցին .

Պ. Իբ որդին Աշտա Գերենիկ 16 տարի . ետքը
Գերենիկին պզտի եղբայրը Համազասպ Աբու-
սասչ, որուն յաջորդեցին իր իրեք աղբքը Աշտա,
Գուրգէն, Սենեքերիմ . առ Սենեքերիմը Սիւ-Թա-
ցուց բանութիւններէն ազատելու համար՝ ինքը
Սեբաստիոց գաւառը առաւ Յունացմէ ու Վաս-
պուրականը անոնց տուաւ 1021ին : Հին իրեն յա-
ջորդեց իբ որդին Գաւիթ, անոր ալ յաջորդեցին
Ատովմ և Աբուսասչ որոնք երբոր մեռան 1080ին,
բոլորովին վերցուեցաւ ան Թագաւորութիւնն ալ :

Հ. Աշտա Գերենիկին Թագաւորութեան ատե-
նը ինչ յիշատակի արժանի գործ պատահեցաւ .

Պ. Ազգխարիպ Համուճիին Դերենիկը մասնե-
լը ու վերջէն ըրած քաջութիւնը :

Հ. Ազգխարիպ ինչո՞ւ համար Դերենիկը մաս-
նեց թշնամեաց ձեռքը .

Պ. Վասն զի Դերենիկ ուրիշներուն գրգռու-
թեամբը Ազգխարիպը սպարապետութեան պաշ-
տանէն ձգեր էր . Ազգխարիպ ալ առ բանիս վրէժը
ասնելու համար Հեր ու Չարեանդ դաւաճաներուն
իշխանները պատերազմի յորդորելով անոնց ձեռ-
քը մասնեց զինքը :

Հ. Ազգխարիպ իր ըրածին վրայ ի՞նչպէս զգջաց .

Պ. Վանահայրները ու եպիսկոպոսները լսելով
առ բանս նզովեցին Ազգխարիպը . ինքն ալ զգջաց
իր յանցանացը վրայ . որ մը երբոր իշխանները
գաշտի մը մէջ Դերենիկը կը շարշարէին հեռը խա-
ղալով, Ազգխարիպ իմացաւ ու հոն տեղուանքը դա-
րան մտաւ և իշխաններէն որք սպաննեց որք փա-
խուց Հեր քաղաքը, որոնք մէկէն քաղքին դան-
քը գոցեցին . Ազգխարիպ այնպէս կատաղութեամբ
զարկաւ որ սուրը երկրթէ գրան մէջը խրեցաւ մը-
նաց . և ասանկով ազատեց Դերենիկը (940) :

Հ. Աբասին մեռնելէն ետև Հայոց վիճակը ի՞նչ-
պէս եղաւ .

Պ. Կախարարները շմարաններուն համար սա-
սը տարի առանց Թագաւորի մնաց Հայաստան .
Թեպէս և Աշոտ Աբասին որդին շատ զօրք ժող-
ված խելքով ազգը կը կառավարէր ու թշնամիե-
րուն սիրար վախ ձգեց իրեն քաջութիւններովը
(952) :

Հ. Աշոտ Գ. ի՞նչպէս Թագաւորեց .

Պ. Տեսնելով նախարարները Աշոտին կատարե-

լուծիւնները՝ թագաւոր օժեցին զինքը . ասիկայ իր ողորմածութեանը համար Աշոտ Աղորմածը սուեցաւ :

Հ . Աշոտին ատենը ուրիշ ինչ թագաւոր ալ կար հայաստան .

Պ . Մուշեղ Աշոտին եղբայրը գլուխ քաշելով կարսի մէջ թագաւորեց . Աշոտ խառնութիւն չըլլալու համար ձայն չհանեց . ուստի թագաւորական ան ճիւղն ալ քիչ մը ատեն գնաց ու վերջը Յունաց անցաւ :

Հ . Աշոտին յիշատակի արժանի գործողութիւնները որո՞նք են .

Պ . Իրեն խաղաղասէր խելացիութիւնն ու բարեպաշտութիւնը , որուն նմանը չեղաւ Բագրատունեաց մէջ : Ասիկայ Անին մայրաքաղաքը ընելով զարգարեց :

Հ . Աշոտ ինչ արդիւնք ըրաւ որ ամիրապետն պատիւներ ընդունեցաւ .

Պ . Համտուն Տաճիկներուն սպարապետը ապրատամբելով ամիրապետն , Հայաստանի վրայ վազեց . Աշոտ գեմը ելնելով զինքը սպաննեց :

Հ . Աշոտին ո՞վ յաջորդեց .

Պ . Քանդակեց տարի սքանչելի կերպով կառավարելէն ետքը , սրբութեամբ մեռաւ . իրեն յաջորդեց Սմբատ իր անդրանիկը :

Հ . Սմբատ Բ . ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ .

Պ . Իր հօրը պէս խաղաղասէր ու շինութեանց ետեւէ եղաւ , ու Տրդատ Ճարտարապետին ձեռքով շինել տուաւ Անիի մայր եկեղեցին և ուրիշ շատ շէնքեր :

Հ. Ինչուան ետքը իր բարեպաշտութեանը մէջ մնայ .

Պ. Չէ . սկսաւ վերջերը եկեղեցական օրինաց դէմ բաներ ընել որով տակի եղաւ . աասուեր կաւ տարի Թագաւորեւէն ետքը մեռաւ (988) :

ԳԱՍ ԺԹ .

Գագիկ Ա . և Յովհաննէս Սմբատ :

Հ. Գագիկ Ա . ինչ կողմանէ անուանի եղաւ .

Պ. Թէ բարեպաշտութեամբ և թէ քաղաքաշինութեամբ Բագրատունեաց երեւելի ու գովելի Թագաւորներէն մէկը եղաւ . երեսուն տարի Թագաւորեւէն ետքը մեռաւ . ասիկայ լմբնցոց Անիին շէնքերը :

Հ. Ո՞վ յաջորդեց Գագիկ Ա . ին .

Պ. Յովհաննէս Սմբատ որ թէպէտ և խելացի էր , բայց գործունեաց և աշխոյժ չբլլալուն շատ շարեքներ հետեւեցաւ . Հայաստանի մէջ . նաև Աշոտ եղբայրն ալ ապստամբեցաւ իրմէ որ քաջ ու տաք գլուխ երիտասարդ մըն էր :

Հ. Յովհաննէս՝ Աշոտին հետ ինչպէս հաշտուեցաւ .

Պ. Աշոտ Սենեքերիս՝ Աստուրականի Թագաւորէն օգնութիւն ասնելով եկաւ Անին պաշարեց . Պետրոս կամձաղիկոս ու Գորգի Ա ըսաց Թագաւորը մէջ մանելով հաշտեցուցին զիրենք :

Հ. Աշոտ իր խոստմանը մէջ հաստատուն մնայ .

Պ. Զղջալով ըրած խոստմանը վրայ, հիւանդ ձեացաւ. երբոր Սմբատ զինքը տեսնելու եկաւ, հոն որոգայթի մէջ բռնուեցաւ ու սկսաւ ազալել Աշոտին որ իր կենացը խնայէ. Ասիրատ իշխանը բռնեց զՍմբատն ու ձեացուց թէ մեռցնելու կը տանի. բայց զնաց Աթի՝ ու նորէն Սմբատը թափաւորեցուց և ինքը փախաւ զնաց:

Հ. Ինչ պատճառաւ Յովհաննէս Սմբատ Աթին Յունաց Ալախի կայսեր խոստացաւ տալ.

Պ. Ասան զի իր թագաւորութեանը չորրորդ տարին Սկիւթացիք Հայաստանի վրայ վազելով շատ վնասներ հասուցին. ինքն ալ չկրնալով դէմ դնել՝ Ալախի կայսեր թղթով խոստացաւ որ իր մեռնելէն ետքը Աթին Յունաց անցնի, միայն թէ Ալախի օգնէ իրեն Սկիւթացուց դէմ (1024):

Հ. Սմբատին թղթով ըրած աս խոստմանըք Ինչ հեռանդրներ ունեցաւ.

Պ. Կոստանդին՝ Ալախի կայսեր եղբայրը՝ մեռնելու ատենը, Կիրակոս անուանով հայ քահանայ մը կանչեց ու ետ տուաւ Աթին համար եղած գաջինքի նամակը: Աս անդգամ քահանան ալ պահեց թուղթը քովը, ու երբոր 1034ին Միքայէլ կայսրը նստաւ, տարաւ նորէն անոր տուաւ թուղթը. ու ինքը անոր փոխարէն շատ ստակ առաւ. աս բանս պատճառ եղաւ որ Բագրատունեաց թագաւորութիւնը կործանեցաւ:

Հ. Սմբատ որչափ ատեն թագաւորեց.

Պ. Գտան տարի ու անորդի մեռաւ: Ասոր թագաւորութեան վերջի տարիները Տուղթիլ Սկիւթացուց իշխանը խիստ շատ վնաս ու աւերմանքներ ըրաւ Հայաստանի մէջ, որուն դէմ գրաւ քաջութեամբ գիչ մը ատեն Աստակ Պահլաւունի.

Թեպէս և վերջը ինքն ալ ապաննուեցաւ առանձնացած ազօթք ընելու ասենը :

Հ . Վ ապուրական գաւառին մէջ առ միջոցներս ինչ անողորմութեան գործք եղաւ .

Պ . Խորիկ անունով Պարսիկը որ Բերկրիին քաղաքապետն էր . Հայերէն Հարածուելով սիս սահեց . ու քանի մը ամիսներու օգնութեամբք յաղթելով Հայոց , մարդաչափ խորութեամբ փոս մը փորել տուաւ , ու ձեռքը ինկած մարդիկը մտրթել ապրով արիւնով լեցուց փոսը , ու ինքը արիւնաբոյժ գազանի պէս մէջը մանկելով լուացուեցաւ :

ԳՍՍ Ի .

Գազիկ Գ . և Բազրատունեաց բազաւորութեան կործանիչը :

Հ . Յովհաննէս Սմբատին մեռնելէն ետքը ինչ վիճակ ունեցաւ Հայաստան .

Պ . Երկու տարի անտէր մնալով Վ Էսա Սարգիս Սիւնեաց իշխանը զօրացաւ ամենուն վրայ և կ'ուզէր Թագաւորել :

Հ . Ինչ Հնարք բանեցուց Վ Էսա Սարգիս որպէս զի իր խռովասէր ու ամբարտաւան խորհուրդը առաջ տանի .

Պ . Երբոր լսեց Միքայէլ կայսրը որ Սմբատ մեռեր է , իրէք անգամ զօրք խաւրեց Հայոց վրայ որ երթան Ենին առնեն . Վ Էսա Սարգիս ամենայն կերպով անոնց օգնեց , որպէս զի Միքայէլ կայսեր առջև արգիւնք մը ըրած ըլլայ :

Հ. Կախարարները Հայաստանի տերմուսները տեսնելով ի՞նչ ըրին :

Պ. Վահրամ Պահլավունիին յորգորանքովք միարանեցան ու Գաղիկ ԲԸ - Թագաւոր օժեցին . որն որ Զովհաննէս Սմբատին Աշոտ եղբորը աղան էր՝ իմաստուն և շատ շնաշխարհիկ կատարելութիւններով զարգարուած (1042) :

Հ. Գաղիկ Բ.ին առջի գործողութիւնը որն եղաւ .

Պ. Վեառ Սարգիսը բանեց ու կապած Անի բերաւ . բայց վերջը ուրիշներու միջնորդելովք ազատ Թողուց զինքը :

Հ. Գաղիկ Բ. ուրիշ ի՞նչ քաջութեան գործք ըրաւ .

Պ. Սկիւթացիք Հայաստանի վրայ վազեր էին . Գաղիկ տասնըվեց հազար զօրքով անոնց դէմ ելաւ ու վարպետութեամբ և քաջութեամբ պատերազմելով զամէնքն ալ փախուց :

Հ. Ուրիշ որո՞ն հեռ պատերազմ ըրաւ .

Պ. Մանուսխոս՝ Միքայէլ կայսեր յաջորդը նորէն սկսաւ Անին ուզել . երբոր Գաղիկ յանձ չառաւ , Մանուսխոս երկու անգամ վրան պատերազմի ելաւ , բայց յաղթուեցաւ . առ ամէն շարութեանց պատճառն էր Վեառ Սարգիս :

Հ. Վեառ Սարգիս երբոր տեսաւ որ Մանուսխոս յաղթուելով իր խորհուրդը փուճ ելաւ , ի՞նչ շարիք մտածեց .

Պ. Իրեն պէս քանի մը ազգատեաց փառամտը ու շար նախարարներու հեռ միացած , խորհուրդ տուաւ Մանուսխոս կայսեր որ բարեկամութեամբ Ստամբուլ կանչէ Գաղիկը , ու վերջը իրենք մասնեն Անին :

Հ. Գաղիկ յանձն առաւ կայսեր հրաւերքը .

Պ. Իսկանաւրով կայսեր ու իր թշնամեաց չար մտքը ամենեկին յանձ չառաւ . բայց նախարարնէրը սուտ երգում ընելով թէ իրենք Աթին կը պաշտպանեն՝ յորգորեցին զինքը որ կայսեր երթաց . ինքն ալ ելաւ գնաց , աւելի ճարը հասնելով քան թէ համոզուելով :

Հ. Կայսրը ինչ կերպով ընդունեցաւ զինքը .

Պ. Նախ մեծ պատիւ ու սէր ցրցուց , բայց վերջը սկսաւ Աթին ուզել . Գաղիկ ամենեկին կերպով մ'ալ յանձն չառաւ . ան ասեն Վեսա Սարգիս ու իր կուսակիցները Աթին բանալիները կայսեր խորհեցին :

Հ. Գաղիկ երբոր տեսաւ Աթին բանալիները ինչ ըրաւ .

Պ. Կրքէն ու յուսահատութենէն թագաւորութիւնն ալ ձգեց իրեք ասրի իշխելէն ետքը . կայսրը առ բանիս վրայ ուրախացած՝ Գաղիկին քանի մը քաղաքներ տուաւ ու ինքը Հայաստանի տիրեց (1045) :

Հ. Բագրատունեաց թագաւորութեան կործանելէն ետքը , ինչ խեղճութիւններու հասաւ Հայաստան .

Պ. Ալէն տեսակ թշնամի Հայաստանի վրայ վազելով մտքէ շանցած շարիքը հասուցին Հայոց , ուրոնց մէջ նշանաւոր եղան Տուղրիլ , Ալխաւանն ու իր աղան Մելիք շահ :

Հ. Աս միջոցներուն մէջ ինչ քաջութեան գործք կը պատմուի Թաթաւլ սպարապետին վրայ .

Պ. Ասիկայ Տուղրիլին զօրացը դեմ ելլելով , շատ շարիք հասցընելէն վերջը , անոր իշխաններէն մէ-

կան տղան վերաւորեց : Երբոր Թաթուլը բռնուե-
լով Տուղբիլին զխնայք ելաւ , ըսաւ Տուղբիլ . « Թէ
որ ապրի տղան զքեզ ալ կը խաղըսեմ » . պատաս-
խան տուաւ Թաթուլ . « Թէ որ զարնուածքը իմս
է չապրիր » . մեաւ տղան , անոր համար զինքն
ալ սպաննեցին :

Հ . Ալփասլան Տուղբիլին յաջորդելով ինչ չա-
րիք հասուց հայոց .

Պ . Երկար ատեն Անին պաշարելէն ետքը առաւ
ու սոսկալի ջարդեր ըրաւ Անոյ մէջ :

Հ . Գաղիկ Աբասեան ինչ հնարքով ազատե-
ցաւ Ալփասլանին հարուածէն .

Պ . Սուգի լաթեր հագած Ալփասլանին զխնայք
ելաւ , ըսելով որ « Տուղբիլին մահուանը համար
սուգի մտեր եմ » . Ալփասլան վրան խղճալով սի-
րով պագառուեցաւ հետը ու շարիք մը չհասուց :

Հ . Գաղիկ Բ . ինչո՞ւ համար թշնամացաւ Յու-
նաց հետ .

Պ . Կապագոռվիոյ Յոյները շարաշար կը նախա-
տէին զհայերը . ու Կեսարիոյ մեարապօլիան ալ
իր շանը անունը Արմէն գրեր էր , ինչպէս նաև ու-
րիշ շատերը :

Հ . Գաղիկ Բ . աս նախատանաց վրէժը ինչպէս
հանեց .

Պ . Երբոր մեարապօլիան քովը կերակուրի դա-
ցեր էր , խնդրեց Գաղիկ որ շունը կանչէ . մեարա-
պօլիան ալ Արմէն ըսելով կանչեց . ան ատեն Գաղ-
կոյ ծառաները բռնեցին շունն ու մեարապօլիար
ու պարկի մը մէջ դնելով սկսան շունը շարաշար
ծեծել . ան ալ կատաղութեամբ այնչափ խածաւ
զմեարապօլիար որ երկուքն ալ պարկին մէջ մեռան :

Հ. Յոյնք իրենց վրեժը ինչպէս հանեցին Գաղիկէն :

Պ. Երբոր անգամ մը Կիզիաստա բերդը դադարձ' պարտեղին մէջ կը հանգչէր, բերդին տերերը, որոնք յոյն էին, դարան մաներով բռնեցին զինքը ու ստկարի տանջանքներով սպաննեցին . վերջը մարմինն ալ բերդին վրայ կախեցին : Թշուառութեամբ թագաւորեց ու ապրեցաւ, խեղճութեամբ մեռաւ (1079) :

Հ. Յոյները որչափ ատեն տիրեցին Հայաստանի .

Պ. Քիչ միջոց . վասն զի Մելիք շահ Յոյները վարնաց ու ինքը տիրեց Հայաստանի :

Հ. Բաղրատունեաց տերութիւնը կործանելէն ետեւ, մէկալ ապստամբ կամ բռնաւոր թագաւորները ինչ եղան .

Պ. Աս միջոցներուն վերջուեցան անոնք ալ, որ էին Արծրունեաց ու Կարսի թագաւորութիւնը որն որ իրեք թագաւոր ունեցաւ Մուշեղ, Աբաս ու Գաղիկ, որ իր տերութիւնը Յունաց տուաւ և ինքը Ծամնգաւ բերդը քաշուեցաւ (1066) :

ԻՇԻԱՆՈՒԹԻՒՆ

Ռ Ռ Ի Բ Ի Ն Ե Ա Ն Յ

Դ Ա Ս Ի Ա .

Ռաբրէկ Ա. Կոստանդին Ա. Թորոս Ա. Լևոն Ա.
Թորոս Բ. Մշկն և Ռաբրէկ Բ.:

Հ. Ռաբրինեանց Թագաւորութիւնը ինչպէս սկսաւ .

Պ. Բագրատունեաց տէրութեան կործանելէն երեսունըչորս տարի վերջը, Ռաբրէն անունով իշխան մը Գաղկայ ազգականութենէն, Վիլիկիոյ կողմերը երթալով հոն տեղի Հայոց սիրաբ վատրկեցաւ, ու խել մը կորիճ զլուխը ժողվելով քանի մը սղտի քաղաքներու տիրեց ու սկսաւ կառավարել զանոնք (1080):

Հ. Ռաբրէն սրշափ ասուն իշխեց .

Պ. Գոզ Վլասիլ ըսուած իշխանին օգնութեամբ բը ուրիշ քաջութիւններ ալ ընելէն վերջը Յունաց գէտ, տասնութեց տարի իշխելէն ետքը մեաւ .

Հ. Ո՞վ յաջորդեց իրեն .

Պ. Իբ որդին Կոստանդին Ա. որ խելքով հինգ տարի կառավարեց տէրութիւնը, ու լատինա .

ցւոյ՝ որ սուրբ երկիրը ազատելու կ'երթային օգնեց . որոնցմէ վերջը շատ ընծաներ ու պատիւներ
առնուաւ :

Հ . Թորոս Ա . իր հօրը տեղը յաջորդելով ինչ քաջութիւններ ըրաւ .

Պ . Յոյներէն պատերազմով Անարզարա քաղաքը առաւ . Սկիւթացիները ու Պարսիկները որ հայաստանի վրայ կը վազէին ցրուեց ու փախուց . Վիզիստոս բերզն ալ վարպետութեամբ առնելով Գաղիկը մեռցրնողները սպաննեց : Թորոս քսանուիրեք տարի իշխեց ու մեռաւ :

Հ . Թորոս Ա . ին ղ յաջորդեց .

Պ . Իր եղբայրը Լևոն Ա . որ Մամեսախա ե ուրիշ շատ քաղաքներ առնելով ամենուէն սխրաբ վախճեց՝ ինչուան նաև Յունաց ալ :

Հ . Լևոն Ա . ինչպէս բանուեցաւ Պետակին Անտիոքի կամսէն .

Պ . Պետակին Լևոնին վրայ նախանձելով զինքը սեղանի կանչեց ու բռնելով բանաբը գրաւ . Լևոն քանի մը քաղաքներ ու իր որդին պատանդ տալով ազատեցաւ :

Հ . Լևոն աս նախատանայ վրէժը ինչպէս հանեց .

Պ . Մեկէն զօրք ժողովեց ու տուած քաղաքները ետ առնելէն զատ , այնչափ նեղը խաթեց Պետակինը , որ ինքը Լևոնին պատանդներ տալով հազիւ խաղտեցաւ ձեռքէն :

Հ . Լևոն ինչուան վերջը կրցաւ խաղաղութեամբ իշխել .

Պ . Չէ . վասն զի Յովհաննէս Պերփեռուժէն ան .

Համար զօրքով վրան պատերազմի ելաւ՝ նախան-
ձեւով ըրած քաջութիւններուն վրայ . Ահոն իշ-
խաններուն անմիաբանութեամբը անօգնական մը-
նալով յաղթուեցաւ , ու բռնուելով Ստամբուլ
բանա գրուեցաւ (1137) :

Հ . Ահոն սրչափ ասուն բանաը կեցաւ .

Պ . Տարի մը բանաը մնալէն վերջը՝ կայսրը վրան
խղճալով բանաէն հանեց ու իր պաշտօնը կը պա-
հէր : Քանի մը տարիէն նորէն բանաը գրուեցաւ
իր Թորոս որդւոյն հետ մեկ տեղ , ուր որ սրաին
ցաւէն մեռաւ :

Հ . Թորոս Բ . Թնչ կերպով իշխանութիւնը ձեռք
ձգեց .

Պ . Երբոր Վիա Մանուէլ կայսր եղաւ՝ Թորոս
որ արդէն բանտէն ելած էր , փախաւ ու Վիլիկիա
գալով յայանեց իշխաններուն իրեն սով ըլլալը . ա-
նոնք ալ միաբանեցան ու զինքը իշխան գրին իրենց
վրայ , որ սկսաւ մեկէն քաջութիւններ ընել :

Հ . Վիա Մանուէլ երբոր լսեց Թորոսին քաջու-
թիւնները Թնչ ըրաւ .

Պ . Անգրոնիկոս զօրավարը խաւրեց շատ զօր-
քով որ երթայ Թորոսը շղթայի զարկած Ստամ-
բուլ բերէ :

Հ . Անգրոնիկոս կրցաւ կայսեր պատուէրքը կա-
տարել .

Պ . Չէ . վասն զի երբոր լսեց Թորոս աս բանս՝
աստափ կարհանալով , անանկ քաջութեամբ պա-
տերազմեցաւ , որ մեծ ջարդ տալէն ետքը Յունաց ,
շատ իշխաններ ալ գերի բռնեց անոնցմէ :

Հ . Թորոս Թնչ ըրաւ աս իշխանները .

Պ. Կայսրը խիստ շատ ստակով զնեց. Թորոս բոլոր առած ստակը զօրացը բաժնեց զեպաննե-
բուն առջին. երբոր անոնք զարմացան. ըսաւ Թո-
րոս. « Կամաւ ըրի որպէս զի նորէն բանեն ձեր իշ-
խանները » :

Հ. Ինչո՞ւ համար նորէն պատերազմ բացուե-
ցաւ Հայոց և Յունաց մէջ.

Պ. Ստեփանէ Թորոսին եղբայրը ապստամբե-
լով իրմէ՛ շատ շարիք հասուց Յունաց. անոնք ալ
հնարքով մը զինքը բանելով եռացեալ ջուրի մէջ
սպաննեցին. ասով պատերազմ բացուեցաւ Յու-
նաց ու Թորոսին մէջ :

Հ. Թորոս աս պատերազմներուն մէջն ալ յաղ-
թեց Յունաց.

Պ. Առջի բերանները միշտ յաղթեց. բայց եր-
բոր տեսաւ որ Կիս Մանուէլ մեծ պատրասաու-
թեամբ վրան կուգայ, հաշտութիւն ըրաւ կայսեր
հետ, ու քանի մը տարիէն մեռաւ քանըչորս տա-
րի իշխելէն ետքը :

Հ. Ինչո՞ւ համար Թորոսին մեռնելէն ետքը խոռ-
վութիւն ինկաւ Հայոց մէջ.

Պ. Այսն զի Թորոսին տղան պղտիկ ըլլալով ի-
րեն խնամակալ գրուեցաւ Թովմաս Պայլ որ ազ-
գաւ լատին էր : Մէհ Հ Թորոսին եղբայրը որ ար-
գէն ապստամբած էր՝ Բերիայի ամիրայէն օգնու-
թիւն առնելով եկաւ ու ինքը սկսաւ իշխել, շատ
խռովութիւններ ըլլալէն ետքը :

Հ. Մէհ որչափ առէն իշխեց.

Պ. Հինգ տարի իշխելէն ետքը սպաննեցին զին-
քը՝ իրեն անկարգութիւններուն համար, ու Ռու-
բէն Բ.Ե իշխան գրին (1174) :

Հ. Ռուբէն Բ. Ինչպէս կառավարեց իր պզտի տերութիւնը .

Պ. Շատ մեծ խնամք ունեցաւ իր երկրին բարելաւութեանը վրայ . բայց ախոս որ Հեթում լամբրանի իշխանը հետք թշնամացաւ, պատճառաւ որ Ռուբէն Տարածը Յունաց ձեռքէն աւեր էր :

Հ. Ինչ հեռանք ունեցաւ աս երկու իշխանաց թշնամութիւնը .

Պ. Պատերազմի ելան իրարու դէմ, ու Հեթում յաղթուելով օգնութիւն կանչեց Պեմունց անունով Մնախոբայ լաաին կոմսը . Պեմունց ալ բարեկամութիւն ձեռացրնելով Ռուբենին հեռ, բնեց զինքը ու շղթայի զարկաւ :

Հ. Ինչ կերպով ազատեցաւ Ռուբէն բանակէն .

Պ. Ղեռն Ռուբենին եղբայրը ըսելով աս բանա՛շատ զօրքով սաստիկ նեղը խտթեց Հեթումն ու Պեմունցը, ու իր եղբայրը ազատելով բերաւ Եթուր նստեցուց :

Հ. Ռուբէն Բ. սրչափ ատեն իշխեց .

Պ. Տասնըմէկ տարի իշխելէն ետքը վանք մը քաշուելով կրօնաւոր եղաւ, ու Ղեռնը իր տեղը իշխեցուց :

Գ Ա Ս Ի Բ .

Ղևոն Բ . Փիլիպպոս ու Հերոսմ Ա . Ղևոն Գ :

Հ . Ղևոն Բ . ինչ բաներով երևելի եղաւ .

Պ . Իրեն իմաստութեամբը , քաջութեամբը ու ան ամէն կատարելութիւններով որ Թագաւորի մը հարկաւոր են . որով նաև իր տէրութիւնը ամենայն մասամբ ծաղկեցուց ու ընդարձակեց :

Հ . Ի՞նչպէս Թագաւոր եղաւ Ղևոն Բ .

Պ . Երուսաղեմի վրայ գացող խաչակիր զօրաց օգնելով անունը Երուսաղ հռչակուեցաւ , ու Փրկ. գերիկոս Գերմանացուց կայսրն ալ Թագ խոստացաւ . բայց ինքը մեռնելով իրեն յաջորդը Հենրիկոս և Կեղևաստիանոս Պապը կատարեցին Փրկ. գերիկոսի խոստմունքը Թագ ու գրօշ խաւրելով : Ղևոն ալ Սոոյ մէջ Թագաւոր օծուեցաւ Գրիգոր կաթուղիկոսէն (1198) :

Հ . Ղևոն Թագաւոր օծուելէն ետքը ի՞նչ պատերազմներ ըրաւ .

Պ . Քայքայուղ Իկոնիոյ ամիրային յաղթեց , թէպէտ և սկզբան յաղթուեցաւ իշխաններուն յանգրգնութեանը պատճառաւ . նոյնպէս նաև Բերիոյ ամիրային ալ յաղթեց , ուսկից շատ աւար առաւ ու անոր իրմէ պահանջած հարկը՝ ինքը անկէ առաւ :

Հ . Ղևոն Բ . որչափ ատեն Թագաւորեց .

Պ . Երեսունըջորս պարի . ու բարի անուամբ մեռաւ :

Հ. Լեւոն Բ. Ժ՛ն տեղը ո՞վ անցաւ .

Պ. Մանչ ազայ շունենալով Չապէլ անունով աղջիկը տեղը անցաւ : Իշխանները միացան ու Չապէլը Փիլիպպոս անունով լատինի մը հետ կարգեցին որ մօր կողմանէ միայն հայ էր . ասիկայ երկու տարի իշխելէն ետքը սկսաւ Սոյ չարսառ թիւնները Անտոք կրել . աս բանիս բարկանալով իշխանները բանաւ դրին զինքը՝ ուր որ մտաւ քիչ առնէն :

Հ. Փիլիպպոսին տեղը ո՞վ յաջորդեց .

Պ. Հեթում Ա. որ Չապէլին հետ կարգուելով ինքը Թագաւոր եղաւ ու շատ զարգարեց Հայաստանը :

Հ. Ինչո՞ւ համար Հեթում Թաթարաց Մանգոյ խանին գնաց .

Պ. Տեսնելով որ Թաթարները շատ չարքեք կը հապրենեն Հայաստանի , ու կրնան նաև իր երկրին վրայ ալ գալ , երաւ Թաթարստան գնաց որպէս զի խանին ազաչէ որ ինաս չընեն Հայոց : Մանգոյ խանը սիրով ընդունեցաւ զինքը և խնդիրքը կատարեց :

Հ. Հեթում Թաթարստանէն գառնալէն ետքը ի՞նչ պատերազմներ ըրաւ .

Պ. Իկոնիոյ ամիրան վրան նախանձելով պատերազմի ելաւ , բայց յաղթուեցաւ : Նոյնպէս նաև Կոստանդին Լամբրունի իշխանը ապստամբելով Իկոնիոյ ամիրային հետ միաբանած վրան պատերազմի ելաւ . բայց երկուքն ալ յաղթուեցան :

Հ. Հեթում վերի ըսած Թշնամիներէն զաս ուրիշ ի՞նչ նոր Թշնամի ունեցաւ .

Պ. Փնտուխտար Նզիպատտի ամիրան , որ Սկիւ-

Թացւոց և ուրիշ շատերուն յաղթելէն ետքը, զեւ պան խրկեց Հեթումին որ Եգիպտացւոցմէ առած քաղաքները եւ սայ. Հեթում յանձ չառաւ աս բանս ու իր երկու որդիքը Լեոնն և Թորոսը Թաղլով անոր գէմ, ինքը գնաց որ Թաթարներէն օգնութիւն առնէ:

Հ. Թորոս և Լեոն կրցան փնտախտարին յաղթել.

Պ. Թորոս սրատերազմի մէջ մեռաւ: Լեոնն ալ գերի ինկաւ. ասով բոլոր երկիրը Թշնամիներէն կոխկառուեցաւ:

Հ. Հեթումին եւ գառնալով ինչպէս գտաւ Կիլիկիան.

Պ. Ըսկէն բան տակն ու վրայ ու ասերակ դարձած. և տեսնելով որ գարնան չկայ եւ ճամբեց վարձուոր զօրքերը, ու աղաչանքով և շատ ստակ սալով Լեոնը գերութենէ ազատեց:

Հ. Լեոնին գառնալէն ետքը, զեւ սրչափ ասեն ալ Թագաւորեց Հեթում.

Պ. Քիչ մը ատենէն Լեոն որդւոյն յանձնեց Թագաւորութիւնը ու ինքը Դրազարի վանքը քաշուելով բարի մահուամբ մեռաւ քառասունըֆինգ տարի Թագաւորելէն ետքը:

Հ. Լեոն Պ. ինչպիսի մարդ էր.

Պ. Խօհեմ, բարեպաշտ և ուսումնասէր, որով մեկէն սկսաւ գայրոցներ բանալ ու գիտութիւնը ծաղկեցընել, որպէս զի ազխութեան, նախանձու, ատելութեան և փրօսամոլութեան անիծեալ շատախոյնները չօրցնէ. բայց ամառս ինչպէս որ կ'ուզէր վախճանին չհասաւ (1269):

Հ. Ի՞նչ արգելք եղաւ որ Լեօն միտքը գրածը չկրցաւ առաջ տանիլ :

Պ. Իշխաններէն ունեք հետը թշնամանալով դացին Վնաուխասարը Լեօնին դէմ գրգռեցին . ան ալ անթիւ բազմութեամբ Վիլիկիոյ վրայ եկաւ . Լեօն անօգնական մնալով փախաւ պահուրանցաւ , որով թշնամիք ամէն շարիք հասուցին :

Հ. Լեօն տեսնելով Վիլիկիոյ աւերմունքը ի՞նչ ըրաւ :

Պ. Ելաւ պահուրամբ տեղէն ու քիչ մը զօրք ժողովելով Սմբատ եղբօրը հետ միացած վանաց Եգիպտացիները , ու յազմեց նաև Իկոնիոյ ամիրային : Տասներինը տարի թագաւորելէն ետքը մեռաւ :

ԳԱՍ ԻԳ .

Հերոս Բ. Ան ինչուսև Ռոտրիևևուսց քաղաւրոտրտրևուս կործանիլը :

Հ. Հեթում Բ. ինչո՞ւ թագաւոր չօծուեցաւ .

Պ. Աւան զի սաստիկ կրօնասէր ու բարեպաշտ ըլլալով , չէր ուզէր արտաքին բաներու խառնուիլ . անոր համար ալ չորս տարի իշխելէն ետքը վանք մը քաշուեցաւ ու Թորոս եղբայրը թագաւորեցուց (1293) :

Հ. Թորոս Գ. որչափ ստեն թագաւորեց .

Պ. Իրէք տարիէն թագաւորութիւնը ձգեց ու ինքն ալ վանք մը քաշուեցաւ , ստիպելով որ նորէն Հեթումը դայ թագաւորէ :

Հ. Աս միջոցներուն ինչ խառվութիւն եղաւ Ախիկիոց մէջ.

Պ. Մարիամ կայսրուհիին աղաչանքովք (որ իրենց քոյրն էր) Հեթում ու Թորոս Ստամպուզ գաղին. ան միջոցին Սմբատ մեկալ եղբայրնին՝ իշխանները համոզելով ինքը Թագաւոր օծուեցաւ. ու երբոր անոնք կը դառնային զէմերնին ելլելով երկուքն ալ բանեց, Հեթումը կուրցուց ու Թորոսը սպաննեց:

Հ. Սմբատ կրցաւ հանգիստ Թագաւորել.

Պ. Չէ. վասն զի Կոստանդին մեկալ եղբայրնին առ բանիս վրայ բարկանալով, շատ զօրքով Սմբատին վրայ ելաւ ու յաղթելով անոր՝ բանեց զանիկայ ու բանա դրաւ, և ինքը անոր անդը Թագաւորեց: Հեթումն ալ բանակն հանած հանգիստ կը պահէր:

Հ. Կոստանդին Բ. սրչափ ատեն Թագաւորեց.

Պ. Երկու տարիի շափ. վասն զի երբոր հրաշքով մը Հեթումին աչքերը բացուեցան, ամենքը սկսան ուզել որնորէն Հեթում Թագաւորէ. բայց երբոր Կոստանդին առ բանիս վրայ սկսաւ խոսվութիւն հանել, Հեթում ալ բանեց զինքը և Սրմբատն ալ մեկտեղ Ստամպուզ խաւրեց:

Հ. Հեթում Բ. երբորզ անգամ Թագաւորելով ինչ ըրաւ.

Պ. Այլ և այլ անգամ Եգիպտացուց ու Ղիկայոնացուց յաղթելէն վերջը, իր Թորոս եղբորը աղան Ղևոնը իր անդը Թագաւորեցուց ու ինքը նորէն առանձնացաւ վանքը. բայց միշտ խորհրդով կ'օգնէր Ղևոն Գ.ին, որն որ խելացի ու բարեպաշտ էր:

Հ. Լեւոն Գ.ին առեւնը ինչ նոր խառվածիւն ինկաւ Կիլիկիոյ մէջ .

Պ. Լեւոն Գ. Գրիգոր Մասարգեցի կաթողիկոսին յորդորելովք Սոյ մէջ եկեղեցական ժողովք մը ընել տուաւ, որուն մէջք շատ բան փոխեցին ծէսերու վերաբերեալ . իսկ մը խառվարարու անկարգ մարգիկ առ բանիս վրայ բարկացած մեծամեծ խառվածիւններ հանեցին Կիլիկիոյ մէջ, ու ասոնք ալ բաւական չտեսնելով, անոցամովեամբ գացին Թաթարաց Պիլղար իշխանը, որ Նարզարա կը նստէր, Լեւոնին գէժ գրգռեցին :

Հ. Պիլղար ինչ շարիք հասուց Լեւոնին .

Պ. Խարդախովեամբ Լեւոնը իրեն կամչեց, իբրև թէ խորհուրդ հարցնելու համար . ան ալ շատ իշխաններով ու Հեթումն ալ մեկտեղ առած ելաւ գնաց . Պիլղար նախ սիրով ընդունեցաւ ու վերջը զամենքն ալ թրէ անցուց (1308) :

Հ. Լեւոն Գ.ին ո՞վ յաջորդեց .

Պ. Օշին Հեթումին եղ բայրը շատ զօրք ժողոված Պիլղարին զօրքերը ցրուեց փախուց ու ինքը Թագաւոր եղաւ, ստիպելով որ Սոյ ժողովքին կանոնները պահուին : Օշին գրեթէ աստուածային հրաշքով մը Նորը Եգիպտոսի ամիրային ալ յաղթեց որ շատ զօրքով վրան եկեր էր . աստուերկու տարի Թագաւորեց ու լաւ մահուամբ մեռաւ :

Հ. Լեւոն Ե. իր հօրը տեղը յաջորդելով ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ .

Պ. Ռուբինեանց Թագաւորներուն մէջ գրեթէ ամենէն աւելի անգամ թ անկարգ կեանք անցնողք ինքը եղաւ, որով իր կինը, եղբայրը ու Օշին Պայլ փեսան սպաննել տուաւ անիրաւութեամբ :

Հ. Լևոն Ե.՝ն ասունը օտար թշնամիները ի՛նչ շարիք հասուցին Կիլիկիոյ .

Պ. Եգիպտոսի Սուլդանը, Թաթարներն ու Թուրքերը շատ անգամ Կիլիկիոյ վրայ վազելով շատ վերասներ հասուցին , միշտ պատճառ բերելով որ հայերը Լատինացոց հետ թղթակցութիւն ու վերաբերութիւն ունին ու զանոնք կը գրգռեն Ե. բուսազեմի վրայ գալու :

Հ. Լևոն Ե. յորչափ ասուն թագաւորեց .

Պ. Քասնըմէկ տարի . շատ անհանգիստ ու խեղճ կերպով :

Հ. Ո՞վ յաջորդեց Լևոն Ե.՝ն .

Պ. Յովհաննէս Պայլ ազգաւ լատին . ասիկայ տարիէ մը ազաննուեցաւ իշխաններէն իր հայտատեցութեանը համար :

Հ. Յովհաննէսին ո՞վ յաջորդեց .

Պ. Եղբայրը Գուխանն որ երկու տարիէն սպաննուեցաւ , Լատինի ծէս ազգին մէջ խոթել ուզելուն համար :

Հ. Կոստանդին Գուխանինն անոր յաջորդելով , ի՛նչ ճամբայ բռնեց .

Պ. Թեպէտ և ազգաւ լատին էր , բայց խելքով կառավարեց ազգը տասնըութը տարի : Նոյնպէս ասոր ասունն ալ Եգիպտոսի ամիրան շատ զօրքով Կիլիկիոյ վրայ եկաւ . բայց շարաշար յաղթուեցաւ Կոստանդինէն :

Հ. Լևոն Զ. ի՛նչ տեսակ կառավարութիւն ունեցաւ .

Պ. Երկու տարի աթուրը առանց թագաւորի մնալէն վերջը իշխաններուն փառամուտութեանը

համար, ընտրուեցաւ Թագաւոր Լեօն 2. որուն մայրը միայն հայ էր. խելացի ու բարեպաշտ ըլլալով շատ լաւ պիտի կառավարէր ազգը, բայց ակտոս ժամանակին պարագաները չԹողուցին (1365):

Հ. Ռուբինեանց Թագաւորութիւնը ինչպէս կործանեցաւ .

Պ. Լեօն տասնըմէկ տարուան Թագաւորութեանը մէջ շատ անգամ Եգիպտացիներէն յաղթուելէն վերջը, Եգիպտոսի Սուլթանը Եչրէֆ Հաօբան անհամար զօրքով վրան եկաւ ու երկար ատեն պատերազմելէն ետքը բռնեց Լեօնը ու շղթայի զարնելով Եգիպտոս տարաւ, որով վերջացաւ Հայոց Թագաւորութիւնը Քրիստոսի 1375 Թուականին:

Հ. Լեօն 2. ինչ եղաւ Եգիպտոս .

Պ. Եօթը տարի բանար կեցաւ հաւատքը շուրանալուն համար. վերջը Սպանիացւոց Յովհաննէս Թագաւորին աղաչանքովը՝ գերութենէ ազատեցաւ ու Եւրոպա գնաց:

Հ. Լեօն գերութենէ ազատելէն ետքը ո՞ր գընաց .

Պ. Կախ Երուսաղէմ, ուր իր ընտանիքը Թողուց և ինքը անցաւ Հսոմ. վերջը Յովհաննէս Սպանիոց Թագաւորը իրեն բնակութեան տեղ տուաւ:

Հ. Ո՞ր մեաւ .

Պ. Փարիզ. երբոր գայեր էր հոն Ճամբորդութեան համար՝ մեաւ 1393ին, նոյեմբերի 19ին վաթսուն տարուան, ու Թաղեցաւ Կեղեւտինեանց վանքին մէջը, ուր որ ինչուան հիմա կայ իր գերեզմանը:

ԳԱՍ ԻԳ.

Ռուբինեանց տերութեան կործանելէն ինչուան մեր արտեւի եղամ դիպրուածները :

Հ. Լանկեթիմուր ինչ շարիք հասուց հայաստանի .

Պ. Ռուբինեանց թագաւորութեան կործանելէն տասուերիւ տարիի շափ ետքը Լանկեթիմուր Էօզպէք թաթարաց թագաւորը շատ տեղերու տիրելով հայաստանի վրայ եկաւ . շատ տեղ այրեց արքայականց ու շատ ալ արիւնհեղութիւններ քրաւ . մասնաւորապէս Սերաստիոյ մէջ (1387) :

Հ. Ինչ մարդ էր Պելցինէ Ուսպելեան .

Պ. Քաջ և խոհեմ մարդ մըն էր որ Սիւնեաց գաւառին մէջ (խափանի կողմերը) հինգ վեց հազարէ շափ հայերու վրայ կ'ելէներ հայրաքար , ու զամէնքը կը խնամէր :

Հ. Ո՞րչափ տեւեց ասոր իշխանութիւնը .

Պ. Վրաց թագաւորը վրան նախանձելով Ամնազին անունով անոգամ և շահասէր հայու մը ձեռքով թոյն խոյնել տուաւ ու մեռուց . թէպէտ և վերջը Ամնազինն ալ շարաշար մահուամբ սպաննուեցաւ (1438) .

Հ. Ինչ շարիք հասուց հայոց Շահարաս Պարսից թագաւորը .

Պ. Սոսկալի արիւնհեղութիւններ ընելէն ետքը , հազարաւոր ընտանիք Պարսկաստան տանելով Նոր Զուզան շինել տուաւ ու հոն բնակեցուց . բայց

առ ճամբորդութեան մէջը խիստ շատ մարդիկ խեղճաբար մեռան, ու մնացածները հասան տասուերկու հազար տուն (1604):

Հ. Ինչ դիտելիք կայ Դաւիթ Սիւնի իշխանին վրայ.

Պ. Խելացի ու կարիճ մարդ ըլլալով Սիւնեաց աշխարհքին կողմերը շատ զօրացաւ ասկէ 140 տարի մը առաջ՝ իր քանի մը կարիճներովք, ու չորս տարի Տաճկընեքուն գէժ պատերազմեցաւ քաջութեամբ: Իրեն հետն էին Մխիթար, Տէր Աւետիք և Մելիք Բարսաղան կարիճ հայերը (1724):

Հ. Դաւիթ սրչափ ատեն իշխեց.

Պ. Վեց տարի. շատ յաղթութիւններ ընելէն ետքը մեռաւ յիսուներչորս տարուան ու իրեն յաջորդեց Մխիթար:

Հ. Մխիթարին իշխանութիւնը սրչափ ատեն տևեց.

Պ. Խիստ քիչ. վասն զի քովի մարդիկը զինքը անօգնական ձգելով փախան ջրուեցան, ու վերջը զինչն ալ սպաննեցին: Ասոնցմէ վերջը Հայոց վրայ իրենց ազգէն իշխող մը չեղաւ, բայց՝ ի գեղերու վերահացուներէն. Հայաստան ալ Պարսից և Օսմանեանց և վերջը Ռուսաց իշխանութեան տակն անցաւ: Շատ թշուառութիւններէ ու խեղճութիւններէ վերջը հիմայ կրթութեամբ, գիտութեամբ և հայրենասէր անձանց ջանքով ազգերնիս յառաջադիմութեան մէջ է:

ՀԱՅԿԱՅԻՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1st Aug

1st Aug 1874



ԻՇԻ ԱՆՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Կ Ա Ջ Ա Ն Ց

Գ Ա Ս Ա

Մեր ազգին սկիզբը . Հայկայ ապառաւմբու-
րիւնք , թերայ հետ ըրած պատերազմը , և
իրեն կատարերաշքիւններն ու մանր :

1. Մեր ազգը՝ Նոյնահասակին Յարեթ որդիէն
կ'սկսի ջրհեղեղէն քիչ վերջը : Երբոր Նոյայ որ-
դիւքը ան աստիճան բազմացան Հայաստանի կող-
մերը որ տեղերնին քիչ դալով սկսան ապին ան-
դին երթալ , աս գնացողներուն հետ մեկտեղ գնաց
նաև Հայկ անունով մեկը որ Յարեթին երբորդ
սերունդն էր , այսինքն Յարեթին ալ . և Գամբին ,

1. Մեր ազգը որ ատենէն կ'սկսի , և ո՞վ է մեր
ազգին նախահայրը .

Ի դիւրութիւն ուսանողաց և ըստ ինքորդ ոմանց 'ի բա-
րեկամաց այս երկրորդ մասիս մէջն ալ հարկ սեպեցինք
հարցմունքներ գնել :

Գամերին աղան թորգոմին աղան էր : Աս գաղթա-
կանները երթալու ատեն մէկ մեծ գաշախ մը հան-
դիպեցան Սենաար ըսուած տեղը և հան ամբարտա-
ւանու թեամբ ուղեցին բարձր աշտարակ մը շինել,
ինչպէս որ սուրբ գերբը կը պատմէ, բայց Աս-
տուած բարկանալով լեզունին խառնակեց ու զի-
րենք ալ ջիր ու ցան ըրաւ :

2. Սենաարայ գաշախն աշտարակը շինել ուզող
հսկաներուն մէջ Բէլ անունով մէկը ուրիշներէն
աւելի զօրաւոր գանուելով, կէս մը բանու թեամբ
կէս մ'ալ խոստանալով անոնցմէ շատը իրեն հնա-
զանգեցուց և կ'ուզէր Աստուծոյ պէս պաշտուիլ
ամենէն և անոնց թագաւոր եղաւ : Աս բանս եր-
բոր խնացաւ Հայկ' շուղեց Բեւայ հնազանգիլ *
ուստի ժողովեց աղաքն ու թոռները, որ իրեք հա-
րիւրի չափ կային, և իրեն ուրիշ ծառաները ու
եղաւ նորէն Հայաստան գարձաւ. հոն իրեն առջի
բնակու թեան տեղին անունը Հարք դրաւ և շինած
քաղքին անունն ալ Հայկաշէն. և բոլոր ան կողմի
բնակիչները սիրով հնազանգեցան աս կարիճ և
վեհանձն հսկային (2107) :

3. Բէլ երբոր ըսեց Հայկայ ապստամբութիւնը՝
խսկոյն պատգամաւոր խաւրեց ետեւէն որ գայ նո-
րէն իրեն հնազանգի, թէ չէ՝ անով տեղով կը ընջէ
զինքը. բայց Հայկ աներկիւղ վստահութեամբ մեր-
ժեց Բեւայ անիրաւ սպասնալիքը ու խաւրած պատ-
գամաւորները ետ գարձուց. ասով Բէլ մեծ ու ա-

2. Հայկ ինչպէս ապստամբեցաւ Բեւէն.

3. Հայկ ինչպէս սպաննեց Բեւը.

* Մեր Վարդան պատմիչը կը գրուցի թէ Հայկ ճշմարիտ
աստուածաբարտութեամբ Բեւայ արձանը շարժեցու հա-
մար ապստամբեցաւ Բեւէն :

հեղ պատրաստութեամբ Հայկաց վրայ պատերազմի ելաւ :

Հայկ փոխանակ վախնալու ժողովեց իրեն թաւներն ու աղաքը և ուրիշ հաւատարիմ մարդիկը, ու զանոնք յորդորելով Վանայ ծովուն քովերը պատերազմի պատրաստուեցաւ : Բեշ իրեն ուժին վրայ վառահացած ու ամբարտաւանութեամբ լըցուած, առանձին խումբով մը զատուած եկաւ Հայկաց բանակը գիտելու : Քաջազեզն Հայկ ասիկայ յարմար առին սեպելով զօրքերը շարեց ու պատերազմիչ սկսաւ, և այնպէս քաջութեամբ պատերազմեցաւ իրեններովք՝ որ Բեշ զարհուրած ուղեց ևս զանաւ, ինչուան որ իրեն մէկալ զօրքերը օգնութիւն հասնին. բայց Հայկ Բեշայ յանդրգնութենէն իրեն օգուտ քաղելով, քաշեց աղեղը ու այնպէս թափ անցուց նեաք Բեշայ կուրծքին, որ երկաթը շերտաշերտ զրահներուն մէջէն անցնելով կանրկէն գուրս ելաւ ու ան ահագին և վիթխարի հսկան դեպին պակկեցուց : Հայկ վաճախորհրդով Բեշայ մարմինը առաւ ու զմասել սալով բարձր տեղ մը թաղեց. որպէս զի ամենուն ջուշքնէ Աստուծոյ դէմ ապստամբողին ու հպարտութեամբ լըցուած մարդուն վիճակը. և յախտնական յիշատակ թողու ապագայից որ զիրենք այսպիսի բռնաւորի մը խաշակց. իսկ պատերազմին տեղւոյն անուներ Գերեզմանք գրաւ :

4. Աս բաներուն մէջ աղէկ կը տեսնուի Հայկաց հոգւոյն կատարելութիւնները : Վեհանձնութիւնը կը տեսնուի, որ երբոր Բեշ անհամար բազմութեամբ վրան պատերազմի ելաւ, Հայկ ազատութեան և իր որդւոցը սիրոյն համար լաւ համարեցաւ պատերազմով մեռնիլ քան թէ բռնաւորի մը տակ գերի ըլլալ : Խոհեմութիւնն ու խելացիու-

4. Ի՞նչ հոգւոյ կատարելութիւններ ունէր Հայկ.

Թիւնը կը տեսնուի անով որ այնչափ քիչ մարդով անթիւ բազմութեան յաղթեց յարմար ժամանակը, զիրքը և տեղը ընտրելով: Քաջութիւնը նոյն իսկ իրեն ըրած պատերազմը կը քարոզէ. իսկ անհազարտ կամ անաշխարհակալ հոգին անկէ կ'իմացուի, որ եթէ ինքն ալ ուզենար՝ կրնար Բելայ պէս բանութեամբ ուրիշներուն վրայ տիրել, որուն ամենեկին բան մը չէր պակսեր, մանաւանդ ան տան որ Բելայ յաղթեց, կրնար զանոնք հալածել ու իրեն թագաւորութիւնը մեծցնել, ինչպէս ըրած են բոլոր աշխարհակալները. իսկ ընդհակառակն ինքը թշնամին վանտելէն վերջը զարձաւ իրեն տունը՝ առ բանիս վրայ ուրախացած, որ աշխարհքիս վրայէն ջնջեց Աստուծոյ, և մարդկան և իրեն անձին թշնամին:

5. Տարակոյս չկայ որ Հայկայ արտաքին տեսքն ու գեղեցկութիւնն ալ համեմատ էր հոգւոյն կատարելութիւններուն, որով և մեր Մովսէս խորեանացին Մարիբասայ գրուածքէն հանելով կ'ըսէ. « Այս Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ » . առականովս յայտնի կը ցուցնէ Հայկայ մարմնոյն արտաքին գեղեցկութիւնը ու պատշաճ հասակը. և ինչպէս որ խորեանացին կը գրուցէ, նոյն ատենուան հսկայից և զիւցազանց մէջը քան զամէնը աւելի երեւելի էր. ուրեմն պէտք է ազէկ ճանչնանք այսպիսի նահապետի մը յարգը ու մեզի պարծանք սեպնեք իրեն անունը մեր վրայ կրելը:

6. Հայկ հայրաբար կառավարեց իր տերութիւնը ու շատ կարգեր կանոններ գրաւ և շինութիւններ ըրաւ: Պատմութիւնը որոշ բան չգուրցեր Հայ-

5. Հայկայ արտաքին տեսքը ինչպէս էր.

6. Հայկ ինչպէս կառավարեց իր տերութիւնը ու որչափ ասպրեցաւ.

կայ մահուանը վրայ • բայց հաւանական է որ չորս-
հարիւր տարիի շափ սպրած ըլլայ • որովհետեւ
սուրբ գրոց խօսքերուն նայելով նոյն միջոցներուն
մարդիկ ինչուան 400 տարի կ'ապրէին • խաղա-
զութեամբ մեռաւ Հայկ իր ազգին իշխանութիւնը
յանձնելով Արմենակ որդւոյն (20-27) :

Հայկայ իշխանութեան ատենները Նոյ և իրեն
Նեմզար կամ Նոյնեմզարս կ'ինը մեռան • Նոյ Նը-
պաս ըստան վրայ թաղուեցաւ կ'ըսեն , ու Նոյնեմ-
զարս ան ըստան մօտիկները Մարանդ ըսուած
տեղը :

ԴԱՍ Բ .

Հայկայ յաշորդները ինչուան Արամ :

1 • Արմենակայ վրայ սրատմութիւնը երկայն յի-
շատակութիւն չընէր : Միայն կ'աւանդէ թէ որով-
հետեւ կ'աւզէր որ Հայաստանի ամէն կողմը մար-
գարնակ ըլլայ , ուստի իր Մանաւազ ու խոս եղ-
բայրները Հարբ գաւառը թողուց ու ինքը Հայաս-
տանի հիւսիսային կողմը գնաց , ուր որ իր բնա-
կութեան տեղին անունը Արագած դրաւ : Իսկ
խոս , Մանաւազ և Բազ եղբարքը իրենց բնակու-
թեան տեղերնին բազմանալով , ցեղերնին ալ իրենց
անուամբը խոսխոսուենիք , Մանաւազեանիք ու Բրզ-
նունիք ըսուեցան : Արմենակ քառասունըվեց տա-
րի իշխելէն վերջը խաղազութեամբ մեռաւ իր Ա-
րամայիս որդւոյն յանձնելով ազգին իշխանու-
թիւնը :

1 • Արմենակայ վրայ սրատմութիւնը ինչ յիշա-
տակութիւն կ'ընէ .

2. Կոյնագէս Արամայիսի վրայ ալ մասնաւոր բան մը չպատմուիր, բայց միայն թէ իր անունովը Արմաւիր քաղաքը շինեց (1975), որ վերջէն թագաւորանիստ քաղաք եղաւ, և քառասուն տարի իշխեցէն վերջը մեռաւ հանգստեամբ: Կ'ըսեն թէ Արամայիս շատ աղտոք ունի եզեր՝ որոնց մէջէն Շարա անունով մէկը սաստիկ շատակեր ըլլալով Արամայիս Երասի գետին քովի գաշտերը կը խաւրէ զինքն որ բերրի ըլլալով հանգստեամբ ապրի հոն. ուստի իրեն անունովը ան տեղերն ալ Շիրակ ըսուեցան: Ասկէ ելած է ան առածը որ ինչուան խորենացւոյն ատենը կ'ըսեն եզեր շատակեր մարդկանց. « Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն »:

Վեասիստ Արամայիսին որդին իշխեց անոր տեղը ազգին վրայ երեսունուերկու տարի. ետքը Գեղամ Վեասիային անգրանիկ որդին՝ որ յիսուն տարի իշխեց ու իրեն անուամբը կոչուեցաւ Գեղարքունի գաւառը ու Գեղամայ ծովը: Ետքը Հարմա Գեղամայ որդին երեսունըմէկ տարի իշխանութիւն քրչեց, իր Արամ որդւոյն յանձնելով ազգին կառավարութիւնը (1827):

2. Արամայիսի վրայ Բնչ կը պատմուի ու անոր ոմ յաջորդեց.

Գ Ա Ս Գ .

Արամ և իրեն ընդհարիւնները :

1 . Արովհեան ասուն անցնելով Հայկայ քաջու-
թիւնները մտացուեր էին , ուստի Հարմային վերջի
տարիները այլ և այլ թշնամիներ Հայաստանի վրայ
վազել սկսան ու զանազան մասերուն տիրեր էին ,
ասով պէտք էր որ մեկ ուրիշ Հայկայ պէս քաջ
մ' ալ ելլելով նորէն թշնամիները վախցնէր . և ա-
հա ասիկայ եղաւ Արամ որ հօրը տեղ նստելուն
պէս հարկ եղաւ որ աս թշնամիները Հայաստանէն
գուրս հանէ . շուտ մը զօրք ժողովեց , քաջութիւնը
ու իրեն բնական խելացիութիւնը և պատերազմի
յարմարութիւնը սկսաւ բանի բերել . որով չէ թէ
միայն թշնամիները իր երկրէն հանեց , հապա նաև
հեռաւոր աշխարհքներ հալածեց , և կամ բանե-
լով սպաննեց :

2 . Աս թշնամիներուն առջինն ու աւելի զօրա-
ւորն էր ' Վիւքար անունով Մարաց իշխանը որն որ
հպարտ մարդ մըն էր , ու Հարմային վերջի տարի-
ները Հայաստանի մեկ կտորին վրայ վազելով հար-
կատու ըրեր էր . և որովհեան Հարմա նոյն տարի-
ները մեռաւ , ուստի ասիկայ երկու տարիի շտփ
տիրեց ան մասին : Արամ հօրը տեղն անցնելուն
պէս յիսուն հազար զօրք ժողովեց կայծակի պէս
վրայ հասաւ . ջարդեց անոր զօրաց բազմութիւնը ,
զինքն ալ բանեց Արմուիր բերաւ , և նոյն ժամա-

1 . Արամ ինչպէս Հայաստանը իրեն թշնամի-
ներէն խաղցուեց .

2 . Արամայ առաջին թշնամին ո՞վ էր .

նակի քաղաքահանութեանը համեմատ, հրաման տուաւ որ բարձր աշտարակի մը ծայրը հանելով երկաթէ ջիցով ճակատէն դառնն ազգին անիրաւ թշնամին . և Նիւքարին ըրած առջի անիրաւութեանը փոխարէն՝ անոր երկրին մէկ մասը հարկատու ըրաւ :

3. Արամայ երկրորդ թշնամին եր բարչամ Բաբելացւոց իշխանը որն որ քառասուն հազար հետեակով և հինգ հազար ձիաւոր զօրքով Հայաստանի վրայ վաղեց, Նիւքարին պէս ուզելով որս մը ձեռք ձգել . բայց Արամ աս բանս իմանալուն պէս մէկէն զօրքերը ժողվեց և շուտով մը վրան հասաւ, թշնամւոյն զօրքերուն կէսը կտարեց, կէսն ալ ցրուեց ու զինքն ալ բռնելով սպաննեց . աս եղաւ Արամին երկրորդ յաղթութիւնը :

4. Արամայ քաջութիւններուն համբաւը մերձակայ ազգերուն սիրաւ վախ ձգած ըլլալով, երրորդ Կապադովկացւոց Պայսապիս անունով իշխանը լսեց որ Արամ քառասուն հազար զօրքով իր երկրին մտակերը եկեր է, վախնալով որ չըլլայ թէ Կապադովկիոյ ալ տիրէ, բոլոր ուժովը Արամայ դէմ պատերազմի ելաւ . բայց Արամ վրան հասաւ սաստիկ կատորածով քշեց հալածեց զինքը ու Միջերկրական ծովուն կղզիներուն մէկուն մէջը փախուց : Իսկ Պայսապիսին երկրին տիրելով Մշակ անունով Հայ մարզպան մը դրաւ ան տեղերուն՝ տասը հազար զօրք տալով իրեն . բայց ասկէ հրաման հանեց որ ամէնքն ալ հայերէն խօսին :

Իսկ Մշակ մարզպանը Կապադովկիայի մէջ քաղաք մը շինեց ու իրեն անունովը Մշակ անուա-

3. Արամ ինչպէս յաղթեց ու սպաննեց Բարչամ Բաբելացւոց իշխանը .

4. Արամ զեռ ուրիշ ինչ քաջութիւններ ըրաւ .

նեց՝ բայց բնակիչները չկրնալով աղէկ հնչել Մա-
ժակ կը գրուցէին . վերջէն առ քաղաքը հռովմայե-
ցոց Յուլիոս Կեսար ինքնակալէն նորոգուելով
Կեսարիա ըսուեցաւ, որ է հիմակուան Ղայսերի
ըսուածը :

5. Արամ բոլոր Թշնամիները Հայաստանէն վա-
նելէն վերջը՝ երբոր տեսաւ որ ամէն կողմանէ ա-
պահով է, սկսաւ բարեկարգել Հայաստանը կար-
գեր կանոններ դնելով, և այնչափ երևելի եղաւ ու
անունը օտարաց մէջ տարածեցաւ որ բոլոր ուրիշ
ազգերը մեր ազգը իրեն անուամբը սկսան Արա-
մեան կամ Արմէն կոչել, ինչպէս նաև ինչուան
հիմա նոյն անունը կուսան մեզի իրենք :

6. Առ միջոցին Ասորեստանեայց Կինոս Թագա-
ւորը կարգաւով իրմէ առաջ եղած քաջերուն պատ-
մուծիւնը, կ'ուզէր որ անոնց նմանի ու միայն ի-
րեն անունը յիշուի աշխարհքիս վրայ . առ խոր-
հրդով բոլոր իրմէ առաջ եղած քաջերուն պատ-
մուծիւնները այրել տուաւ . ու ինքն ալ շատ զօրք
ժողովելով այլ և այլ տեղերու տիրեց, առաւ Ե-
գիպտոսը ու անոր շքեակայ սահմանները : Անցաւ

5. Արամ իր ըրած բարեկարգութիւններովը
ու քաջութիւններովը ի՞նչ համբաւ ստացաւ օտար
ազգաց մէջ .

6. Արամայ քաջութիւններուն համբաւը ի՞նչ
ազգեցութիւն ըրաւ Կինոս Ասորեստանի Թագա-
ւորին վրայ .

Սո պատճառաւ Յոյները Փոքր Ասիային առ մասը
Արմենիա անուանեցին . իսկ Հայերը Առաջին Հայք դրին
ան մասին անունը, ու անկէ վերջը Հայոց տիրած տեղե-
րուն անունը Երկրորդ Հայք, Երրորդ Հայք . իսկ Զորրորդ
Հայքը ասոնց մասը չէ, հապա բուն Հայաստանին հնգե-
տասան նահանգներէն մէկն է որ ասոնց սահմանակից
ըլլալով, Զորրորդ Հայք ըսուեր է :

անկէ Հնգկաստան , բայց հոն շարաշար յաղթուելով եւս գործու : Նոյնպէս պատմութիւններուն մէջ կարգաւրով որ հայկ զԲէլք սպաններ է , ուզեց Արամէն վրէժը առնել . բայց Արամայ քաջութիւններէն վախնալով եւս կեցաւ իր խորհուրդէն . հաշտութիւն խօսեցաւ Արամայ հետ և թող արւաւ որ մարգարտէ պատկ գործածէ :

7 . Խորենացին Արամայ վրայ խօսելու ատեն ասանկ կը զուրցէ Մարիբասայ խօսքերէն հանելով . « Սա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ , որպէս ցուցանէ նոյն պատմագիր , (այսինքն Մարիբաս Կասինա) լաւ համարէր զմեռանէն ՚ի վերայ հայրենեացն , քան թէ տեսանէլ զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենիս , և հարազատից արեան նորա օրիել արանց օտարածնաց : Երբաւի կարծ և քիչ բան կը գնէ , բայց սա կատարելութիւններն ու առաքինութիւններն են որով ազգին թշնամիներուն յաղթեց և իրեն անունը անմահացուց , ազգին սիրելի ու միանգամայն պատկառելի ըրաւ զինքը , և կարգաւորեց տէրութիւնը՝ կարգեր կանոններ գնելով : Ըս գլխաւոր առաքինութիւններէն զսա կը տեսնուի Արամայ վրայ սա կատարելութիւններն ալ . բարեխաան կեանք , հմտութիւն պատերազմական բաներու մէջ , աշխարհակալութեան անյազ սիրոյն շափ գնել , արագութիւն ՚ի գործս և ուրիշ կատարելութիւններ : Պատերազմական հմտութիւնը կ'իմացուի իրեն պատերազմներու մէջ յաղթելէն , և այնպիսի թշնամեաց , որոնք նոյն ատենը շատ երևելի էին , մանաւանդ Բարշամը որ Խորենացւոյն

7 . Մովսէս Խորենացին ինչ գովեաւ կուտայ Արամայ վրայ և իրեն գլխաւոր կատարելութիւնները որոնք են .

ըսածին նայելով, Ասորիք երկար ատեն պաշտօնին զինքը իրեն քաջութիւններուն համար :

Արամայ աշխարհակալութեան սէրը ամենեւին անանց պէս չէր սրտնք շատ անգամ օտար ազգերուն վրայ կը յարձակէին առանց իրաւանց, միայն իրենց անյագ փափաքը լեցնելու համար . Արամ անանց երկրին միայն տիրեց սրտնք որ ուզեցին իրեն և կամ իր հայրենեացը մնաս մը հասցնել . որ ամենայն կերպով արգարացի է : Դարձեալ երբոր իր թշնամիներուն յաղթեց՝ ալ անկէջ վերջը փոյթ չըբաւ աշխարհակալութեան : Ահա այսպիսի գեղեցիկ կատարելութիւններով զարգարուած էր աս մեծ մարդը, որ յիսունըութը տարիի չափ իշխելէն վերջը՝ խաղաղութեամբ մեռաւ, յանձնելով կառավարութիւնը իր Արայ որդւոյն :

Դ Ա Ս Դ .

Արայի Շամիրամայ ձեռ ըրած պատերազմը,
ու Շամիրամայ գործքերը :

1 - Արայ Նինոսի վերջի տարիները իր հօրը յաջորդելով նոյն պատիւը ունեցաւ Նինոսէն, ինչ որ ունեցեր էր Արամ իր հօրը . ասիկայ գեղեցիկութեանը համար Արայ Գեղեցիկ ըսուեցաւ : Իշխան նստելուն պէս մեկէն շինութիւններու ետեւ սկըսաւ ըլլալ և ան պատճառաւ Արամի քաղաքը իրեն չըջակայ տեղերովը Արարատ կամ Այրարատ ըսուեցաւ :

2 - Երբոր Նինոս Ասորեստանցոց թագաւորը

1 - Արամի ուժ յաջորդեց .

2 - Ինչէն բացուեցաւ Արայի Շամիրամայ հեռ ըրած պատերազմը ու ինչ վերջ ունեցաւ .

մեռաւ, Շամիրամ* իր կինը տեղը յաջորդեց. ու լսելով Արային գեղեցիութիւնը ու գեց կարգուիլ հեռք, խոստանալով Արային որ իրեն հեռ մեկ տեղ Ատրեստանի վրայ ալ թաղաւորէ: Բայց Արայ խնամալով Շամիրամայ անկարգ ու շար մտքը, մերժեց իրեն խնդիրքը, և աւելի յանձն առաւ պատերազմով մեռնիլ քան թէ իրեն առաքինութիւնը ու բարեխաանութիւնը ոտքի տակ առնել: Փուճ տեղը շատ աշխատեցաւ Շամիրամ համոզելու զինքը այլ և այլ անգամ պատգամաւորներ խաւրելով, և ամէն անգամ իրեն աներեսութիւնը խաղք եղաւ, բայց զխնայցինին համեստութենէն չամչցաւ. վերջապէս յուսահատութեամբ ու բարկութեամբ լցուած պատերազմով Արայի վրայ եկաւ ու Այրարատայ զաշտին մէջ պատերազմի պատրաստուեցան երկու կողմէն: Շամիրամ իրեն զօրացը և զօրավարներուն խափա սրգիլեց որ զԱրան չապանեն, հասցա ողջ բռնեն. բայց պատերազմին տաք միջոցները Արան զարնուելով մեռաւ, որ շատ աւելի մեծ յաղթութիւն էր քան թէ Շամիրամայ անկարգ հաճոյքը կատարեր ու հարիւրաւոր տարի ալ թաղաւորութիւն ըներ:

3. Շամիրամ երբոր խնայաւ Արայի մեռնիլը շատ ցաւեցաւ որ իր գեշ կամքը չկրցաւ կատարել, ու իրեն ամպարիշա աստույժ կուրցած, կ'ուզէր զիւթութեամբ ողջ ընցընել. բայց որովհետեւ զին սկսաւ հոսիլ և Հայոց զօրքն ալ Արային մահուանը վրայ բարկացած կ'ուզէին նորէն պատե-

3. Շամիրամ ինչ վարպետութիւն բանեցուց Հայերը խաբելու համար.

* Ասիկայ եղաւ աշխարհքիս մէջ առջի թագաւորին որ թաղաւորեց, և միանգամայն կն կարիճը ու կն երեսելին:

բազմ բանալ, Համիրամ իրեն մարդիկն րէն մէկը, որ քիչ մը Արայի կը նմանէր, զարգարելով ձայն հանեց Հայոց զորաց մէջ որ առաւումները Արան լրդելով ողջացուցին: Իսկ Արայի մարմինը խորունկ վիճ մը նետել տուաւ, որպէս զի Հայերը չգանձանաւով թէպէտ և բոլոր Հայերը շխարուեցան, բայց զորաց մէջ շիտթութիւն կընալով Համիրամայ գէմ չգրին, ու անով Համիրամ Հայաստան մտաւ (1743):

4. Արայի վրայ ունեցած գլխաւոր տեղեկութիւննիս աւ է, և խորենացին ուրիշ բան չպատմեր վրան. բայց տարակոյս չկայ որ բոլոր աշխարհքի տիրելէն շատ աւելի վեր է իրեն համեատութեան առաքինութիւնը. մանաւանդ այնպիսի գարու և կասպաշտութեան խաւարին մէջ: Արայ ընդ ամէնը Յն տարի իշխեց ազգին վրայ իրեն յարգ թողլով իր Վարդուս որդին:

5. Ինչպէս որ խորենացին կը զուրցէ, ամառ առան ըլլալով Համիրամայ Հայաստան մտնելը, Համիրամ տեսնելով ոգին մաքրութիւնն ու զովութիւնը, գիրքին ազուորութիւնը, աղբիւրներուն ու գետերուն շատութիւնն ու յասակութիւնը, ուզեց իրեն ամառուան բնակութեան տեղ մը շինել Հայաստանի մէջ. ուստի աւ բանիս համար ընարեց Աղթամարայ ծովուն եզերքը ու հոն քաղաք մը շինեց որ իրեն անուամբը Համիրամակերտ քառեցաւ ու վերջէն Վան. աւ շէքիս համար քանուկերկու հազար գործաւոր ու վեց հարիւր ճարտարապետ կ'աշխատին եղեր: Համիրամ Արային սիրոյն համար անոր տասուկերկու տարուան

4. Ասիկց գուրս Արայի վրայ ուրիշ բան մը կը պատմուի.

5. Համիրամ իր մեծագործութեանը ինչ յիշատակ մը թողուց Հայաստանի մէջ.

Վարդոս որդին յաջորդ նստեցուց անուէն ալ Արայ գրաւ, և ինքը ամառը հուզար Հայաստան կը բնակէր, իրեն տեղը փոխանորդ զնկելով Չրագաշա անուամով մտքը որ Մարայ իշխան էր : Բայց Համիրամայ որդեքը չկրնալով իրենց մօրը անկարգութիւններուն զիմանալ, զինքը այլ և այլ անգամ խրատեցին . երբոր իմացաւ Համիրամ որ զինքը կ'ուզէն սպաննել, ինքը փութաց ու բոլոր որդեքը թրէ անցուց, բայց ՚ի սղափ սղէն որ Վինուաս կը սուէր :

6. Ատեն անցնելով Չրագաշա Վինուասին հետ միացած պատերազմի ելաւ . Համիրամայ զէմ . պատերազմը երբոր սատակացաւ . Համիրամ Հայաստան փախաւ ու Վարդոսին հետ միանալով անոնց զէմ պատերազմի ելաւ . բայց յաղթուեցան ու երկուքն ալ պատերազմի մէջ ընկան մեռան, Համիրամ վախճուեալ երկու տարուան ու Վարդոս երեսուն տարուան, տանըութը տարի իշխելէն վերջը : Այն պատերազմին մէջը գերի ընկաւ նաև Վարդոսին Վնուշուան որդին որ տանըչորս տարուան էր, ու աս պատճառաւ քիչ մը ատեն Հայաստան Վինուասայ իշխանութեան տակը մտաւ . ուստի քիչ մը ատեն Հայերը աւանց իշխանի մնացին, ինչուան որ Վնուշուան մեծցաւ ու պաշտօնին մէջի եզած մեծերուն շատին սիրելի ըլլալով, անոնց միջնորդութեամբը ու ազաւանքովը Հայաստանին մէկ մասին տիրեց խառանալով որ տարուէ տարի տուրք սոյն . բայց վերջէն իրեն խաչեմութեամբը մէկալ մտակրուն ալ տիրելով, բոլոր Հայաստանի բացարձակ տէր եղաւ . շատ բարե-

6. Հայաստան ինչպէս Վինուասայ իշխանութեանը տակ մտաւ ու ետքը նորէն ինչպէս խալը սեցաւ .

կարգութիւններ ըրաւ ու վաժժանութիւնք տարի
իշխեցին վերջը խաղաղութեամբ մեռաւ :

7. Աս փառաւոր իշխանին վրայ թէպէտ և քիչ
սրամտութիւն ունինք, բայց խորենացին ազէկ կը
համառօտէ իր արժանաւոր գովեստը և կատարե-
լութիւնները առ երկու սողովս. « Արայեանն Ա-
րա մեռանի ընդ Համիրամոյ, թողով արու զա-
ւակ ամենահարուստ և շատահանձար յիր և 'ի
բան զՄուշաւանն » : Բայ 'ի խորենացոյն առ
մեծ գովեստէն, իրեն խելացիութիւնը յայտնի կը
տեսնուի իր գործողութեանը մէջ ալ որ այնպիսի
մեծ տէրութեան մը ձեռքէն հայրենական ժա-
ռանգութիւնը առաւ առանց արիւնհեղութեան,
և ինչպէս որ խորենացոյն վերի գրած խօսքէն
կ'իմացուի, բոլոր իրեն քաղցրարանութեամբը :
Կ'ըսէ խորենացին որ երբոր ծնաւ Մուշաւան՝
Կարգոս իր հայրը նուիրեց զինքը ան Սուեաց ան-
տառին որն որ անկած էր Արմենակ. սակէ Մու-
շաւանը Սոս կամ Սոսանուէր կոչուեցաւ : Կը կար-
ծէին հայերը որ աստուածներ կը բնակին ան ան-
տառին մէջ, որով անոր նուիրուողը անարատ,
կարիճ ու սուրբ կը համարուէր (1685) :

7. Անուշաւան ինչ կողմանէ երևելի եղաւ :

Գ Ա Ս Ե .

Պարեակն սխտաւ ինչոռակ մեծն Տիգրակ :

1. Արովհեակ Կնուշաւանին ցեղէն իշխանութեան օրինաւոր յաջորդ չէր մնացած, ուստի հարկ եղաւ որ Հայկայ մեկալ որդւոցը ցեղէն Պարէա անունով իշխանը արեւ Հայոց վրայ. որուն վրայ երկայն ծանօթութիւն չունինք, բայց միայն գիտենք որ շատ պատերազմներ ըրեր է յետին տարի իշխելով Հայոց վրայ: Ասիկէ սկսեալ ինչուան Պարոյր առաջինին միջոցները, խորենացին բան չպատմեր առ իշխաններուն վրայ, հասցա ազգին թագաւոր ունենալուն վրայ ուրախութեամբ լցուած մէկէն թագաւորութեան սկսելուն վրայ կը խօսի, մեկալնոնք զանց անելով*: Միայն ասոնցմէ մէկ քանիին վրայ համառօտ տեղեկութիւններ ունինք:

1. Կնուշաւանին մեռնելէն վերջը ո՞վ իշխեց Հայոց վրայ:

* Կնուշաւանէն վերջը կարգաւ ետեւ ետեւ նստած իշխաններուն անունները ասոնք են. Պարէա, Արբակ, Զաւան, Փառնակ Ա, Սուր, Հաւանակ, Վաշտակ, Հայկակ, Ամբակ Ա, Առնակ, Շաւարշ Ա, Նորայր, Վաստմ, Կար, Կոռակ, Հրանտ, Ընձակ, Գղակ, Հօրոյ, Զարմայր, Շաւարշ Բ, Պերճ Ա, Արքուն, Պերճ Բ, Բազուկ երկայնակեաց, Հոյ հրաշակերտ, Թուակ, Ամբակ Բ, Կայարակ, Փառնաւազ, Փառնակ Բ, Սկայորդի ու իրեն աջան Պարոյր:

2. Կը զուրցեն մեր պատմիչները որ Զարմայր Նահապետը Տրոյից մեծ պատերազմին ատենը Տրոյացւոց Պրիամոս Թագաւորին օգնութիւն գնացեր է ու հոն շատ քաջութիւններ ընելէն վերջը պատերազմին մէջը մեռեր է . Խորենացին կը զուրցէ ասոր համար : « Մեռանի 'ի քաջացն Արիմացւոց » . Կոյնպէս նաև կը տեսնուի որ Սկայորգին ալ քաջ մարդ եղած պիտի ըլլայ ինչպէս որ Խորենացւոյն խօսքէն ալ կ'իմացուի որ զինքը « Բաջ նախնին մեր » կ'անուանէ . բայց վրան ամենեկին բան չպատմեր (743) :

3. Բայց 'ի գլխաւոր աս երկուքէն մեկալնոնց վրայ որոշ տեղեկութիւն մը չունինք . բայց յայտնի կը տեսնուի որ անոնց մէջն ալ շատ քաջ մարդիկներ եղած պիտի ըլլան . ինչպէս որ իրենց անուններէն կամ քովի գրած մտեղիքէն կ'իմացուի , ինչպէս Սուր , Վաչտակ , Առնակ , Կար , Հրանտ , Պերձ , Բազուկ , Հոյ հրաշակերտ և այլն : Աս անունները որոնք նշանակութիւն ունին , կը տեսնուի որ իւրաքանչիւր մարդուն կատարելութեանը համեմատ գրուած են , և ոչ եթէ ըստ գիտացողարձեալ՝ զրեթէ հազար տարուան միջոց է այսչափ իշխանաց ետեւ ետև յաջորդելը , որոնց ատենը Հայաստան ամենեկին գերութեան տակ չմըտաւ՝ Թէպէտ և հարկատու եղաւ այլ և այլ անգամ . այս բանս յայտնի կը տեսնուի պայազատներուն շարունակութենէն որոնց անունները վարը գրինք :

4. Պարոյր իր հօրը Սկայորգւոյն տեղը յաջոր-

2. Զարմայր Նահապետին ու Սկայորգւոյն վերայ ի՞նչ մասնաւոր բան մը կը պատմուի .

3. Մեկալ իշխաններուն քաջութեանը ի՞նչ բան կրնայ իբրև ստոյգ նշան մը սեպուիլ .

4. Պարոյր Վարբակէսին օգնելով ի՞նչ պատիւ ունեցաւ .

գելով Հինգ տարի ազգը կառավարեց ամէն տեսակ բարեկարգութիւն ընելով: Կոյն միջոցին Ասորեստանի վրայ կը թագաւորէր Սարգաննարազ որ զեզծ ու անխելք մարդ մը ըլլալուն համար, իշխանները իրմէ սպասամբեցան Աւարբակէս անունով իշխանին առաջնորդութեամբը: Աւարբակէս իրեն կողմը զօրացնելու համար Պարոյր մեր նահապետը որ սաց, խոստանալով որ եթէ Սարգաննարազին յաղթեն, զինքը թագաւոր ընէ Հայաստանի: Աս պատճառաւ ժողկց Պարոյր իրեն քաջ ու աղեղնաւոր զօրքերը ու Աւարբակէսին օգնութեան գնաց. հոն Սարգաննարազին յաղթելով Աւարբակէս բոլոր Ասորեստանի թագաւոր եղաւ, ու ինչպէս որ խոստացեր էր, Պարոյրին ալ թագ կապեց ու թագաւորական գաւազան տուաւ:

5. Պարոյր ուրախութեամբ Հայաստան գառնալով քառասունը ութը տարի խաղաղութեամբ թագաւորելէն վերջը մեռաւ:

Պարոյրի ասկէն Սենեքերիփին երկու տղաքք Ագրամէլէք և Սանասար Հայրերնին ստաննելով Հայաստան փախան, զորմէք ընդունեցաւ Պարոյր մեծ Հիւրասիրութեամբ: Ասոնցմէ սերեցան Սանասունք կամ Սասուն ըսուածները և Արծրունիք ու Գնունիք: Հոս պատմութիւնը նորէն կ'ընդհատի, որովհետեւ որ Պարոյրէն սկսեալ ինչուան մեծին Տիգրանայ թագաւորութիւնը գրեթէ ամենեին պատմութիւն չունինք. վասն զի Խորենացին համառօտութեան համար բոլոր ան թագաւորներուն ըրած գործքերը ձգելով միայն անուանին կը յիշէ ու մեկէն մեծին Տիգրանայ քաջութիւնները կ'սկսի պատմել: Բայց այսու ամենայնիւ իրեն մեծ

6. Պարոյր ընդ ամէնը քանի տարի թագաւորեց ու իրեն միջոցը ուրիշ ինչ նշանաւոր զիպուած մըն ալ հանգիպեցաւ:

Հանարմունքը կը ցուցնէ Հայոց Թագաւորու-
թեան սա մասին վրայ սա խօսքովք . « Միրելի էր
ինձ յայնժամ գալ Քրիչին և զիս գնել, և առ նո-
քօք յաշխարհ զմեան իմ ամենը, և նոցա տեսու-
թեամբն խրախճանալ » : Բազմիմաստ ու շատ նշա-
նաւոր է Խորենացւոյն այս խօսքը, որն որ ազգին
այլ և այլ ատենուան միճակները ազէկ ըմբանե-
լէն վերջը, սա միջոցս ուղեր է աշխարհք գալ : Իսկ
Թագաւորները ասոնք են . Պարոյր, Հրաչեայ,
Փաննաւազ, Պաճոյճ, Կոննակ, Փաւոս, Հայկակ .
Երուանգ ու Երուանգայ տղան Մեծն Տիգրան :
Ասոնց մէջ միայն Հայկակին վրայ գիտելիք մը կայ
թէ Նարեգոզոնոսորայ հետ մէկտեղ պատերազ-
մի գնաց Երուսաղէմի վրայ . երբոր յաղթեցին ու
էտ սխախ դառնար Հայկակ՝ խնդրեց Նարեգոզո-
նոսորէն որ Հրէից գերիներէն ուղածը անէ . ուս-
տի Շամբատ անունով իշխանը առաւ ու իրեն ըն-
տանիքովք Հայաստան բերաւ . վերջը Վաղարշա-
կայ ատեն Բագարատ երեւելի նախարարին անու-
նովք բոլոր ջեղն ալ Բագրատունիք ըսուեցաւ
(580) :

ԴԱՍ 2.

Մեծն Տիգրան ու իրեն քաջութիւնները :

1. Մեծն Տիգրան Երուանդայ որդին պարծանք մեր Թագաւորութեանը և պայծառացուցիչ ազգին, մեր ամէն Թագաւորներէն աւելի երեւելի ու աւուանի եղաւ՝ չէ թէ միայն իրեն արտաքին քաջութիւններովը, հասցա նաև իրեն հոգւոյն կատարելութիւններովը: Խորենացին ալ բոլոր Հայկազանց պատմութեան մէջ, մեծին Տիգրանայ մասը ամենէն ընդարձակ կը պատմէ. անոր համար կ'արժէ որ մենք ալ քիչ մը ընդարձակ խօսինք ասոր վրայ:

Խորենացին միայն ճաշակ մը կուտայ Տիգրանայ առաջին քաջութիւններուն վրայ, առանց պատմելու թէ որոնց յաղթեց և թէ ան պատերազմներուն մէջը ի՞նչ կերպ բռնեց. ուստի ասանկ կը զուրցէ. « Արանց կացեալ գլուխ, և արութիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց. և զնոց լծով կացեալս՝ լծագիրս և հարկապահանջս կացոյց բազմաց »: Ասկէց բնահանապէս կրնանք մտկաբերել թէ շատ քաջութիւններ ըրած պիտի ըլլայ, և աս բանս յայանի կը զուրցէ որ Յոյները նուաճեց և Հայաստանի առաջին սահմանները նորոգեց:

1. Ա՞՞վ է մեծն Տիգրան և ի՞նչ քաջութիւններ ըրած ունի.

2. Կիւրոս Պարսից Թագաւորը լսելով Տիգրանայ քաջութիւնները՝ ուզեց անոր հետ բարեկամութիւն հաստատել. արդէն Տիգրան ալ կ'ուզէր Կիւրոսին բարեկամութիւնն ու օգնութիւնը, անով մէջերնին բարեկամութիւն հաստատեցին: Աս բանս երբոր իմացաւ Աժգահակ Մարաց Թագաւորը, որ նոյն օրերը Կիւրոսի հետ թշնամացեր էր, կասկածի գնաց որ չըլլայ թէ աս երկուքը միաբանելով իրեն գէժ պատերազմի ելլեն: Քանի որ աս վախովս կը ծփեր, գիշեր մը սաստիկ խռոված երազ մը տեսաւ որ ձիւնով ծածկած բարձր լեռան մը ծայրը, կին մը նստած իրեք դիւցազն ծընաւ. առաջինը առիւծի վրայ նստելով գէալ 'ի արեւմտեան կողմը կը վազէր. երկրորդը ընծու վրայ նստած հիւսիսային կողմը կը նայէր, իսկ երրորդը վիշապի վրայ հեծած իր Թագաւորութեան վրայ կը վազէր: Երբոր իր խորհրդականներն ու պաշտօնեաները լսեցին աս բանս՝ խորհուրդ տուին իրեն որ այլ և այլ ազգերէ զօրք ժողովելով անոնց գէժ պատերազմի ելլայ. բայց Աժգահակ գիտնալով Տիգրանայ քաջութիւնները, վախցաւ անոր գէժ պատերազմի ելլելու. հասար վարպետութեամբ մտածեց որ նախ զՏիգրանը սպաննէ ու վերջը Կիւրոսին գէժ պատերազմի ելլէ. աս պատճառաւ խարեութեամբ՝ Տիգրանայ Տիգրանուհի քոյրը իրեն կին առաւ, որպէս զի անոր ձեռքովը սպաննել տայ զՏիգրանը: Աս ամեն բաներս ընելէն վերջը սկսաւ Տիգրանուհին յայանել իրեն սրտին շարութիւնները, ըսելով որ Տիգրան նախանձելով իր մեծնաշուն վրայ, միացեր է Կիւրոսին հետ ու կ'ուզէ նախ Թագաւորութիւնը ձեռ-

2. Աժգահակ ինչէն թշնամացաւ Տիգրանայ հետ ու ինչ վարպետութիւն բանեցուց զինքը ըսպաննելու.

քէն առնել մեացնել զինքը ու վերջը զՏիգրանու-
հին . ուստի պէտք է որ եղբայրդ մէջ տեղէն վեր-
ցուի որպէս զի մեր կեանքը ասպահովուայ ըստ , ա-
պա թէ ոչ զքեզ արկնութենէ կը ձգեմ :

3 . Առ բաներս փոխանակ վախցնելու զվսեմա-
խոհ թագուհին , աւելի քաջալերեցին զինքը որ
ինքն ալ ուրիշ որոգայթներ լարէ Աժդահակայ գէմ :

Ուստի իմանալով որ եթէ չհաւանելու կերպ
ցուցնէ սա բանիս մէջ՝ գէշ բաներ կրնան հե-
տեիլ , անոր համար առջի բերան չէ թէ միայն հա-
մոզուիլ ցրցուց , հասպա նաև ինքն ալ վրայ տուտ .
բայց վերջը վարպետութեամբ մը խնայուց իր եղ-
բորը՝ Աժդահակայ սրտին շարութիւնը : Նոյն մի-
ջոցին Աժդահակ ալ խարդախութեամբ Տիգրա-
նայ պատգամաւոր խաւրեց որ իրեն տեսութեան
գայ Մարաց երկրին սահմաններուն մօտիկ . բայց
Տիգրան գիտնալով Աժդահակայ գաւաճանութիւ-
նը , ետ խաւրեց պատգամաւորները ըսելով որ ի-
րաւցնէ կուգայ , բայց չէ թէ տեսութեան՝ հասպա
պատերազմելու , ու մէկէն Վիւրասին խնայուց . և
դեռ ան չեկած՝ Տիգրան ժողովեց Հայոց , Վասպա-
գովկացուց , Աղուանից ու Արաց աշխարհքին զօր-
քերը ու Մարաց կողմերը գնաց : Հոն հինգ ամիսի
չափ պատերազմը ուշացուց որպէս զի Վիւրաս օդ-
նութեան գայ , ու Տիգրանուհին ալ խաղբսի ա-
ռանց փնասուելու : Խոհեմ ու քաջ թագաւորին
վարպետութեամբը երկուքն ալ եղաւ . Տիգրանու-
հին խաղբսեցաւ , ու հինգ ամիսէն վերջը Վիւրաս
ալ օգնութեան եկաւ հասաւ : Մէկէն Տիգրան
պատերազմը սկսաւ , ու պատերազմին սաստիտ-
թեան ասկնը Տիգրան և Աժդահակ իրարու հան-

3 . Տիգրանուհին երբոր եղբորը մահուան խոր-
հուրդը լսեց ինչ ըրաւ , ու Աժդահակ ինչպէս
մեռաւ .

գիպելով, Տիգրան այնպէս ուժով խոթեց իրեն տեղը Աժգահակայ սիրտը, որ դուրս հանելու առան թոքն ալ հետը դուրս հանեց : Ընկաւ Աժգահակ ու հոգին փչեց . բայց Տիգրան պատերազմը առաջ տանելով վանեց թշնամիները, ու ասոր հազար հոգի շափ գերի բռնելով յաղթութեամբ Հայաստան գարձաւ : Աս պատերազմիս մէջ գրեթէ բոլոր յաղթութիւնը Տիգրան քրտու . վասն զինչպէս որ Խորենացին կը զրուցէ, քաջ քաջի հանգիպելով պատերազմը անպարտելի կը մտար, ինչուան որ Տիգրան զարկաւ մեռչուց Աժգահակը : Կորէն առ գործողութեանս մէջն ալ Հայոց գիւցացին պահուած էր ընթելու աշխարհքիս վրայէն Առաուծոյ օձելոյն և աշխարհքիս թշնամին, որն որ թէպէտ Կիւրոսին բազուկն ալ կարող էր աս բանս ընելու, բայց տարակոյս չկայ որ քաջագունին պահուած էր աս պարծանքս՝ երկնաւոր կանխագիտութեամբ : Ասկէ վերջը երբոր Կիւրոս Բաբելոնաց վրայ պատերազմի ելաւ, իրեն օգնութեան ցնաց մեր Տիգրան թագաւորն ալ, որունք երկուքը մէկտեղ Բաբելոնը առին ու յաղթութեամբ իրենց տեղը գարձան : Տիգրան այսպիսի փառաւոր յաղթութիւններով քառասունըհինգ տարի թագաւորելէն վերջը խաղաղութեամբ մեռաւ, իրէք որդի թողով որ են Բաբ, Տիրան ու Վաչագան :

4. Խորենացին Տիգրանայ համար կը զուրցէ ճշմարիտ և իրաւացի կերպով գովելով : Առաջին գովեստը աս է . « Ամենեցուն որ աս իւրովքն էին ժամանակից նախանձելի, և յետնոցս ըղձալի՝ ինքն և ժամանակ իւր » : Աս խօսքերէս վերջը կը գնէ Հայաստանի երջանիկ վիճակը, թէ ազգը ինչ հա-

4. Տիգրանայ կատարելութիւնները Խորենացին ինչ գովեստներով դուրս կը ցատկեցնէ .

ըրասութեան մէջ էր, զինուորութիւնը ինչ առ
տիճան առաջ դացած էր, արգարութիւնն ու խա-
ղաղութիւնը որչափ ծաղկած էին, որոնք ազէկ
բացատրելու համար այսպէս կը գրուցէ. « Խաղա-
ղութեան և շինութեան բերող, իւզով և մեղու ըզ-
հասակա ամենայն պարարեալ » : Ասանցմէ զոս կը
գնէ նաև այնպիսի գովեստներ ալ որ ամենայն կա-
տարելութեամբ զարգարեալ մարդու մը հարկա-
ւոր են . « Զորմէ ասէին 'ի հինան մեր որք բամ-
բոստքն երգէին' լինել սմա և 'ի ցանկութիւնս մար-
մնոյն շափաւոր, մեծխմասա և պերճարան, և յա-
մենայն որ ինչ մարդկութեանս պիտանի » : Խա-
րենացւոյն այսպիսի նշանաւոր և գեղեցիկ գովեստ
ներուն ճշմարտութեանը վրայ չենք տարակուսիր .
միայն առ բանին իրաւունք ունի ցուելու մարդ,
որ այսպիսի ընտիր, խելացի, ազատամիտ, վե-
հանձն ու ազգասէր թագաւորի մը բարեխնամ
հովանաւորութիւնը քառասունհինգ տարի վայ-
լեր է հայաստան . որն որ և թէ հազարաւոր տարի
ալ վայելէր՝ միշտ գոհ, միշտ ուրախ և միշտ շնոր-
հակալ պիտի ըլլար զինքը պարգևողին :

ԴԱՍ Է.

Վանազն ու անոր յաշորդները: — Հայկազանց
քաղաքորութեան վերջանալը:

1. Տիգրանայ իրեք որդւոցը մէջ Վահագն թէ պէտ ամենէն պզտիկն էր: Բայց արիւններէն աւելի զօրաւոր գանձուելով Հայոց վրայ իշխեց: Ասիկայ խիստ քաջ մարդ էր, որուն վրայ Հայերն ու Վրացիք այլ և այլ երգեր շինելով կ'երգէն եղեր: Ինչուան նաև Խորենացւոյն ասեմներն ալ, որ կ'ըսէ նաև ասոր համար թէ Վրացիք արձանը կանգնելով երկար ատեն պաշտեցին զինքը: Ասոր ցեղը Վահագնիք ըսուեցաւ, որ քրմութեամբ իրեն պաշտամանը նուիրուած էին:

Վահագնէն վերջը ետեւ ետև յաջորդեցին հինգ վեց թագաւոր ալ, որոնց վրայ պատմութիւն չունենալով կ'ստիպուինք միայն անուննին յիշելով անցնելու, որ են ասոնք. Ասաւան, Կերսես, Չարես, Արմուգ, Բայգամ ու Վան՝ որ Շամիրամս կերտ քաղաքը նորոգելով իր անունովք Վան կոչեց (352):

2. Վանայ որդին Վահէ հորը տեղը անցնելով շատ քաջութիւններ ըրաւ իրեն թշնամիներուն գէտ՝ որոնք կ'ուզէին Հայաստանի ակրել: Կոյն միջոցներուն Աղեքսանդր Մակեդոնացւոյ թագաւոր.

1. Տիգրանէն ինչուան Վահէ որոնք յաջորդեցին:

2. Վահէ սով է ու ինչպէս վերջացաւ Հայկազանց թագաւորութիւնը:

բը սաստիկ զօրացած ըլլալով Պարսից վրայ պատերազմի ելաւ . Ահհէ օգնութիւն խաւրեց անոնց , բայց տեսնելով որ Պարսիկք շարաշար յաղթուեցան և Աղեքսանդր իր վրայ պիտի գայ , սաղիկն անդիկն զօրք ժողովեց ու Աղեքսանդրի դէմ ելաւ , և պատերազմի մէջ մեռնելով՝ բոլոր զօրքերը ջրուեցան և Աղեքսանդր Հայաստանի տիրեց (327) :

Ահա այսպիսով վերջացաւ Հայկազանց թագաւորութիւնը որ 1800 տարի դիմացեր էր : Անկէց ետքը 300 տարիի շափ Հայերը երբեմն Սելեկիացւոց կողմանէ խրհուած կուսակաշներու , երբեմն ալ Հայ իշխաններու կը հնազանդէին :

3. Այս Հայ իշխաններուն մէջ երևելի եղանքանի մը հօգի , և ամենէն երևելին Ազուարդ Սիւնեաց նախարարը , որ Կասպագոպկացւոց թագաւորին Արիթէոս աղուն խորհրդովը սարսամբեցաւ Մակեդոնացւոց տերութենէն : Աս բանս երբոր լսեց Պերդիկաս , Եւմենէս անունով իշխանը Ազուարդին վրան խաւրեց , որ Ազուարդին հետ դաշինք գրաւ ու հաշտութիւն ըրաւ : Ազուարդ խաղաղութեամբ երեսուծուիրէք տարի իշխեց ու մեռաւ : Երկրորդ՝ անուանի եղաւ Արտաւազ Հայոց մեծ իշխանը , որ Սելեկիացւոցմէ սարսամբելով ինքնազուխ սկսաւ Հայաստանի տիրել . բայց երբոր Անտիոքոս շատ զօրքով վրան փոզեց , Արտաւազ վախնալով դէմը ելլելու՝ ընծաներ խաւրեց Անտիոքոսին ու սիրտը առաւ խոստանալով որ բոլոր հարկը վճարէ . ստիկայ յիսուն տարի իշխեցն վերջը մեռաւ (212) :

4. Արտաւազին տեղը մեծ Հայոց վրայ կուսա-

3. Ազուարդ՝ Սիւնեաց նախարարին ու Արտաւազայ վրայ ինչ գիտելիք կան .

4. Արտաշիասին միջոց ինչ նշանաւոր բան մը հանգիսեցաւ ու իրեն որոնք յաջորդեցին .

կալ գրաւ Անտիոքոս՝ Արտաշէաս անունով իշխա-
նը, որուն տակնը Անեիրաղ Հայաստան փախաւ :
Արտաշէաս անոր խորհրդովք Արտաշաս քաղաքը
շինեց, ու ինքնազուխ սկսաւ թագաւորել : Երբոր
լսեց յա բանս Անտիոքոս Եպիփան, վրան պատե-
րազմի ելաւ, ու յաղթելով անոր՝ բռնագասեց որ
ստփորական հարկը տայ :

Արտաշէաս կ'ուզէր փոքր Հայոց վրայ ալ իշ-
խել, որուն կուսակալն էր Չահրաս անունով մե-
կը . բայց մահը վրայ գալով չկրցաւ առաջ տանիլ
իր խորհուրդը, և իր տեղը յաջորդեց Արտաւազգ
որդին, որ տասը տարի իշխելէն վերջը՝ Արշակ
Պարթևաց թագաւորը վրան պատերազմի ելլելով
զինքը վաքնտեց, ու իր Վաղարշակ եղբայրը Հայոց
թագաւոր գրաւ, ուսկից սկսաւ Արշակունեաց
թագաւորութիւնը (144) :

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ն Ե Ա Ց

ԴԱՍ Ը.

Արշակունեաց քաղաւորութեան սկիզբը : —
Վաղարշակ, Արշակ Ա :

1. Երբոր Սելևկիացիք Մակեդոնացոց ձեռքով արեւելեան ազգերուն մեծ մասին փրկեցին, այսինքն Պարսից, Մարաց, Հայոց և Պարթևաց վրայ, երկար ատեն կուսակալներու ձեռքով սա ազգերը կառավարեցին : Բայց Քրիստոսէ 247 տարի տաաջ Պարթևաց մէջէն Արշակ անունով քաջ իշխանը սաստիկ զօրանալով ապստամբեցաւ Սելևկիացոցմէ ու շատ երկիրներու փրկեց : Ուրիշ շատ մեծամեծ յաղթութիւններ ալ ընելով այլ և այլ զօրաւոր ազգերու դէմ, շատ երևելի եղաւ ու ամէն տեղ անունը հռչակուեցաւ : Ասոր թողը Արշակ Բ. նոյնպէս քաջութեամբ շատ տեղերու փրկեցն վերջը, եկաւ Հայաստանի վրայ ալ՝ երբոր Հայոց վրայ կուսակալ էր Արտաւազգ իշխանը, հալածեց զինքը հանկէց, ու Հայոց վրայ իր

1. Արշակունեաց թագաւորութիւնը ինչպէս սկսաւ ու ո՞վ է Վաղարշակ :

Վաղարշակ եղբայրը թագաւոր դրաւ : Ասիկայ ազգին վրայ սաստիկ սէր կապելէն վերջը՝ մասնաւոր ջանքով ուսումնասիրութեան ետէ՛ եղաւ ազգին պատմութիւնը գանձելու առանձին փոյթ ունեցաւ : քաղաքական կարգերն ու կառավարութիւնը շատ ծաղկեցուց, և ազգին ամէն տեսակ յառաջադիմութեանը վրայ հոգ ունեցաւ : Աս ամէն բաներս ըրաւ առանց քաջութիւնը ձեռքէ ձգելու : Եւ տարակոյս չկայ որ այսպիսի կերպով սկըսած թագաւորութիւն մը շուտով պիտի զորանար ու շուտով ալ պիտի ծաղկէր, ինչպէս եղաւ Արշակունեաց թագաւորութիւնը :

2. Վաղարշակ ակժողը Մծբին դրաւ՝ ինչպէս որ իրեն եղբայրը ապսպրէր էր՝ բայց իմանալով որ Մորփիւզիկէս անունով իշխան մը փոքր հայոց տիրէր է, շատ մը զորք ժողվեց ու անոր վրայ գընաց, երբոր անիկայ բոլոր Պոնտոսի ազգերուն առաջնորդ եղած առաջ կուգար : Պատերազմի ատեն, որովհետև Մորփիւզիկէս քաջ մարդ էր, շատ ջարդ ընելով Վաղարշակայ վրայ կատաղաբար վազեց, բայց Վաղարշակայ քովի կարիճ հայերը անոր վրայ վազեցին զարկին ու գետինը պառկեցուցին զինքը՝ ասով մեկալ զօրքերն ալ սիրա աւնելով յարձակեցան Մորփիւզիկէսին մնացած զօրացը վրայ ու այնպէս չարաչար կոտորեցին, որ անձրևի հեղեղի պէս արիւնը կը վազէր, ինչպէս կ'ըսէ Խորենացին : Աս պատերազմէն վերջը տիրեց Վաղարշակ ան կողմի ազգերուն, ու անոնց առջևը ահաւոր եղաւ :

3. Տեսնելով Վաղարշակ հայոց առ յաստիճան

2. Վաղարշակ ինչպէս յաղթեց ու սպաննեց Մորփիւզիկէսը :

3. Ինչէն գրգռուեցաւ Վաղարշակ հայկազանց պատմութիւնը գրել տալու :

աիրաաիրութիւնը և ուրիշ կատարելութիւնները և Հայաստանի ծագկամ վիճակը, իրեն ազնիւ բար-
քովը բնական հետաքրքրութիւն մը ունեցաւ թէ
արդեօք ի՞նչ էր է սա ազգին գլխաւորը, որո՞նք
իրմէն առաջ թագաւորեր են, և արդեօք ինքը քա-
ղերսն տեղ կը թագաւորէ՝ չէ՞ նէ վատերու : ուս-
տի սա բանիս համար Մար Աբաս Կաափնա ա-
նունով Ասորի մը գտաւ, և անոր ապաստեց որ
Հայոց պատմութիւնը գրէ : Մար Աբաս Կաափ-
նա երբոր Հայաստանի մէջ ամբողջ պատմութիւ-
նը չգտաւ : Ազգարշակայ հրամանովը Կինուէ գը-
նաց, ու հոն թագաւորական գրատան մէջ գիրք
մը գտաւ որ բոլոր ազգերուն պատմութիւնը կը
գրէր : ու Մեծին Աղեքսանդրի հրամանովը յու-
նարէն թարգմանուած էր : անոր մէջէն հանեց բո-
լոր Հայոց պատմութիւնը՝ Հայկէն ինչուան Աւա-
հէ : Ազգարշակ տեսնելով սա բանս՝ սաստիկ ու-
րախացաւ որ քաջ մարդկանց տեղ ու քաջերու
վրայ կը թագաւորէ, և իրիւ իրեն ամենէն աւելի
մեծ հարստութիւնը ըլլար այն մաստեանը՝ իր գան-
ձատան մէջ պահեց : Աս պատմութեան վրայ ա-
ւելցուց Մար Աբաս Ազգարշակայ և անոր որ-
գւոյն Արշակայ գործքերը :

4. Ամէն կողմանէ եղած յաջողութիւնները տես-
նելով Ազգարշակ, սկսաւ ուրիշ բարեկարգու-
թիւններու ալ ձեռք զարնել : քանի մը հարկաւոր
օրէնքներ գրաւ : նախարարութիւններ բաժնեց,
գինուորութեան կարգ գրաւ, ամէն բանի պաշա-
նատէրներ որոշեց, և արհեստաւորներու կարգ
կանոն գրաւ : Բայց ամենէն աւելի Ազգարշակայ
խելացի գործքը և իրեն հոգին յայանողը սա եր-
կու օրէնքն է որ գրաւ : մէկու մը իշխանութիւն

4. Ազգարշակայ ըրած բարեկարգութիւնները
որոնք են .

տուաւ՝ որ երբոր Թագաւորը անիրաւ զատատան մը կամ հրաման մը հանէ, իրեն խնայքնէ տուած հրամանին անիրաւութիւնը՝ իսկ սրիշի մը իշխանութիւն տուաւ որ եթէ Թագաւորը անհոգ ըլլայ չարագործները պատժելու՝ միտքը ձգէ : Բագարատ անունով իշխանին ալ Արշակունեաց Թագաւորներուն Թագագիր ըլլալու պատիւը տուաւ : Արդւոյը մէջէն միայն անգրանիկը քովը պահեց, ու մեկայնոնք բոլոր Թագաւորական ընտանիքով Հաշտենից դաւառը խաւրեց : Աս կարգը պահեցին ինչուան վերջը Արշակունեաց Թագաւորները : Ազգարշակ ասանկ խելքով քաննուերկու տարի Թագաւորելէն վերջը խաղաղութեամբ մեռաւ :

5. Մեր ազգին երեւելի մարդկանց մէջ առաջին աստիճանի յիշատակի արժանի մարդիկներէն մէկն է Ազգարշակ, որ հաստատուն հիմ մը գրաւ կործանեալ տերութեան մը, որ մեկէն զօրացաւ և ամէն բանի մէջ, Ժամանակին համեմատ, չափէն գուրա աւելի առաջ գնաց : Ազգարշակայ գործքերէն յայտնի կ'իմացուի իրեն բնութիւնը, մանաւանդ պարզ կը տեսնուի ուսումնասիրութիւնը, խաղաղասէր և աշխարհաշէն հոգին՝ զարձեալ կը տեսնուի այնպիսի վեհանձնութիւն մը որուն նմանը պատմութիւններու մէջ քիչ կայ՝ աւելի գուրա կը ցատքէ ան կարգադրութեան մէջ որ մասնաւոր պաշտօնատէր կարգեց իրեն տուած անիրաւ հրամանները միտք ձգելու համար : Աս բանիս մեծութիւնը ամէն մարդ կրնայ իմանալ մտածելով Թէ սրչափ ծանր բան է Թագաւորի մը ըսել իրեն ըսած խօսքին ծառութիւնը, տուած հրամանին անիրաւութիւնը՝ մանաւանդ որ հին ատենը Թագաւորին խօսքերը պատգամի տեղ կ'ընդունէին հպա-

5. Ինչ կատարելութիւններով Ազգարշակ մեր ազգին երեւելի մարդկանց մէջ կը սեպուի :

տակները : Արդարութիւնն ալ նոյնպէս կը փայլի
 աս երկու մարդկանց իշխանութիւն տալուն մէջ,
 որուն վախճանն է անիրաւ գործողութիւն մը չը-
 նել :

6. Ազգարշակայ տեղը յաջորդեց իր անդրանիկ
 որդին Արշակ Ա. որ հօրը առաքինութեանցը նմա-
 նելով անոր պէս քաջ ու խելացի, և ինչպէս որ
 խորենացին կը զրուցէ, շատ բարեկարգութիւն-
 ներ բրաւ :

Ասոր տակնը Պոնտացիք ապստամբելով Հայե-
 րէն՝ պատերազմ բացին . բայց Արշակ իրենց չա-
 բաշար յաղթեց, և ծովեզերքը իրեն բրած յաղ-
 թութեանը նշան՝ կոթող մը անկեց : Ա՛րսէն թէ
 Արշակ նիզակ մը ունի եղեր սօժի արիւնով ջուր
 տուած . անգամ մը աս նիզակը անանկ ուժով
 նեակց կոթողին վրայ որ մէջը գնաց խրեցաւ : Աս
 կոթողը երկար տակն պաշտեցին Պոնտացիք իբրև
 Աստուծոյ գործք . բայց երբոր իր տղուն Արաա-
 շեանն հետ նորէն պատերազմ բացուեցաւ՝ բար-
 կանաչով ծովը նեակցին :

Արշակ կոսոյ սաստիկ պաշտօնասէր բլլալով
 Բագրատունեաց մէջէն երկու հոգի նահատակեց
 կուռք չպաշտելուն համար . մեկալնոնք ալ սախ-
 պեց որ թլփաատութիւնը ձգեն, շարաթ օր որսի և
 պատերազմի երթան և ուրիշ խարական օրէնքնե-
 րը թողուն . անոնք ալ յանձն առին աս բաներս՝
 բաց ՚ի կուռք պաշտելէն : Արշակ տասուիբեք տա-
 րի թագաւորելէն վերջը մեռաւ, ու իրեն տեղը
 անցաւ Արտաշէս (114) :

6. Ազգարշակայ ո՞վ յաջորդեց .

ԴԱՍ Թ.

Արտաշէս Ա.:

1. Արտաշէս Ա. բնութեամբ կտրիճ, պատե-
րազմող ու աշխարհակալութիւն սիրող ըլլալով
մեծամեծ յաղթութիւններ ըրաւ, շատ երկիրնե-
րու տիրեց ու Հայաստանը ընդարձակեց, և գրե-
թէ բոլոր աշխարհք զողացուց: Ինչուան իր ատե-
նը Պարսից Թագաւորը աթոռով պատուով ու մե-
ծութեամբ առաջին կը սեպուէր, ու Հայոցը երկ-
րորդ. բայց Արտաշէս Պարսիցը երկրորդ ըրաւ ու
Հայոցը առաջին: Պարսկաստանի տիրեց, իր անու-
նովք ստակ կոխել տուաւ ու հոն ալ իրեն արքու-
նիք շինեց: Իր Տիգրան անունով որդին՝ Արաժժ
ըսուած իշխանին յանձնեց, որ զինուորական ար-
հեստ արվեցրնէ, որով ան իշխանին ցեղին անունն
ալ Արաժժունիք ըսուեցաւ: Իսկ Արտաշէսն
աղջիկն ալ Միհրդատայ տուաւ, որ Պարսից Դա-
րեհ Թագաւորին նախարարներուն ցեղէն էր ու
Արաց բգեաշէս, և զինքը բոլոր Պոնտոսի կողմե-
րուն կուսակալ գրաւ իրեն քաջութեանը համար:

2. Թէպէտ և մանրամասնաբար չենք գիտեր Ար-
տաշէսին ըրած պատերազմները, բայց խորենա-
ցին կ'ըսէ թէ արեւելքէն ու արեւմուտքէն այնչափ
զօրք ժողովց' որոնց և ոչ թիւը գիտեր: Արանկ
բազմութեամբ բոլոր Յունաստանի տիրեց և զա-
մէնքը վախցուց. Միջերկրական ծովուն մէջ շատ

1. Ո՞վ է Արտաշէս Ա.

2. Արտաշէս Ա. ինչ քաջութիւններ ըրած
ուներ.

նաւերով կողմներու տիրեց, և ուրիշ շատ աշխարհակալութիւններ ըրաւ: Կ'ըսէ խորենացին թէ երբոր բազմութեամբ զօրաց քարտա տեղէ մը կ'անցնէին, հրաման կուտար Արտաշէս որ ամենքը մէյմէկ քար նետեն, և անոնցմով բլուր մը կը ձեւանար: Կոյնպէս նաև արևու աստին եթէ ամէնը մէկէն նետ նետէին՝ բոլոր գետինը շուք կ'ըլլար կ'ըսէ: Այսչափ անթիւ բազմութեամբ շատ յազթութիւններ ընելէն ետքը մեծ փառքով ու յազթամակով Հայաստան դարձաւ. բայց որովհետև կ'ուզէր Պարսկաստանի բոլորովին տիրել, ինքը հոն դնաց թագաւորելու, և իր Տիգրան որդին թագաւոր դրաւ Հայաստանի վրայ: Բայց անեկէց ալ նորէն զօրք ժողովց ու զէպ'ի արեւմտեան կողմերը սկսաւ արշաւել: Արտաշէս Եւնաստանէն գառնալու աստինը Արտեմիտի, Հերակլի ու Ալոպոնի սրինձէ արձանները գտաւ ու իրենց քուրմերովը Արմաւիր խաւրեց: Չգիտցուիր ինչ պատճառաւ զօրացը մէջ խռովութիւն իննալով զօրքերէն սպաննուեցաւ, քանորհինգ տարի թագաւորելէն վերջը:

3. Արէկ գիտնալով խորենացին որ օտարազգիի մը բերնէն ելած գովեստը աւելի զօրաւոր և աւելի յարգի է, քան թէ համազգիի մը բերնէն, թէպէտ և ճշմարտախօս ըլլայ, անոր համար Եւնաց մատենագիրներուն առւած գովեստը առաջ կը բերէ, որոնց մէջէն մէկ երկուքը գնենք հոս. « Ահէ ինձ Արտաշէս սպարթե քան զմահեղոնացին Արէքսանդր. զի կարով յիւրում աշխարհին, իշխեաց թերաց և Բարեղունի . . . Աւանգ բազցին. միայն թէ 'ի տերութեանն և ոչ 'ի փախստեան էր վախճանեալ »: Աս խօսքս կը զբուցէ Պողիկրատէս յոյն պատմագիրը: Կոյնպէս նաև Փլեյզանիոս պատմա-

3. Օտար ազգաց մատենագիրնե բն ինչ գովեստներ կուտան Արտաշէս Ա.ին վրայ.

զիրը կ'ըսէ . « Ամենայն թագաւորաց հուժկու եւ զեալ պարթևն Արտաշէս . . . յըլեակոնաոս և 'ի Թրակէ զտարերացն փոխեաց զբնութիւն . ծովագնաց ընդ երկիր բերեալ լինէր , և ընդ ծով հեռեակելով . . . տա հասարակ նմա Ալլադա մասուցանէր զահն » :

Բայց անաչառ խօսիլ ուզելով չենք կրնար չպարտաւել Արտաշէսի աշխարհակալութեան հոգին , որ ըստ ինքեան անիրաւութիւն ու բռնաւորութիւն է , և կրթեալ ու քաղաքականացեալ թագաւորի մը չվայելեր . բայց առ ալ խոստովանելի է որ հին առևնը իրաւունք ազգաց ըսածը և արգարութեան սահմանները ինչպէս որ պէտք է չէին հասկըցած , առ պատճառաւ է որ Արտաշէսներ , Կիւրոսներ ու Արդեսանդրներ ամէն հին ազգի մէջ աւելի գանուած են , քան թէ առ վերջի առևներս . և ըսածներնուս մեծ ազացոյց մը կրնայ ըլլալ Հասթիկեան հզօր պետութիւնն որ անիրաւ աշխարհակալութեամբ , այսինքն ըստ արգի իրաւանց ազգաց՝ բռնաւորութեամբ , այնչափ մեծցաւ , գիրացաւ ու պարարացաւ :

4 . Արտաշէսի իր զօրքերէն սպաննուելուն վերայ որոշ քան մը չենք կրնար ըսել , որովհետեւ որչափ որ իր բռնաւորութեանը համար կրնան սպաննած ըլլալ զինքը , նոյնչափ ալ կրնան ըրած ըլլալ զօրքերը առ բանս իրենց անկրթութենէն , և կամ նաև առանձնականաց շարութենէն :

Ազէկ ճանչցեր էր Արտաշէս որ աշխարհակալութիւնն ընելէն վերջը՝ պէտք է նաև պահել և օգտար քաղել . և թէ ազգին հանդերձեալ վիճակին հաստատուն օգուտ մը չունի . անոր համար ըստ . « Աւանգ փառացս անցաւորի » : Առ պատ .

4 . Արտաշէսի մահուանը պատճառ ինչ քան կրնայ ըլլալ և որն է իրեն մէկ երևելի խօսքը .

Տառաւ Արտաշէս անփոյթ չեղաւ ազգին քաղաքական կառավարութեանը և սպառազայ բարւոյն վրայ, հապա ան մտածելով ուզեց որ իր Տիգրան որդին ազէկ կրթութի, ու չեղաւ ան աշխարհակալ ներուն պէս որ իրենց մեռնելովը՝ տերութիւնն ալ մեռուցին և կամ սաստիկ տկարացուցին :

ԳԱՍ Ժ .

Տիգրան Բ . և իրեն բաշտօրիւնները :

1 . Յոյները և ուրիշ հարկատու ազգեր լսելով Արտաշէսի մահը և իրեն քովի եղած զօրաց ցրութիւր, սկսան ապստամբիլ և Հայաստանի վրայ վազել . Տիգրան որ երկու տարիէ ՚ի վեր թագաւորած էր, միանգամայն պատերազմական բաներու վարժ ըլլալով և հօրը պէս քաջ պատերազմող, մեկէն զօրք ժողովեց և Միհրդատայ հետ մեկտեղ վրանին պատերազմի ելաւ, զամենքը ցրուեց հաւածեց, և սրտերնուն մէջ իր հօրը ապաւորած վախը ժամանակ չթողուց որ հանեն, հապա աւելի հաստատեց :

Անկէջ զամալու ատեն Կեսարիա հանգիպելով տիրեց բոլոր փոքր Ասիոյ, և բոլոր ան կողմերը Միհրդատայ յանձնեց ու Պոնտոսի թագաւոր անուանեց զինքը, որպէս զի ուրիշ անգամ չկարենան ապստամբիլ : Այլ և այլ պատերազմներով ուրիշ շատ ազգերու ալ տիրեց, և ամէն պատերազմներու մէջ քաջութեամբ յաղթող զանուէցաւ . իր անունէն գրեթէ բոլոր աշխարհք կը դօ-

1 . Տիգրան Բ . Արտաշէսի յաջորդելով իր քաջութիւններովը ինչպէս փառաւորուեցաւ .

զար, անանկ որ շատ ստարազգի պատմիչներ կար-
ծեցին թէ Հայոց թագաւորութիւնը Տիգրանէն
սկսած ու Տիգրանով լմեցեր է : Հռովմայեցւոց
պատմիչներէն շատը կ'ըսեն թէ խել մը զիբի թա-
գաւորներ կը ծառայէին իրեն, որոնց մէջէն չորսը
միշտ քովն էին, և երբոր ձիով տեղ մը երթար,
անոնք իրենց թագաւորական զգեստովը սաքով
կ'երթային չորս զիէն . նոյնպէս նաև ամէն դատաս-
տանական և քաղաքական հանգիսներու մէջ զի-
մացը սաքի վրայ կը կենային :

2. Տիգրան առ պատերազմներէս վերջը Հայաս-
տան դառնալով, մեհեաններ շինեց, և Յունաստա-
նէն բերած Արամազդայ, Աթենասայ, Արտե-
մեայ, Ափրոդիտեայ և Հերակլեսի արձանները այլ
և այլ քաղաքներ գրաւ, նախարարներուն ալ խըս-
տիւ ապաստեց որ կուսքերուն ազէկ պատիւ տան .
և որովհետև Բագրատունիք առջի բերան յանձն
չափն կասապաշտութեան բաները, անոր համար
Ասուգ անունով նախարարին լեզուն կտրել ար-
ւաւ, աստուածները նախատելուն համար . ասով
մնացածները յանձն ափն զոհեալ խոզի միս ու-
տել :

3. Առ միջոցներուս գրգռուեցան ան սոսկալի ու
երկարատև պատերազմները որ Միհրդատ ու Տի-
գրան ըրին Հռովմայեցւոց դէմ . վասն զի Միհրդ-
ատ որ Պոնտոսի թագաւոր էր՝ Տիգրանայ օգնու-
թեամբը շատ թագաւորութիւններու տիրեց, և
ինչպէս որ Հռովմայեցւոց պատմիչները կը զրու-
ցեն, քսանուերկու թագաւոր կը ծառայէին իրեն

2. Տիգրան Բ. ինչ կարգաւորութիւններ ըրաւ
նաև կրօնքի նկատմամբ .

3. Տիգրան ու Միհրդատ մեկմէկու հետ միա-
նալով ինչ յաղթութիւններ ըրին Հռովմայեցւոց
վրայ .

և ամենուն հետ իրենց լեզուովք կը խօսէր . անոնց մէ զատ արեւց նաև Կապագովկիոյ , և հան թագաւոր գրաւ իր Արխարաթ որդին , ու Արխորարզանը որ Հոովմայեցիք թագաւորեցուցեր էին՝ վարնաեց : Բայց որովհետև ութը աարեկան էր Արխարաթ , Գորդիաս անունով իշխան մը խնամակալ գրաւ անոր :

Կապագովկացիք Հոովմայեցւոց ապաւինեցան որպէս զի քան ազատեն զիրենք Միհրդատայ ձեռքէն . անոնք Կուսնեխոս Սիլա քաջ զորապետը խաւրեցին , որ եկաւ Արխարաթը հաշածեց անկէ , ու Արխորարզանը նորէն թագաւորեցուց :

Սասաիկ բարեկանալով Միհրդատ՝ Տիգրանայ իմացուց , որպէս զի օգնութիւն խաւրէ իրեն . Տիգրան ալ իր երկու երեւելի զորազուխները խաւրեց , որոնց զայլ երբոր լսեց Արխորարզան՝ Հոովմփախաւ , որով զիւրաւ արեւցին Հայերը , և նորէն Արխարաթը թագաւորեցուցին Կապագովկիոյ : Ատաննեւելով Միհրդատ սիրտ առաւ , և բազմութեամբ զորաց ու շատ նաւերով սկսաւ վանել Հոովմայեցիները և ուրիշ թշնամիները և արիւել շատ անգերու . բայց Հոովմայեցիք նորէն երկու հարիւր հազարի շափ զօրք խաւրեցին Միհրդատայ վրայ , որոնք շատ հեղ յալթուեցան , և Միհրդատ անոնց Ալիւզաս անունով զորապետը բանեց ու բերնէն փար հաշած ոսկի լեցրնելով մեռուց , ու զելով ցուցրնել թէ ինքը քան զՀոովմայեցիները աւելի ճոխ ու առատածեան է : Աոյնպէս նաև Տիգրան ուրիշ անգեր մեծամեծ ջարդեր ըրաւ Հոովմայեցւոց զօրացը վրայ , ինչուան որ եկաւ Ղուկուլոս :

4. Երբոր Տիգրան Հոովմայեցւոց պատերազմներէն քիչ մը զազրեցաւ , Սելեկիացւոց թագաւոր

4. Տիգրան ինչ պատերազմներ ըրաւ նաև Ասորւոց դէմ .

բութեան մէջ խոտվածիւն ինչպով իշխանները
ուղեցին որ Տիգրանայ յանձնեն իրենց թագաւո-
րութիւնը : Տիգրան շատ զօրքով գնաց Անախ-
բասը վարնացի հանկէ, և գրեթէ բոլոր Ասորաց
երկրին տիրեց, և Անախբասի մէջ իրեն տեղա-
պահ գրաւ Մազզաս անունով իշխան մը (79) :

Ասորաց թագուհին բոլոր Ասորիները գրգռեց
որ Տիգրանէն ապստամբին . բայց Տիգրան շուտ մը
անհամար զօրքով վազեց Ասորաց վրայ, առաւ
Պաղատայիսը և Սեղենէ թագուհին բանեց ու սպան-
նեց : Երբոր լսեցին Հրեայք որ Տիգրան ան կող-
մերն է, վախնալով որ չըլլայ թէ Հրեաստանի վը-
րայ ալ վազէ՝ գետական խաւրեցցին Տիգրանայ որ
գլխայ իրենց վրայ և չարիք մը չընէ . առ բանիս հա-
մար մասնաւոր աղաչանքներ ըրին Բագրատունիք
ալ, և Տիգրան խոստացաւ չարիք մը չընել իրենց
Աղեքսանդրա թագուհւոյն :

5. Տիգրան Սելևկիացւոց տիրելէն վերջը երբոր
լսեց Սելլայի մահը՝ շատ զօրքով վազեց Կապա-
դովիայի վրայ, և տիրեց բոլոր աշխարհքին . Մի-
հրդրգասոյ ալ մասնաւոր գունդ խաւրեց, որ ա-
նոնցմով շատ անդերու տիրեց Ասիոյ մէջ . բայց եր-
բոր Կիլիկիոն քաղաքը պաշարեր էր՝ զօրաց պա-
շարը լիննալով յաղթուեցաւ Լուկուլտոսէն . զար-
ձեալ ուրիշ անգամ մը պատերազմի ատեն զօրքին
մէջ խոտվածիւն ինչպով զօրավարներէն շատը
Հոսովայեցւոց կողմը անցան . առով Միհրդատ
հարկադրեցաւ Տիգրանայ քովը փախչիլ, որուն
վրայ սաստիկ բարկացաւ Տիգրան, ու երկու տա-
րի շուզեց տեսնել :

6. Լուկուլտոս խնամալով որ Տիգրան Միհրդա-

5. Տիգրան երբոր լսեց Սելլայի մահը ինչ ըրաւ .

6. Հոսովայեցիք Տիգրանակերտին ինչպէս տի-
րեցին ու ինչպէս նորէն ստիպեցան թողու .

այս բարկացեր է, գեապան խրիկեց Տիգրանայ որ Միհրդատը իրեն մասնէ . բայց Տիգրան որ աղէկ գիտէր բարկութեան ժամանակը և շափը, ետ ճամբեց գեապանը . Միհրդատայ ալ տասը հազար զօրք տալով Պոնտոս խաւրեց : Եւ յն միջոցին Լուկուլլոս սաշարեց Տիգրանակերտը, որուն վրայ եկաւ Տիգրան իրիք հարիւր հազար զօրքով . բայց աւանելով Հաովմայեցոց սակաւութիւնը, արհամարհելով ըսաւ . « Թէ որ գեապան են եկեր՝ շատ են, իսկ թէ որ թշնամի՝ քիչ » . աս ըսելով անհող եղաւ պատերազմի պատրաստուելու, որով Հաովմայեցիք սիրա առին ու յանկարծակի վազեցին Հայոց վրայ, և Տիգրանը փախցընելով Տիգրանակերտն ալ առին : Տիգրան իմանալով իրեն ամբարտաւանութեան սխալմունքը, մեկէն հեծեւազօրքը խաւրեց Լուկուլլոսի ետեկն . անոնք ճամբան Հաովմայեցոց հեծեւազօրացը հանդիպելով շարաշար կտարեցին : Տիգրան ուրիշ շատ անգեր ալ յաղթելով Հաովմայեցոց, Հայաստանէն գուրս հանեց ու ինչուան Կապադովկիա հաշածեց : Աերջը նորէն սպարապետ դրաւ Միհրդատը, որ Հաովմայեցիներէն վրէժ առնելով շատ անգամ յաղթեց անոնց և բոլոր առջի կորսնցուցած անգերուն տիրեց . նոյն միջոցին Տիգրան ալ Կապադովկիոյ վրայ վազելով հոնկեց ալ հաշածեց Հաովմայեցիները ու նորէն տիրեց Կապադովկիոյ :

7 . Տիգրանայ ու Միհրդատայ ըրած յաղթութիւններուն ըտրը երբոր Հաովմ հասաւ, սաստիկ շիտթեց ու բարկացուց Հաովմայեցիները, որոնք Լուկուլլոսը ետ կանչելով տեղը Պոնտոսը խաւրեցին : Միհրդատ շատ անգամ անոր գէտ ալ սրգտերազմ ընելով երբեմն յաղթեց՝ երբեմն յաղթուեցաւ . բայց իր Կաստոր անունով նախարարը

Հաովմայեցեացմէ կաշառք աննելով ապստամբեցաւ իրմէ . նոյնպէս նաև իր փառամուլ և ինքնահաւան Փառնակ անունով որդին ապստամբեցաւ , և Հաովմայեցեաց օգնութեամբը հօրը տեղ թագաւոր եղաւ : Միհրդատս որ բերդի մը մէջ ամրացեր էր՝ փախնալով որ չըլլայ թէ Հաովմայեցեաց ձեռքը խնայ , բոլոր ընտանեացը թոյն տուաւ , ինքն ալ իր թուրին վրայ իննալով մեռաւ :

8 • Ան միջոցին որ Փառնակ Միհրդատէն ապրաւաւմբեր էր , Տիգրանայ Տիրան որդին ալ իր հօրմէն ապստամբելով , Պարսից թագաւորին օգնութեամբը եկաւ Արտաշատ քաղաքը պաշարեց . բայց Տիգրան հալածեց զՏիրանը , ան ալ նեղը մըտնելով գնաց Պամպէոսի ապաւինեցաւ և անոր առաջնորդելովը Հայաստան մտաւ Պամպէոս : Աս ձախարդութիւնները տեսնելով Տիգրան՝ խնայաւոր զժաւարին է Պամպէոսի գէմ գնել , ուստի հաշտութիւն ըրաւ հետը՝ այլ և այլ տեղեր ապրով Հաովմայեցեաց :

9 • Տիգրան իր տեղը թագաւորեցուց իր Արտաւազդ որդին , թագաւորութեան երեսուն և երրորդ տարին : Պամպէոսի տեղը խաւրեցին Հաովմայեցիք Պարթանոսը . և Տիգրան Հաովմայեցեացմէ վրէժ աննելու համար Պարթանոսին վրայ պատերազմի ելաւ , ու շատ տեղեր նորէն ձեռքէն տաւ . Պարթանոս հաշտութիւն խօսեցաւ , և ծածուկ ետ տուաւ Միհրդատայ աղաքը ու ինքը Ազխատու գնաց :

Հաովմայեցիք խնանալով Պարթանոսի յաղթուի

8 • Տիգրան ինչու հաշտութիւն խօսեցաւ Պամպէոսին հետ .

9 • Տիգրան ինչ յաղթութիւններ ըրաւ Պարթանոս և Արտատու Հաովմայեցեաց զօրավարներուն գէմ .

լը և խարդախութիւնը, Արաստը խաւրեցին • անխիկաց նախ Երուսաղեմի վրայ երթալով անբաւ հարրատութիւն առաւ Երուսաղեմէն, ու Տիգրանայ վրայ սկսաւ դալ • բայց Տիգրան Պարսից հեա մարանա՞ծ քաջութեամբ պատերազմելով Արաստը մեռացին և բոլոր զօրքը ջրուեցին, հեար ունեցած հարստութիւնները ափն: Անոր տեղը Ասրեստանի կուսակալ գրին Հոովմայեցիք նախ Աասիստը, վերջը Բիբուզստը, որոնց հեա շատ պատերազմներ ըրին Հայերը ու շատ անգամ յաղթեցին • բայց վերջապէս Հոովմայեցիք տիրեցին Ասորեստանի մեծ մասին, որովհեաև Տիգրան ալ ծերացել էր:

10 • Միհրգաս մեաւ, և Տիգրան տեսնելով որ իր որդին Արաստացի իրեն հոգին ու քաջութիւնը չունի, ուղեց Պարսից Արշէղ Թագաւորին հեա հաշտութիւն ընել և անոր հեա մեկտեղ Հոովմայեցիները հալածել • բայց որովհեաև առանց նախազանութիւնը անոր տալու չէր կրնար ըլլալ աս բանս, և տեսնելով որ իր մեռնելէն վերջը նախազանութիւնը պիտի առնեն Պարսիկք, իր կամքովը տուաւ նախազանութիւնը Արշէղին, որ շատ զօրք օգնութիւն խաւրեց Տիգրանին • ան ալ զօրավար գրաւ Ռշտունեաց Բարդապիւրան անունով քաջ նախարարը • ասիկայ բոլոր Ասորաց երկիրը նուաճեց, ետքը Անաիգոնոսին հրաւիրելովը Հրէաստան գնաց, և հոն Անաիգոնոսի խոստացած պարգեին սիրոյն համար Հիւրկանոսը և Փասայեզստը, որ նոյն միջոցին Հրէաստանի կը Թագաւորէին, երգմունքով և մեծամեծ զաշինքներով կանչեց ու խարդախութեամբ բռնեց, որպէս զի Անաիգոնոս կարենայ Թագաւորել • անկէ վերջը բոլոր Հիւր-

10 • Տիգրան ի նշու նախազանութիւնը Պարսից տուաւ •

կանոսի հարստութիւնն ալ կողոպտեցին : Բայր-
զափրան Գնէլ անունով քաջ զօրավարը բազմա-
թեամբ զօրաց հոն թողլով ինքը Հայաստան գար-
ձաւ, ու հետը բերաւ Հիւրիանոսը և շատ գերի-
ներ : Աերջէն հասկնայեցիք նորէն զօրք խաւրե-
լով Հայերը երբեմն յազթեցին երբեմն յազթուե-
ցան, ինչուան որ բոլորովին հասկնայեցիք ախրե-
ցին Հրէաստանի :

11. Տիգրան յիսունըչորս տարի թագաւորելէն
վերջը՝ ութսունըհինգ տարեկան մեաւ, բոլոր
կեանքը պատերազմով անցընելով : Ար կենացը մեջ
կը տեսնուի անպարտելի արխութիւն, անխանջ աշ-
խատասիրութիւն, վեհանձնութիւն մտաց, ինչ-
պէս ցրցուց՝ Միհրդատը թշնամուոյն ձեռքը շատ-
լուն մեջ. խոհականութիւն՝ որով գիտէր ըստ
տեղւոյն և ըստ պարագային նաև թշնամուոյն խո-
նարհիլ, ինչպէս Պանպէտի հետ հաշտութիւն խո-
սելու մեջ և Արշէզիս նախագահութիւնը տալու
առնն. կրօնից սէր, և ուրիշ գովելի կատարելու-
թիւններ : Տիգրանայ ըրած սխալմունքներն աս-
կին՝ որ երբեմն չափէն աւելի իր վրան վտասհա-
նալով պատշաճ զգուշութիւնները չբրաւ, և քիչ
մը առնն իր մեծ փառքովը շքոյաւ :

Եթէ Տիգրան կենացը մեջ թշուառութիւն մը
ունեցաւ՝ իրեն արժանաւոր յաջորդ չունենալն է :
Ինչ որ յաջորդը չկրցաւ իրեն քաջութեամբը կեն-
գանի պահել Տիգրանայ արգիւնքը, ազգը իրեն
երախտապիտութեամբը պարտական է կենդանա-
ցընել իր անմահ արգիւնքները :

11. Տիգրան քանի՜ տարի թագաւորեց և ինչ
կատարելութիւններ վրան կը վայլին .

ԳԱՍ ԺԱ.

Արտաւազդ Ա. ու Արշամ :

1. Տեգրան երկրորդին յաջորդեց Արտաւազդ որ հօրը պէս քաջութեան ետեւէ շրջալով ինքզինքը կերտխուճի և գրասանաց առւաւ . ան պատճառաւ բոլոր թշնամիները սկսան զօրանալ, մանաւանդ Հաովնայեցիք, որ Անանիոսի առաջնորդութեամբը Ասորոց երկրին և ուրիշ շատ տեղերու տիրեցին : Աս տեսնելով ազգը սկսաւ արարնելու . անով Արտաւազդ խելքը քիչ մը գլուխը ժողկեց, և ասդինն անդինն զօրք ժողկելով գէժ գրաւ Հաովնայեցոց . բայց որովհետք հաստատուն քաջութեան և արիութեան սիրտ չունէր, անոր համար ալ շիրքաւ ինչուան վերջը պաշտպանել իրեն ժառանգութիւնը : Երրորդ Անանիոս ուղեց Պարսից վրայ պատերազմի երթալ՝ օգնութիւն խնդրեց Արտաւազդէն . Արտաւազդ թէպէտ և արտաբուստ օգնեց Անանիոսին, բայց ծածուկ տակէն Պարսից կողմն էր, որով Անանիոս շարաշար յաղթուեցաւ ու Եգիպտոս փախաւ : Վերջէն Անանիոս իմանալով Արտաւազդայ ըրած խաբէութիւնը, շատ զբքով վրան պատերազմի եկաւ . բայց փոխանակ քաջութեամբ պատերազմելու՝ վատութիւնը ձեռք տանելով երգմունքով ու խարդախութեամբ կանչեց զԱրտաւազդը ու ոտկի շղթայի զարնելով Եգիպտոս տարաւ ու հան ի գլուպատրա թագուհւոյն առւաւ . վերջը ինքը հայ-

1. Անանիոս ինչպէս գերի բանեց Արտաւազդը ու Հայաստանի տիրեց .

աստան գառնալով Ստորին Հայքը իր Աղեքսանդր աղուն յանձնեց, վերինն ալ Մարաց սուլա, և իբրևն անուժովն ալ ստակ կոխեց վրան ասանկ գրուած . ԱՅՔԱՆԻ . . . ԶԱՂԲՈՂ ՀԱՅՍՏԱՆԻ :

2 . Արտաւազգ քիչ ատեն մնաց գերութեան մէջ . վասն զի երբոր Անտոնինոս երկու իրեք տարիէն Օգոստոսէն յազմուելով ինք զինքը սպաննեց, առ բանիս կղեւապարս սաստիկ արամած կասաղութենէն Արտաւազգայ գլուխը կտրել արւաւ : Իբրև Արտաւազգ քիչ թագաւորութիւն ըրաւ, բայց իբրև մեղկութեամբը ազգին անանկ փրաս մը ըրաւ որ ինչուան վերջը մնաց . այսինքն հարկատու ըրաւ ազգը Հոսովնայեցոց և զինքն ալ մշանջենաւոր գերի . Խորենացին, որուն ճշմարտախտութիւնը ամենուն յայանի է՝ այսպէս կը զրուցէ . « Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց . այլ ուտելեաց և ըմպելեաց պարսպեալ, մորից և եղեգնապարակաց թափանաւ շրջէր և առապարաց, զիշավայրիս և զխոզս արածելով (որաւով) . զխնաստութենէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և սարուկ արգարե որովայնի լինելով » :

3 . Արտաւազգայ վրայ Հոսովնայեցոց պատմիչները շատ գովեստով կը խօսին յիշելով իբրևն լեզուազգիտութիւնն, սասանաւորներն ու ճարտասանական քանի մը ճառերն, որոնց համար կ'ըսէ Պաւսարքոս թէ ինչուան իր ատենը կան եղեր : Աս վկայութիւնս Խորենացոյն խոսքին գեմ կ'ելլէ, ինչպէս որ յայանի է վերի առաջ բերած խօս .

2 . Արտաւազգ ինչպէս մեռաւ ու ինչ փրաս ըրաւ ազգին իր մեղկութեամբը .

3 . Արտաւազգայ վրայ ինչ գովեստի բան մը կը յիշատակեն Հոսովնայեցի պատմիչներ .

քերէն . բայց տարակոյս չիայ որ խորեննացին ա-
տանք կ'ըսէ Արտաւազգայ Թագաւորութեան մի-
ջոցին համար . իսկ ստար պատմչաց Արտաւազ-
գայ ուսումնասիրութեանը համար առւած գովեա-
տը խիստ հաւանական է որ Արտաւազգ իրեն գե-
րութեան ատենը ստացած ըլլայ առ գովելի յաա-
կութիւնը , իբրև իրեն դասն գերութեանը միակ
միտթարութիւն ու գեղեցիկ պարապմունք մը ,
ինչպէս առ բանիս օրինակը ունինք այլ և այլ Թա-
գաւորաց վրայ : Ասով խորեննացուցի առւած պար-
տաւանքը՝ ստար պատմչաց գէմ շէլեր , որով և
Արտաւազգ պատմութեանց մէջէն իր արտաւոր
անունը սրբելով , վերջի իմաստութեան գնացքու-
մը գիւցազն և վեհանձն հօր որդի ըլլալը կը ջու-
ցրնէ :

ԴԱՍ ԺԲ .

Արշամ , և Արգաւոր գործքերը :

1 . Երբոր Արտաւազգայ գլուխը կտրեցին , Ար-
շամ Տիգրանայ եղբօր որդին Հաովմայեցւոց ձեռ-
քէն փախելով Պարսից Արշէզ Թագաւորին հետ
միարան Մարերը վերնակց և Հաովմայեցւոց ալ մեծ
շարք մը առաւ . ասով Արշէզ վերին Հայոց տի-
րեց , Արշամ ալ Սասրին Հայոց մինչև Կեսարիա
և Ասորւոց մէկ մասին :

2 . Արշամ ըսելով թէ Հաովմայեցւոց վրայ Թա-

1 . Արշամ ինչ կերպով կրցաւ Սասրին Հայե-
րը Հաովմայեցւոց ձեռքէն խաղթել .

2 . Հայաստան ինչու հարկատու եղաւ Հա-
ովմայեցւոց ու Արշամայ գլխաւոր արդիւնքը որն է .

գաւորեր և Օգոստոս կայսր, զեւսական խաւրեց որ
Արտաւազգայ երկու ազաքք եւս ապ. բայց երբոր
տեսաւ թէ լսելի չեղաւ իրեն խնդիրքը, նորէն զեւ-
սական խաւրեց՝ խոստանալով որ տարուէ տարի
հարկ տայ, ու ասիկայ եղաւ Հայոց հարկատու-
թեան սկիզբը. Օգոստոս յանձն առաւ սա դա-
շնեքը: Քանի մը տարի վերջը երբոր Ասորեաց եր-
կիրն եկաւ, վերին Հայոց բնակիչները ձանձրա-
ցած Պարսից ըրած բանութիւններէն, Օգոստոսէն
խնդրեցին որ Արտաւազգայ որդին Տիգրանը ի-
րենց թագաւոր դնէ, ինչպէս որ կատարեց Օգոս-
տոս: Արշամ՝ Բագրատունեաց մէջէն մէկը նահա-
տակեց, մեկաշնոնք ալ ստիպեց որ կատարչաու-
թիւնը յանձն առնուան. անոնք մահու ընէ ազատե-
լու համար յանձն ասին բոլոր ընտանիքով: Ար-
շամ քսանութիւնք տարի թագաւորեւէն վերջը մե-
տաւ: Արշամ եղաւ մեր այնպիսի թագաւորներէն
մէկը որ իրեն ըրած բարեքովք բոլոր Հայոց սի-
բոյն, համարմանը ու երախտագիտութեանը ար-
ժանաւորեցաւ. վասն զի ամբողջ ազգի մը գերու-
թեան կապերը խզեց քակեց ու իրեն առջի եր-
ջանկութեան ու փառաւորութեան մէջ հաստա-
տեց. ու աս բանս այնպիսի կերպով մը ըրաւ որ
գործութեան ու զարմացման արժանի է. նախ լաւ
ընտրեց թէ որո՞ւ հետ բարեկամութիւն պիտի ընէ
ու ինչ կերպով. երկրորդ՝ ազէկ զիտցաւ քիչ մար-
գով ու քիչ արիւնհեղութեամբ մեծ գործողու-
թիւն ընել. ետքը մեծ խոհեմութեամբ թշնամին
բարեկամ գարձուց, և ըրած ապստամբութիւնը
օրինաւոր երեցուց. որով և կրցաւ խաղաղու-
թեամբ վայելել և վայելցընել իր յաջորդներուն
ան մեծազօր տէրութեան ժառանգութիւնը:

3. Արշամայ յաջորդեց իր որդին Աբգար. ու

3. Աբգար ո՞վ է ու ի՞նչ նշանաւոր բան հանդի-
պեցաւ իրեն թագաւորութեանը միջոց.

բուն վրայ շատ գովեստներ կուտան Յունաց և Վա-
սինացւոց մատենագիրները. անոր համար Հայերն
ալ Վասց այր ըսին իրեն, բայց Յոյներն և Վաս-
րիները չկրնալով շատիկ հեշել՝ Վարակար կամ
Վրգար կ'ըսէին, ուսկից սովորութիւն մնաց Վր-
գար ըսելու: Վրգարու թագաւորութեան առջի
տարիները Քրիստոս Տէրն մեր ծնաւ Հրէաստանի
մէջ. նոյն միջոցին Օգոստոս կայսրն ալ հրաման
հաներ էր աշխարհագիր ընելու բոլոր իր տէրու-
թեան մէջ. միանգամայն հրաման հանեց որ ամէն
մեհեաններուն մէջ գրուի իր արձանը. Հերովդէս
որ Հրէից կը թագաւորէր ուղեց որ իր արձանն
ալ մեկտեղ կանդնուի Հայոց սահմանները, բայց
Վրգար յանձն շտանելով սաստիկ պատերազմ
ըրաւ Հերովդէսի եղբոր որդւոյն հետ, որ իրեն
գեղեկեր էր, ու բոլոր շարժեց անոր զօրքերը:
Կոյն օրերը մեռաւ Հերովդէս, ու տեղը անցաւ
Վրքեղայոս:

4. Հերովդէսին կուսակիցները տեսնելով որ Վր-
գարու պատերազմով չկրցան յաղթել, ուղեցին
վրան ամբաստանութիւններ ընելով Օգոստոսի
աչքէն հանելու. բայց Վրգար Հռովմ գնաց, և հան
իրեն սիրելի և խնամաւուն կերպովք անանկ հաճոյ
եղաւ ամենուն, և մանաւանդ Օգոստոսի որ զը-
ժուարաւ թագոսց զինքը իր հայրենիքը գամաւ-
լու: Պրոկոպիոս յոյն պատմագիրը կը պատմէ թէ
Վրգար այսպիսի փարպետութիւն մը բանեցու-
ցած ըլլայ որպէս զի Օգոստոս զինքը ազատ թա-
ղու: Օր մը Վրգար իր ծառաներովք որսի կ'եր-
թայ, ու խել մը ողջ վայրի կենդանիներ բռնելով
Հռովմ կը բերէ, և իւրաքանչիւրին բռնուած տե-
ղէն մէյմէկ քիչ հող ալ հետերնին կ'առնէ: Վր-

4. Վրգար ինչու Հռովմ գնաց ու Պրոկոպիոս
Թեջ կը պատմէ իրեն վրայ.

բոր իրիկունը Օգոստոս թէպարտն մտաւ, Աբգար հրամայեց ծառաներուն որ բերած հողերնին զատ զատ դնեն ու վերջը կենդանիները միաբան արձը կենն • երբոր սա բանս ըրին՝ մէկէն իւրաքանչիւր կենդանի ինչ հողի վրայ որ մեծցած ու սնած էր՝ հոն գնաց անչփոխ • զարմացաւ Օգոստոս սա բանիս վրայ ու պատճառը հարցուց Աբգարու • և իմանալով հանձարեղ թագաւորին միայր՝ հրաման տուաւ որ պատուով իր տեղը դառնայ, թէպէտեւ մեծ վիշաւ եղաւ սա բանս Օգոստոսի :

5 • Օգոստոսի մեռնելէն վերջը երբոր Տիրեբ տեղը անցաւ, Աբգար խնդակցութեան դեպքան խորհեց իրեն • բայց անիկայ փոխանակ դեպքանները պատուելու՝ պատժեց : Աս բանիս վրայ սաստիկ նեղացած Աբգար՝ սկսաւ պատերազմի պատրաստութիւն տեսնել, ու Եգեպտան ամբողջնելով հոն փոխադրեց աթոռը • բայց սա դիտաւորութեանը արդէլք եղաւ Պարսից Արշախր թագաւորին մահը, որուն աղոցը մէջ խառվութիւն ինչալով հարկ եղաւ որ Աբգար Պարսկաստան երթայ զիրենք խաղաղցընելու համար : Միայն Արարացուց Արեւ թագաւորին օգնեց, որով ան ալ Հերովդէս չորրորդապետին յաղթեց :

6 • Պարսկաստան Աբգարու վրայ բորտաութիւն եկաւ, և երբոր ամէն տեսակ մարդկային հնարքներէ յոյսը կարեց՝ լսելով Քրիստոսի հրաշքները, դեպքան խաւրեց իրեն՝ աղաչելով որ դայ զինքը բժշկէ : Իսկ իրեն Քրիստոսի հետ ծանօթանալը սա կերպով եղաւ :

Երբոր Հերովդէս Արեւէն յաղթուեցաւ Աբգար

5 • Աբգար Հաովնայեցւոց հետ ինչպէս աւրուեցաւ •

6 • Աբգար Քրիստոսի հետ ինչպէս ծանօթացաւ ու բորտաութիւնը ինչպէս անցաւ •

բու օգնութեամբը, Հերովդէս ուզելով Աբգարին
սա բանիս վրէժը աննել՝ զրգարտութիւններ ընե-
լով ամբաստանեց զինքը Հոովնայեցւոց առջև: Աբ-
գար ինք զինքը արգարացընելու համար զեապան-
ներ խաւրեց Արուսապէսի մէջ եղած Հոովնայե-
ցւոց զօրավարին. հան զեապանները տեսան ու լու-
ցին Քրիստոսի ըրած հրաշքները, ու զարձան ե-
կան պատմեցին թագաւորին: Աբգարու երկնային
ու երկրաւոր իմաստութեամբ լցուած սիրտը՝ ծա-
գեց մէկէն աստուածային հաւատոյ պայծառ լոյ-
սը, որով խնայն հաւատաց թէ Քրիստոս ըսած-
նին՝ կամ Աստուծոյ որդի է եւ կամ երկնային բա-
րերար աստուածներէն մէկը որ իրեն ըրած գերա-
ծայրեալ բարիքներովը զմարդիկ Աստուծոյ հեա-
պիտի միաւորէ: Ուստի թուլթ մը գրեց Քրիս-
տոսի, ու իր Ամանէ սուրհանդակին ձեռքովը խաւ-
րեց, ազաչելով որ գոյ զինքը բժշկէ ու Ադեփա
բնակի հանգիստ. զեապանին հեա պատկերահան
մ՝ ալ խաւրեց, որ եթէ Քրիստոս չգայ՝ գէմքը
օրինակէն ու բերեն: Գեապանները հասան Արու-
սապէս ու կ'ուզէին Քրիստոսի հեա տեսնուիլ ան
օրը՝ որ Քրիստոս յաղթանակով Արուսապէս կը
մտնէր. ուստի Փիլիպպոս առաքելոյն քովը մտնե-
նալով խնդրեցին որ Քրիստոսի հեա տեսնուին.
Քրիստոս մեծ ուրախութիւն ցուցընելէն ետքը՝
հրամայեց թովնաս առաքելոյն որ Աբգարու թըղ-
թին պատասխանը տայ, որուն մէջ նախ իրեն
հաստատուն հաւատքը գովելէն ետքը՝ խօսք կու-
տայ որ իր յարութենէն վերջը առաքեալներէն
մէկը կը խաւրէ զինքը բժշկելու համար: Ան միջո-
ցին պատկերահանը անկիւն մը քաշուած ետևէ կը
Քրիստոսի գէմքը օրինակելու. բայց երկար ատեն
աշխատելէն վերջը չկրցաւ օրինակել. ան ատեն
կանչեց Քրիստոս զպատկերահանը, ու ձեռքը լսի
մը առած՝ երեսին վրայ բռնեց, մէկէն տալաւ.

բուեցաւ իր աստուածային ու լուսաւոր գեմքը լաթին վրայ: Դեպքանները մեծ ուրախութեամբ դարձան, ու թագաւորին հետ մեկտեղ կ'սպասէին խոստացուած աւաքելոյն գալաւանը, որն որ քիչ ասունէն եկաւ, և էր թագէտս աւաքեալը: Արքայը թագէտս առջի անգամուն ձեռքը գրաւ Արգարու վրայ, մեկէն արեցաւ թագաւորին բորսութիւնն ու բոլորովին բժշկեցաւ. վերջը միջրտեց զթագաւորն ու բոլոր Եզեաացիքը և իրեն տեղը եպիսկոպոս գնելով Ազգէ անունով մեկը՝ որ թագաւորին խոյրարարն էր, ինքը գնաց որ Հայաստանի մեկալ տեղերն ալ քարոզէ քրիստոնէական հաւատքը (32):

7. Արգար քրիստոնէաց ըլլալէն ետե երկու իրեք տարի ալ ապրեցաւ ու մեռաւ խաղաղութեամբ, երեսունութը տարի թագաւորելէն վերջը: Այնպիսի յիշատակ մը թողուց Արգար որ մեկ թագաւոր մը չէ ունեցած: Արգարու հեղութիւնը, խոհեմութիւնը, խմարհութիւնը, պարկեշտ վարքը և ուրիշ աւաքինութիւնները կը քարոզեն իրեն սրաամութիւնը և իրեն վախճանը, որով երկրաւոր թագաւորութիւնէն երկնաւոր փառքը և յաւիտենական ուրախութիւնը հրաւիրուեցաւ:

7. Արգար քանի տարի թագաւորեց ու ինչպէս .

ԴԱՍ ԺԳ.

Ահաւեկ, Սանատրուկ, Երուսաղեմ և Արտաշէս Բ.:

1. Արգարու մեանելէն վերջը Թագաւորութիւնը երկու բաժնուելով՝ մեծ շիտթութիւն ընկաւ ազգին մէջ, վասն զի Ամանէ Արգարու որդին՝ Հայաստանի մէկ մասին տիրեց, և Սանատրուկ Արգարու քեօրդին մէկալ մասին տիրեց մի և նոյն Ժամանակի մէջ, իրարու հակառակ: Ամանէ որ հօրը տեղը Եղեախա Թագաւորեց՝ քրիստոնէութիւնը վերցուց ու սկսաւ մեհեանները բանալ և քրիստոնէանները մարտիրոս ընել, ինչպէս Ազգէ Հայրապետը և ուրիշները: Բայց ինքն ալ Աստուծո մէ իրեն ստաթիժը գտաւ. վասն զի իր նոր շինած պալատին մէջ սին մը կանգնել տալու տակն՝ սինը վրան խնարով մեռցուց զինքը:

2. Սանատրուկ լսելով Ամանէի մահը՝ մեծ ուրախութեամբ մեկէն զօրք Ժողովեց ու սկսաւ Եգեպոս վրայ գալ. երբոր լսեցին առ բանս Եղեապետը գեապան խաւրեցին լսելով որ սիրով կ'ընդունին զինքը թէ որ իրենց քրիստոնէական հաւատքին չի դուչի. առ բանս երգմունքով յանձն տաւ Սանատրուկ, բայց ետքէն երգմանը գէժ ըրաւ ու նա հաասակեց Թագեոս և Բարթուղիմէոս առաքեալները, և իր ազլիկը Սանգուխա կոչսը, որ առաջին մարտիրոս կոչսը եղաւ, և ուրիշ շատ մարդիկ:

1. Ամանէ ով է ու ինչպէս մեռաւ.

2. Սանատրուկ խարդախութեամբ Եղեախա մանալով ինչ անգթութիւններ ըրաւ ու ինչ զիտակք կայ Հեղինէ Թագաւորին վրայ.

Բոլոր Արգարու ընտանիքն ալ թրէ անցուց, և միայն աղջիկներն ու Արգարու կինը որ Հեղինէ կ'ըսուէր և իրեն ալ շատ բարիքներ ըրած էր, ապրեցուց: Ասոր համար կ'ըսեն թէ շատ բարեպաշտ ըլլալով շուգեց կառապաշտից մէջ բնակիլուտաօր Երուսաղէմ գնաց ու հոն սովի մը տանն բոլոր ունեցածը ծախելով բնակչաց ցորեն կը բաժնէր: Աս ըրած բարեացը համար գերեզման մը շինեցին Հրեայք Երուսաղէմաց գրան առջև:

3. Սանատրուկ թէպէտև քրիստոնեաները հաւածեց, բայց շատ շինութիւններ ալ ըրաւ ընդհանուր Հայաստանի՝ մանաւանդ Մծբնաց մէջ. վասն զի սա քաղաքը երկրաշարժէ փասած ըլլալով, բոլոր քաղաքը փլցուց ու նորէն շինեց շատ գեղեցիկ և քաղքին մէջ իր արձանը կանգնել տուաւ, ձեռքն ալ գրած մը, ըսել ուզելով թէ բոլոր ունեցածը ծախեր է քաղքին շինութեանը համար և միայն ան մնացեր է: Սանատրուկ երեսունըչորս տարի Թագաւորելէն վերջը որսի մէջ պատահմամբ նետով զարնուելով մեռաւ: Ար տեսնուի որ Սանատրուկ մասնաւոր ախորժակ ունի եղեր քաղաքական շինութեանց: Բնութեամբ խորամանկ և ճարտար եղած պիտի ըլլայ որ կրցեր է այնչափ տարի Թագաւորել իրեն երգմանը գէմն ընելէն վերջը: Բայց Սանատրուկոյ մեծ անարգանք է իրեն երգմանը վրայ հաստատուն չկենալը, անգրթութեամբ Արգարու չեղը թրէ անցրնելը, և իր աղջիկը սպաննելը (67):

4. Սանատրուկէն ետքը քիչ մը տանն շփոթե-

3. Սանատրուկ ինչ շինութիւններ ըրաւ ու ինչպէս մեռաւ:

4. Սանատրուկին մեռնելէն ետքը ինչպէս շփոթեցաւ Թագաւորութեան յաջորդութիւնը ու ո՞վ է Երուսանգ:

ցաւ բուն օրինաւոր թագաւորութեան յաջորդութիւնը . վասն զի Սանատրիոյ աստե՛նը Արշակունի կին մը երկու որդի ունէր Արուանդ ու Արուազ անունով : Արուանդը կարիճ, Հսկայ, անուշ բարբով ու ճարտար մարդ մըն էր, որ Սանատրիոյ աստե՛նը շատ քաջութիւններ ըրած ըլլալով ամենուն սիրելի եղած էր . ուստի երբոր Սանատրուկ մեռաւ՝ քաղցր կերպերով և առատ ձեռնութեամբ բոլոր նախարարնե՛րուն սիրաւ իրեն քաշեց և թագաւոր եղաւ Հայոց վրայ, առանց Բագրատունի ասպետէ պատկուելու : Բայց վախ՛նալով որ չըլլայ թէ Սանատրուկին ազաքք իրեն թագաւորութեանը արդէք ըլլան՝ զամէնքն ալ թրէ անցուց, բայց ՚ի պղտիկ աղէ մը որ Սմբատ Բագրատունին մեծ գժուարութեամբ Պարսկաստան փախուց, և աղուն անունն էր Արտաշէս . բայց Արուանդ խնամալով աս բանս և միշտ վախի մէջ ըլլալով որ որ մը չըլլայ նէ որ մը թագաւորութիւնը կրնայ ձեռքէն աննել, շատ թղթեր գրեց Պարսից Իարեհ թագաւորին և Սմբատին, որ Արտաշէսը մեռցնեն, ըսելով որ Մարի աղայ է ու Արշակունի չէ . բայց ինդիրքը ըսելի չեղաւ :

5 . Արուանդ բարակամբա և կանխատես մարդ ըլլալով յայանի կը գուշակէր թէ քանի որ Արտաշէս ողջ է՝ անկարելի է իրեն թագաւորութեան հաստատութիւնը, անոր համար սկսաւ պատրաստութիւններ տեսնել . աս պատճառաւ օգտակար սեպեց բոլոր ազգին իշխանութիւնը իրեն ձեռք աննել : Միջագետաց երկիրը՝ որ Հայաստանէն դուրս էր՝ Հաովմայեցւոց տուաւ ու ինքը վերին Հայքը առաւ . և որպէս զի Հաովմայեցիները իրեն

5 . Արուանդ իր թագաւորութիւնը ապահովընելու համար ինչ զգուշութիւններ ու պատրաստութիւններ ըրաւ .

բարեկամ ընե՛ աւելի հարկ տալ խոստացաւ. արքունիքը փոխեց Արմաւիր տարաւ աւելի ամբու-
թեանը համար. Երասխ գետին վրայ ալ շինեց Ա-
բուանդաշատ քաղաքը, որ ինչպէս կը ասորագրէ
Խորենացին՝ Հայաստանի գեղեցիկ, զուարճալի
ու ամուր քաղաքներէն մէկը եղաւ : Կոյնպէս շի-
նեց Ախուրեան գետին վրայ Բաղարան անունով
քաղաք մը ու բոլոր կուռքերը հան փոխագրեց, և
քրմապետ դրաւ իր Երուսաղ եղբայրը : Երուան-
դայ բոլոր աս ամէն պատրաստութիւնները պա-
րապ էլան. վասն զի Սմբատ ասպետը իրեն բա-
բարութք և շատ քաջութիւններ ընելով Պարսից
նախարարներուն առջև, ամենուն սիրելի եղաւ .
ուստի Պարսից նախարարները ազաւելցին Դարեհին
որ Սմբատ ինչ բան որ խնդրէ՛ կատարէ թագա-
ւորը : Սմբատ ալ խնդրեց որ Արտաշէսը հաս-
տատէ իր թագաւորութեանը մէջ՝ օգնութիւն տա-
լով Արտաշէսին որ կարենայ յաղթել Երուան-
դայ : Յանձն առաւ Դարեհ օգնելու . ուստի շատ
մը զօրք տուաւ Սմբատայ ու Արտաշէսի և Երուան-
դայ վրայ խաւրեց :

6. Երուանդ Ուտեացուց վրայ պատերազմի գա-
ցեր կը՝ երբոր լսեց Արտաշէսի գալը . հան պահա-
պան թողուց զօրաց մէկ մասը և նախարարներէն
շատը, ու ինքը գնաց առատ վարձքով զօրք Ժող-
վելու Արաց, Միջագետաց և Կեսարիոյ կողմերէն :

Արտաշէս առանց գիտնալու թէ Երուանդ Ու-
տեացուց աշխարհքէն հեռացեր է՝ ան կողմերը
գնաց բոլոր զօրքովը . երբոր իմացան անդայիք և
Երուանդայ ձգած զօրքերն ու նախարարները Ար-
տաշէսի գալը, բոլոր իրեն կողմը անցան . աս բանս
նաև Երուանդայ քովի եղած նախարարներուն

6. Արտաշէսի և Երուանդայ մէջի պատերազմը
ինչպէս եղաւ ու Երուանդ ինչպէս մեռաւ .

միայն պղտորեց, որոնցմէ շատը կ'ուզէին Արտաշէսի կողմը անցնիլ: Արտաշէս և Սմբատ տեսնելով Երուանդայ զօրաց բազմութիւնը՝ ամենեկին շէին վախնար, միայն մեծ վախ ունեկին Արգամ նախարարէն, որովհետեւ կարիճ մարդ էր և տիրաւոր զօրաց մեծ մասը իր ձեռքն էր. անոր համար պատերազմէն առաջ ծածուկ իմացուցին Արգամայ որ եթէ իրենց կողմը անցնի, Երուանդայ տուած պատիւները պահէլէն զատ՝ կրկին պատիւ և կրկին հարստութիւն կուտան իրեն: Առ պատճառաւ պատերազմին սկիզբը մեկէն Արգամ Արտաշէսի կողմը անցաւ, և Սմբատայ գնդին հետ միացաւ, և երկու դունդը մեկաւել յարձակեցան Երուանդայ բանակին վրայ. պատերազմին տաքցած միջոցը Երուանդայ բանակին մեկ մեծ մասը Արտաշէսի կողմը անցնելով անոր զօրացը հետ միաբան սկսան շարժել Արացիբը և ուրիշ վարձուոր զօրքերը. բայց որովհետեւ Երուանդ Տուրացուց շատ պարզմներ խոստացեր էր՝ որ Արտաշէսը մեռցնեն, երբոր անոնք կատաղարար Արտաշէսի վրայ կը վազէին՝ Գիսակ անունով քաջ նախարարը առաջ նետուեցաւ ու արգիլելց իրենց յարձակումէքը, ու ինքը գեղեցիկ ու գովելի տիրասիրութեամբ մեռաւ՝ գլխուն կէսը կորսնցրնելով. ասանկ կարճութեամբ ինչուան իրիկուն պատերազմելով բոլոր Երուանդայ զօրքը ջրուեցին. իսկ ինքը Երուանդ հազիւ կրցաւ Երուանդաշատ փախչելով աղաախլ: Երկրորդ օրը հրաման տուաւ Արտաշէս որ մեռելները թաղեն, և քիչ մը զօրքերը հանգչեցնելէն ետքը գնաց Երուանդաշատի վրայ ու քաղաքը առաւ: Երուանդ իր որդայթաւոր պաշտամն մէջ պահուրտած ըլլալով, զինուոր մը գտաւ զինքը ու զարկաւ սպաննելց քան տարի թագաւորելէն վերջը: Ասանկով ընդցուց Երուանդ իր թագաւորութիւնը, որուն վրայ

յայանի կը տեսնուի որ անիրաւութեամբ թագաւոր եղողը ոչ երբէք կրնայ խաղաղութեամբ թագաւորել, թէպէտ և գէշ մարդ ալ չըլլայ ու շատին սիրելի, ինչպէս էր Երուանդ. Արտաշէս փառաւոր գերեզման շինել տուաւ Երուանդայ վրայ՝ մօր կողմանէ Արշակունի ըլլալուն համար (89) :

7. Երուանդայ մեռնելէն վերջը Սմբատ թագաւորական գանձին մէջ փնտսելով գտաւ Սանաարիկայ թագը, ու բոլոր հայոց վրայ թագաւոր պրտակեց զԱրտաշէսը. Արտաշէս թագաւոր ըլլալուն պէս՝ Մարաց և Պարսից զօրքերը ետ խաւրեց շատ պարգևներ տալով անոնց. Արգամն ալ, ինչպէս որ խոստացեր էր, իրեն երկրորդը ըրաւ, ուրիշ շատ պատիւներով ու հարստութիւններով : Կոյնպէս Սմբատն ալ շատ պատիւներով մեծարելէն ետքը՝ ընդհանուր սպարապետ անուանեց, հարապետ տան արքունի և ամէն պաշտօնատեարց վերահայտու. ուրիշ ամէն իրեն բարեբարներուն ալ իրենց արգեանցը համեմատ պատիւներ ու պարգևներ տուաւ :

8. Անկէջ ետքը Արտաշէս հրամայեց Սմբատայ որ երթայ Երուանդայ Երուազ կղբայրը սպաննէ. Սմբատ ալ կատարեց հրամանը, ու բոլոր անոր ունեցած հարստութիւնները Արտաշէսի բերաւ. Արտաշէս ալ անոնց վրայ շատ անգին բաներ աւելցրնելով Սմբատայ տուաւ որ Դարեհի տանի՝ ի շնորհակալութիւն և ի փոխարէն անոր ըրած բարեացը :

7. Արտաշէս ինչպէս թագաւոր պատկուեցաւ ու ինչ փառքի հասուց զՍմբատ և իրենն ուրիշ սիրելիները .

8. Երուազ ինչպէս մեռաւ .

9. Արտաշէս երբոր իրեն ազնիւ բնութեամբը ամենուէն սիրելի եղաւ և ամէն բան կարգի գրաւ, սկսաւ ուսումնական և արտաքին բաներու ուշ գնել. Երասխ և Մեծամոր գետերուն քով Արտաշատ քաղաքը մեծցուց ու զարգարեց, մեծամեծ սպառաաներ շինելով, և հոն փոխադրեց իր ամօսը: Ինչուան իր ատենը, ինչպէս կ'ըսէ Խորենացին, կամուրջ, նաւակ և ուրիշ ասոնց նման բաներ խիստ անկատար էին. բոլոր Արտաշէս շինել արւաւ, վարձ խոստանալով անոնց որ նոր նոր գիւտեր գտնան: Այլ և այլ տեղերէ գաղթականներ բերելով բոլոր Հայաստանը բազմամարդ ըրաւերկրադործութեան վրայ ազգին մէջ այնպիսի սերձեց, որ ինչպէս կ'ըսէ Խորենացին՝ Հայաստանի մէջ ափ մը տեղ չկար Արտաշէսի Ժամանակ որ մշակած չըլար, ինչուան նաև լեռներուն վրայ ալ, բոլոր երկիրը այլ և այլ սահմաններ բաժնեց՝ սահմանազրուխները կոթողներ կանգնելով: Ամէն գիտութեանց և արհեստներու վարժարաններ բացաւ. և ահա աս բաներովս ոչ իր ազգին միայն սիրելի եղաւ, հասցա նաև Պարսիկք, Մարբ և ուրիշ ազգերը լսելով կը նախանձէին Հայաստանի սքանչելի փեճակին վրայ, և շատերն ալ Հայաստան կուգային:

10. Երբոր Արտաշէս այսպիսի բարեկարգութեանց հասեւ էր, Ալանները ուրիշ լեռնցի ազգերու հետ միաբանած Հայաստան վազեցին. բայց Արտաշէս բազմութեամբ զօրաց վրանին ելլելով, պատերազմի ատեն Ալանաց թագաւորին որդին

9. Արտաշէս ինչ բարեկարգութիւններով զարգարեց զՀայաստան ու ինչ փոյթ ունեցաւ ուսմանց և արուեստից.

10. Ալաններուն ինչպէս յաղթեց Արտաշէս ու ինչ կերպով հաշտութիւն ընելու զիջաւ.

գերի բռնեց . աս պատճառաւ սկսան հաշտութիւն
խնդրել Ալանները Արտաշէսէն . բայց անխիայ
յանձն չէր աններ, ինչուան որ Ալանաց Թագա-
ւորին Սաթինիկ անունով աղէիկը ազաչելով Ար-
տաշէսի սիրտը վասարկեցաւ . որով Արտաշէս
հաշտութիւն ընելով արձրկեց Թագաւորին որ-
գին, ու իրեն Թագաւհի ըրաւ Սաթինիկը :

11 . Արտաշէս որչափ որ կը ջանար ուրիշի Թը-
շուառութեան պատճառ չըլլալ, այնչափ ալ ինքը
վտեր ունեցաւ իր որդւոցը կողմանէ . վասն զի
վեց որդի ունէր՝ որ են Արտաւազգ, Վ. քոյր, Մա-
ժան, Տիրան, Չարեհ, Տիգրան . ասոնք ընդհան-
րապէս իրարու և ուրիշներու պատուոյն վրայ նա-
խանձելով խռովութեանց պատճառ եղան . բայց
ամենէն աւելի Արտաւազգը բնութեամբ սաքա-
րիւն, հպարտ ու նախանձոտ ըլլալով Արդամայ
վրայ ամբաստանութիւններ ըրաւ ու անիրաւ տե-
ղը սպաննել տուաւ, բոլոր անոր ջեղին երեւի
մարդիկը Թրէ անցուց, ու ինքը առաւ անոր իշ-
խանութիւնը : Նոյնպէս նաև Սմբատայ վրայ նա-
խանձելով կ'ուզէր սպաննել . աս բանս երբոր լսեց
Արտաշէս՝ սաստիկ խռովեցաւ և չէր գիտեր ինչ
ընելէքը . բայց հայրենասէրն և մեծախորհուրդն
Սմբատ իր կողմանէ յոժարամիտ հրաժարելով
սպարապետութեան պաշտօնէն ամենայն խռովու-
թեանց առաջը առաւ, և Արտաւազգ իր ամբար-
տառանութեան վախճանին հասնելով Սմբատին
տեղը սպարապետ եղաւ : Տեսնելով աս բանս մէ-
կալ եղբայրները սկսան նախանձիկ Արտաւազ-
գայ վրայ . Արտաշէս ալ աս իրենց նախանձը և
խռովութիւնը զազրեցրնելու մտքով, Վ. քոյրը որ
խելացի մարդ էր, Թագաւորական սանը հազա-

11 . Արտաւազգ քանի որդի ոչնեցաւ ու ինչ
վտեր քաշեց անոնցմէ :

բապեա գրաւ, Մաժանը քրտապեա. խոյ զօրքը
գլխաւոր չորս գունդ բաժնեց. Արեւելեան՝ որ Ար-
տաւազգայ յանձնեց, Արեւմտեան՝ որ Տիրամայ
տուաւ, Հարաւային՝ որ Սմբատայ յանձնեց, ու
Հիւսիսայինը Չարեհի :

12. Երբոր տեսաւ Արտաշէս որ ամէն բան կար-
գի մէջ է՝ շուղեց վճարել Հաովմայեցւոց ստվարա-
կան հարկը, առ պատճառաւ բարկացաւ Տրայխա-
նոս ու շատ զօրք խաւրեց Հայոց վրայ : Առաջ Ար-
տաւազգ գիմացնին ելաւ արեւելեան ու հիւսիսային
զօրքովք, բայց չկրնալով գեմ գնել Հաովմայեցւոց՝
երբոր սաստիկ սխաի յաղթուէր՝ պատերազմին
վերջերը հասաւ Սմբատ հարաւային գնդովք, ու
քաջութեամբ պատերազմելով յաղթեց Հաովմայե-
ցւոց, և անոնց ետեւէն ինալով հալածեց Հայաս-
տանէն դուրս : Երբոր առ բանս իմացաւ Տրայխա-
նոս կայսրը, անձիւ զօրքով սկսաւ անձամբ Ար-
տաշէսի վրայ դալ. ուստի մեկէն Արտաշէս փու-
թաց շատ ընծաներով գիմացը ելաւ և Տրայխան-
սի ցասումը իջեցուց՝ բոլոր հարկը տալով :

13. Անկէ քանի մը տարի ետքը Արտաշէս Մա-
րաց կողմերը գացած ըլլալով հիւանդացաւ. անոր
համար մեկէն Բահուրակերտ աւանը գարձաւ, ու
չկրնալով աւելի առաջ գալ՝ մեաւ հոն քառա-
սունըմէկ տարի թագաւորելէն ետեւ : Փառաւոր
հանգեաներ ըրին Արտաշէսի թաղմանը՝ ինչպէս
որ կ'ստորագրէ Խորենացին Արիստան Փիլլացիին
Խօսքերէն ասնելով. « Դագաղքն կին սսկեղէնք,
գահոյքն և անկողինք բեհեղեայ, և պատմութեան

12. Ինչ պատերազմի ասիթ ունեցաւ Արտա-
շէս Հաովմայեցւոց հետ ու ինչպէս նորէն հաշ-
տակցաւ .

13. Արտաշէս ինչպէս մեաւ ու ինչ հանգի-
սաւոր թաղումն ըրին իրեն .

որ զմարմնօրն՝ սսկեթել . թագ կապեալ ՚ի զլուին ,
և զէնն սսկեով առաջի եղեալ » : Անկէջ վերջը
կ'ատորագրէ պաշտօնատեարց կարգը , և թէ ինչ
պէս բոլոր ազգին թէ ազնուականաց և թէ սամկաց
առ հասարակ մեծ արամութեան պատճառ եղաւ
Արտաշէսի մահը , և թէ ինչպէս շատ մարդիկ ի-
րենք զիրենք կամաւորապէս զոհ ըրին՝ ողջ ողջ
Արտաշէսի զերեզմանը նեաուելով : Անկարելի բան
է որ մարդ առ պատմութիւնը կարգալէն վերջը
կարենայ իր ազգին հետ մէկտեղ վշտակից ու ցա-
ւակից չըլլալ որ այսպիսի թագաւորէ մը զրկուեր
է , որ ամենուն իրաւցընէ հայր , հայաստանի բա-
րերար , ազգին պարծանք , ամենուն վշտակից , ա-
մենուն երջանկութեանը պատճառ եղեր է :

14 . Արտաշէսի հետ մէկտեղ գովութեան ար-
ժանի է նաև Սմբատ Բագրատունի ասպետը , որ
շատ երևելի եղաւ իրեն քաջութեամբը , ինչպէս
որ տեսնուեցաւ պատմութեան մէջ : Սմբատայ տի-
րասիրութիւնը , հասարակաց օգուտը մտածելը՝
առանց իր շահը մտածելու , որով սպարապետու-
թենէն կամաւ հրաժարեցաւ , որպէս զի խոսովու-
թիւն չըլլայ . հաւատարմութիւնը , վեհանձնու-
թիւնը , և ուրիշ կատարելութիւնները ոչ միայն
իւր յիշատակը անմահացընելու արժանի կ'ընեն ,
այլ և աշխարհքիս մեծամեծ մարդկանց ու մեծա-
նուն սպարապետաց կարգը կ'անցընեն զինքը : Արմ-
բատ ինչուան խոր ծերութիւն ապրելով խաղա-
ղութեամբ մեաւ (128) :

14 . Ինչ առանձին գովեստից արժանի է նաև
Սմբատ Բագրատունին .

ԴԱՍ ԺԴ.

Թագաւորք վերին Հայոց :

1. Ինչպէս և վերին Հայոց Թագաւորութիւնը պղախ և մասնաւոր բան ըլլալով, մեր ազգին պատմութեանը հետ խիստ այնչափ վերաբերութիւն մը չունի, բայց եղած դործողութիւնները Հայաստանի մէկ մասին մէջ ըլլուելով, ան պատճառաւ համառօտ յիշատակութեան մը արժանի են. մասնաւոր որ Հոսովմայեցւոց պատմիչները Հայոց պատմութեան աւելի առ մասին վրայ տեղեկութիւն ունենալով, վերին Հայոց գեպքերը բուն մեր պատմութեանը հետ կը շփուեն, որով մեծամեծ սխալանաց մէջ կ'իջնան: Ուստի առ ութսուներչորս տարուան պատմութեան ծուծը գիտնալը հարկաւոր է՝ անոնց սխալք ուղղելու համար:

2. Երբոր Անտանիոս Հայաստանի տիրեց՝ վերին Հայքը Մարաց տուաւ, ինչպէս որ առաջ ալ ըսինք: Արշախի Պարսից Թագաւորը Արտաշէսա անուանով փոխարքայ մը դրաւ ան կողմերուն, որուն բանութիւններուն չգիտնալով Հայերը Օգոստոսէն խնդրեցին որ Արտաւազդայ ազան փոքր Տիգրան ըսուածը իրենց Թագաւոր դնէ. Օգոստոս կատարեց խնդիրքնին. բայց երբոր Տիգրան մեռաւ, Հոսովմայեցիք անոր Երուազ եղբայրը խա-

1. Մեր ազգին պատմութեանը հետ ինչ վերաբերութիւն ունի վերին Հայոց Թագաւորութիւնը.

2. Անտանիոսի Հայաստանի տիրելէն ետքը որոնք Թագաւորեցին վերին Հայոց յաջորդաբար ինչուան ջենն.

րեցին. Հայերը շնորհակցում զանիկայ՝ տեղը Տիգրան անունով ուրիշ իշխան մը գրին, որ Տիգրան կրասեր ըսուեցաւ: Իրեք տարիէն Տիգրան կըրտներն ալ վարձակեցին ու Ապրաստ անունով Արծրունին թագաւորեցուցին, որ ամենուն սիրելի և հաճոյ եղաւ: Երբոր ան ալ մեռաւ Պարսից թագաւորը իր Արշէզ որդին թագաւորեցուց, բայց Հաովմայեցոց կամացը գէմ ըլլալով Հաովմայեցիք հալածեցին զինքը ու Պոնտոսի թագաւորին Չենան որդին թագաւորեցուցին՝ որ ինչուան իր մահը խաղաղութեամբ թագաւորեց:

3. Չենանին մեանելէն ետքը Արասէս Պարսից թագաւորը իր Արշակ անունով ազան թագաւոր դրաւ Հաովմայեցոց կամացը գէմ. անոր համար Տիրեք կայսրը Արաց թագաւորին Միհրգաս եղբայրը յորգորեց որ Արշակը վարձակ ու ինքը թագաւորէ վերին Հայոց: Միհրգաս ստակ կերցընելով սպաննել տուաւ Արշակը ու ինքը տեղն անցաւ. բայց քանի մը տարիէն Հաամիզց իր եղբորը ազան՝ նախարարաց սիրաբ իրեն քաշելով, ու հորմէն ալ օգնութիւն առած, եկաւ Միհրգասը իր ընտանեօքը սպաննել տուաւ ու ինքը անգթութեամբ թագաւորեց: Երբոր լսեց առ եղած բաները Դարեհ Պարսից թագաւորը, շատ զօրքով Հաամիզին վրայ եկաւ, ու զանիկայ վարձակեց և իր Տիրիթ եղբայրը տեղը դրաւ: Հաամիզց ետեկ եղաւ նորէն Պարսիկները հալածելու, բայց նեղը մանելով հազիւ կրցաւ փախչիլ իր Չենորիա կնիկովը. բայց Չենորիա տղարեքի մէջ ըլլալով ճամբան սաստիկ վնասուեցաւ, որով ալ չէր կրնար առաջ երթալ. ուստի ինզրեց Հաամիզգէն որ զին.

3. Միհրգաս Արշակայ յաջորդելէն ետքը Բնչպէս յաղթուեցաւ Պարսիցմէ ու Բնչ գիտելիք կայ Չենորիային վրայ:

քը սպաննէ. Հասմիզդ ալ վախէն ու յուսահա-
տութենէն խնդեցամ ի պէս ըլլալով, զարկաւ ար-
վը ու վերաւորելով գեար ձգեց զինքը. իսկ ինքը
փախաւ գնաց Վ րաստան: Հան մտախիկները զըս-
նուամ քանի մը գեղացիներ տեսնելով կիսամեռ
զԶէնորփան, հանեցին գետէն ու վերքը պատելով
առաջացուցին. վերջը Տիրիթին տարին՝ որ մաս-
նաւոր խնամքով կը պահէր զինքը: Աս գեղքս
Երասպանոց խիստ ծանուցեալ ըլլալով, կը կար-
ծէն որ Զէնորփա մեր Արշակունի Թագուհինե-
րէն մէկն ըլլայ:

4. Ներոն կայսրը լսելով Պարսից տիրելը վերին
Հայոց վրայ, Կորբուզոն անուճով զօրավարը խա-
րեց շատ զօրքով որ Տիրիթը վարնաէ հանկէ. Կոր-
բուզոն եկաւ յազմեց Պարսից, Տիրիթն ալ փա-
խաւց ու անոր տեղը Տիգրան կրասերին եղբորո-
ղին Թագաւոր դրաւ, որ ըսուեցաւ Տիգրան կրրա-
սերադոյն. իսկ ինքը Թողուց վերին Հայքը ու Ատ-
րեստան գնաց: Գարեհ նորէն շատ զօրք ժողոված
վազեց վերին Հայոց վրայ ու շատ յազմութիւն-
ներ ընելով սկսաւ առաջ երթալ. ան ատեն կայս-
րը Բեսաս անուճով քաջ զօրավարը խաւրեց որ
պատերազմը լմնցնէ: Ասիկայ Կորբուզոնին հեռ-
միացած երկար ատեն պատերազմեցաւ Գարեհի
հետ. բայց վերջապէս զուի չկրնալով ելլել յազ-
մուեցաւ ու հաշտութիւն ըրաւ Պարսից հետ, աս
պայմանով որ վերին Հայքը Պարսից ձեռքը մնայ,
միայն թէ Թագաւորը՝ կայսրը անուանէ բնակիչ-
ները զով որ ուզեն: Աւստի նորէն Տիրիթ Թագա-
ւորեց ու Հաովմ գնաց. ուր որ կրկին անգամ Թա-

4. Ի՞նչ պատերազմներ ըրաւ Ներոն կայսրը
Պարսից հետ վերին Հայոց Թագաւորութեանը հա-
մար ու ի՞նչպէս հաշտութիւն եղաւ մէջերնին:

գաւոր պատկուեցաւ Ներոն կայսրէն մեծ հանգե-
սով ու փառաւորութեամբ :

Տիրիթ ինը տարի թագաւորելէն ետքը երբոր
ինքը մեռաւ՝ վերին Հայոց թագաւորութիւնն ալ
վերջացաւ . վասն զի Երուանդ Միջագետքը Հոռով
մայեցւոց տալով, ինքը վերին Հայոց թագաւորու-
թիւնը առաւ ու իր մասին հետ միացուց :

ԴԱՍ ԺԵ .

Արտաւազդ Բ . Տիրան Ա . Տիգրան Գ . և
Վաղարշ :

1 . Արտաւազդայ խիտա և կատաղի բնութիւնը
որ արդէն հօրը կենդանութեան ատեն ալ տես-
նուէր էր՝ թագաւորելովը ամենեկին տարբերու-
թիւն մը չըրաւ : Եղբայրները Այրարատեան գա-
ւառէն վաճառեց, միայն Տիրանը քովը պահեց՝ ու
բովհեակ ինքը սղայ շունէր : Արտաւազդ ասան-
կով երկու տարի թագաւորելէն վերջը, օր մը որ-
սի մէջ կատաղաբար ձին վազըրնելու ատեն խո-
րունկ փոսի մը մէջ ընկաւ ու կորսուեցաւ :

2 . Ասոր վրայ առասպել մը հաննեցին որ կ'ըսէին
թէ, Արտաշեսի թաղման ատեն երբոր շատ հոգի
իրենք զերենք կամաւորապէս Արտաշեսի գերեզ-
մանը կը նետեին՝ ըսեր է Արտաւազդ հօրը, « Դու
գնացիր և բոլոր երկիրը և մարդիկները քեզի հետ

1 . Արտաւազդ ինչպէս ըրաւ իր թագաւորու-
թիւնը ու ինչպէս մեռաւ .

2 . Արտաւազդայ մահուանը վրայ ինչ առաս-
պել ելաւ Հայոց մէջ .

մարիբ, ևս աւերակներն «Թագաւորեմ» : Աս պատճառաւ անիծեր է Արտաշէս զինքը ըսելով : « Եթէ զու յորս հեծցիս յազաան 'ի վեր 'ի Մասիս, զքեզ կապցին քաջք, ասարցին յազաան 'ի վեր 'ի Մասիս, անգ կապցես, և զոյս մի տեսցես » : Ասկէ կը կարծէ եղեր սամիկը թէ Արտաւազգ մութ այրի մը մէջ շղթաներով կապած է, քովը երկու շուն կեցած՝ միշտ կը կրճեն շղթաները որ Արտաւազգ ելլէ ու աշխարհքս կործանէ . բայց զարբիններուն կասնահարութեան ձայնէն կը զբանան եղեր շղթաները : Աս պատճառաւ ինչուան նաև Խորենացոյն ժամանակը տգէտ զարբիններ կիրակի օրերն ալ չորս հինգ անգամ սալը կը ծեծէին որ ան շղթաները չթուլնան :

3. Տիրան որ Արտաւազգայ քովն էր՝ եղբորը տեղը յաջորդեց, բայց անոր սէս Թագաւորութեան բաներուն անփոյթ ըլլալով, աւելի զբոսանքի և որսի ետէէ եղաւ, մանաւանդ որ լաւ ձի հեծնել զիսեր : Երևելի գործք մը չըրաւ, ու քսանը մէկ տարի խաղաղութեամբ Թագաւորելէն վերջը, ճամբան երթալու ատեն ձեան հիւս մը վրան իյնալով տակը մնաց ու խզուեցաւ :

4. Տիրանայ տեղը յաջորդեց Տիգրան Գ. իր պզտիկ եղբայրը Պարսից Պերոզ Թագաւորին հաճութեամբը : Երբոր Անտանիոս Պիոս Հռովմայեցոյ կայսրը մեռաւ, Պերոզ ու Տիգրան միաբանած՝ Ասորոց երկիրը եզած Հռովմայեցոյ վրայ վազեցին ու մեծ կոտորած ըրին . անկէ կ'ուզէին Կապադովկիոյ վրայ ալ վազել : Սևերիանոս Կապադովկիոյ կուսակալը, վախնալով պատերազմին անյաջողութենէն՝ պատգամ հարցուց . քրմապե-

3. Արտաւազգայ ով յաջորդեց .

4. Տիգրան Գ. ով է ու ինչ պատերազմ ունեցաւ Հռովմայեցոյ հետ .

ար ամենայն կերպով բարեյաջողութիւն սրտան-
բազմի դուշահեց. անով զօրացաւ Սեւրիանոս,
աներկիւղ ու թեթե սրտարաստութեամբ Հայաս-
տան վաղեց. բայց Հայերէն ու Պարսիկներէն չա-
բաշար յաղթուելով ինքն ալ սպաննուեցաւ: Ա-
րեղիոս կայսրը երբոր լսեց Հոսովոյեցոց կրկին
անգամ յաղթուիլը, Ղուկիոս իր կայսերակիցը
խաւրեց մեծ պատրաստութեամբ. բայց անիկայ
գեռ չհասած՝ Տիգրան փութաց փոքր Հայոց ախ-
րելու. հոն կնկան մը շողոքորթութիւններէն խա-
բուելով գերի բռնուեցաւ, ինչուան որ Ղուկիոս
եկաւ ու բոլոր թշնամիները սորսափեցուց. վեր-
ջը տեսնելով զՏիգրան՝ որ գերի ընկեր է, խղճաց
վրան և ազատեց զինքը: Ղուկիոս Տիգրանայ կեր-
պին և գեղեցկութեանը համնեցաւ, խիստ սիրեց
զինքը ու հետը կապուեցաւ սիրաբ. անոր համար
նորէն թագաւորեցուց ու շատ սրտաւով Հայաս-
տան գարձուց: Ղուկիոս իրեն սիրոյն նշան Ռոփի
անունով աղջիկը, որ իր ազգականներէն մէկն էր,
Տիգրանայ կնութեան տուաւ: Ղարձեալ առ բա-
ներուս յիշատակը պահելու համար ստակ կոխել
տուաւ առ կերպով. ինքը Ղուկիոս գահը նստած՝
Տիգրանը թագաւոր կը ստակէ Հայոց. վրան ալ
ստանկ գրած. « Թագաւոր Հայոց տուեալ »: Տիգ-
րան Հայաստան գամնալով, խել մը տակն ալ ապ-
րեցաւ ու քառասունըմէկ տարի թագաւորելէն
ետքը մեռաւ, ստանց քաջութեան յիշատակ մը
ձգելու (193):

Ե. Տիգրան Գ. ին յաջորդեց անոր պզտի որդին
Վազարը, որ առջի իրէքին պէս գբօսանաց ետեւէ
չբըպով շատ շինութիւններ բրաւ, միանգամայն
հայրենասէր ու քաջ եղաւ. Վազարչուան քա-

Ե. Տիգրան Գ. ին ո՞վ յաջորդեց ու ի՞նչ կողմա-
նէ երևելի եղաւ Վազարը.

զաքը շինեց ան տեղը՝ ուր ինքը ծներ էր մօրը ճամբայ ընելու ատենը . Վարդգէս ասանը պարսպով պատեց ու ակժողը հոն փոխադրեց, անուան ալ Վաղարշապատ գրաւ : Ասոր թագաւորութեան քաններորդ տարին Հիւսիսային ազգերը սկսան բազմութեամբ Հայաստան վազել . Վաղարշ ալ ժողովեց բոլոր իր զօրքերը և քաջութեամբ պատերազմելով հալածեց զանոնք խել մը տեղ՝ շատ մօրդ ջարդելով, բայց թշնամիները նորէն միաբանած՝ աւելի կատաղութեամբ վազեցին Հայաստան : Հայերը սաստկապէս պատերազմելով նոյնպէս երկրորդ անգամուան ալ վանեցին ան վայրենի ազգերը . բայց ապիսնս որ Վաղարշ զարնուելով մեռաւ՝ զոհ ըլլալով իր ազգին օգտին համար, որով անուան ալ ան մահացուց, ինչպէս նաև կ'ըսէ խորենային . Թէպէտ և ինքը մեռաւ, բայց դեռ կենդանի է իրեն բարի անուամբը :

Գ Ա Ս Ժ Զ .

Խոսքով Ա :

1 . Խոսքով Ա . Թագաւորելուն պէս ուզեց իր հօրը մահուան վրէժը ասնել Հիւսիսային ազգերէն . ուստի բոլոր զօրքերը ժողովեց և անոնց վրայ պատերազմի ելաւ, բոլորովին ընկճեց ան զօրաւոր ազգերը . անոնց ընտիրներուն մէջէն հարիւրին մէկ պատանդ ստաւ, իրեն քաջութեամբ յիշատակ յունարէն գրով արձան մը կանգնեց, ու այնպէս փառաւոր յաղթութեամբ Հայաստան զարձաւ : Խոսքով ազգը ծաղկեցընելու ջանքով

1 . Խոսքով Ա . Թագաւորելուն պէս ի՞նչ ըրաւ .

լցուած՝ սկսաւ շատ շէնքերով զարգարել Հայաստանը, և ան շէնքերուն համար քրիստոնեաները կ'աշխատացրնէր. շատ քրիստոնեաներ ալ հաւատաքի համար նահատակեց:

2. Ան միջոցին Աստուծոս Կարահալլա Հոռով մայրեցոց կայսրը Միջագետաց կողմերն եկած ըլլալով, խոսրով առջի բարեկամութիւնը հաստատելու մտքով անոր հետ տեսնուելու գնաց. բայց կայսրը քովը պահեց զինքը որպէս զն գիւրաւ կարենայ Հայաստանի տիրել: Հայերը լսելով աս բանս՝ անանկ բարկացան որ մէկէն պատերազմի պատրաստուեցան. վախցաւ Կարահալլա, ու շատ պատուով արձակեց քովէն խոսրովը:

3. խոսրովու Թագաւորութեան ատենը Պարսից վրայ կը Թագաւորէր Արտաւան, որ ազգաւ Արշակունի ըլլալով մասնաւոր սէր և բարեկամութիւն ունէր խոսրովու հետ: Արտաշիր անունով Պարսից նախարարներէն մէկը ուրիշ նախարարները իր կողմը քաշեց, շատ զօրքով Արտաւանին վրայ պատերազմի ելաւ, և տարիի մը շափ պատերազմելէն վերջը ապանեց զինքը: Աս բանս երբոր իմացաւ խոսրով շատ ցաւեցաւ Արտաւանին մահուանը վրայ, և իր մտածէր որ վրէժը առնէ Արտաշիրէն. մէկէն զօրք ժողովեց Աղուանից, Վրաց, Լիւնաց, Կասպից կողմերէն, ու անթիւ բազմութեամբ Արտաշիրին վրայ պատերազմի ելաւ: Միշտ յաղթող գանուեցաւ մեծն խոսրով, տասը տարիի շափ պատերազմելով ինչուան Հնդկաստան վերնաց Արտաշիրը. գրեթէ բոլոր Պարսկաստանի տի-

2. խոսրով Կարահալլային ձեռքէն ինչպէս խալլեցաւ.

3. Ի՞նչէն ծագեցաւ խոսրովին Պարսից հետ ունեցած պատերազմը, ու խոսրով ինչպէս յաղթեց.

րեց, Ասորպատականի մէջ ալ քաղաք մը շինեց՝
Դափրէժ անունով, այսինքն 7 = Ի Է Է Ժ Արտաշէի
(253) :

4. Արտաշէի փորձով տեսնելով թէ շիրնար
Խոսրովու յաղթել, և գիտնալով թէ քանի որ
Խոսրով կենդանի է՝ իր թագաւորութիւնը և ինքը
հանգատութիւն պիտի չգանէ, մեծամեծ պարգե-
ներ ու պատիւներ խոստացաւ ան մարդուն որ ըզ-
Խոսրով սպաննէ : Նախարարներէն մէկն ալ շահ-
մարձակեցաւ սա քանս յանձն ասնելու . միայն
Մոակ անունով նախարարը, որ ազգաւ Պարթև
էր, սիրով յանձն առաւ կատարել Արտաշէի կամ-
քը . ուստի անով տեղով հայաստան եկաւ, ըսե-
լով թէ Արտաշէին ձեռքէն փախայ և Խոսրովու
կ'ապաւինիմ : Մոակ իր կեղծաւորութեամբը ամե-
նուն սիրելի ըլլալով, շատ մեծ պատիւներ գտաւ
Խոսրովէն և շատ քանի մէջ անոր հետն էր . ան-
գամ մըն ալ որսի առնն Մոակ և իր եղբայրը մէկ-
տեղ խօսք գրած՝ զարկին Խոսրովը շարաչար մի-
բաւորեցին, և իրենք ձիերնին հեծան ու սկսան
փախչիլ . մէկէն ետեւէն ընկան Խոսրովի մարդի-
կը, և երբոր զանոնք պիտի բռնէին, անոնք իրենք
զիրենք գետը նետեցին ու խզուեցան : Խոսրով
զեռ չմեռած՝ հրաման տուաւ որ Մոակայ ընտա-
նիքը բոլոր թրէ անցընեն՝ որոնցմէ միայն երկու
աղայ ազատեցաւ, մէկը Սուրեն՝ որ Պարսկաստան
փախուցին, մէկալը մեր սուրբն Գրիգոր Լուսա-
ւորիչը որ Կեսարիա տարին : Այսպէս Խոսրով
քառասունը ութը տարի թագաւորելէն վերջը, բո-
լոր հայերը մեծ սուգի մէջ թողլով մեռաւ (258) :

5. Արտաշէի ըսելով Խոսրովու մահը շատ ու-

4. Արտաշէի Ինչպէս կրցաւ Խոսրովը սպաննել
ապա :

5. Արտաշէի Ինչպէս հայաստան մտաւ .

բախացաւ, մեծամեծ հանգէսներ կատարեց, ու
շատ զօրքով Հայաստանի վրայ վազել սկսաւ: Կա-
խարարները իրենց սիրելի Թագաւորին մահուա-
նը վրայ արամած ու շիտթած, մէկէն չկրցան Ար-
տաշին զեմ զնել, բայց դովելի միարանութեամբ
մը շուտով օգնութիւն ուզեցին Հոսովնայեցւոց
Վաղերիանոս կայսրէն: Հոսովնայեցւոց զօրքը Հայ-
աստանէն դուրս այլ և այլ երկիրներ ասպատա-
կութիւն ընելով ուշացան Հայոց օգնութեան գա-
լուան միջոցին ալ Վաղերիանոս մեռաւ, որով
յուսահատեցան Հայերը Հոսովնայեցւոց օգնու-
թենէն, Արտաշիր ալ ասանց շատ դժուարու-
թեան Հայաստան մտաւ: Մէկէն հրաման տուաւ
որ Խոսրովու ցեղը Թրե անցընեն, անոնց մէջէն
միայն Տրդատ անունով աղան ազատեցաւ: Արտա-
շաղք Մանգակունիս զՏրդատը կետարիա մեծցը-
նեցէն վերջը՝ Հոսով տարաւ: Կոյնպէս ազատե-
ցաւ նաև Տրդատայ Խոսրովիգուսիս անունով քոյ-
րը՝ Օտա նախարարին ձեռքովը:

6. Արտաշիր ընդհանրապէս նախարարները ի-
րենց սրատուոյն մէջը սահէց, բայց Մանգակու-
նեաց ցեղը բոլոր Թրե անցընել տուաւ՝ իմանա-
լով որ Տրդատը փախցընողը Մանգակունի է: Ա-
սանկով քսան տարի ալ Հայոց վրայ Թագաւորե-
լէն վերջը մեռաւ Արտաշիր, ու տեղը անցաւ իր
Շապուհ որդին, ինչուան որ Տրդատ եկաւ Հոսով-
նայեցւոց զօրքովն ու նորէն սիրեց իր հայրենի
ժառանգութեանը:

6. Արտաշիր Հայոց հետ ինչպէս վարուեցաւ
ու քանի տարի Թագաւորեց.

ԴԱՍ ԺԷ.

Տրդատայ քաղաքի բնակիչներն ու քաղաքացիք :

1. Տրդատ երբոր Հասիմ գնաց, Միկիանոս առնուով մեծ իշխանին ծառայութեան մէջ մտաւ՝ առանց խնայքնելու իրեն ով ըլլայր. հոն շատ քաջութիւններ ընելով և միշտ հաւատարիմ գտնուելով Միկիանոսին շատ սիրելի եղաւ : Իր գլխաւոր քաջութիւնները, որով թագաւորութեան արժանի եղաւ ասոնք են : Անգամ մը ձիւնթացի աստն թշնամուոյն կապը վարպետութեամբ մը առաջ անցնելով, զինքը կառքէն վար ձգեց. Տրդատ մէկէն վազեց հասաւ կառքին ետևէն ու բռնեց կառքը կեցուց : Անգամ մ'ալ երկու վայրկեի ցուլերու հետ կռուելու աստն եղև իր բներէն բռնեց թօթվեց ու փրցուց : Պարտս կայսեր զօրքը երբոր ապրտասմբեցան ստի պատճառաւ պատերազմի առնն, ու զինքը և իշխանները սպաննեցին, Տրդատ Միկիանոսի գրանն առջևը կեցած՝ չթողուց որ մէկը ներս մանն : Պատերազմի աստն ձիերուն խտր ըմնցած ըլլալով, Տրդատ պարսպէն անդին անցաւ, ու հոն անդի զիզած խտերը՝ պահապաններով ու շներով մէկտեղ պարսպէն ասդին նետեց :

Կիսկղեախանոս Գոթացուց Հուչի թագաւորին գէմ պատերազմի ելեր էր, որ խիստ քաջ և ուժով մարդ էր. Հուչի առաջարկեց Կիսկղեախանոսի որ երկուքը առանձին մենամարտութիւն ընեն և ով որ յաղթէ՝ յաղթութիւնը անոր կողմը սե-

1. Հոտմայեցիք զՏրդատը իրեն ինչ քաջութիւններուն համար թագաւորեցուցին :

պուխ : Դիտկղեախանոս ինքը անձամբ շէր կրնար
Հռչկին գիմացը ելլել, և ոչ բոլոր զօրացը մէջ ալ
գանուեցաւ մարդ մը որ կարող ըլլար անոր գի-
մացը ելլել, ան ասան Միկիանոսի խորհրդովք Տըր-
գաս Հռչկին հետ պատերազմելով բանեց զինքը
ու կապած Դիտկղեախանոսին գիմացը բերաւ :
Դիտկղեախանոս անանելով Տրգասայ քաջութիւնը՝
ու զեց մեծ պատուոյ մը հասցընել զինքը, և երբոր
խնացաւ թէ խորտուի Հայոց թագաւորին որդին
է, մէկէն թագաւոր անուանեց զՏրգաս, ու շատ
ընծաներ տալէն վերջը բազմութեամբ զօրաց Հայ-
աստան խաւրեց որ երթայ իր հայրենական թա-
գաւորութիւնը Ճաւանդէ :

2. Տրգաս երբոր Կեաարիա հասաւ, մէկէն ի-
մացուց նախարարներուն իր գալուտը. ուստի
նախարարներուն շատը ելան Կեաարիա գնացին,
ու զինքը փառաւորապէս ընդունելով կրկին ան-
գամ պատկեցին Սմբատ Բագրատունիին ձեռքովք
(286) :

Տրգաս Կեաարիայէն բոլոր նախարարներով
Երզնկայ եկաւ, ուր մասնաւոր շնորհակալութիւն
ըրաւ Մահաայ որ ան կապալաշտութեան ասանը
Հայաստանի պաշտպան սեպուած էր, և տախտեց
նակ զսուրբն Գրիգոր Լուսաւորիչը որ նոյնպէս
Մահաայ նուերք տաց. երբոր անիկայ յանձն շա-
սաւ, Տրգաս շատ շարչարանքներ տուաւ սրբոյն
Գրիգորի. վերջը երբոր իմացաւ թէ անիկայ իր
հայրը սպաննող Մահկին որդին է, Արտաշատու
մէջ խոր վերապ մը կար՝ հոն նետել տուաւ. իսկ
իր բարեբարներուն՝ այսինքն Արտաւազդ և Օտա
նախարարներուն՝ հազարապետութեան պատիւ

2. Տրգաս ինչ կերպով Հայաստան մտաւ ու
ինչպէս Պարսից ձեռքէն խաղտեց Հայաստանի
ու և այլ քաղաքները :

առաւ : Ա իրջը նախարարներէն ու Հայաստանի զանազան կողմերէն շատ զօրք ժողովելով, Հոով մայեցւոց զօրացը հեա մէկ տեղ Հայաստանի այլ և այլ քաղաքներուն վրայ գնաց ու առաւ Պարսիկ իշխաններուն ձեռքէն . իրեր անգամ ալ Շապուհին հեա պատերազմելով բոլորովին վերնաց հանեց զինքը Հայաստանէն : Անկէջ ետքը սկսաւ ամէն բան կարգի կանոնի գնել ինչպէս էր առաջ, և բոլոր ազգը մեծ ուրախութեան մէջ էր՝ տեսնելով իր օրինաւոր կարիճ թագաւորը :

3 • Տրգաստ այսպիսի փառաւոր յաղթութիւններով ուրախացած՝ հրաման խաւրեց ամէն կուսակալներուն ու քուրմերուն որ զոհերով նուէրներով պատուեն աստուածները, և ամէն տեղ գրաւուած քրիստոնեաները կամ ասնջելով սպաննեն և կամ հաւատքնին ուրացնեն : Երբոր ամէն արւած հրամանները կատարուեցան, ուղեց իրեն թագուհի ասնել Ալանաց թագաւորին Աշխէն անունով ազջիկը . առ բանիս համար հարսնախաւութեան զրկուեցաւ Սեբաստ Բագրատունի ապեալը . անիկայ ալ գնաց բերաւ զԱշխէնը : Տրգաստ նախ հրամայեց որ Արշակունի գրեն զինքը, վերջը Արշակունի թագուհիներուն թագն ու ծիրանիները հագցնելով հեալ ամուսնացաւ, և հարսանեաց հանդէսը շատ շքեղ եղաւ :

4 • Ան միջոցին որ Տրգաստ սաստիկ հրաման հաներ էր քրիստոնեաները հալածելու՝ Դիակղեախանաս կայսրէն թուղթ մը եկաւ իրեն, որուն մէջ կ'իմացընէր կայսրը Հռիփսիմէ կուսին և իր ընկերաց Հայաստան փախչելը, և կրկին կրկին կը յանձ-

3 • Տրգաստ իրեն փառաւոր յաղթութիւններէն վերջը ինչ ըրաւ .

4 • Տրգաստ զՀռիփսիմէն ինչու սպաննեց ու իր վրայ ինչ կերպարանափոխութիւն եղաւ .

նէր Տրդատայ որ փնտռէ դանայ զանանք, և թէ որ
Հոփոփմէին գեղեցկութեանը համեմի՝ իրեն կնու-
թեան առնէ, ապա թէ ոչ Հոփոփ՝ խաւրէ: Մէկէն
ամէն տեսակ հնարք ՚ի գործ գրաւ Տրդատ ու տեղ
չմնաց որ ինզրակներ չխաւրէ: ուստի քիչ ատե-
նէն գտան ան կուսանքք որ այդիի մը մէջ քաշուած
կը ճգնէին Վազարշապատի քովերը: Տրդատ եր-
բոր տեսաւ Հոփոփմէին գեղեցկութիւնը հիացաւ,
և շատ ետեւ եղաւ որ կարենայ Հոփոփմէն համո-
զել իրեն կին ըլլալու: Բայց ամէն ջանքը պարա-
պը եղաւ, և ուզեց տանջանքով իրեն շար կամացը
խոնարհեցնել զկոյսը: և չկրնալով միտքը գրածը
առաջ տանիլ՝ բարկութենէն անողորմարար մեռչը-
նել առաւ Հոփոփմէն և ետքը անոր ընկերներն
ալ: Բայց անոր վրայ մեծ ցաւի ու արտմութեան
մէջ ընկաւ, և տեսնելով որ չկրցաւ ազնկան մը
յազթել և իր փափաքին համեմի, քանի մը օրէն
արտմութիւնը փարատելու համար որսի եղաւ: և
երբոր կառքով կ'երթար՝ յանկարծակի զիւսհա-
րեցաւ ու խողի կերպարանք մանելով կատաղու-
թեամբ կառքէն վար ընկաւ և սկսաւ ինք զինքը
խածնել, և անտպաս անմարգարնակ տեղեր քա-
շուելով չէր ուզէր որ քովը մարդ մտաննայ: նոյն-
պէս նախարարներէն ոմանք ալ հարուածեցան՝
նոյնպիսի պատիժներով:

5. Երբոր բոլոր Հայաստան սուգի ու արտմու-
թեան մէջ էր առ երկնառաք պատիժներուն հա-
մար, և սարսափած չէին գիտեր ընկելքնին, որ մը
հրեշտակ Աստուծոյ երեցաւ Տրդատայ Խարսովի
գուխա քրոջը, և իմացուց իրեն որ ինչուան Անա-

5. Գրիգոր Ղուսասօրիչ ինչպէս եղաւ Վ. իրա-
պէն, ինչպէս զթագաւորը և հարուածեալ նա-
խարարները բռնկեց ու ինչպէս սկսաւ բրիտա-
նէութիւն խոթել Հայոց մէջ:

կայ որդին Գրիգորը խոր վերապէն շնորհ լին կըր-
նար հոգւոյ և մարմնոյ բժշկութիւն ստանալ : Աս
տեսիլը ամենուն ծաղրելի երեցաւ . բայց երբոր
երկու օրուան մէջ հինգ անգամ նոյն բանը կըրկ-
նուեցաւ , ան ատեն Օտա նախարարը խաւրեցին
որ երթայ Գրիգորը վերապէն հանել (301) :

Անհաւատ ու հեռաբերքի մարդիկ անթիւ բազ-
մութեամբ վերապին չորս զին ժողովուած կ'ապա-
սէին սա նոր տեսարանիս վերջը տեսնելու . և ահա
խոհոյն իրենց անհաւատութիւնը հաւատքի փո-
խուեցաւ , երբոր տեսան ու խնայան որ Գրիգոր՝
վերապին մէջ երկընցուցած շուանը բռնելով շար-
ժեց , և տասներչորս տարի անբարբառ անչուր մնա-
ցած ձայնը հնչեցուց թէ « Աղ եմ » : Գուրա հա-
նեցին զինքը , մեկէն բզբաած ու մըլտաած հա-
գուսանները փոխեցին , սեպեալ մարմինը լուացին
ու մաքրեցին . երբոր Աշղարշապատ կը բերէին ,
թագաւորն ու հարուածեալ նախարարները սրբ-
բոյն Գրիգորի գէմն ելան և բժշկութիւն կը խնդ-
րէին . սուրբն Գրիգոր հոն մեկէն աղօթքի կեցաւ
և զամենքն ալ իրենց ախտերէն բժշկեց : Անկէ ա-
ռաջ երթալով գնաց Հոխոխիսեան կուսանաց նա-
հատակութեան տեղը . անոնց սուրբ մարմինները
գիպակներով պատեց որ ինն օր բացթեաց մնա-
ցեր էին ստանց ապականելու : Այնքանն օր միա-
կերպ ամենուն քրիստոնէական կրօնքը քարոզեց ,
ու անկէ ետքը ան սուրբ կուսանաց համար մա-
տուաներ շինել տուաւ , որոնց համար Տրդատ ան-
ձամբ լեռնէն մեծամեծ քարեր կը բերէր . իսկ Աշ-
խէն արիկինն ու Խոսրովիգուխա հող և ուրիշ նիւ-
թեր կը կրէին :

Աս բաներս լինցընէն վերջը՝ նորէն սուրբն
Գրիգոր աղօթքի կեցաւ հարուածեալներուն հա-
մար որ բոլորովին բժշկուեցան . որովհետեւ առջի
անգամուն զգաստացեր էին , իսկ երկրորդ անգա-

մուն մարմիններնուն այլանդակութիւններն ալ
անցան : Ետքը սուրբն Գրիգոր ու Տրդատ գացին
միասուն մեհեաններն ու հուսքերը կործանեցին ,
և ամէն տեղ քրիստոնէութիւնը հաստատեցին : և
սուրբն Գրիգոր Կեսարիա երթալով Ղևնդիոս
պատրիարքէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ :

Երբոր Կեսարիայէն ետ կը գաճար , Դեմետր ,
Գիսանէ և ուրիշ շատ շատուածներու կուստուն
ները կործանեց . և Վաղարշապատ գալով միտակց
զՏրդատ , որ Յովհաննէս կոչուեցաւ : Վերջը շի-
նեցին Էջմիածնայ տաճարը և ուրիշ շատ եկեղե-
ցիներ :

6 . Մն միջոցներուն Հոովմայեցւոց Կոստանդիա-
նոս թագաւորն ալ սրբոյն Սեղբեսարոսի ձեռքո-
վք քրիստոնէայ եղած ըլլալով , Տրդատ և սուրբն
Գրիգոր Լուսաւորիչ Հոովմ գնացին խնդակցու-
թեան համար . հոն շատ պատիւ գտան երկուքն
ալ Կոստանդիանոս թագաւորէն և Սեղբեսարոս
պապէն , ու մէջերնին սիրոյ և բարեկամութեան
գաւթիք հաստատեցին զրով . ետքը սուրբն Սեղ-
բեսարոս Գրիգոր Լուսաւորչին աթոռը պատրիար-
քական աթոռ անուանեց պատուոյ համար :

7 . Տրդատայ իր թագաւորութենէն հեռանալը
լսելով Շապուհ Պարսից թագաւորը , յարմար ա-
տեն սեպեց հայերէն վրէժը անելու . անոր հա-
մար շատ զօրք ժողովեց ամէն կողմէն , և Հիւսիսային
աղբերը գրգռեց որ իրեն հետ մեկտեղ Հայաստա-
նի վրայ վազեն : Տրդատ հազիւ թէ Հոովմէն դար-
ձաւ , անսաւ որ ամէն զիաց պաշարեր են Հիւսի-
սային աղբերը , որով աւանց աղէկ մը պատրաս-

6 . Տրդատ ու Գրիգոր Լուսաւորիչ ինչո՞ւ Հը-
ոովմ գացին .

7 . Տրդատայ Հայաստանէն հեռանալը ինչ գէշ
հետեանք ունեցաւ .

առեւելու հարկագրեցաւ պատերազմի ելլելու, և յազմեց Ահիւթացուց Գեղական զօրավարին որ քաջութեան կողմանէ շատ անուանի էր: Երկրորդ անգամուն պատերազմելով Գեղականն ալ սպաննեց, և այնպէս ուժով իջեցուց թուրք որ մէկ հարուածով երկու կտոր ըրաւ զօրավարը ձիովը հանդերձ:

Տրգասա Հիւսիսային ազգերը վանեւին վերջը շատ պատերազմներ ալ ըրաւ Շապուհին հետ ու միշտ յազմող գանուեցաւ, ետքը հաշտութիւն ըրաւ հետք ու խաղաղութեամբ թագաւորեց:

8. Ինչպէս որ յայտնի է՝ բոլոր ան պատերազմներուն մէջ մեծ գործողութիւն ընողը Տրգասա էր, որուն քաջութիւնը շատ բանակներու տեղ կը բռնէր - և ինչպէս որ պատմութենէն յայտնի է՝ իրեն պէս կարիճ մարդ խիստ քիչ տեսնուեր է աշխարհքիս մէջ - բայց աւելի զարմանալին աս է որ այսպիսի թագաւոր մը քրիստոնեայ ըլլալէն վերջը սքանչելի բարեպաշտութեամբ մը զարգարուեցաւ, այնչափ որ անուղղայ և զեղծ նախարարները համարձակ կը խրատեր որ հեթանոսական մտլութիւններէն ետ կենան: Բայց որովհետեւ ծանր է ճշմարտութեան ձայնին մտիկ ընելը, անոնք ոչ միայն չզգաստացան, այլ նաեւ Տրգասայ գէժ աւելութիւննին աւելցաւ, որով Տրգասա ալ զիրենք խրատելէն ձանձրացած՝ թագաւորութիւնը թողուց և Ղուսաւորչայ բնակամ այրը քաշուեցաւ: Ղախարարները քանի մը անգամ կանչեցին զինքը որ գայ նորէն թագաւորութիւնը ձեռք առնէ. բայց երբոր Տրգասա յանձն չառաւ, թունաւորելով մեաւոյն զինքը յիսունըվեց տարի թագաւորէն վերջը, ու թաւներհինգ տարուան (341):

8. Տրգասա ինչո՞ւ թագաւորութիւնը թողուց աւանձնացաւ ու ինչպէս մեռաւ -

9. Տրգատայ անսարսեղի ուժին հեա զարմա, նալի է հոգւոյն զօրեղութիւնը, անընկճելի արիութեան հեա հաւատքն ու ջերմեամանդն բարեպաշտութիւնը. ահեղ և սրտակառելի գեմբին հեաներոզամիա զիջողութիւնն ու հեղաբարոյութիւնը, քաջ սրտերազմող բարուցը հեա բարեկարգութիւնն ու շինութիւն սիրող հոգին. վեհանձնութեան հեա վեհ խոնարհամտութիւնը, և ուրիշ ասանց նման գեղեցիկ առաքինութիւններ: Կարենացին ալ աեանեղով որ Տրգատայ վայելուչ ու խրաւացի գովեսար համառօտ սրամտութեան մը մէջ ամբողջ բովանդակելը շատ գժուարին է, այսպէս կը ջանայ արգարացընել ինք զինքը, կամ թէ ասնձեղ իր եռանդուն փափաքը զՏրգատ գովելու. « Պատմութեանց, կ'ըսէ, և ոչ գովեստից է ժամանակա »:

10. Որչափ որ հայրենասիրի մը սիրտը ուրախութեամբ կը լեցուի Տրգատայ և ուրիշ իրեն պէս առաքինազարգ թագաւորներ ունենալնուս վրայ, որ մեր արքունական թագին վրայ մէյակ անգինն ու անգիւս ահուճք եղան, նոյնչափ ալ ան ուրախութեան վրայ սգաւոր քող մը կը ծածկուի՝ երբոր յիշէ թէ այսպիսի ամենայն սրտակառանաց ու սիրոյ արժանի թագաւոր մը անսնկ վերջ ունեցեր է քանի մը անկարգ մարդկանց ստաճառաւ. քանի մը կ'ըսեմ, վասն զի անկարելի է որ բոլոր ազգը միաբանած ըլլայ սա գործողութեանս մէջ, որովհետեւ շատ բարեպաշտ մարդիկ ու նախարարներ ալ կային որ թագաւորին գեղեցիկ սեղբանցը

9. Տրգատ իր զօրաւոր ուժէն գուրս ուրիշ ինչ կատարելութիւններ ու բարեմասնութիւններ ալ ունէր.

10. Տրգատայ մահը ինչէն աւելի ցաւալի է հայրենասիրի մը սրտին.

մասնակից ու գործադիր էին . բայց ամեն ոք գե-
ղերուն չարութիւնը ան դիպուածին մէջ ալ ար-
գարներուն քաղցրութեամբը զեղծաւ , որով և ան
ստակալի ոճիրը գործեցին՝ իրենց անձանց յախ-
տենական նախասինք և ազգին անդարմանելի վը-
նաս : Ար իրաւ է որ ամէն ազգի մէջ ալ քիչ կամ
չատ թաղաւորներ և իշխաններ զոհ եղած են հաւա-
տոց համար . և կամ մեծ ամեծաց շար կամբք չկա-
տարելուն պատճառաւ . ուստի ասոր նման քանի
մը դիպուածի համար սեպք չէ ազգը նախատել և
ուրիշ ազգերէն աւելի վար ու անարգ սեպել , և
կամ առանձնականաց պակասութիւնը ընդհա-
նուրի տալով քոչոր ազգը ազգատեաց , տիրա-
տեաց , անօրէն կոչել . բայց փափաքելի էր որ մեր
ազգին խաղաղասէր ու խոհեմ կառավարութեանց
պատմութեանը մէջ այսպիսի պարտաւելի դի-
պուածներ ամենեկին չգտնուէին :

ԴԱՍ ԺԸ .

Խոսարով Բ . Տիրան , Արչակ Բ :

1 • Արովհեան Տրդատայ որդին Խոսարով երկրորդ
տկար և թոյլ մարդ էր , չկրցաւ մէկէն թաղաւո-
րութիւնը ձեռք առնել , ու իրեք տարիի շափ թա-
ղաւորական աթոռը պարտապ մնաց , որով շատ
գեղ հեռականքներու պատճառ եղաւ : Վասն զի ո-
մանք քրիստոնէութենէ թուլնալով ուղեցին լու-
սաւորչաց թողները սպաննել որպէս զի ուղածնին

1 • Տրդատայ մահուանէն ետքը թաղաւորական
աթոռին պարտապ մնալը ինչ գեղ հեռականքներ ու-
նեցաւ .

ընեն: Ասով սուրբ Արիստակէսը՝ որ Վուսաորչայ կրտսեր որդին էր՝ զիրենք յանդիմանելուն համար՝ սարաննեցին. զսուրբն Գրիգորիս որ Ազուանից կաթուղիկոս և Վուսաորչայ թոռն էր՝ ձիու պոչի կապած ժողջընելով մեռցուցին, նոյնպէս նաև ըզսուրբն Աբթանէսը կ'ուզէին մեռցընել, բայց անիկայ մէջերնէն անմիտա անցնելով ազատեցաւ:

Բաղաքական սիճակն ալ հոգևորին պէս մեծ խեղճութեան մէջ էր. վասն զի մէկ քանի խոսքարար և փրատակեր նախարարներ ասան դաննելով սկսան իրարու հետ կռուիլ պատուոյ և իշխանութեան համար, որով իրարու ջեղն ալ բողորովին ջնջեցին, ինչպէս Բզնունիք, Մանաւաղեանք և Արզունիք ըսուած նախարարութիւնները. Ազուանք ապստամբեցան, և Արշակունեաց ջեղէն Մանաւորուկ անունով մէկը ինքնազլուխ թագաւորեց՝ Պարսից Շապուհ թագաւորին օգնութեամբը. նոյնպէս նաև Աղձնեաց բզեալքը Բակուր ապրստամբեցաւ Պարսից օգնականութեամբը:

2. Նախարարներէն շատը տեսնելով աս անկարգութիւնները, և թէ ասանց վախճանը ազգին կործանումն պիտի ըլլայ, միարանեցան մէջերնին և սրբոյն Աբթանէսի քովը ժողովուելով, խորհուրդ ըրին որ Կոստանդ կայսեր օգնութեամբ թագաւոր զնեն իրենց՝ զխոսքով Բ. Աս բանիս համար նախարարներէն երկու հոգի զգիեցին Կոստանդնուպոլիս, որ երթան Կոստանդ կայսեր հաճութիւնը առնեն խոսքովը թագաւորեցընելու համար: Կայսրը շատ հաւնեցաւ Հայոց հաւատարմութեանը ու մէկէն Մախիդրոս անունով իր պալատան հազարապետը շատ զօրքով խաւրեց, որ եկաւ խոսքովը թագաւորեցուց Հայոց վրայ, ու

2. խոսքով Բ. ինչպէս թագաւորեց ու Պարսիկք ինչպէս յաղթուեցան Հայոցմէ.

ինքը նորէն Պօլիս զարձաւ : Գլխաւոր նախարարները միաբանելով մէջերնին՝ ամէն բան կարգի գրին, ապառաժները ջնջեցին և Եկեղեցական բարեկարգութիւններուն ալ հոգ ունեցան : Բայց որովհետև Խոսրով բնութեամբ տկար և անկարող մարդ էր, ինչպէս որ ըսինք, Շապուհ և Սանատրուկ որ արդէն զիսեին, գրգռեցին Հիւսիսային ազգերը ու անոնց հետ Հայաստանի վրայ սկսան վազել : Խոսրով նախ ինքը անձամբ պատերազմի գնաց ու չարաչար յաղթուեցաւ, անանկ որ թշնամիները ինչուան Վաղարշապատ հասան. ան միջոցին վրայ հասան Վահան և Բագարատ երեւելի սպարապետները, և մեծ ջարդ տալով վանեցին թշնամիները :

3. Խոսրով ինը տարի թագաւորելէն վերջը մեռաւ. տեղը յաջորդեց իր որդին Տիրան, որ հորմէն աւելի թոյլ եղաւ, և ամէն տեսակ անզգամութիւն ըրաւ : Սրբոյն Վրթանեսի հետ մեկտեղ Պօլիս գնաց ու թագաւոր պատկուեցաւ Կոստանդկայսերէն. և երբոր ինքը գեռ հոն էր՝ Շապուհ իր Դերսէհ եղբայրը խաւրեց որ երթայ Հայաստանի տիրէ : Վրչաւ իր կամսարական, որուն յանձնուած էր Հայաստանի պահպանութիւնը, արիչ նախարարներու հետ մեկտեղ զիմացը ելաւ ու ջրուեց բոլոր Պարսից բանակը, թէպէտ և Հայերէն ալ մեծամեծ նախարարներ մեռան : Տիրան թագաւոր պատկուած Հայաստան զարձաւ, բայց իրեն անկարգ գործողութիւններովը անուճը և արքունական ծիրանին արատաւորեց : Ընդգէմ իրեն զաշանցը և երգումը որ ըրեր էր Շապուհի հետ՝ Յուլիանոս ուրացողին օգնեց որ Պարսից զէմ պատերազմի կ'երթար. և անոր խաւրած պատկերը՝ ու

3. Տիրան ո՞վ է ու ինչ անգթութիւններ ըրաւ :

րուն վրայ Գուլիանոսի գեները քաջուած էր, երբոր կ'ուզէր մայր եկեղեցւոյն մէջ կախել, սուրբն Գուսիկ ան պատկերը ձեռքէն յափշտակեց ու տաքին տակը աննելով կտոր կտոր ըրաւ: Բայց Տիրան փոխանակ խրատուելու այնչափ ծեծել տրւաւ սուրբ հայրապետը՝ որ ծեծի ասին մեռաւ. նոյնպէս խոզել տուաւ նաև Գանիել ասորի սուրբ ծերունին՝ զինքը խրատելուն համար: Աս անգթութիւններս ընելէն վերջս անով տեղով ջնջեց Ռըշտունեաց յեղը. վասն զի Տիրանին հրամանովք Զօրայ Ռշտունեաց նահապետը որ Գուլիանոսին օգնութիւն գնացեր էր մասնաւոր գնդով, տեսնելով Գուլիանոսի անօրէնութիւնները բոլոր զօրքովք փախեր էր քովէն. Տիրան ալ Գուլիանոսին կամքը կատարելու համար՝ ջնջել տուաւ Ռշտունեաց նախարարութիւնը, և միայն մէկ ազգայ մը ազատեցաւ որ գայեակները փախուցին:

4. Երբոր Գուլիանոս Պարսկաստան պատերազմի մէջ մերաւորուելով սասակեցաւ, Շապուհ Տիրանայ ըրած խարդախութեան վրէժն ուզեց առնուլ. ուստի բարեկամութիւն ձեացրնելով կանչեց զինքը Պարսկաստան ու աշուրները կուրցուց՝ սասանըմէկ տարի թագաւորելէն վերջս: Շապուհ վախնալով որ չըլլայ թէ հայերը սասակի օրգողին Տիրանայ աչքերը փորելուն համար, մէկէն անօր Արշակ օրգին հօրը տեղը թագաւոր դրաւ, որ ան ալ հօրը պէս և աւելի անկարգ և անօրէն կեանք ունեցաւ (363):

5. Թեպէս և առ միջոցներուս ետեկ ետե անպիտան թագաւորներ ունեցեր ենք, բայց Աս-

4. Տիրան ինչ մահ ունեցաւ ու իրեն ո՞վ յաշորդեց:

5. Ո՞վ է Մեծն Ներսէս ու ինչ կարգաւորութիւններ ըրաւ Հայաստանի մէջ:

առած բոլորովին երես չձգելով Հայաստանը՝ ան անզգամ թագաւորներուն տեղը այնպիսի հայրապետներ առաւ որ թագաւորաց ընելու օգուտներն ու բարեկարգութիւնները իրենք կ'ընէին . ազգին խեղճութեանը կ'օգնէին և վշտակից կ'ըլլային . ըլլալու շարքերները ըստ կարի կը խափանէին , զեղծմունքներն ու անկարգութիւնները կ'արգիլէին , վերջապէս ազգին հոգեւոր և մարմնաւոր պիտայքը կը հոգային . ինչուան նաև թշնամեաց բարկութիւնը իջեցուցին՝ միջնորդ ըլլալով Հայոց թագաւորին և օտար թագաւորաց մէջ : Ասուրք հայրապետաց մէջ գլխաւորն է Մեծն Ներսէս որ անթիւ օգտակար բարեկարգութիւնները առ Հայաստանի մէջ , ազբատանոցներ , հիւանդանոցներ և դպրատուններ բացաւ , և անոնց համեմատ կարգեր դրաւ . իսկ Արշակ ընդ հակառակն անփոյթ ըլլալով աս բարեկարգութիւններու արգելք ալ եղաւ անոնց գործադրութեանը , որով մեծամեծ վնասներու և գրեթէ թագաւորութեան կործանմանը պատճառ եղաւ . ուստի չենք կրնար չափառաւ որ այսպիսի անպիտան թագաւորներ յաջորդաբար Հայոց զահը ելլելով պղծեցին զանկից ու խորխալեցին որ այնչափ քաջ , առաքինի և խելացի թագաւորներով անուանի եղեր էր ու ազգին ուրախութեանը պատճառ :

6 . Երբոր Ալաղենախանոս զեասպան խաւրեց Արշակայ որ Պարսից հարկ տալը զազրեցրնէ , Արշակ զեասպանները նախատելով վարնտեց , և հարկ տալը զազրեցուց : Աս բանիս վրայ սաստիկ բարկացաւ Ալաղենախանոս , ու Արշակին Տրդատ եղբայրը՝ որ քովը պատանդ կեցած էր՝ մեացրնել ալ .

6 . Ալաղենախանոս Արշակայ զէմ ունեցած բարկութենէն ինչպէս զիջաւ ու ինչէն սկսաւ Տիրիթ Գնեւայ վրայ նախանձիլ .

ուս, ու Թէոզոս սպարապետը շատ զօրքով Ար-
շակայ վրայ խաւրեց: Արշակ աս բանէս սարսա-
փած՝ ազաշէց սրբոյն Ներսեսի որ միջնորդ ըլլայ
Թէոզոսին ու կայսեր բարկութիւնը իջեցընէ: Եր-
բոր լսեց Ալազնեախանոս սրբոյն Ներսեսի միջնոր-
դութիւնը՝ իջաւ բարկութիւնը և փրատ մը չբրաւ
Արշակայ: Իսկ Տրգասայ սրբոյն Գնեղին հիւ-
սաաստութեան սրախու աուաւ շատ ալ ընծաներ՝
իր հօրը անիրաւ տեղը սպաննուելուն համար: Աս
բանիս սասախկ նախանձեցաւ Տիրիթ Տիրանին
Թողը՝ ու առթի մը կ'սպասէր որ աս իրեն նա-
խանձաւ ատելութիւնը յազեցընէ: Երբոր Գնեղ
իր պապուն քովը գնաց որ Կուաշ աւանը կը նըս-
տէր, սրասմեց իր հօրը Տրգասին Թշուառ մահը՝
որուն վրայ խիստ շատ ցաւեցաւ Տիրան: և ուղե-
լով իր Թողը մխիթարել, որով և ինքն ալ մխի-
թարուիլ, բոլոր իրեն ունեցած Ժառանգութիւն-
ներն ու կալուածներն ալ Գնեղին աուաւ: ասով
աւելի զայրացաւ Տիրիթին նախանձը, մանաւանդ
երբոր Փառանձեմն ալ իրեն կին անեղով Թագա-
ւորափայել հարսնիք ըրաւ, որով շատ մեծամեծ-
ներու հաճոյ ըլլալով անոնց սիրելի եղաւ: Տիրի-
թին համար շատ զօրաւոր պատճառ եղան ասոնց
Գնեղայ կեանքը կարճեցընելու համար, ուստի
Աարգան անունով Մատիկանեան նախարարի մը
հետ միացած՝ Գնեղին վրայ ամբաստանութիւն ը-
րին Արշակայ առջև Թէ Գնեղ կ'ուզէ Թագաւորել
Հայոց վրայ, անոր համար ետևէ է նախարարնե-
րուն սիրաբը իրեն քաշելու որուն համար ամենայն
լանք կ'ընէ կ'ըսէին: Արշակ որ առթի կ'սպա-
սէր, Այրարատայ գաւառէն վանաել աուաւ Գնե-
ղ: աս բանիս խիստ նեղանալով Տիրան յանդի-
մանութեան Թուղթ մը գրեց Արշակայ: Արշակ
ալ անզգամութեամբ ծածուկ խոզել աուաւ Տի-
րանը:

7. Ազգամ մը Արշակ Ա Վարդանայ ու Տիրխիթի հետ Ծաղկոսան ըսուած ընտան քովերը որսի ելեր էր. երբոր Արշակ կը ստործէր որսերուն ու տեղւոյն գեղեցկութեանը: Տիրխիթ ու Վարդան սկըսան վար զարնել, ըսելով թէ Գնելին որսի անտառին քով բան մը չէ: Մեկէն Արշակայ նախանձը շարժեցաւ և ուզեց հոն որսի երթալ. շուտով թուզթ մը գրեց որ ամէն բան պատրաստ ըլլայ, ու ինքն ալ անգանդազ ետեկն ճամբայ ելաւ որ եթէ պատրաստ չգտնայ զինքը, իբրև յանցաւոր սպաննել տայ. երբոր եկաւ ու տեսաւ որ ամէն բան պատրաստ է, ձայն չկրցաւ հանել, բայց նախանձը առնլի շարժելով ծածուկ ապրապրեց Վարդանայ որ նետով սպաննէ. ան ալ մէկէն²⁰ կատարեց. ետքը իրեքը մէկէն սկսան լաց ու ողբ ձեռցընել իբրև թէ զխաբուածով եղած ըլլայ. վերջը մեծահանգէս յուզարկաւորութիւն ըրին զուրիշ ները խորելու համար, բայց անողուս. վասն զի ամէնքը իմացան ու սուրբ Ներսէս խտախ յանգիմանեց Արշակը և նզովեց զինքը ու իրեն գործակիցները առ անզգամութեան համար:

8. Շապուհ Եանայ վրայ պատերազմի երթալու ատեն կերակուր ուզեց Տիգրանակերտ քաղաքին ընակիչներէն. անոնք զոները գոցեցին ու արհամարհեցին զինքը. ուստի Շապուհ Եանայ հետ ունեցած պատերազմը ընկընելով ետ գանձալու ատենը՝ առաւ Տիգրանակերտը ու մեծ ջարդ տըլաւ քաղաքացւոց, մնացածներն ալ գերի ըրաւ:

9. Նոյն միջոցներուն Արշակ ալ քաղաք մը չէնեց իր անզգամութեանը յիշատակ, և անունը Աբ

7. Գնել ինչպէս մեաւս.

8. Տիգրանակերտը ինչպէս անուուցաւ.

9. Արշակուան քաղաքին վրայ ինչ գիտելիք կայ.

չակաւան գրաւ . և որպէս զի քաղաքին բնակիչները շատնան՝ հրաման հանեց որ և՛ծէ յանցաւոր մը փախչի հոն , պատժէ ազատ ըլլայ . սա պատճառաւ ամէն տեսակ անզգամներով լեցուեցաւ քաղաքը՝ ուստի բոլոր նախարարները միաբան բազմեցին Արշակայ որ սա բանին գարման ընէ . բայց երբոր անիկայ մասի չբրաւ , օգնութիւն կանչեցին Շապուհ Պարսից թագաւորը որ գայ իրենց հետ միաբանի Արշակաւանը կործանելու համար . Արշակ երբոր լսեց սա բանս՝ Ալբայ ապաւինեցաւ : Ան միջոցին որ Արշակ Ալբայուցմէ օգնութիւն ասնելու գնացեր էր , նախարարները տիրեցին Արշակաւանին ու բոլոր մէջի բնակիչքը թրէ անցուցին բաց ՚ի կաթընկեր աղոցմէ՝ որ սրբոյն Ներսեսի ազաւանքովը ազատեցան :

Արշակ Ալբայուց օգնութեամբը նախարարներուն վրայ պատերազմի ելաւ ու երկու տարիի շափ պատերազմելով՝ երկու կողմանէ ալ շատ մարդիկ չարգուեցան : Ահա այսպիսի անպիտան թագաւորի մը ըրած յիշատակի արժանի գործողութիւնները ասոնք են , որ բոլոր խառնութեանց , անիրաւութեանց պատճառ եղաւ :

10 . Երբոր Արշակ նախարարաց հետ կը պատերազմէր , Վաղէս կայսրն ալ լսած ըլլալով որ Արշակ օգներ է Շապուհին , նորէն թէնողոսը շատ զօրքով վրան խաւրեց : Արշակ երբոր տեսաւ թէնողոսի գալը բոլորովին անձրիեցաւ և նորէն սուրբ Ներսեսի ապաւինեցաւ որ սա բաներուս գարման տանի . ան սքանչելի ու հայրենասէր անձն ալ զընաց շատ դժուարութեամբ հաշտեցուց նախարարները թագաւորին հետ , և վերջը թէնողոսի բարկութիւնը իջեցուց պատանգ ապրով Արշակայ Պատգ

10 . Ս . Ներսէս ինչպէս արտորուեցաւ , ու Արշակ ինչ վերջ տնեցաւ .

որզին - իսկ ինքը սուրբն Ներսէս Թեոզոստի խորհրդովը Սասնիցոյ գնաց Վաղեսին բարեութիւնն ալ հանգարտեցրնելու համար . բայց Վաղես աբխոսեան ըլլալով մեկէն սուրբ Ներսէսը քշել արւաւ : Արշակ երբոր լսեց սրբոյն Ներսէսի քշուիլը նորէն իր առջի ընթացքը սկսաւ բռնել . քանի մը նախարարներ անիրաւ տեղը սպաննել տուաւ , կամսարականաց ցեղը բոլորովին ջնջեց , բայց 'ի Սպանդարատէն որ իր ազոցմովը փախչելով ազատեցաւ : Նախարարները առ քաներս տեսնելով առթի մը կ'սպասէին որ Արշակայ շարեացը վրէժը հանեն . ուստի նոյն միջոցներուն Շապուհ պատերազմ բացած ըլլալով Արշակայ գէմ , նախարարները միաբանեցան Պարսից հեռ ու այնչափ նեղը խոթեցին զԱրշակը որ անձնատուր եղաւ , ու Շապուհ ալ զինքը Այցուշ ըսուած բերզը խաւրեց (380) :

11 . Հազիւ թէ ազգը Արշակայ բռնութիւններէն խալըսեցաւ , ահա անոր տեղը ելաւ ուրիշ ազգատեաց մը՝ ազգին հինք քանդող ու փրասակար , որ է Մերուժան Արծրունեաց նախարարը . ասիկայ սնափառութեամբ կ'ուզէր Հայոց թագաւոր ըլլալ . սասով հաւատքը ուրացաւ և Պարսից կրօնքը ընդունեցաւ . որպէս զի անոնց օգնութեամբքը թագաւորէ . ուստի Արշակայ բռնութիւնն վերջը ասիկայ շատ զօրքով Հայաստանի վրայ եկաւ , ու մեծամեծ փրասներ հասցուց ազգին , շատ քաղաքներ աւրեց աւրջարկեց ու անապատ դարձուց : Արշակ առ քաներս լսելով և յուսահատելով իր վիճակէն , անգամ մը կերակուր ուտելու ատեն զարկաւ մեռցուց ինք զինքը : Այսպիսի Թշուառութեամբ կորսուեցաւ գնաց , առանց բարի յիշատակ մը թողլու՝ որուն մահուանը վրայ և ոչ

մէկը լացաւ . ուրեմն տես թէ որչափ տարբերու-
թիւն կայ ան թագաւորին մէջ որ մեռնելովք բա-
լար աշխարհք սուգի և ողբի մէջ կը ձգէ , և անոր՝
որուն մահուանը վրայ կ'ուրախանան աւելի քան
թէ կը տրամին .

ԴԱՍ ԺԹ .

Մերուժան Արծրունիին ըրած անզգամուտրիւն-
ներն ու մահը . Պատգայ և Վարազդատայ
բազաւորելը :

1 . Հապուհ ուզելով որ Հայաստանի մէջ նա-
րէն կատարաւառութիւն խոթէ , խոտաացաւ Մերու-
ժան Արծրունիին որ եթէ կարենայ առաջ տանիչ
աս բանս , զինքը Հայոց թագաւոր կը զնէ . ուստի
բազմութեամբ զօրաց և շատ մտգերով Հայաստան
խաւրեց որ երթայ խոտաացածը արգեամէք 'ի գործ
զնէ : Մերուժան բանութեամբ Հայաստան մտաւ
և շատ մտրգ նահապահեց , եկեղեցիները կատաւն
չինեց . բոլոր Յունարէն գրով գանուած գրքերը
այրեց և արգիլեց որ Յունարէն շարվին : Աս բա-
նէրս լսելով սուրբ Ներսէս որ պարտանքին գտա-
նալով զեռ Ստամբոլ էր , աղաչեց Թէոփոս կայ-
սեր որ Պատր թագաւոր զնէ Հայոց վրայ և Հայաս-
տան խաւրէ , որպէս զի քրիստոնէութիւնը պաշտ-
պանէ Պարսից և Մերուժանայ զէմ . Թէոփոս ալ
զիջանելով սրբոյն Ներսէսի աղաչանացը կատարեց
իրեն խնդիրքը օգնական տալով Տերենտիանոս զօ-

1 . Ի՞նչպէս կրցաւ Մերուժան բանութեամբ
Հայաստան մտնալ ու ի՞նչ փեսաներ ըրաւ .

բաւարը: Մերուժան ըսելով Պապայ գալը մէկէն Պարսկաստան փախաւ հրաման տալով որ նախաբարաց կանայք բերդերէն կախեն. աս երբոր տեսան նախարարները կատղեցան ու բերդերուն վերայ վազելով տիրեցին անոնց ու մէջի Պարսիկ պահապանները ջարդեցին:

2. Մերուժան նորէն այլ և այլ ազգերէ զօրք ժողոված վազեց Հայաստանի վրայ. նոյնպէս նաև Տերենտիանոս ալ շատ զօրք ու շատ պատերազմական գործիքներ բերել տուաւ Ազգէ զօրավարին հետ մէկտեղ Պօլսէն: Երբոր պատերազմը պիտի սկսէր, սուրբ Ներսէս Նպաս ընան վրայ ելաւ ու բաղկասարած սկսաւ աղօթել պատերազմին յաջողութեանը համար. և որովհետև արևը Հայոց բանակին զիմացէն էր և զերեւիք կը նեղէր՝ սրբոյն աղօթքովը ամպ մը եկաւ ու արևը ծածկեց. նոյնպէս նաև հով մը ելլելով Պարսից նեաւերը իրենց վրայ կը գարձըներ: Ասով սիրա առած Հայերը սկսան կատաղաբար ջարդել Պարսիկները, ու Սպանգարաւս Կամսարականը մէկ զարնելով սպաննեց Ղեկաց Էրզիր Թաղաւորը որ արգէն առիւծի պէս մարդ մը ըլլալով, և շորս զինալ կարիճ զինուորներով պաշարուած անհնարին ջարդ կուտար Հայոց բանակին: Նոյնպէս նաև Մուշեղ Մամիկոնեանը Պարսից Կարէն քաջ սպարապետը սպաննեց ու բիշ շատ քաջութիւններ ընելով:

3. Պատերազմին տարցած միջոցները Մերուժանին ձին վերաւորուելով չիրցաւ Պարսից զօրաց հետ փախչել ու ետև մնաց. աս բանս անսնելով Սրբաւոր Բաղրատունին ետևէն վազեց ու հասնելով

2. Հայերը ինչպէս հրաշքով և իրենց քաջասիրա արիւթեանքը յաղթեցին Պարսից.

3. Մերուժանը ո՞վ սպաննեց.

բանեց ու կ'ուզէր բանակը բերել. բայց երբոր մը
առանկ որ էթէ սուրբ Ներսէս իմանայ զԹաղով
վրան կ'արձրիկ զինքը, ուզեց հոն սպաննել. և
չորս զին նայելով անտառ որ հոն մտակիները վրա-
նարնակ գեշուներ կրակ վառած միս կը խորովնեն
չամփուրով. ուստի քովերնին մտաննալով կտր-
ցուց շամբուրը ու կրակի պէս տաքցընելով Մե-
րուժանայ գլուխը դրաւ՝ ըսելով. « Արովհետեւ
կ'ուզէիր Հայոց Թագաւոր ըլլալ, ահա ես կը պա-
կեմ զքեզ իմ հայրենական իշխանութեամբս » ու
այնպէսով սատկեցաւ : Ահա աս է աղջատեաց,
փառամուլ ու շահասէր մարդուն վախճանը, որուն
ասկեց աւելի զեղեցիկ փոխարեն շէր կրնար գրա-
նուիլ իր անթիւ շարեացը համար, և ոչ ասկէ ա-
ւելի արժանազայել Թագով պսակուիլ (381) :

4. Երբոր այսպիսի փառաւոր յաղթութեամբ
լննցաւ պատերազմը, Պապ շատ ընծաներով Յու-
նաց զօրքը ետ խաւրեց, և Յերենտիանոսի ալ շատ
պարգևներ տալով, Հայաստանի մէջ բնակեցուց :
Իսկ սուրբ Ներսէս՝ նախարարները և Թագաւորը
մէկ անգ ժողվելով զամենքը յորգօրեց որ աս-
տուածպաշտութեամբ կեանքերնին անցընեն, Թա-
գաւորին հաւատարիմ ըլլան, ու Թագաւորն ալ
զիրենք հօր պէս արգարութեամբ խնամէ ու սպա-
սանէ : Այսպէսով քիչ մը խաղաղացաւ աշխարհ-
քը և Պապ քանի մը նախարարներուն իրենց քա-
ղութեանցը համեմատ պարգևներ ու պատիւներ
տուաւ :

5. Աս խաղաղութեան զինադադարումը ափսոս
որ երկար չտևեց, վասն զի Պապ Թեոփա և ար-

4. Աս պատերազմէս ետքը ինչպէս քիչ մը ա-
տեն խաղաղացաւ Հայաստան .

5. Պապ ինչու Թունաւորեց զսուրբ Ներսէս ու
ինքը ինչ մահ ունեցաւ .

տաքուստ լաւ կը ձեանար . բայց ծածուկ անկարգ
ու անառակ կեանք կ'անցընէր . սա բաներուս հա-
մար սուրբն՝ Կերէս միշտ կը խրատէր զինքը . բայց
Պապ ձանձրանալով անոր սքանչելի խրատներէն
ծածուկ թոյն տուաւ ու զրկեց զՀայաստան ան
հրաշալի և սքանչելի հօրէն , որուն հայրագութ-
ի նաանցը կը վկայէին մարգկանց հետ նաև անբան
անասուններն և անշունչ արարածները : Պապ սա
անօրէնութիւնս ընելէն ետքը իրեն փառերայք և
ամբարտաւանութեամբը կուրցած ուղեց Թէոզոս
կայսրէն սպասամբիլ . ուստի Տէրեկնախանոսը Հայ-
աստանէն վճռեց ու սկսաւ պատերազմի պատ-
րաստուիլ . բայց Թէոզոս շատ զօրք և հրաման
խաւրեց Տէրեկնախանոսին որ Պապայ հետ պատե-
րազմի , որ բռնեց զինքը և շղթաներով կապած Պօ-
լիս Թէոզոսին զխմացը հանեց : Թէոզոս ալ հրա-
մայեց որ սակրով գլուխը կտրեն իրեն շարու-
թեանցը փոխարէն , իրեք տարի թագաւորելէն
վերջը :

6. Պապայ տեղը Մեծն Թէոզոս Վարազդատ
արշակունի իշխանը Հայոց թագաւոր դրաւ , որն
որ խիստ շատ քաջութիւններ ըրած էր ոչխմայիա-
կան խաղերու մէջ , և ամէն տեղ իրեն քաջութեան
անունը հռչակուած էր : Գլխաւոր քաջութիւննե-
րը որոնք կը պատմէ խորեհրդի նասնք են . Թէաա-
րանի մը մէջ քանի մը առիւծներու գէմ ելլելով
յաղթեց անոնց ու սպաննեց : Անգամ մը երբոր
Ղանգորարտացոց գէմ պատերազմի գացեր էր ,
ինքը մինակ հինգ Ղանգորարտացիի գէմ մենամար-
տութեան ելաւ . հինգն ալ հոն ետեւէ ետեւ սպան-
նեց ու ինքը շինասուեցաւ . զարձեալ ուրիշ ան-
գամ մ' ալ վաղեց կատաղարար բերգի մը վրայ .

7. Վարազդատ ո՞վ է ու ինչ քաջութիւններ
կը պատմուին վրան .

ու այնպիսի արագութեամբ և յաջողութեամբ պատերազմեցաւ որ քանի մը վայրկեանի մէջ բոլոր պարսպին վրայի եղած պահապանները նեւով սպաննեց, որոնք տասներեօթը հոգի էին: Վերջի բայց գրեթէ ամենէն մեծ քաջութիւնը աս եղաւ՝ որ երբոր Թագաւորութիւնը առած Յունաց զօրքով Հայաստան կուգար, ճամբան ստորի աւազակներու հանգիպեցաւ, որոնց ետեւէն վազելով հալածեց զիրենք. անոնք երբոր նեղը մտան, Եփրատ գետէն անցնելով վրայի կամուրջի տեղ զբրուած գերանը գետը ձգեցին: Վարազդատ կատրեցաւ աս բանիս և անանկ ուժով՝ ցտեմկեց գետին վրայէն, որ կարծես թէ սաստիկ բանութեամբ ձրգուած մեծահասոր քարի մը պէս մէկ մաներկրորդի մէջ գետին անգիի կողմը ինկաւ, որուն լայնութիւնը քսանուերկու կանգնաչափ էր. երբոր տեսան աս բանս աւազակները մէկէն զէնքերնին ձգեցին ու անձնատուր եղան: Վարազդատ Թագաւորութիւնը աննեղէն վերջն ալ շատ քաջութիւններով բոլոր Թշնամիները վախցուց. բայց քանի մը տարիէն չկրնարով Յունաց զօրավարներուն ամբարտաւանութեանը զիմանալ ուղեց Յոյներէն ապստամբիչ և Պարսից հարկատու ըլլալ. բայց երբոր իմացաւ Թէոզոս կայսրը Պոլիս կանչեց զինքը. ան ալ յուսալով որ եթէ անձամբ երթայ կրնայ ինքզինքը արգարացընել երաւ գնաց. բայց Թէոզոս առանց երեսն ալ տեսնելու Թուրխ կղզին քշեց, շորս տարի Թագաւորելէն վերջը:

ԳԱՍ Ի.

Արշակ Գ. Վաղարշակ Բ. Խոսրով Գ.

Վասնչապուհ:

1. Թեոգոս անանելով որ Հայոց Թագաւորները կ'ապստամբին իրմէ, մտածեց որ երկու Թագաւոր դնէ, որպէս զի չկարենան մէջերնին միարանելով ապստամբիլ: Աւաթի Պապայ երկու աղաքը Արշակն ու Վաղարշակը Թագաւորեցուց Հայոց վրայ: Արշակ Գուին նստեցաւ ու Վաղարշակ Երիզա, որ տարի մը շԹագաւորած մնաւ: Իմանալով Շապուհ որ Մեծն Թեոգոս մեներ է, ու տեղը Արկաղեոս որդին յաշորգեր է, որ տկար մարդ մըն էր, ուզեց հաշտութիւն ընել որպէս զի Հայաստանին մէկ մասն ալ Պարսից հարկատու ըլլայ. ուստի որոշեցին որ արեւմտեան մասը Յունաց հարկատու ըլլայ և արևելեանը Պարսից. ան պատճառաւ Արշակ, որ արևելեան մասին Թագաւոր էր, չուզեց անհաւատ Պարսից տակն ըլլալ, արեւմտեան կողմը եկաւ, ա՛մտոր Երիզա քաղաքը գրաւ, հեան ալ շատ նախարարներ մեկտեղ եկան՝ իրենց կաշուածները թողլով:

2. Շապուհ իր մասին վրայ Թագաւոր գրաւ

1. Թեոգոս ինչու երկու Թագաւոր գրաւ Հայոց վրայ ու իրեն մեռանելէն ետքը ինչ փոփոխութիւններ ըրին Պարսիկք և Յոյնք Հայաստանի նրկատմամբ .

2. Արշակայ ու Խոսրովու մէջի եղած պատերազմը ինչէն բացուեցաւ .

Խոսքով երբորգը, և Արշակայ հեա գնացող իշխաններուն ալ թուղթ գրեց, յորգորելով որ դասնան գան, և թէ իւրաքանչիւրին իրեն կը գարձընէ առջի ունեցած կալուածները. առ սրաւմառաւ նախարարներէն շատը նորէն ելան գնացին Պարսից մասը՝ բայց ՚ի մէկ քանիէն: Ասանք երթալու առեւննին Արշակայ գանձերն ալ կողոպտեցին՝ Խոսքովու տարին. Արշակ գետարան խրկեց Խոսքովին որ գանձերը ետ գարձընէ. բայց երբոր առնիկայ շտուաւ, պատերազմ բացուելով մէջերնին՝ շատ արիւնհեղութիւն ըլլալէն ետքը Արշակ ստապիկ յաղթուեցաւ և Երզնիկայ գառնալով հիւանդացաւ ու մեռաւ՝ հինգ կամ եօթը տարի թագաւորելէն վերջը:

3. Վայսրը յոյն կոմս մը գրաւ Արշակին տեղը. անոր համար նախարարները բարկանալով Խոսքովին մասը գացին. և Խոսքով խոստանալով կայսեր Յունաց մասին հարկն ալ տալու՝ ան մասին ալ թագաւորութիւնը ինքը առաւ ու բոլոր Հայաստանի տիրեց: Բայց քանի մը նախարարներ մասնաւոր թշնամութիւն ունենալով Խոսքովու հեա, անխեղբութեամբ յարմար առեւնի մը կ'ապստէին որ մնաս մը հասցընեն Խոսքովու. ուստի երբոր Ասպուրակէս կաթուղիկոսին մեռնելէն վերջը մեծն Սահակ Պարթևը կաթուղիկոս գրուեցաւ, գնացին ասանք ամբաստանութիւն ըրին Հապհոյ թէ Հայերը կ'ուզեն ապստամբիլ, և ահա ասոր նշան՝ առանց Պարսից թագաւորէն հրաման առնելու կաթուղիկոս գրին: Հապուհ հաւատալով աս բանին՝ գետարան խրկեց Խոսքովու որ իրեն գայ. բայց Խոսքով յանդիմանեց գետարանները և քանի տեղ շեւակեց Հապհոյ հրամանը: Հապուհ աս բա-

3. Խոսքով ինչու համար Միլուշ բերգը փախուեցաւ, ու ո՞վ են Հաւարշ ու Պարգե:

նիս վրայ շատ նեղացած՝ իր Արատչիր որդին շատ զօրքով հայաստանի վրայ խրկեց: Խոսքով յուսահատած՝ էրա Արատչին գնաց, որ շղթաներով կապեց զինքը ու անգը անոր Առամշապուհ եղբայրը Թագաւոր գրաւ. զսուրբն Սահակ կաթուղիկոսուծենէ ձգեց, և Գաղաւոն նախարարը՝ որ ան առնները խիստ երեւելի էր՝ խարդախութեամբ քօղը կանչելով բռնեց ու շղթայի զարկաւ: Նոյն իրիկունը Գաղաւոնին եղբայրը Շաւարշ և Պարզե Ամատունին եօթը հարիւր կարիճ մարդիկներով գնացին որ Խոսքովն ու Գաղաւոնը ազատեն, բայց դժբաղդութեամբ հնարքնին չյաջողելով հարկադրեցան Պարսից հետ պատերազմելու. իրաւ է որ իրենց քիչուորութեանը համեմատ՝ շատ կոտորածներ ըրին Պարսիկներէն, բայց ախա՛ն որ Շաւարշ մեռաւ, Պարզեն ալ բռնուելով Արատչին գիմացը տարուեցաւ, որ հրամայեց կաշին օխկ հանել. իսկ զԽոսքով Պարսկաստան տանելով Անյուշ բերդը գրաւ և գիմացը կայնեցուց Պարզեին կաշիէ օխկը: Ահա բարբարոսութեան դասն պատուներէն մէկը (332):

4. Առամշապուհ իր եղբորը անգը յաշորդելով, ուսումնասեր ու հանգարտաբարոյ և խահեմ բնութեամբը մեր անուանի Թագաւորներէն մէկը եղաւ, թէպէտ և քաջութեան կողմանէ մասնաւոր բան մը չունի: Ըստ ամենայնի Պարսից հպատակութիւն ջուշքնելով սիրելի եղաւ Պարսից Առամկրրման Թագաւորին, անոր համար Արման ուղելով Առամշապուհին հաճոյական բան մը ընել խոսքովը Անյուշ բերդէն հանեց ու պատուով կը պահէր: Առամշապուհ ասանկ խաղաղութեամբ և հանգարտութեամբ քանուերկու տարի Թագա-

4. Առամշապուհ ինչ կերպով ըրաւ իրեն Թագաւորութիւնը և գլխաւոր արդիւնքը սրն է.

ւորելէն վերջը մեռաւ, իր բարի անունը յիշատակ կանգնելով ազգասիրաց սրտին մէջ, երախտագիտութեան անմահական արձանը :

Վ. Աամէլապէտի գեղեցիկ արգիւնքներէն մէկն է իր ուսումնասէր բարքը, որ Հայաստանի ուսմանց ոսկեղարեան տաճարին ոսկեձոյլ սիւներէն մէկն եղաւ Սահակայ, Մեսրոպայ ու Խարենացոյն հետ : Իր առնէր գտնուեցան մեր գեղեցիկահիւս երկնագարգէ գրերը, իրեն հովանաւորութեամբն ու եռանդեամբը ան գրերուն արգիւնքը երեցաւ, որով այնպիսի սքանչելի գրաւորական ճոխութեան ժառանգորդ եղանք : Վ. Աամէլապետ հ միայն գործակից, քաջալերիչ ու օգնական եղաւ, իսկ մեկաշնոյնք գործի և արգիւնք, որով կ'իմացուի թէ որչափ աւելի երախտագէտ պիտի ըլլանք անոնց որ այսպիսի անհամեմատ բարեաց պատճառ եղան, և առանձինն Հայկական տառից զիւսովք, որ ասանկ հրաշալի կերպով եղաւ :

5. Վ. Աամէլապէտի թագաւորութեան ժամանակը մեծ անուն հանած էր Մեսրոպ վարդապետը Տարսն գաւառէն իրեն սրբութեամբն ու իմաստութեամբը, և մեծին Ներսէսի աշակերան ըլլալով անոր Հայրենասիրութեան ու բարեբարութեան հոգին զգեցած էր : Երբոր ինքը անապատ քաշուած կը ձգնէր, լսեց սրբոյն Սահակայ համբարը, քովը եկաւ ու վարդապետութեան պատիւ տանելով անկէ՝ սկսաւ ամէն տեղ քարոզութիւն ընել քանի մը աշակերաններով, և ետեւ ըլլալ զիտութիւնները ծաղկեցընելու : Բայց տեսնելով մեր ազգին յատուկ զիր չունենալուն ֆրամները և ահով ուսմանց յատաջանալուն զժուար ըլլալը, երկուքը միարան սկսան ետեւ ըլլալ զիր գտնելու :

5. Հայկական տառից զիւսը որուն ձեւքովք է գաւ ու ինչպէս :

բայց շատ աշխատելէն ետքը երբոր մտորակային հմարքներէ յոյսերնին կտրեցին՝ աղօթքի ապա-
ւինեցան : Սուրբն Մեսրոպ քանի մը աշկերանե-
րով ելաւ Ագեսիա գնաց՝ Պղատա անունով մեծա-
նուն փիլիսոփայի մը քով որ շատ հռչակուած էր
աս տեսակ բաներու ճարտար ըլլալուն համար .
բայց յոյսը ստարապ կրկնով, անկէ Սամուսա
գնաց՝ Հաստիանոս անունով ուրիշ փիլիսոփայի
մը քով, որ նոյնպէս ան ալ մեծ անուն ունէր .
բայց անոգուտ եղաւ ան ճամբորդութիւնն ալ, ու
բովհետեւ լոյս մը չկրցաւ ասնել իր խնդրոյն վրայ :
Տեսնելով սուրբն Մեսրոպ աս գժուարութիւննե-
րը՝ նորէն Աստուծոյ առջև տարածեց իր սրտա-
սուչ մաղթանքները . և ահա յանկարծ տեսիլք
մը տեսաւ, որով սրտին մէջ ապաւորուեցան աս-
տուածապարզե լեզուին գրերը . տեսիլքն որ ան-
ցաւ՝ սուրբն Մեսրոպ գրեց տառերը ու փորձեց
տեսաւ որ լեզուին բոլոր յատկութեանցը յար-
մար էին, ան գրերը կարգի գնելով մեր այբուբեն-
քը ձեռացուց : Աս գրերով հայերէն առաջին գր-
բուածքը եղաւ՝ Սողոմոնի Առակաց գրքին թարգ-
մանութիւնը, որ երբոր տեսաւ ըստ ամենայն մա-
սանց յաջողած՝ առաւ մեծ ուրախութեամբ Հայ-
աստան բերաւ : Մէկէն թագաւորը սրբոյն Սահա-
կայ և սրբոյն Մեսրոպայ հետ միարան, գպրոցներ
ու արհեստանոցներ բանալ առաւ և մեծ ջանք
ունեցաւ անոնց յառաջագիտութեանը . որով քիչ
միջոցի մէջ ամեն բան առաջ երթալով, ունեցաւ
Հայաստան ալ՝ թեպէտ սակաւատե՛ բայց գեղե-
ցիկ ոսկեզար մը իր գրականութեանը պարծանք :

6. Որովհետեւ Վասմշապուհէն որդին Արաս-
շէս գէս պղտիկ էր, նախարարները խնդրեցին Յազ-
կերակն որ զխոսքով երբորգը նորէն իրենց թա-

6. Վասմշապուհէն ետքը ո՞վ թագաւորեց .

գառոր նստեցնէ . բայց խորով հազիւ թէ տարի մը թագաւորեց՝ մեռաւ , և նորէն Հայաստան տակն ու վրայ եղաւ , այնպէս որ ինչուան թագաւորութիւնն ալ կորժանեցաւ : Այսին զի Յազկերտ ուզելով որ Հայերը արեւադաշտ ընէ , փոխանակ մեր աղջկն մէկը թագաւոր գնելու՝ իր Հապուհ որդին թագաւորեցուց , Հայոց վրայ , որ կը ջանար պարսկական տօներ , հանգէսներ ընելով կամաց կամաց Հայերը ընտանեցրնէ արեւադաշտութեան . իսկ Հայերը իմանալով Յազկերտին միտքը սկսան արհամարհանք վարուիլ Հապուհին հետ :

7 . Անգամ մը Հապուհ Հայոց նախարարնէրուն հետ մեկտեղ որտի գնացեր էր , անոնց հետն էր նաև Ատովմ Մոկացի քաջ նախարարը . ասոնք հետուէն վայրի էշերու երանակ մը տեսնելով սկըսան ետևնուն իջնալ ու հալածել . երբոր վայրի էշերը քարտա ու ժայռոտ տեղեր ելլելով իրենց որջերը քաշուեցան , նախարարները ուզելով իրենց քաջութիւնը ցուցնել Հապուհին , սկսան ժայռերէն վեր արշաւել . բայց Հապուհ վախկոտ ու միանգամայն անվարժ ըլլալով մէկզի քաշուեցաւ . ան ասնն Ատովմ Մոկացի նախասեպ զինքն ու ըսաւ . « Ինչո՞ւ վատութեամբ կեցեր ես ս՛վ Պարսկոց աստուածորդի , չմտղենս դուն ալ թէ որ մարդ ես ու մարդու քաջութիւն ունիս » : Պատասխան արւաւ Հապուհ . « Սատանաները միայն կրնան ասանկ քարտա տեղերէ վեր ելլել , ու ոչ էթէ մարդիկ » . որով նախարարները սատանայի տեղ զըրաւ : Ատովմ ան նախատիները միտքը պահեց ու առթի մը կ'սպասէր որ ան խօսքին վե՛ժը հանէ Հապուհէն : Աւտի երբոր ուրիշ անգամ մը կրնճ

7 . Հայերը ինչ գիպուածներու մէջ իրենց ընդգիտութիւննին ցըցուցին Հապուհին դէմ ու Հապուհին տեղ Աւամ զո՛վ գրաւ .

որապէս դասեր էին, ինչպէս որ սովորութիւն էր, եղեգնութիւն կրակ առին. Հայուհի զանգաղելով չկրցաւ եղեգնութիւն դուրս ելլել ու կրակը շորս գին առաւ: Ատով՝ խմանալով որ Հայուհի վաանդի մէջ ու օգնութեան կարօտ է, մտակցաւ Հայուհին քովն ու ծաղր ընելով ըսաւ. « Ահա քու հայրդ ու աստուածդ, ինչո՞ւ կը վախեն »: Հայուհի նեղանալով ըսաւ. « Կատակի ատեն չէ հիմայ. շուտով անցիր ու դուրս ելիր որ ես ալ կարենամ ետեկդ գալ, որովհետեւ ձիս խրտան է »: Ատով՝ աւելի համարձակութիւն աննելով թագաւորին վախկոտութենէն ըսաւ. « Գիտցիր չափդ ու անկէ աւելի մի յօխորտար. թէ որ դուն Մոկացիները սատանայի որդի կը կոչես, ես ալ զՊարսիկները կնամարդի ու վառ կը կոչեմ »: Աս ըսելէն վերջը զարկաւ ձիուն, անցաւ կրակին մէջէն եւ Հայուհի ազատեց: Բայց գիտնալով որ աս իրեն համարձակախօսութիւնները Հայուհին ծանր եկած են, թողուց Հայաստանն ու իր Մոկաց աշխարհքը քաշուեցաւ: Ասոր նման ուրիշ քանի մը նախատական դէպքերով այնչափ բարկացուցին զՀայուհի, որ առթի մը կ'սպասէր Պարսկաստան փախչելու. ուստի լսելով որ Յաղկերտ իր հայրը հիւանդացեր է, ճամբայ ելաւ Պարսկաստան երթալու: Հայուհի երթալու ատեն հրաման առաւ իր զօրագլխին որ վերջը հայոց նախարարները բռնէ ու իր ետեկն Պարսկաստան խաւրկ. բայց հագիւ թէ ինքը Պարսկաստան հասեր էր՝ հայրը մեռաւ, ինքն ալ իր քովի մարդիկներէն սպաննուեցաւ: Նախարարները խմանալով Հայուհին հրամանը՝ ամէնքը միարան Պարսից զօրքը հաշմեցին Հայաստանէն, ու շատ մարդ ալ սպաննեցին: Բայց վախնալով Պարսից վրամ թագաւորէն՝ ամէնքն ալ իրենց բերդերը քաշուեցան, ու Պարսիկները շատ նեղութիւն առին իրենց մասին

ձեջի եղած Հայոց : Առամ տեսնելով որ ասանց
մեկ գլխի մը շիրնար ժողովել սովորական հարկը ,
հաշուութիւն ըրաւ նախարարներուն հետ , ու
Առամհապուհին օրդին Արտաշէս երրորդը թա-
գաւորեցուց որ ասանութը տարեկան էր : Առջի
բերան ուրախանալով գոհ եղան նախարարները .
բայց քիչ ատենէն տեսնելով Արտաշէսին անկար-
գութիւնները՝ զորեցան իրմէ և կ'ուզէին թագա-
ւորութիւնը Պարսից տալ . առ բանիս շատ գեմ
կեցաւ արբըն Սահակ , գիտնալով որ ազգին կո-
րըստերնը և մեծամեծ փրասներու պատճառ է .
բայց նախարարները ձանձրացած ըլլալով անանկ
անկարգ թագաւորներէ՝ մտիկ չըրին սրբոյն Սա-
հակայ խրատին ու գացին Առամէն խնդրեցին որ
թագաւորութիւնը վերցընէ ու անոր տեղը Պար-
սիկ իշխան մը գնէ :

8. Առամ նախարարներուն խնդիրքը լսելով
կանչել ատաւ զսուրբն Սահակ ու զԱրտաշէս :
Արտաշէս թէպէտ և ենքդինքը արգարացուց ըսե-
լով որ տերութեան գեմ յանցանք մը ըրած չու-
նի , բայց Առամ ուզելով թագաւորութիւնը վեր-
ցընել՝ զսուրբն Սահակ բանա զրաւ . Արտաշէսն
ալ Պարսկաստանի ներսերը քէց ուր իրեք չորս
տարի ալ ապրեցաւ ու մեռաւ , վեց տարի թագա-
ւորեցին ետքը : Ահա առ կերպով վերջացաւ Արշա-
կունեաց հզօր թագաւորութիւնը Քրիստոսի 428
թուականին , 580 տարի գիմանալէն ետքը :

9. Արշակունեաց թագաւորութեան վերջանա-
լուն բոլոր պատճառները հոս շարելը անչորդ կը
սեպնք , որովհետեւ պատմութեան ետին աւելի


8. Արշակունեաց թագաւորութիւնը ինչպէս
վերջացաւ .

9. Արշակունեաց թագաւորութեան վերջանա-
լուն պատճառները որո՞նք եղան .

ընդարձակ իրատձ կնք. հոս համառօտ մը կ'ուզենք միշէլ նախարարաց անխաճեմ գործողութիւնը, որով մեր Արշակունեաց Թագաւորութիւնը կործանեցին: Գործողութեան պախարակելի ըլլալը ամենուն ալ յայտնի է. վասն զի մարգուս ևս առաւել ազգի մը ազատութիւնը աստուածային տուրք ըլլալով, տուողը միայն կրնայ վերցընել աս գեղեցիկ ձիրքը ան իշխանութեամբը՝ որով տուեր է. ուստի ով որ պատճառ կ'ըլլայ վերնալուն և կամ ինքը կը վերցընէ, իրաւամբք ատելի է ամենուն ու Աստուծոյ պատիժը կը սպաւի: Եթէ Թագաւորը գեշ էր, կրնային զինքը Թագաւորութենէն զրկել, թէ որ ազգին ու հասարակաց օգուտը անանկ պահանջէր. որով ոչ միայն կ'արգարանար իրենց գործողութիւնը, հասարակաբանական օրհնութիւն կը ժառանգէին. իսկ հիմայ փոխանակ օրհնութեան անէծք կը ժառանգեն, որովհետև որչափ Թագաւորին գեշութիւնը՝ նոյնչափ ալ իրենց անկրթութիւնը, հասարակաց բարին չմտածելը, ու ասոնցմէ առաջ եկած շարիքներուն պատուներն են, որով իրենց կրեցը զո՛հ ըրին այնչափ ժողովուրդ գերութեան մտանկելով. և այնպիսի ստակալի գերութեան մը մտանկելն ան գեղեցիկ ձիրքերով զարգարուած ազգը, որ բոլոր ունեցած զբանջելի ու օտարաց նախանձելի առաքինութիւնները խանգարուելով, այնչափ Թշուստութեանց մէջ ընկաւ՝ որ պատմութեան յաջորդ թերթերուն մէջը պիտի տեսնենք ու լսենք:

ԻՇԻԱՆՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Զ Պ Ա Ն Ա Յ



Վենիսի րչապոնն տասիս մարգպան, և
 Վարդանանց պատերազմը :

1. Արշակունեաց Թագաւորութենէն վերջը մարգպան գրուեցաւ Վենիսի րչապոնն անունով պարսիկ իշխան մը, որ բնութեամբ խաղաղասեր և ազնիւ մարդ ըլլալով շատ լաւ կառավարեց Հայաստանը տասներչորս տարի և երբոր ինքը մեռաւ տեղը անցաւ Վասակ Սինի, փառասեր, անհաւատ, նախանձոտ, ազգասեաց նախարարը, որ փոխանակ ազգին ուրախութեան և երջանկութեան պատճառ ըլլալու իբրև Հայ, Թշուառութեան և մեծ արամաութեան պատճառ եղաւ Հայաստանի :

2. Յազկերտ երկրորդ Պարսից Թագաւորը ուզելով որ ամէն իրեն հարկատու ազգերը արեւա-

1. Արշակունեաց Թագաւորութեան իննալէն ետքը ազգերնիս ինչ վեճակ ունեցաւ .

2. Յազկերտ ինչ հնարք մտածեց Հայերը արեւապաշտ ընելու .

պաշտ ըլլան, ամէն ճար մտածելէն վերջը՝ մոգե-
րուն խորհրդովը հրաման խաւրեց Հայոց, Աղուս-
նից, Ալբայ, որ մէյմէկ բազմածիւ գնդեր խաւ-
րեն, որպէս զի կարենայ ազգին երեւել զօրավար-
ներն ու նախարարները հեռացընել ու մնացած-
ները զիւրաւ արեւապաշտ ընել: Ազգին վրայ ալ
սէր ցուցընել ուղելով, նախարարներէն մէկ քա-
նին պատուեց ինչպէս Աստակայ Սիւնեաց նախա-
րարին մարզպետութիւն տուաւ, և Աւարդան Մա-
միկանեանին ընդհանուր սպարապետութեան պա-
տիւր (442):

Հայերը խորհուրդ ըրին մէջերնին ու բազմա-
ծիւ գունդ մը խաւրեցին՝ շատ քահանաներով ու
բազմութեամբ նախարարաց, որպէս զի անհաւա-
տարմութեան կասկած մը շտան Յազկերտին • ա-
նոնց հետ մէկտեղ գացին նաև Աստակ ու Աւար-
դան • նոյնպէս Աղուսնից և Ալբայ զօրքերն ալ ե-
կան: Յազկերտ երկու տարի հոնաց գէմ սրտու-
րազմ ընելէն վերջը երբոր չկրցաւ յազմել՝ դար-
ձաւ Պարսկաստան, ու սկսաւ նախարարները յոր-
գորել և ստիպել որ արեւուն երկրպագութիւն ը-
նեն: Նախարարները միտքան գէմ կեցան Յազ-
կերտի, ամանք ալ նահատակուեցան, ինչպէս Գա-
րեգին, Ատովմ Գնունի ու Մանածիհր Ռշտունի
երենց զօրքով • մէկալ նախարարներն ալ շատ
ստիպեց, բայց չկրցաւ մտքերնուն հաստատու-
թիւնը խախտել:

3. Նոյն միջոցին Յազկերտ Գենշապուհ անու-
նով մարզպան մըն ալ Հայաստան խաւրեց որ եր-
թայ ծանր տուրքերով և ուրիշ նեղութիւններ
աալով Հայերը դարձընէ • իսկ նախարարները

3. Ինչպէս սկսաւ Պարսից կրօնքը Հայաստա-
նի մէջ տարածուիլ ու ինչ գիտելիք կայ Աւարդա-
նայ ու Աստակ Սիւնիին վրայ •

սաստիկ բանախ մը մէջ գրած կը նեղէր, ըսելով որ էթէ հաւատքնին ուրանան՝ զիրենք ազատ կը թողու: Նախարարները տեսնելով որ առանց իրենց Հայաստան սոցի տակ պիտի երթայ, մտածեցին՝ անգամ մը արտաքուստ ուրանալ հաւատքնին, որպէս զի գերութենէն ազատելով կարենան օգնել ամբողջ այգին: այսպէսով մէջերնին միարանելով արևու և կրակի երկրագագթ թիւն ըրին: Մերջը Յազկերտէն պատիւ գտած Հայաստան զարձան եկան: անոնց հետ մէկտեղ եկան խել մը մոգերու բազմութիւն, որպէս զի Հայերը կրակապաշտութեան մէջ կրթեն: Երբոր տեսան Հայերը առ մոգերը, սրբոյն Ղևոնդի և ուրիշ սուրբ քահանայից առաջնորդութեամբը մոգերուն վրայ վազեցին, շատ մարդ մեռուցին շատն ալ վերադարձին, մնացածներն ալ լեզապատտա փախուցին: Ղարգան որ արտաքուստ միայն ուրացեր էր, տեսնելով որ մոգերը վաճառեցան Հայաստանէն, մէկէն եկաւ Յովսէփ կաթողիկոսին և ուրիշ քահանայից սոքը ընկաւ, թողութիւն խնդրելով անկամայ ուրացութեանը: Իսկ Ղասակ սրտանց ուրացած ըլլալով չէր ուզեր որ մոգերը երթան Հայաստանէն, ուստի խաբէութեամբ կ'ըսէր որ առժամս ընդունին մոգերը, որպէս զի Յազկերտ վրանին չբարկանայ, ու վերջը կամայ կամայ գործահանեն զիրենք: ասով շատին միտքը համոզուեցաւ, մանաւանդ թուրահաւատներունը, և շատ տեղ կրակապաշտութիւնը սկսաւ տարածուիլ մանաւանդ մեծամեծաց աները:

Մեծն Ղարգան տեսնելով առ չարիքը և չկրնալով զարման մը ընել, սրտին ցաւէն ելաւ Հայաստանէն և դէպ ի Յունաց մասը սկսաւ երթալ: բայց մէկալ նախարարները երբոր լսեցին Ղարգանայ երթալը՝ շատ աղաչանքներով ետ դարձուցին զինքը, և իրեն հետ մնացած՝ աներէն վաճառեցին

մտքերը, վերջը Պարսից զօրաց վրայ յարձակելով, որ Վասակայ առաջնորդութեամբը Բաղրևանդ Թողուեր էին, մեծ ջարդ ըրին, և շատ մարդ ըրանեցին, որոնց հետևն էր նաև Վասակ: Բայց սաստիկ աղաչելուն և աւետարանին վրայ երգում ընելուն համար նորէն ազատ Թողուցին զինքը:

4. Գաղիերաց Աղուանից երկիրն ալ շատ մտքեր խաւրթեր էր որ զանոնք ալ արևադարձս ընեն. անոնք չկրնալով գէժ գնել՝ Հայերէն օգնութիւն ազեցին, անոր համար հարկ եղաւ որ բոլոր զբքը իրեք բաժնեն. առջինը առին Ներշապուհ Երմբունիին որ Պարսից գէժ գնէ. երկրորդը Վասակայ՝ Հայաստանը ստահելու համար. երրորդ գունդն ալ առին Վարդանայ որ Աղուանից օգնութեան երկայ: Ճամբան Վարդանայ զօրաց գէժ ելաւ Պարսից զօրքը՝ որոնք մեծ ջարդ կերան Հայերէն: Վարդանին զօրքերը Աղուանից երկիրն որ հասան՝ բոլոր մտքերը կտարեցին, կրահատունները կործանեցին և Պարսից զօրքերը հալածեցին անկէ: Երբոր Վարդան Աղուանից երկիրը ասանկ քաջութիւններ կ'ըներ, անոզամ Վասակը իրեն երգմանը վրայ հաստատուն չկենալով՝ հաւատքը ուրացաւ ու նորէն սկսաւ մտքերը Հայաստան մտցնել, կրահատունները քանալ, ու քահանաները և ուրիշ շատ մարդիկ շարշարել. իրեն հետ միաբանեցան մէկ քանի թուրահաւատ Թորգիկ ալ: Քաջն Վարդան երբոր լսեց Վասակայ նորէն ըրած դաւաճանութիւնը, մեկէն իր զօրքովը անոր վրայ հասաւ, և հետը ուրացող միաբանողներուն մեծ ջարդ տուաւ: Վերջը Գաղիերային զեազան խրկեց, որ էթէ զիրենք ազատ Թողու որ քրիստոնէութիւն

4. Վարդան Աղուանից ինչ օգնութիւն ըրաւ ու Վասակ իր անօրէնութիւններովը ինչ շարիք հասուց զարձեալ Հայաստանի:

նին պաշտեն՝ իրեն սիրով կը ծառայեն : Յազկերա
[Թեպէս և հրաման տալ ձեացուց, բայց միայն
խարդախութիւն ըլլալով հայերը խնայան, և ի-
րենց կերպը շփոխեցին : Յազկերա հայոց հաւատը-
նեմունն վրայ հաստատութիւնը տեսնելով յու-
սահատեցաւ զիրենք շահելէն, ու Միհրնեսէն
հազարապետը խաւրեց շատ զօրքով : Միհրնէր-
սէն տեսնելով Ալասակայ հաստատուն և անզր-
գուելի շարութիւնն ու անզգամութիւնը, բոլոր
զօրքը անոր յանձնեց և ինքը գարձաւ Յազկեր-
սին քով, օգնական տալով Ալասակայ Մուշկան
Նիսաւրաուրք :

Յ. Տեսնելով արին Արզան Ալասակայ մեծա-
մեծ պատրաստութիւնները, ամէն տեղի հայե-
րուն գետական խրկեց որ ուզողք իր քովը գոյ - ա-
սով Արաաշատու մէջ վաժառուներդեց հազար հօգի
ժողովուցան, ամէնն ալ կարիճ հաւատոյ համար
պատերազմելու վառուած. մէլերնին կային նաև
քանի մը կայսկոպոսներ ու շատ քահանաներ :
Իսկ Ալասակ մէկ քանի սուս քահանաներու ձեռ-
քով շատ մարդ խաբեց՝ իր կողմը ձգեց, ըսելով
որ հրաման եկեր է Յազկերակէն համարձակ քրիս-
տոնէութիւնը պաշտելու. ասով ինչուան Արա-
ջիներն ու Աղուանները հայոց մարամութենէն
բաժնեց : Երբոր երկու կողմէն ալ պատերազմի
պատրաստուեր էին, Հոգեգալստեան վեցերորդ
իրիկունը, որ երկրորդ օրը պատերազմ պիտի ըլ-
լար, ամէնն ալ խառատվանելով հազարգուեցան,
որպէս զի հօգևով և մարմնով զբաման : Երկրորդ
առաւօտը սկսաւ պատերազմը խիստ կատաղա-
բար, և պատերազմին սկիզբները հինգ հազար
հօգւոյ շափ Ալասակայ կողմը անցան, ինչպէս որ

Յ. Արզանանց պատերազմը ինչպէս եղաւ ու
որչափ քաջեր զոհ եղան հայոց կողմանէ .

առաջուց խօսք տուեր էին, ու մեծ շիտթութիւն պատճառէցին : Մեծ քաջութեամբ պատերազմեցան Արքայանանք . բայց երբոր սուրբն Արքայն առիւծի պէս առգին անգին վազելով մեծամեծ քաջութիւններ կ'ընէր՝ վերաւորուելով ընկաւ մեռաւ, ինչպէս նաև սուրիշ խել մը նախարարներ և երկու հարիւր վաճառներվեց հոգի . մնացածներն ալ տեսնելով Արքայնայ մահը, ցիր ու ցան եղան, և իրենց բերդերուն մէջը ամրացան : Բայց Պարսիկները վերջէն հայոց այլ և այլ գունդերուն հետ ալ պատերազմելով սուրիշ եօթը հարիւր հոգւոյ շափ ալ մեռուցին, որով Արքայնայն նահատակաց թիւը եղաւ հազար երեսուն ու վեց : Իսկ Պարսից կողմանէ մեռան նոյն օրը իրեք հազար հինգ հարիւր հոգի : Առտակ աս ամէն շարիքներով շիշտանալով խաբէութեամբ շատ մարդ բռնեց ու սպաննեց, և Ղևոնդեանք ըսուած սուրբ քահանաներն ալ բռնեց շղթայի զարկաւ (451) :

6. Արքայնայ հետ միարանած նախարարները գունդ գունդ ձեացած՝ սկսան Պարսից քաղաքներուն ու բերդերուն վրայ յարձակիլ ու մնասներ հասցրնել . անոր համար Յազկերտս Արտորմիզց տնունով մէկը գրաւ հայոց վրայ որ նախարարները խաբէութեամբ բռնէ ու իրեն խաւրէ : Ղախարարները թէպէտ և իմացան Արտորմիզցին միաքը, բայց մարտիրոսութեան փափաքով վառուած՝ փոյթ չբրին, ու ելան Արտորմիզցին քովը գնացին . ան ալ զամէնքը բռնեց և Ղևոնդեանց հետ մէկտեղ Յազկերտին խաւրեց, ու հրաման տուաւ հայոց որ ամէն մարդ իր կրօնքը պաշտէ :

7. Առտակ աս ամէն շարութիւններն ընելէն

6. Մէկալ մնացած նախարարները ինչ եղան .

7. Առտակ ինչպէս իրեն անօրէնութեանց պատիժը գտաւ և ինչ ստորագրութիւն կ'ընէ իրեն մահուանը մեր Նդիշէ պատմագիրը .

վերջը յանցաւոր դանուեցաւ Յագիերաֆն առջև, և անոր հրամանովը իր ամէն իշխանութիւնն ու հարստութիւնը առին և սոսկալի բանափ մը մէջ գրին : Աստակ իր անմատութեամբն ու փառամալութեամբը չկրցաւ իմանալ թէ ազգատեաց անձնասէր և անմիաբանասէր մարգուն վախճանը սոսկալի մահ է : Մերութանայ շարաշար մահը իրեն խրատ չեղաւ, անոր համար քան զան ալ աւելի գեշ և սարսափելի մահ ունեցաւ : Արջափ տարբերութիւն կայ աս երկու զորավարաց, այսինքն Արզանայ և Աստակայ մէջ • Արզան բարերար և հայր աշխարհի, իսկ Աստակայ սեպտեալ ճակափն վրայ որոշ կը տեսնուի իր թշուառութեանը պատճառը, այսինքն նախանձ, փառամոլութիւն, ազգատեցութիւն և անմիաբանասիրութիւն : Արզանայ պէս անմահ բարերարներուն անունը մարմարին քարերու վրայ գրելն ալ ոչ ինչ է • վասն զի այնպիսոցն արժանաւոր տեղը մարգուս գերազանց միտքը ու աստուածանման հոգին է : Իսկ Աստակայ պէս ազգատեաց մարգիկներուն անունը տղմի վրայ գրելն ալ շատ է թէպէտ և սափ կտրտան ըլլան • վասն զի այնպիսիներուն անունը մարգիկանց անուններուն կարգէն գուրա հանելու էր՝ թէ որ իրենց գեշ վարքը ուրիշներուն խրատի համար միայն հարկաւոր չըլլար : Լսելու արժանի է Աստակայ որդնալից ցաւալի մահուն ստորագրութիւնը որ կ'ընէ մեր Եղիշէ քաջ և ճարտասան պատմիչը •

« Օր ըստ օրէ բերեկին իրբև զգեշ ընտանին 'ի մեծ հրապարակին, ճաղեկին և այլ զին, և տեսիլ ամենայն կարուանին զնա առեկին • • • Եւ իրբև այսպէս յամենայն կողմանց հարեալ վասթարացաւ, անկաւ յախտա դժեղակս անդէն 'ի կապանն : Զեռաւ փոր նորա, և հարան և արտրեցան զտղբ նորա, և քամեալ մզկցաւ թանձրամտութիւն նո »

բա: Եռացին որդուք ընդ աչս նորա, և ՚ի վայր
տարեցին ընդ սնդունս նորա. խցան ըսելիք նորա,
և ծակտանեցան շարաշար շրթուիք նորա. լուծան
ջիղք բազկաց նորա, և յեա կոյս կորացան կրք-
կուիք սախց նորա: Բղխեաց ՚ի նմանէ հոս մահու,
և փախաատկան եղեն ՚ի նմանէ ձեռնասուն ծա-
ւայք նորա: Լեզուն միայն կայր կենդանի ՚ի բե-
րան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ՚ի շրթ-
թունս նորա: Ճաշակեաց զմահ հեղձակցձուկ, և
էջ ՚ի դժոխս անհարին դաանութեամբ: Ոսնհար
եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յազեցան
սաստիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա:
Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեղք՝ Հայոց
աշխարհին, ոչ երևեցաւ տեղի գերեզմանի նորա-
քանդի իբրև զչուն մեռաւ և իբրև զգեշ (կամ զէշ)
քարեկցաւ . . . : Ոչ ինչ էթող շարխ զոր ոչ գոր-
ծեաց ՚ի կեանս իւր. և ոչ ինչ մնաց ՚ի մեծամեծ
չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա ՚ի մահուան նորա ։ :

ԴԱՍ ԻԲ.

Ատրիշևասպայ մարգպանորիւնը և Վահանայ
պատերազմը :

1. Ատրորմիզց բոլոր նախարարները բռնած
Պարսկաստան խաւրեց, հոն Յազկերտին հրամա-
նովք բոլորն ալ բանա գրուեցան՝ իսկ քահանանե-
րը թիչ մը աստենէն ծածուկ սպաննուեցան: Կա-
խարարները չորս տարի բանաը կենալէն վերջը

1. Վարդանանց պատերազմէն ետքը նախարար-
ները ինչ վիճակ ունեցան.

Շքով ապուհ իշխանին աղաչանքովք աղաատեցան
բանակն, բայց Պարսկաստան մնացին՝ երբոր յա-
ջորդ տարին մեռաւ Յազեկրա, տեղք Պերոզ որ-
դին անցնելով ուժը տարի նախարարները իրեն
գործողութիւններուն ծառայեցուց. բայց երբոր
Ատրվինասոյ մարզպանը Հայաստան կ'երթար՝ զի-
րենք ալ անոր հետ մեկտեղ դարձուց իրենց հայ-
րենիքը (464) :

2. Երջանիկ նախարարները Հայաստան որ դար-
ձան՝ սկսան խաղաղութեամբ կառավարել իրենց
երկիրները : Ան միջոցներուն մեծին Վարդանայ
Հմայեակ եղբորը մեծ որդին Վահան՝ իրեն քա-
լութեամբն ու խելացիութեամբը շատ սիրելի ե-
ղաւ բոլոր Պարսից մեծամեծներուն և նաև Պե-
րոզայ : Աս բանիս նախանձելով մեկ քանի ուրա-
ցող նախարարներ, որ գեռ Պարսկաստան կը գրա-
նուէին, չարախօսութիւններ ըրին Վահանայ վը-
րայ . Վահան ալ վախնալով որ Պերոզին աչքէն
չկնայ՝ հաւատքը ուրացաւ, թէպէտ և վերջէն
սասափի գղջաց :

3. Վրիստոնեայ նախարարները շատ անգամ նա-
խատուելով ուրացող նախարարներէն՝ առթի մը
կ'ապասէին որ սա նախատանայ վրէժը առնեն-
ուսափ երբոր Հեփթագներուն պատերազմէն կը
զաննային՝ լսելով որ Վրաց Վախտանի թագաւո-
րը սպառտամբեր է Պարսիկներէն, իրենք ալ միա-
բանեցան մէջերնին ու Վահանը իրենց զօրագլուխ
գնելով զատուեցան Պարսից բանակէն : Ատրվըշ
նասոյ երբոր լսեց սա բանս՝ վախնալով սկսաւ
Պարսկաստան փախչիլ . ան ատեն Ետնէն գնա-
ցին Վահանեանք և խել մը հագի ջարդեցին : Աս

2. Վահան ինչու հաւատքը ուրացաւ .

3. Ի՞նչ կերպով սկսաւ Վահանանց պատե-
րազմը .

պզտի յազթուծէն վերջը Դուին գտնալով Սմբատ
Բաղրատունին մարզպան գրին, Վահանն ալ ընդ-
հանուք ապարասպետ. և երբոր Ատրօշնասպ նորէն
եկաւ եօթը հազար զօրքով, Վահան չորս հարիւր
հոգի միայն ունէր. զանոնք չորս գունդ յաճնելով
Ախտիխ մօտ պատերազմի պատրաստուեցաւ. պա-
տերազմն սկիզբը Պարթիզ նախարարը իրեն հա-
րիւրովը թշնամեաց կողմը անցաւ. բայց առ բանս
փոխանակ զիրենք վհաակեցրնելու աւելի զօրացուց,
որով սասաիկ ջարդ մը տուին Պարսից. և իրենք
ուրախութեամբ Դուին գործան:

4. Վահան որչափ որ կրնար նէ կը ջանար բոլոր
նախարարները միարանել որպէս զի աւելի զօրա-
նալով կարենան քաջութեամբ գէժ գնել թշնա-
մեաց և բոլորովին հալածել զանոնք, բայց առ ի-
րեն փափաքանացը չհասաւ. վասն զի նախարար-
ներէն ոմանք արտաքին շահու և փառասիրութեան
համար հաւատքնին ուրացած՝ Պարսից կողմը ան-
ցեր էին, ոմանք ալ իրենց քաղաքը քաշուելով
հանդիսանին կը նայէին. թէպէտ և կային նաեւ ո-
մանք որ հասարակաց օգուար մտածելով իրեն
քովը եկած իրեն հետ մեկտեղ սիրով կը պատե-
րազմէին: Իսկ Վահան թէպէտ և քիչուոր էր,
բայց միշտ յազթող գանուեցաւ, և չորս հինգ տա-
րի միակերպ պատերազմելով մեծամեծ յազթու-
ծիւններ ըրաւ Պարսից գէժ: Պարսիկք չորս հինգ
զօրավար փոխեցին քիչ աստնի մէջ, բայց ամէնքն
ալ յազթուեցան: Աս պատերազմներուն մէջ ազէկ
կը տեսնուի Վահանայ անպարտելի արութիւնը,
վեհանձնութիւնը, հաստատուն հաւատքը և առ
Աստուած յոյսը: Երբոր Պարսիկք Շապուհ Միհ-
րանեան մարզպանը խաւրեցին Վահանայ վրայ,
անիկայ սասաիկ կատղած Վահանայ ըրած յազ-

4. Որոնք միարանեցան Վահանայ հետ.

Թութիւններուն վրայ, միայքը գրեթէ եր ոք կամ յաղթե Աւհանայ ու զինքը մեռցրնէ, և կամ յաղթութեամբ ինքը մեռնի. առ մտքով պատերազմի պատրաստուեցաւ: Աւհանին քովինները որ հարիւր հոգիի շափ կային՝ տեսնելով Պարսից բազմութիւնը և իրենց քիչուորութիւնը՝ շատը ելան ջրուեցան, և միայն երեսուն հոգի մնացին. Պարսիկք Աւհանայ խումբին քիչուորութիւնը տեսնելով երբոր անհոգ կեցեր էին, ասոնք յանկարծակի վազեցին Պարսից վրայ, և մեծ շխտութիւն ձգելով բանակին մէջ՝ սաստիկ ջարդ տուին Պարսից զօրաց և իրենցմէ միայն չորս հոգի մնան:

5. Նոյն միջոցին Պերոզ Պարսից Թագաւորը մեռաւ, ու տեղը անցաւ իր Աղաբը եղբայրը, որ քննելով Աւհանայ քաջութիւնները և անոր աստատանքելուն պատճառը՝ իրաւունք տուաւ Աւհանայ, և ուզեց հետը հաշտութիւն ընել, որպէս զի նաև կարենայ անվտանգ ժողովել Հայաստանին հարկը: Աղաբը առ բանիս համար մարդպան խրկեց Նիխոր Աշխատադատ անունով խաղաղասէր մարդը: Նիխոր երբոր Աւհանայ մարդ խրկեց հաշտութիւն ընելու համար, անիկայ առ իրեք պայմանս գրաւ. Ա. Բրիտանուկութեան բաներուն Պարսիկք շխտանուին. Բ. Արժանաւոր և հաւատարիմ մարդիկ միայն պատուոյ համնին. Գ. Ինչուան որ երկու կողմի պատճառները չլան՝ դատաստան մը չկարուի: Առ իրեք խնդիրքին ալ հաւանեցաւ Նիխոր, ու անկէջ վերջը դնաց Աւհան Նիխորին քով, որուն հետ շատ սիրով տեսնուեցաւ, ու մէջերնին դաշինք հաստատուեցին: Արջը Պարսից գունն ալ երթալով իրեն մնաւ մը չընէ:

6. Աւհան ինչպէս Պարսից աչքը մտաւ ու Հայաստան ինչպէս դարձեալ իրեն քրիստոնէական կրօնքը ստացաւ.

լու և գաղփեցին վրայ հաստատուն կենալու երգ-
մունք առաւ Աղաբաբէն, և սպարապետութեան
պատիւը առած՝ դարձաւ եկաւ Աղաբաբապատ
քաղաքը: Երբոր Անգեղիան անունով մարզպանը
քիչ մը առին կենալէն ետքը հարկաւոր գործա-
դութեան մը համար ետ կանչուեցաւ, անանկ գո-
վեց զԱլահանը Պարսից գրան առջև որ Աղաբաբ-
անոր լաւութեանը փոխարէն մարզպանութեան
պատիւը տուաւ: Ալահան ալ խնդրեց որ իր Արագ-
եղբայրը սպարապետ ըլլայ: Բաշոր ազգին մեծ ու-
րախտութիւն եղաւ աս անահնունելի յաջողութիւ-
նը: Ետքը ջնջեց Ալահան բոլոր կրակատունները,
և անոնց տեղը եկեղեցիներ շինելով սկսաւ այլ և
այլ բարեկարգութիւններ ընել (484):

6. Ալահանին մարզպանութեան առենը մեռնե-
լով Աղաբաբէն՝ տեղը նստաւ Վաւառ, որ թէպէտ և
առջի բերան Ալահանին մարզպանութիւնը հաս-
տատեց, բայց վերջը քուրմերուն խորհրդովը Պար-
սիկ մարզպան մը խաւրեց, հետն ալ շատ քուր-
մեր, որոնք եկան նորէն սկսան կրակատուններ
շինել ու արեւապաշտութիւն սորվեցրնել: Աս ե-
ղած անկարգութեան չգիտնալով Ալահան՝ մեկ
քանի նախարարաց հետ միաբանեցաւ, ու Պար-
սից վրայ վազելով ջարդեցին զիւրեք և կրակա-
տունները աւրեցին: Բայց որովհետև Վաւառ Եռ-
նաց դէմ պատերազմի կ'երթար՝ ան պատճառաւ
հաշտութիւն ըրաւ Հայոց հետ, շատ զօրք ամե-
լով Հայերէն:

Ալահան ան միջոցներուն մեռաւ քսանըվեց տա-
րի մարզպանութիւն ընելէն վերջը, որուն յիշա-
տակը անկարելի է որ հայաւ մը մայքէն ջնջուի, որ
ազգին հանգստութեանը համար իր ամեն հան-

6. Վաւառին միջոց ինչ հանգիստեցաւ ու Ալա-
հան երբ մեռաւ:

գրատուժիւնն , հարատուժիւնն , փառքը , իշխա-
նուժիւնը կորսնցուց , ինչուան որ գտաւ բոլորն
ալ նախ իր ազգին և վերջը իր անձին հատար , և
իրաւ ջրնէ իրեն անուանը համեմատ Վահան եղաւ
ազգին բոլոր թշնամիներուն գէժ :

ԴԱՍ ԻԳ .

Վանանայ մեակեկէն ինչուան Հագարացոց
Հայաստանի տիրելը :

1 . Վահանին տեղը մարզպան գրաւեցաւ Վարդ
իր սզախ եղբայրը , որ հազիւ թէ շորս հինգ տա-
րի մարզպանուժիւն ըրաւ . վասն զի քանի մը ան-
պիտան մարդիկ նախանձեղով իրեն պատուոյն ,
վրան ամբաստանուժիւն գրեցին . անոր համար
Կաւառ ալ մարզպանուժիւնը ձեռքէն առաւ ու
Բուրգան անուձով անդգամ Պարսիկի մը առաւ
որ շատ չարչարեց զազգը : Եւ ատեններս Հոնք
Հայաստանի վրայ վազեցին ու շատ չարիք հասու-
ցին ազգին . անոնց գէժ ելաւ ՄԺԷԺ Գնունին իր
զորքովը , և թշնամիները հալածելէն վերջը՝ ուրիշ
քանի մը նախարարներու հետ միարանելով ազգը
հանգարակեցուց : ՄԺԷԺին հաւատարմուժիւնը
երբոր լսեց Կաւառ՝ զինքը մարզպան գրաւ , որ
երեսուն տարի մարզպանուժիւն ըրաւ (548) :

2 . ՄԺԷԺին տեղը ետեէ ետե շորս հինգ Պարսիկ

1 . Վահանէն ետքը ո՞վ եղաւ մարզպան ու ի՞նչ
գիտելիք կայ ՄԺԷԺ Գնունին վրայ .

2 . ՄԺԷԺէն ետքը եղած մարզպանները ի՞նչպէս
կառավարեցին զՀայաստան ու ի՞նչ է ՄԷԺ թուա-
կան ըսուածը .

մարդպաններ գրուեցան, այսինքն Դենչապուհ,
Աշնասպ Ահհրամ, Աշարազգատ, Սուրեն Ճիհր :
Ասոնցմէ ոմանք ազգք նեղեցին հաւատքի համար,
ոմանք ալ խաղաղութեամբ կառավարեցին : Ասոնց
ատենը Մովսէս կաթուղիկոս Հայոց առմարը նա-
րոզեց, և Մեծ Թուական ըսուածը գրաւ . որ
Թուականութիւն Հայոց կ'ըսուի (551) :

3. Աշարգան երկրորդ Մամիկոնեան տեանալով
Պարսից ըրած բանութիւնները, մանաւանդ Սու-
րեն Ճիհր մարդպանին ըրածը, որ իր Մանուէլ
եղբայրը մեռցնել տուեր էր, խօսք գրաւ քանի
մը նախարարաց հետ որ ապստամբին Պարսիկնե-
րէն . ուստի Յուսիմիանոս կայսեր խոստացան
հարկատու ըլլալ թէ որ իրենց օգնէ . անոր խոստ-
մունքներուն վրայ վստահանալով վաղեցին Դուին
քաղքին վրայ, Սուրենը սպաննեցին, մոզերն ալ
ջարդեցին : Խոսքով սա բանիս վրայ բարկացած
չստ գորք խաւրեց Հայոց վրայ . բայց Աշարգան նա-
րէն յաղթեց Պարսից, և ցրուեց զիրենք : Բայց
ինքը կասկած անելով քանի մը նախարարաց
մասնութեանը վրայ, ելաւ Պոլիս գնաց և Յուս-
տիմիանոսէն օգնութիւն անելով եկաւ Պարսից
վրայ, յաղթեց անոնց ու բանակնին ցրուեց : Խոս-
քով ինքը անձամբ ելաւ Հայոց և Յունաց վրայ,
չստ անգամ մեծամեծ պատերազմներ ըլլալէն վեր-
ջը՝ նորէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան, որ
մարդպան գրին Ճիհր Աջան անուանով Պարսիկ իշ-
խանը որ ստանըհինգ տարի խաղաղութեամբ կա-
ռավարեց Հայաստանը :

4. Ան ատենները անուանի եղաւ Սմբատ Բազ-

3. Աշարգան Բ. Մամիկոնեան ինչ յաղթու-
թիւններ ըրաւ Պարսից գեմ ու վերջը ինչպէս յաղ-
թուեցաւ .

4. Ինչ զխաւրք կայ Սմբատ Բազմայաղծ ու
իրէն յաջորդ մարդպաններուն վրայ .

մայազմ իշխանը. վասն զի Պարսից խոսրով թագաւորին զօրավարներէն մէկը իրմէ ապաստանելով երբոր կը հալածէր զինքը, խոսրով օգնութիւն ուզեց Մօրիկ կայսրէն, որ շատ զօրք խաւրեց, և անոնց զօրավարներն էին Մուշեղ Մամիկոնեան, Կերսես Բասենցի, և Սմբատ Բազմաշաղմ. ասոնք շատ քաջութիւններ ընելէն վերջը՝ ապաստանքը սպաննեցին ու խոսրովը նորէն թագաւորեցուցին: Խոսրով ասոնց ըրած բարեւոյցը փոխարէն Սմբատը Պարսից զօրավար անուանեց, ու Մուշեղը Ազատ իշխան: Բայց Սմբատ ուրիշ շատ քաջութիւններ ալ ընելուն համար մարդպան գրուեցաւ Արհանի կողմը, և ութը տարի մարդպանութիւն ընելէն վերջը մեռաւ, ու շատ քաջութեան, բարեկարգութեան, բարեպաշտութեան և ազգասիրութեան յիշատակներ թողուց: Սմբատէն վերջը մարդպան գրուեցաւ Դաւիթ Սահառունի, որ քսանըչորս տարի մարդպանութիւն ընելէն վերջը՝ Կոստանդնուպոլիս փախաւ. տեղը մարդպան գրուեցաւ Ալարազաիրոց Սմբատ Բազմաշաղմին որդին, որ նոյնպէս ութը տարի մարդպանութիւն ընելէն վերջը Կոստանդնուպոլիս փախաւ (605):

5. Ալարազաիրոցին մարդպանութեան ատենները խոսրով Պարսից թագաւորը թշնամեցաւ Մուշեղ Ազատ իշխանին հետ ու վրան պատերազմի խաւրեց իր Միհրան քեռորդին տասը հազար զօրքով, որուն բացարձակ իշխանութիւն տուած էր որ կրցած չարիքը հասցընէ Մուշեղայ. բայց որով հետեւ Մուշեղ ծերացած էր ու չէր կրնար ինքը մինակ գէժ դնել Պարսից, քովը կանչեց իր Աշ-

5. Գայլ Ասհան իրեն կարճութեամբը ու արժուն հնարագիտութեամբը ինչ որոգայթներու մէջ ձգեց Պարսիկները ու ինչպէս յաղթեց.

հանն անուևնով ազգականը որ շատ հնարագէտ ու
ճարտար մարդ ըլլալուն Գայլ Ղահան կ'ըսուէր,
և ազաչեց անոր որ սա պատերազմը ինքը վրան
առնէ, և անոր խոստացաւ տալ իր ունեցած հա-
րըստութիւններն ու ստացուածքը: Ղահան սի-
րով յանձն առաւ, որովհետեւ քաջ և միանգա-
մայն խորագէտ մարդ էր, և գրեթէ վստահ էր
պատերազմին յաջողութեանը վրայ, մանաւանդ որ
իրրև հաւատոյ պատերազմ՝ Արտուծոյ վրայ յոյ-
սը գրած էր: Ղահան որչափ որ աներկիւղ և վրս-
տահ էր յազթութեան վրայ, այնչափ ալ ջանաց
առանց արիւնհեղութեան ու քիչ մասով գործո-
ղութիւնը ընկրնել. ան պատճառաւ սկսաւ հը-
նարքներ գիւտեր մտածել՝ որ թշնամին որոպայթի
մէջ ձգելով ուզածը առաջ տանի. ուստի առաջ
մարդ խաւրեց Միհրանայ՝ խոստանալով որ Մու-
շեղը կը մտանէ Պարսից՝ թէ որ իրեն տան Տարո-
նոյ երկիրն ու Մուշեղայ ուրիշ հարստութիւննե-
րը. Միհրան մեկէն հաւանեցաւ, ու գարձաւ Մուշ
քաղաքը եկաւ, որ արդէն ճամբայ ելեր էր ուրիշ
տեղ երթալու: Ղահան բարեկամութիւն ձեռ-
ցրնելով Միհրանայ քովը գնաց ու համոզեց զինքը
որ իրեն չորս հազար հոգւոյ չափ Պարսիկ զօրք
տայ, որ երթայ Մուշեղը բռնէ: Ղահան իր հետը
առաւ ան չորս հազարը, խորձ գեղը եկաւ, հոն
յիսուն հոգի մայն թողուց, ու մեկաշնոնք Օձ
քաղաքը խաւրեց. վերջը ապսպրեց ան յիսուն
հոգիին որ եթէ ինքը մարդ խաւրէ իրենց՝ իր ա-
նուևնին ու նշանովը գործողութեան յաջողու-
թեանը վրայ, երթան Միհրանին խնայրնեն ու ան-
կէ ուրիշ զրք առնելով իրեն գան: Աս բանս յար-
մարցրնելէն ետքը եկաւ Օձ քաղաքը մնացած զօ-
րաց քով: անոնց ալ ապսպրեց որ զէնքերնին ի-
րենց հազուսաներուն տակը պահեն, բարեկամա-
կան կերպով քաղաքը մտնեն, և երբոր ինքը նշան

տայ՝ անխնայ ջարդէն քաղաքացիքը առանց մեկու մը խնայելու : Քիչ քիչ սկսաւ քաղաքը մայրնել զանոնք , ու ինչպէս որ առաջուց որոշած էր՝ բոլորն ալ բաժնեց ան աներուն մէջ , ուր զինեալ մարդիկ պահոււրած՝ ներս մտածը կը խղզէին , որով ամենքն ալ սպաննեց . վերջը մեկէն մարդ խաւրեց ան յիսունին որ երթան ուրիշ երկու հազար հոգի ալ օգնական բերեն . ան միջոցին որ մեկաշնոնք զայնք էին օգնութիւն կանչելու , քաղաքացւոց հազցնել առւալ Պարսից զօրաց հազուսաները , ու բոլորն ալ քաղցին դրան զխնացը շարել արւալ . երբոր ան երկու հազար Պարսիկները սկսան տեսնուիլ , հրաման առւալ դրան քովի հայ զօրքերուն որ քաղաքը մանեն փող զարնելով , իրր թէ քաղաքը առին . հասան քիչ ատենէն Պարսիկներն ալ և ուրախութեամբ քաղաքը մտան , բայց հայերը զերենք մէջ առնելով զամենն ալ թրէ անցուցին : Ահա՛ն նոյնպէս ասոնց հազուսան ալ հայոց հազցուց , և ութը հարիւր կարիճ հետք առած Մեղաի ըսուած կրճին քով զարանի դրաւ , իսկ ինքը ելաւ Միհրանայ քովը գնաց ու սկսաւ գանգալի իրեն տուած զօրքերուն վաստութեանը վրայ . ան պատճառաւ ուրիշ երկու հազար հոգի ալ ուզեց Միհրանէն , և ան Մեղաեայ կրճին քովերը բերելով զարանասուաները վրանին վազեցին ու զամենն ալ թրէ անցուցին : Երբոր աս հընարքն ալ յաջողեցաւ , մեկէն Ահա՛ն աւետար խաւրեց Միհրանայ թէ ամեն բան յաջողեցաւ , Մուշեղ բանուած է ու քիչ ատենէն ինքն ալ ամեն բան կարգի դրած կուգայ . պատգամաւորին հասնելէն քիչ մը ետքը ինքն ալ եկաւ հասաւ , ու Միհրանը հիւանդ զանելով միսիթարեց զինքը և ուրախացուց՝ ըսելով թէ քիչ ատենէն Մուշեղը կապած զխնացդ կը տեսնես , ու ամեն արամութիւնդ կը փարատի . աս բաներս ըսելէն ետքը քո :

վի մարդիկը ճամբեց, ու ինքը Միհրանին հեռա-
սանձին մնաց. երբոր իրարու հեռ սիրով կը խո-
սէին՝ զարկաւ Վահան ձեռքի նիզակովը ու սպան-
նեց Միհրանը. ետքը դռները գոցելով ելաւ ու
բիշ սենեակ մը գնաց, ուր կանչել տուաւ Միհրա-
նայ աստեղագիտին ու սուրհանգակը, և ստիպեց
որ Միհրանայ կողմանէ շուտ մը թուզթ գրէ Վար-
չիբ զորավարին, որ իրեք հազար զօրք առած՝ իրեք
օրէն իր քովը գայ. ու զամբ գրել տալէն ետքը եր-
կուքն ալ խղզել տուաւ. վերջը մնացած զօրաց
մէջն ալ կրակ ձգելով բոլորն ալ այրեց, երբոր
անանք ուտելով խմելով կ'ուրախանային:

6. Վարչափ և այսպիսի հնարքներուն յաջողե-
լէն ետքը, Վութ ըստւած լեռը գնաց բանակը հոն
գրաւ, ու կ'սպասէր Վարչիբին գալուն. և որպէս
զի զանոնք ալ խարէ՛ Միհրանայ վրանը կանգնել
տուաւ ու վրանին գիմացը Հայ իշխանները կայնե-
ցուց Պարսից հազարասնեքով: Երբոր եկաւ Վար-
չիբ՝ իշխանները իրմէ առաջ ներս մտան, անոնց
ետեկն մտաւ Վարչիբ ու ըստէ տուաւ Վահանայ՝
կարծելով թէ Միհրանն է: Վահան բարկանալով
մը ըսաւ. « Վարչիբին. » Արդիք անօրէնութեան,
թերևս մաքերնիք գրած էիք Հայերը Պարսից ա-
զանգը գարձընելու. անարժան էք կենդանու-
թեան », աս ըսելով հրամայեց ծառաներուն որ
Վարչիբը ծեծեն. երբոր անիկայ սկսաւ աղաչել
որ գէթ կենացը խնայէ, ըսաւ Վահան. « Թէ որ ու-
զածս կատարեա՛ կը խնայեմ քեզի. ուստի մէկէն
գրել տուաւ իր զօրասպետին որ հազար հոգի Վութ
լեռան ստորոտը խաւրէ, հազար հոգի ալ ուրիշ
տեղ մը, մնացած հազար վեց հարիւրն ալ իրենց
տեղը ձգէ, ու ինքը տասը հոգւով իրեն գայ: Թուզ-

6. Վահան ինչ հնարքով զՎարչիբ բռնեց ու
սպաննեց:

Թը գրել տալէն ետքը մէկէն սպաննել առաւ Վարչիբը . ու երբոր մէկալ զօրապեան ալ եկաւ , զան ալ խզել առաւ . վերջը ասդիս անգին ցրուած զօրացը վրայ վազելով՝ ամէնն ալ Թրէ անցուց , որով այնչափ բազմութենէն հազիւ քառասուն հոգիի շափ ազատեցան ու փախան Խոսրովու քով գացին , ու եղած կտորածները պատմեցին :

7 . Խոսրով շատ տրամեցաւ ու բարեկացաւ Վահանայ գէմ , առջինէն աւելի բազմութիւ զօրք առաւ Միհրանայ Վախաանկ հօրեղբօրը ձեռքը ու Վահանայ վրայ խաւրեց : Վահան Վախաանկայ գէմ վարպետութեան տեղը քաջութիւնն ու կենդանի հաւատքը զէնք ու սքնական ասնելով իրեք չորս անգամ սասափկ ջարդ առաւ Պարսից ու փառասոր յաղթութիւններով իր զօրավարութիւնը պատկեց : Վահան աս յաղթութիւններէս ետքը արդէն ձերացած ըլլալով անընդհատ պատերազմներէ ալ տկարացած՝ մեռաւ , և իր հայրենասիրութեանն ու աստուածաբաշտութեանը հետ անմտանալի ըրաւ նաև իր պատերազմական հնարագիտութիւնը , որուն մէջ Թէ սր շափազանց երևնայ խորագիտութիւնը : Պարսից անգթութեանը՝ և ան միջոցին Հայաստանի խեղճութեանը նայելով գիւրաւ կ'արգարանայ :

8 . Վահանայ քաջութեանը ժառանգորդ եղաւ իր Սմբատ հայրենասէր որդին որ միշտ յաղթող գանուեցաւ անպարտելի ու զօրմանալի քաջութեամբ և Պարսից չորս երևելի զօրավարները ըսպաննեց : Սմբատայ ալ յաջորդեց Վահան որդին որ իր նախորդներուն պէս քաջ , կարիճ ու պատերազմող եղաւ :

7 . Վահան ինչպէս արիացաւ Վախաանկին գէմ ըրած պատերազմին մէջ ու ինչպէս մեռաւ .

8 . Վահանէն ետքը որոնք յաջորդեցին .

ԴԱՍ ԻԳ .

Հագարացոց Հայաստանի տիրելէն ինչո՞ւսն
Բագրատունեաց քագարութեան սկիզբը :

1. Վահանայ մեանէն ետքը երբոր Վարազ-
տիրոց մարզպանը Հայաստանէն փախաւ, նախա-
բարները միարանամ՝ Յունաց կայսրէն խնդրեցին
որ Գաւիթ Սահառունին իրենց կիւրապաղաս
գնէ. բայց իրէք տարիէն վերջը նորէն խռովութիւն
կընալով մէջերնին՝ Գաւիթ Սահառունին հանեցին
կիւրապաղասութենէն : Ան միջոցներուն Պարս-
կաստան խռովութիւն ըլլալով Հագարացիք զօրա-
ցան և Պարսկաստանի տիրեցին : Անկէջ այլ և այլ
խուճեր ու ասպատակներ Հայաստանի վրայ վա-
զեցին ու սկսան շատ տեղ աւրել աւրըշտրկել, ու
շատ ջարդեր ըրին Հայաստանի մէջ (635) :

2. Վահան Կամարական՝ Գայլ Վահանայ թո-
ւոր, տեսնալով ազգին թշուառութիւնները ու թը
հազարի շափ զօրք ժողովց, ու իր Տիրան եղբօրը
և Մուշեղ զօրավարին ձեռքը տալով Հագարա-
ցոց դէմ խաւրեց : Ասոնց հետ միացաւ Սահառ
Անձեացին իրեն զօրքերովք. բայց պատերազմիւ
տակնը Սահառ թշնամեաց կողմը անցնելով սկը-
սաւ իր ազգայիններուն դէմ պատերազմիլ, ասով
թշնամիները զօրացան ու բոլոր Հայերը ջարդեցին

1. Սմբատայ ու Վահանայ մահաւընէն ետքը
Հայաստան ինչ վիճակ ունեցաւ .

2. Հագարացիք ինչպէս Հայաստանի տիրեցին
ու ասիկայ ինչ վնաս ըրաւ ազգերնուս .

երևնց զօրավարներովք հանդերձ : Հայաստանի ներսերն ալ վազելով շատ վնասներ ըրին . Դուին քաղցին մէջ ալ տասուերիս հազար մարդ թմեանցընելէն վերջը երեսունըհինգ հազար հոգի ալ գերի տարին :

3 . Հազարացոց առջի յարձակմունքէն վերջը Յունաց կողմանէ կիւրապաղապարուեցաւ Վարազ տիրոջը , որ տարիի մը շափ պաշտանը ընելէն ետքը մնաւ , ու տեղը անցաւ իր օրդին Սմբատ : Ասոր կիւրապաղատութեան երկրորդ տարին Հազարացիք նորէն անթիւ բազմութեամբ Հայաստանի վրայ եկան և շատ կոտորածներ ըրին : Նախարարները տեսնալով որ Հազարացոց անթիւ բազմութեանը և անոնց գազանային անգթութեանը դէմ դնելը գրեթէ անկարելի է , աւելի օգտակար սեպեցին խոնարհութեամբ յաղթել անոնց գազանութեանը քան թէ պատերազմով . ուստի իրարու հետ միաբանեցան , շատ ընծաներ տարին , հպատակութիւն խոստացան անոնց և հարկ տալ Յունաց չհպատակելով :

Մտկեց զուս բացուեցաւ որ երբեմն Յոյները և երբեմն Հազարացիք Հայաստան արշաւելով ստակալի վնասներ հասուցին մեր խեղճ երկրին . վասն զի երբոր Յոյները կը լռէին թէ Հայերը Հազարացոց հպատակեր են՝ զօրքով Հայաստանի վրայ վազելով վրէժխնդիր կ'ըլլային . նոյնպէս երբոր Հազարացիք կ'խանային թէ Յունաց հետ վերաբերութիւն մը ունեցեր են , մեղքերնէն ու մղաքերնէն անցած չարիքը կ'ընէին Հայոց : Աս բանս քառասուն տարիի շափ տեւց :

Ան քառասուն տարուան մէջ Սմբատին տեղը կիւրապաղատ գրուեցաւ Համաղատայ Մամիկոնեան , որ հինգ տարի կիւրապաղատութիւն ը-

3 . Յոյք ինչու Հայոց վրայ սկսան արշաւել .

րաւ . տեղը անցաւ Գրիգոր , որ քանիչչորս տարի իշխելէն ետքը պատերազմի մէջ մեռաւ (182) :

4. Առջի Հագարացի ոստիկանը եղաւ Աբղլլա անունով մէկը , որ Հայերը որսալու համար նախ սկսաւ քաղցրութեամբ վարուիլ հետերնին , ու վերջը գրեթէ բոլոր նախարարները և Սահակ կաթուղիկոսը բռնեց ու շղթայահաս Ռամասկոս խաւրեց : Նախարարներուն մէջէն փախաւ Սմբատ Բիւրատեան Բագրատունին , և Յուսսինիանոս կայսրէն օգնութիւն առնելով , ուրիշ մնացած նախարարներն ալ ժողովելով Աբղլլային վրայ պատերազմի ելաւ , և անանկ սաստիկ ջարդ տուաւ որ հազիւ թէ Աբղլլան միայն կրցաւ ազատիլ : Իսկ Սմբատ կիւրացազատութեան պատիւ առնելով վեց տարիի շափ հանդարտութեամբ ազգը կառավարեց , ինչուան որ Մոհմաա անունով զորավարը եկաւ ու սկսաւ նորէն վնասներ հասցընել Հայաստանի . ան առնն Սմբատայ հետ միացաւ Ներսէս Կամարականը , ու մէկտեղ յանկարծակի Մոհմաաին վրայ վազելով փախուցին զինքը :

5. Մոհմաա յաղթուելուն վրայ սաստիկ բարկացած երբոր շատ զորքով նորէն Հայաստանի վրայ կուգար որ տակնուվրայ ընէ երկիրը , Սահակ կաթուղիկոս՝ որ Ռամասկոս գերութեան մէջ էր ու միանգամայն Մոհմաաին սիրելի բարեկամ , առանա լսելուն պէս ինզրեց որ Մոհմաաին հետ տեսնուի : Բայց ճամբան գալու առեներ մեռաւ , ու չկրցաւ հետը տեսնուիլ . թուղթ մը գրեց Մոհմաաին . Մոհմաա երբոր իմացաւ Սահակայ մահը , հրամայեց որ շթաղեն զսուրբը ինչուան որ ինքը

4. Աբղլլա ինչ բռնութիւն ըրաւ Հայոց գէմ ու ինչպէս վնասուեցաւ Հայաստանէն .

5. Հայաստան ինչպէս հրաշքով խաղըսեցաւ Մոհմաաին բարկութենէն .

դայ տեսնէ : Երբոր Մահմա մեւելին խուցը մտաւ
ու բարև տուաւ սուրբին , ա՛ն ալ բարևը աննելով
երկնաց ձեռքը ու Թուղթը տուաւ Մահմաին
իրև թէ կենդանի ըլլար : Կարգաց Մահմա սրբ-
բոյն ինզիրքը , ու ըսաւ , « Կատարուի ինզիրքդ
՛ սրբդ Ասուածոյ » : Ան հրաշքէն շարժամ՝ ամե-
նեին մնաւ մը չըբաւ Հայոց , և ամիրապետին միջ-
նորգութիւն ընելով ազատել տուաւ Գամասկոս
եղած բոլոր Հայոց գերիները :

6. Քիչ մը ատեն խաղաղութեամբ երթալէն
ետքը՝ Հայաստանի սասիկան խրկուեցաւ Կաշմ,
որ խաբէութեամբ բոլոր նախարարները Նախ-
չուանայ եկեղեցոյն մէջ ժողովելով այրել տուաւ :
Կաշմէն ետքը անզգամութեան կողմանէ անուանի
եղաւ Եզիա սասիկանը , որ ծանր սուրբերով և
ասպատակութիւններով սաստիկ նեղեց Հայերը :
Երկու տարիէն ետ կանչուելով իրեն տեղը Պատ-
րիկ անուանեց Սահակ Բագրատունի բարեպաշտ
մարդը , որ խաղաղութեամբ կառավարեց ազգը
խել մը ատեն : Սահակէն վերջը գրուած սասիկան
ներուն մէջ ամենէն աւելի Հայերը տանջողը եղաւ
Հասան սասիկանը , որուն ատենը Հայերը Մուշեղ
Մամիկանեանին առաջնորդութեամբը մէկ քանի
կոտորածներ ըրին Հազարացոց . սա պատճառաւ
սասիկան գրուեցաւ Եզիա Բ . և ասիկայ զՀայերը
անանկ շարշարեց որ նմանը ամենեին չէր եղած :

Կաշմէն ինչուան Եզիա Բ . որ գրեթէ հարիւր
տարուան միջոց է , սասիկան գրուեցան ասոնք .
Վ իլթ , տասը տարի . Մահմա , հինգ . Աբդլա-
զիզ , տասը . Մրուան , մէկ . Աշոտ Բագրատունի ,
տասնըհինգ . Եզիա Ա . երկու . Սահակ Բագրա-
տունի Պատրիկ , վեց . Սիւլէյման , իրեք . Պեքեր :

6. Կաշմ ու իրեն յաջորդ սասիկանները ինչ
պէս շարշարեցին զՀայերը :

ինք . Հասան , իրեք . Հայ իշխաններ , հինգ : Ե-
զիտ Բ . տասուերկու (797) :

7 . Եզիտին տեղը սասիկան գրուեցաւ խուզե-
մայ անունով Հազարացին , որ հանդարտ խաղա-
ղասէր և լաւ մարդ ըլլալով քսան տարի սասիկա-
նութիւն ըրաւ ու ազգը հանգչեցուց . երբոր ինքը
մեռաւ , տեղը անցաւ Հոլ անունով մէկը , որ նոյն-
պէս խաղաղասէր ըլլալով խաղաղութեամբ կա-
ռաւարեց ազգը տասներեօթը տարի : Երբոր Հոլ
եա կանչուեցաւ՝ նախարարներուն ազաչանքովը
Պատրիկ գրուեցաւ Բազարաս Բազրատունին ,
որ տասնըչորս տարի իշխելէն վերջը յանցաւոր
զանուելով ակրութեան բաներուն մէջ՝ երեսէ ըն-
կաւ , ու տեղը խաւրուեցաւ Ապուսէթ սասիկա-
նը , որուն ապապրեր էր ամիրապետը որ վարպե-
տութեամբ բանէ Բազարատը ու իրեն խաւրէ . ան
ալ խարդախութեամբ բանեց զինքը ու ամիրապե-
տին խաւրեց , ուր Բազարաս մահուընէ ազատե-
լու համար՝ առ երեսս հաւտաքը ուրացաւ : Երբոր
Սասունցիք իմացան Բազարատայ բանուիլը , սաս-
տիկ կատղած Ապուսէթին վրայ վազեցին , զինքը
սպաննեցին և բոլոր զօրքը ջրուեցին : Ամիրապե-
տը իմանալով եղած գործողութիւնները՝ անհա-
մար զօրքով խաւրեց Բուղա սասիկանը , որ բոլոր
նախարարները բանելով իրեն խաւրէ . իսկ հասա-
րակ մարդկանց մէջէն տեսքով , քաջ ու բանի ե-
կող մարդիկները առձեռքընէ ու իր քովը պահէ ,
մէկայնոնք առանց իմացելու սպաննէ :

8 . Բուղա ամէն չարիք ընելով բոլոր Հայաս-
տանը արիւնջուայ ըրաւ , ոչ աղաչանայ , ոչ խեղ

7 . Եզիտէն ետեւ եղող սասիկանները ինչպէս
վարուեցան Հայոց հետ .

8 . Բուղա ինչ անգթութիւններ ըրաւ ու ո՞վ է
Սմբատ խոստովանող .

Ճութեան և ոչ ընծայից կը նայէր . այլ ամենքը
անխտիր կը մեռցընէր : Աս բաներս տեսնալով Սըրժ
բառ Բաղբաատունին ուզեց որ ուրիշներուն փա-
սովը ինքը աս թշուառութիւններէն ազատի . ուս-
տի շատ ընծաներով Բուզային դնաց , ու ամէն բա-
նի մէջ անոր շարութեանցը խորհրդակից կ'ըլլար
և առաջնորդ Հայաստան մտնալու : Բաց ինչպէս
որ սովորաբար կ'ըլլայ մասնիչներու , ինքն ալ
փոխձանին չհասաւ . փասն զի Բուզան Հայաստա-
նէն երթալու ատեն ուրիշ կալանաւորաց հետ մեկ-
տեղ զինքն ալ Պաղտատ տարաւ , ու իր տեղը աս-
տիկան գրաւ Շէխի անունով Պարսիկ մը :

Ամիրապետը բոլոր նախարարները բանտ գնել
տուաւ , Սմբատն ալ հետերնին , ու սկսաւ ստի-
պել որ հաւատքնին ուրանան : Ոմանք հաւատք-
նին ուրացան , և ոմանք նահատակեցան . Սմբատ
ալ զղջալով բրած շարութեանցը վրայ , հաւատ-
քին վրայ հաստատուն կենալով բանտին մէջ մե-
ռաւ , ու անով Խոստովանող ըսուեցաւ : Աս թը-
շուառութիւններէս չորս հինգ տարի վերջը սկսաւ
Բաղբաատունեաց թաղաւորութիւնը :

ԻՇԻԱՆՈՒԹԻՒՆ

Բ Ա Գ Ր Ա Տ Ո Ւ Ն Ե Ա Յ

Գ Ա Ս Ի Ե .

Բազրատունեաց թագաւորութեան սկիզբը :

1. Երբոր մեր ազգին դասն գերութեան 431 տարին ըննցաւ, ուզելով Աստուած իր ողորմութեամբ մտիթարել ազգը և առջի փառքը կերպով մը նորոգել, Աշտ անունով Բազրատունի նախարարը հանեց, որ իրեն ազգասեր, ազնիւ և խնայասուն բնութեամբը ամենուն սիրելի ըլլալով կանգնեց Թագաւորութիւնը և ազգը գերութենէ ազատեց :

Աս Աշտը Սեբաստիանոսին որդին էր . երբոր Շէխին Հայաստանի վրայ օստիկան գրուած էր՝ Աշտ շատ արդիւնք ցրցուց անոր առջևը՝ իր ազգակիցներուն վրայ գութ ունենալով, Հայաստանի աւերակ դարձած տեղերը նորոգելով և տրութեան ամեն բաներու մէջ հաւատարիմ գրանուելով զամենքը կը յորդորէր որ իրեն պէս հաւատարիմ ըլլան և խոսովութիւն չհանեն :

1. Բազրատունեաց Թագաւորութիւնը որուն ձեռքովք սկսաւ ու ինչպէս .

Երբոր Հէիֆն եա կանչուեցաւ, ամիրապետաբ շատերէն լսած ըլլալով Աշոտին հաւատարմութեան ու լաւութեան անունը՝ ուղեց փոխարէն մը ընել Աշոտին. ուստի շատ ընծաներով և թագաւորապայել զգեստներով Ալի Էրմէնի անունով ուրացեալ Հայ նախարարը խաւրեց որ գայ Աշոտը բոլոր Հայաստանի վերակացու զնէ, և առ եղաւ 85⁰ին : Աշոտ երբոր առաւ առ Իշխանութիւնս, հաւատարմութիւնը աւելցնելով զօրքերը շատցուց, սկսաւ բարեկարգութիւններ ընել ամէն բանի մէջ, իր Արսառ քաջ եղբայրը սպարապետ դարաւ, և անոր հետ մէկտեղ Հայաստանի թշնամիները վարնուեց, և անոնց յաղթութեան ձայնը բոլոր շրջակայ տեղերը տարածուելով ամենուն սիրտը վախ ձգեց ու ալ անկէջ ետքը զազրեցան Հայաստան արշաւելին :

2. Ան միջոցին որ Աշոտ Հայաստանը բարեկարգելու հետ էր՝ Պաղտատի մէջ նոր ամիրապետ նստելով, Բուզային տակեր գերի գնացած նախարարները ինզրեցին նոր ամիրապետէն որ գերութենէ ազատին. ու երբոր կատարուեցաւ ինզիրքնին՝ մեծ ուրախութեամբ Հայաստան եկան, և իրենց ուրացութեանը վրայ զոջալով Աշոտին հետ միարան սկսան կարգի զնել Հայաստանը : Նախարարները ամէն կերպով խնամալով Աշոտոյ կատարելութիւնները, ինզրեցին ամիրապետէն որ թագաւորեցնէ վրանին Աշոտը՝ խոստանալով որ հաւատարիմ կը կենան իրենց հաւատակութեանը մէջ : Ամիրապետը հաւանեցաւ նախարարներուն ազաւանացը. ու թագ և թագաւորական ծիրանի խաւրեց Աշոտին : Աշոտին փառաւորուիլը ըսելով Յու-

2. Նախարարները ինչպէս գերութենէ ազաւանցան ու Աշոտ ինչպէս թագաւորեց .

նաց Աստիլ կայսրը որ ազգաւ Հայ ու Արշակու-
նեաց ցեղէն էր, թագ մ' ալ ինքը խաւրէց (885):

3. Աշոտ թագաւորելէն վերջը առջի թագաւո-
րական կարգերը նորոգեց, աւրուած տեղերը նո-
րէն շինեց, երկրագործութիւնը սկսաւ ծաղկեցը-
նել, թագաւորանիստ քաղաքն ալ Բագարանը ը-
րաւ: Կամաց կամաց սկսաւ նուաճել Հիւսիսային
ազգերը, որոնք աստե՛նով Հայոց ձեռքին տակն էին,
նայնպէս նաև Գուգարացիներն և Ուտեպիները,
որոնց կարգ կանոն գնելով խոհեմ առաջնորդներ
ու իշխաններ գրաւ անոնց վրայ: Աս գործադու-
թիւններէս վերջը Աշոտ Պօլխ Անոն կայսեր տե-
սութեան գացած ըլլալով, պատուով եւս գաւառա-
լու ատենը երբոր Շիրակ հասաւ, ծանր հիւան-
դացաւ, ու տեսնալով որ մեռնելու մօտ է կանչեց
կաթուղիկոսը, և բոլոր հոգևոր պատրաստութիւն-
ները ընելէն վերջը եօթանասունըմէկ տարեկան
մեռաւ քսանըվեց տարի իշխանութիւն ընելէն և
հինգ տարի թագաւորելէն վերջը: Աշոտ խելքով
ու խոհեմութեամբ առաւ թագաւորութիւնը, քա-
ղութեամբ պահեց, քարեպաշտութեամբ անցուց
կեանքը և ամենուն իրաւցընէ փրկիչ և սիրելի
Հայր հասարակաց եղաւ:

3. Աշոտ ինչ կարգաւորութիւններ ըրաւ ու
ի՛նչպէս մեռաւ .

ԳՍՍ ԻԶ .

Սմբատ Ա . իրևե ասեևեի խառնորթիւնեան
ու մահը :

1 . Սմբատ Աշոտայ որդին և յաջորդը Գագա-
րայ աշխարհքն էր երբոր լսեց իր հորը մահը , ուս-
տի շուտ մը եկաւ որ թագաւորութիւնը անէ , և
բոլոր ազգին հաւանութեամբը թագաւոր եղաւ :
Աս բանս լսելով Աշոտին Աբաս եղբայրը , ուղեց
որ ինքը թագաւորէ , և պատերազմ բացաւ Սմբա-
տին հետ . բայց Գէորգ կաթողիկոս արգիլեց զին-
քը՝ երգում անելով Աբասէն որ նորէն չապրա-
տամբի . թեպէս անիկայ երգմանը վրայ հաստա-
տան չկենալով նորէն ապստամբեցաւ ու յաղ-
թուեցաւ Սմբատին :

2 . Սմբատ Աբասին յաղթելէն վերջը եղած գոր-
ծողութիւնները և ան ասեմի հանգարաութիւնը
խնայրնելով ամիրապետին , նորբայտեան թագ ըն-
դունեցաւ անկէց . իոյնպէս նաև Ասն կայսրէն
չսա պատիններ ասաւ : Սմբատայ աս փառաւո-
րութեանցը նախանձելով Ափշին Պարսից ստի-
կանը՝ վրան պատերազմի ելաւ . Սմբատ ալ երե-
տան հազար զօրքով անոր դէմ պատերազմի ե-
լաւ , բայց ստանց արիւնհեղութեան քաղցրու-
թեամբ սիրտը ասաւ ու իր սեղը զարձուց : Եր-

1 . Սմբատ Բնչպէս թագաւոր եղաւ ու Բնչ
կոխ ունեցաւ իր Աբաս եղբորը հետ .

2 . Բնչու Ափշին պատերազմ բացաւ Սմբատայ
դէմ ու Բնչպէս յաղթուեցաւ .

կու տարիէն վերջը Ափշին զգնալով ըրած հաշտու-
թեանը վրայ, ուզեց հայաստանը նուաճել. ուստի
չստ զօրքով եկաւ սուա ձայն մը հանելով թէ հայ-
աստանէն սլիախ անցնի երթայ. բայց երբոր իմա-
ցուեցաւ խարդախութիւնը, մեկէն Սմբատ հրա-
ման խաւրեց նախարարներուն որ իրենց զօրքերու-
վը գան Ժողովուն. և անոնց հետ միաբան վազեց
Ափշինին վրայ, շարաշար յաղթեց անոր և փա-
խուց զինքը:

3. Ան միջոցին Ահմատ Միջագետաց սասիկանը
սպաստամբելով ամիրապետէն հայաստանի վրայ
վազեց. քանի մը տիրասէր նախարարներ թագա-
ւորին հետ միաբանելով, վաթառն հազար զօրքով
Ահմատին դէմ պատերազմի պատրաստուեցան:
Բայց ինչպէս շատ անգամ կը հանդիպի որ նաև
քաջերուն բազմութեանը մէջ վատեր գանուին,
ասանկ ալ սա դիպումն իս մէջ Գաղիկ Սմբատաց
աները փառասիրութեամբ ուզելով թագաւորու-
թիւնը ինքը առնել՝ ծածուկ Ահմատին հետ միա-
բանեցաւ, ու Սմբատաց շար խորհուրդներ տալով
և գեշ ճամբաներէ առաջնորդելով անոր զօրացը
կ'ուզէր որ յաղթուի. բայց հայերը քաջութեամբ
պատերազմեցան յաղթեցին Ահմատին ու Գաղ-
կաց անխելք յոյսն ալ պարապը հանեցին: Գա-
ղիկ իրեն արժանաւոր պատիժը գանալով Սմբա-
տին քեւորդիէն սպաննուեցաւ:

4. Ափշին երբոր լսեց թէ նախարարները պա-
տերազմին ըմնալուն պատճառաւ զրուեր են՝ նա-
րէն վազեց հայաստանի վրայ. բայց սա անգամ

3. հայերը ինչպէս Ահմատին ալ յաղթեցին
ու ո՞վ է Գաղիկ Սմբատաց աները.

4. Սմբատ Ափշինին կատաղութենէն ինչպէս
խաղբսեցաւ ու ինչ հանդիպեցաւ Յուսուփայ և
իրեն մէջ.

նախարարները թագաւորին հրամանին չհնազանդելով օգնութեան չեկան. սասով հարկադրուեցաւ Սմբատ հաշտութիւն խօսելու՝ պատանդ առնելով իր որդին և մեկ եղբորորդին: Ախշին երբոր առ բաներով գոհ չըլլալով կ'ուզէր ուրիշ շարքներ ալ հասցնել. ինքը չարաչար սատկեցաւ, պատանդներն ալ ազատեցան: Տեղը անցաւ իր եղբայրը Յուսուփ. երբոր առ բանս լսեց Սմբատ գիտնալով Յուսուփին խարդախ և անգութ բնաւորութիւնը սղաչեց ամիրապետին որ ասկէց վերջը հայաստանին հարկը ուղղակի թագաւորը խառէ ամիրապետին ու օտարականները ամենեկին շնորհներ, որովհետև սաստիկ կը նեղէին զհայերը: Ամիրապետը կատարեց Սմբատայ խնդիրքը, և թագաւորական թագ և ուրիշ շատ ընծաններ ալ խառեց Սմբատայ: Առ բանիս Յուսուփ սաստիկ նեղանալով մեկէն զօրք ժողովեց ու սկսաւ հայաստանի վրայ վազել. Սմբատ ալ իր զօրքերովը զիմացը ելաւ. բայց գեռ պատերազմ չըրած՝ երկու կողմէն ալ ուզեցին հաշտութիւն ընել և բարեկամութեան նշան՝ Յուսուփ ոսկիէ թագ խառեց Սմբատայ:

5. Հազիւ թէ քիչ մը հանգստութիւն գտաւ Սմբատ թշնամեաց ձեռքէն, Եգեթացոց Կոստանդին թագաւորը առանց պատճառի պատերազմ բացաւ Սմբատայ հետ. անոր դէմ գնաց Սմբատ Վրաց Ատրներսէ՛ թագաւորին հետ. ստոնք յաղթեցին Կոստանդինին, և Ատրներսէ՛ Կոստանդինին հետ հաշտութիւն խօսելու ատենը՝ խարեւութեամբ բռնեց զինքը ու թագաւորին բերաւ: Սքմբատ չորս ամիս Անիի բերդին մէջ պատուով պա-

5. Սմբատ ինչպէս յաղթեց Կոստանդինին, ինչպէս Ատրներսէ՛ն ու իրեն զաւակիցները պատեց ու Գազիկ ինչպէս թագաւորեց.

հէրէն ետքը զԹագաւ Կաստանդինի վրայ ու ազա-
տեց զինքը: առ բանս Ատրնէրսեհ իրեն անար-
գանք սեպելով ուրիշ քանի մը նախարարաց հետ
խօսք գրաւ որ Սմբատը սպաննէ: Եւ որովհետեւ
նոյն միջոցին Թագաւորը Տաշրաց գաւառն էր, ա-
պրտաամբ նախարարները մէջէննէն մէկը որոշե-
ցին որ Երթայ Թագաւորին հետ բարեկամութիւն
ձեռացնելով զինքը սպաննէ: Աս բանիս վրայ ա-
պահովնալով իրենք վազեցին Անին առին, վերջը
Երազգաւորս գացին, ու Թագաւորին սպառաք
մանելով ժամէ ՚ի ժամ կ'սպասէին որ Սմբատին
սպաննուիլը լսեն: Բայց բարեբազդութեամբ իմա-
ցաւ Թագաւորը անոնց դաւը, ու մէկէն իր զոր-
քերը ժողովց որ ապստամբները նուաճէ: Պատե-
րազօմի տակն Թագաւորին զօրքերը իրենց ակրօջը
սիրովը վառուած, այնպիսի սատակի ջարդ կու-
տային ապստամբներուն, որ Սմբատայ սիւտը չգի-
մանալով կ'ազաչէր որ իննացեն ապստամբներուն:
Ատրնէրսեհ տեսնելով եղած ջարդը, եկաւ Թա-
գաւորին ոտքը ընկաւ ու Թողութիւն ինդրեց իր
տակերախառութեամբ - Սմբատ ներեց անոր յան-
ցանացը, և մէկալ նախարարներուն աչքերը փո-
րել տուաւ: Բայց անամկով ալ խաղաղութիւն
չգտաւ: Վասն զի իր քեռորդին Գազիկ Արծրունի
Թեթի սրաածնափ մը համար աւրուեցաւ Թագա-
ւորին հետ, զնաց Յուսուփին հետ միաբանեցաւ
ու Սմբատայ վրայ մեծամեծ ամբարտանութիւն
ներ ըրաւ անոր: Յուսուփ ալ հայոց մէջը երկպա-
սակութիւն ձգելու մտքով Գազիկայ Թագ գրաւ
ու իր Վտապուրական աշխարհքը խաւրեց: անի-
կայալ շատ նախարարներ իր կողմը որսալով յայտ-
նի սկսաւ Թագաւորել (908):

Ե. Երբոր լսեց Սմբատ Գազիկայ Թագաւորելը

Ե. Սմբատ երբոր Գազիկայ Թագաւորելը լսեց

մեկէն Յովհաննէս կաթուղիկոսը շատ ընծամե՛րով
Յուսուփին խաւրեց որ երթայ Յուսուփին սիրտը
զիջէցնէ ու խաղաղութիւն ընել տայ . բայց սասի-
կանը փոխանակ զիջանելու կաթուղիկոսին աղա-
չանացը՝ բանա գրաւ զինքը , ու սկսաւ պատերազ-
մի պարարասութիւն տեսնել : Գարնան սիւղ բնե-
րը Գաղկոսյ սասընտրութեամբք սկսաւ Հայաս-
տանի ներսերը վազել ու մեծամեծ կոտորածներ
ըրաւ , որով նախարարներէն ոմանք յուսահատե-
լով գնացին անձնատուր եղան Յուսուփին : Արժ-
բատ իր ունեցած քիչ զորքովք որչափ որ կրնար
զեմ կը գնէր . բայց ճարը հասնելով Գուգարա-
ցոց երկիրք փախաւ . սա բանս որ խնացաւ Յու-
սուփ՝ աւելի ազատութեամբ սկսաւ Հայաստանը
քանգել ապականել , ինչուան Սեբաս տեսնելով
եղած շարիքները՝ ելաւ Գուգարացոց աշխարհ-
քէն ու սկսաւ ինքն ալ պատերազմի պատրաս-
տուիլ Յուսուփը վաճանելու համար . բոլոր ունե-
ցած զօրքերը ժողովելով իր երկու որդւոցը յը-
ւաւ . անոնք մեծամեծ քաջութիւններ ընելով եր-
բոր թշնամեաց պիտի յաղթէին՝ Սեորգիները թըշ-
նամեաց կողմը անցան . անով Սեբասոյ զօրքերը
հարկադրուեցան փախչելու , և բոլորովն յաղ-
թուեցան : Ար քանս երբոր տեսան ուրիշ շատ նա-
խարարներ , փոխանակ իրենց թագաւորին օգնե-
լու՝ գնացին Յուսուփին անձնատուր եղան , որ-
պէս զի բաներնին ապահովցընեն . բայց Յուսուփ
տեսնալով նախարարներուն բազմանալը վախցաւ ,
ու սուտու՛մուս պատճառներով շատը յայտնի ըս-
պանեց , շատը ծածուկ իողեց , ոմանց ալ թոյն
առաւ , որով քովք քանի մը մեծ նախարարներ
միայն մնացին :

Ինչ ըրաւ ու Յուսուփ ինչպէս տիրապետեց Հայ-
աստանի .

7. Տեսաւ Սմբատս որ բոլոր նախարարները քովն հեռացեր են, ու ինքը շէկնար դեմ գնել Յուսուփին, ուստի իր մարդիկներովք քաշուեցաւ Ասպոյտ բերդը, որ անասիկ էր: Յուսուփ եկաւ պաշարեց բերդը ու Հայոց զօրքերը գրաւ որ բերդապաններուն հետ պատերազմին: Սմբատայ սիրար շղիմացաւ երկու կողմէն եղած ջարդերուն որ իրեն համար էին, և վեհանձնութեամբ յանձն առաւ աւելի իր թշուառութիւնը քան թէ աեանել իր ազգակիցներուն մահը, ու ինք զինքը Յուսուփին ձեռքը առաւ, երգմունք անելով անկէ որ իրեն անձին վրաս մը չընէ: Յուսուփ առջի բերանը պատուով պահեց զինքն ու ետքը թողուց որ Շիրակ երկմայ. բաց երբոր Գագիկը քովն փախաւ, Յուսուփ բարկանալով խարեութեամբ կանչեց Սմբատը ու շղթայի դարկած Գուին աարաւ. հան աարի մը մութ բանափ մէջ պահեց հողի վայ պատկեցընելով ու միայն հաց և ջուր առնով վերջը երբոր լսեց որ Երնջակ բերդին մէջ շատ մը նախարարներ ապստամներ են՝ դեռաց ան բերդը առնելու, ու երբոր պատերազմով շիրքաւ յաղթել հրաման առաւ որ Սմբատը բերդին գիմարցը առնին ծեծեն ու նախասեն: Գահիձները սկսան ասնջանքը աւելցընել որ հաւատարմութեանց նախ թաշկինակով բերանը գոցեցին որ շունչ չկարենայ անել. վերջը գեղարսնով վայր նմեցին, ու գլխուն վրայ ծանր բեռներ գնելով առար հողի վրան կ'ընային որ նեղութիւնը սաստկացընեն: Աս ամէն անգթութիւններս ընելէն վերջը, քանի որ գետ ող էր մորթը հանեցին ու Գուին ասնելով խաշեցին երանելի թագաւորը, որուն վրայ լոյս ծագեց և շատ հրաշքներ ալ եղան: Աս բա

7. Սմբատ ինչ գառն ու սարափելի մահ ունեցաւ .

նիս մէջ մեր նախարարաց ըրածը այնպիսի գործողութիւն մըն է որ մէջը յայտնի կը տեսնուի նախանձու և ասեղութեան կիրք , քաղաքականութեան պակասութիւն , անձնասիրութիւն , տիրականցութիւն , և գաշավէժ խորհուրդ , որ ասոնք ամէնն ալ մեծամեծ ու անպատա ազգիւրներ են անմիաբանութեան , ազգատեցութեան և կրօնից ու մարդկութեան պակսելուն , որով գաղանային բնութիւն մը անոնց տեղը կը տիրէ , ինչպէս որ տեսանք սա բանիս մէջ ու պիտի տեսնենք բոլոր Բաղրատունեաց և Ռուբինեանց պատմութեան մէջ շատ տեղ : Թէ որ Թագաւորը գէշ ըլլար (ինչպէս էր Արաաշիր Արշակունեաց վերջի Թագաւորը) , ան ասեն քիչ մը իրաւունք կրնային ունենալ նախարարները . բայց ո՞վ չտեսներ Սմբատայ սրանչէլի ասաբինութիւնները , այսինքն Հայրենասիրութիւնը , Խաղաղասիրութիւնը , ներգրամատութիւնը , Հայրագութիւնամբը , արգարութիւնը և իրեն ուրիշ շատ կատարելութիւնները . որով մէկէն յայտնի է ըլլայ իր Թշնամեաց ըրածին վերջի աստիճանի շարութիւնը (314) :

ԳԱՍ ԻԷ .

Աշտ Բ . Երկար , ու իր քաղաքիւնները :

1 . Աշտ Բ . երբոր լսեց ՚որը մահը , իր ունե-
ցած քիչ մը զօրքը կարգի գրաւ ու անոնց հետ
մեկտեղ վազեց Հայաստանի ան քաղաքներուն
վրայ՝ որոնց մէջ բանացեր էին Յուսուփին զօրքե-
րը . մեծ յաջողութեամբ ու քաջութեամբ թշնա-
միները վանեց , այլ և այլ տեղեր սասաիկ ջարդ
տալով թշնամեաց սիրար վախ ձգեց ու առ իրեն
քաջութիւններուն համար Երկաթ ըսուեցաւ :
Նախարարներն ալ սիրա տաին , եկան միացան հե-
տը ու զինքը թագաւոր օծեցին . բայց հազիւ թէ
խաղաղութեան ձայնը սկսաւ տարածուիլ Հայաս-
տանի մէջ , նորէն խառվութեան ձայները հալածե-
ցին խաղաղութիւնը : Այսին զի նախարարներէն
ոմանք նորէն սկսան մէջերնին կռիւ ընել փառա-
սիրութեամբ և ասելութեամբ . ոմանք ալ թա-
գաւորին զէմ ելլալով սկսան պատերազմիլ , ու
ցաւալի Հայաստանը տակն ու վրայ ըրին : Յու-
սուփ ալ առիթ գտնալով վազեց Հայաստանի վը-
րայ ու ինքն ալ սկսաւ քանգել ապականել առ-
ջինէն աւելի : Ամբողջ գեղեր քաղաքներ անապատ
գարձուց : Բնակիչները ջարդել կուտար , մանա-
ւանդ ծերերն ու տկարները , մանր տղաք ու ան-
կարող մարդիկը . մնացածները կամ կը տառկըցը-

1 . Աշտ Բ . Թնչպէս վանեց զՅուսուփ ու
Հայաստան Թնչպէս նորէն իր խաղաղութիւնը կոր-
սրեցուց .

ներ և կամ կը նահատակէր: Այն բաները սկսան ընել նաև ուրիշ բարբարոս ազգերն ալ:

2. Կասսանդին Պերսիեաութէն կայսրը ուզեց օգնել Հայոց, և թզթով իմացուց իր կամքը Յովհաննէս կաթողիկոսին: աս բանիս վրայ մեծապէս ուրախանալով ազգասէր կաթողիկոսը, շատ ետեկ եղաւ որ նախարարները միաբանէ, որպէս զի հաւանութեամբ թաղթ գրեն Կայսեր օգնութիւն խնդրելով իրմէ քայց անօգուտ. աս պատճառաւ խեղճին ճարր հասնելով ինքը առանձին պատասխան մը գրեց Կայսեր, Հայոց խեղճութիւններն ու թշուառութիւնները պատակց, ու միանգամայն օգնութիւն խնդրեց. ան թզթէն այն պէս շարժեցաւ Կայսեր դուժը Հայոց վրայ որ մէկէն թէնօգորտ անունով իշխան մը խաւրեց Հայասան որ գայ թագաւորն ու կաթողիկոսը Կասանդինուպոլիս ասնի: Գնաց Աշոտ, ու շատ մեծ պատիւ և ընգունելութիւն գտաւ Կայսերէն, նորէն թագաւոր պատկուեցաւ, ու մեծամեծ պարգևներով ու շատ զբքով Հայասան դարձաւ: Գուսուփ վախնալով որ Աշոտ Եանայ օգնութեամբը կրնայ իրեն վնասել՝ բարեկամութիւն ձեռացուց. քայց ուզելով Հայոց մէջ երկպառակութիւն ձգել՝ որ զերենք տկարացընէ առջինին պէս, Աշոտ Երկաթին հօր եղբոր որդին Աշոտը թագաւոր գրաւ՝ որ Աշոտ Բանաւոր ըսուեցաւ: Ար Աշոտ Բանաւորը մէկէն սկսաւ Աշոտ Երկաթին հետ պատերազմ ընել որ թագաւորութիւնը ասնէ. նախարարներէն ոմանք թագաւորին կողմնէին, ոմանք ալ բանաւորին. աս պատճառաւ շատ անգամ մէջերինն աստիկ պատերազմներ եղան,

2. Կասսանդին Պերսիեաութէն ինչ օգնութիւն րրաւ ու ինչպէս պատուեց զԱշոտ ու Յովհ. կաթողիկոսը ու ո՞վ է Աշոտ Բանաւորը.

ու ամեն անգամ Յովհաննէս կաթուղիկոս մէջ մանալով կը խաղաղացնէր :

3. Թագաւորին եղբայրը Աբաս՝ տեսնալով Աշոտոյ պատշ կը թաղաք նախանձեցաւ, ուստի Աթխաղայ Գուրգէն իշխանին հետ միանալով ապրատամբեցաւ Աշոտին ու ետեւէ էր Աշոտը մեռցնելու. բայց Աշոտ ստաջուց իմանալով եղբորը գաւաճանութիւնը, իր ընտանիքովք ծածուկ Աւաթի աշխարհքը փախաւ. հոն զօրք Ժողովեց, եղբօրը գէժ պատերազմի ելաւ ու մշտ յազմող գրանուեցաւ. բայց վերջէն ուրիշները մէջ մտան ու գրաւանց հաշտեցուցին զիրենք :

4. Մեղաւ մը երբոր Աշոտ աւանց գիանալու Աւաղացուոց աշխարհքը կ'երթար քանի մը հօգւով զուարճութեան համար, մէյժ՝ ալ լուր առաւ որ Յիկե Ամրամ Աւաղացուոց իշխանը ապրատամբեր է իրմէ ու շատ զօրքով պատերազմի կը պատրաստուի : Աշոտ մէկէն Աղերացուոց Թագաւորին քովք գնաց, ու անկէ օգնութիւն խնդրեց՝ գիանալով անոր ճշմարիտ սերն ու բարեկամութիւնը. և ինչպէս որ կը յուսար իր կարծածէն աւելի օգնութիւն գտաւ անկէ, ու սխաւ Աւաղացուոց աշխարհքը վազել : Ամրամ իր զօրքերը անտառին մէջը գարան գրաւ՝ որպէս զի յանկարծակի վազէ Աշոտին վրայ. բայց Աշոտ ծածուկ ճամբաներէ անցնելով գնաց անուր բերդ մը քաշուեցաւ իրեններովք. Յիկե Ամրամ ալ եկաւ պաշարեց բերդը : Աշոտին զօրքերը յուսահատեցան և խօսք գրին թշնամիներուն հետ որ Աշոտը բռնեն կապեն ու իրենց ձեռքը մտանեն : Աշոտ իմանա-

3. Աշոտ Թնչպէս իր Աբաս եղբորը գաւաճանութենէն ապրեցաւ .

4. Աշոտ երբոր լսեց Յիկե Ամրամին իրմէ ապրատամբիլը ինչ բրաւ .

լով անանց մտաբեր՝ նոյն գիշեր որ առաւօտը զինքը սխախ մտանեկին՝ առանց ուրիշի բան մը ըսելու չեծաւ իրեն աշխոյժ ձիուն վրայ ու թշնամեաց մեջէն անցնելով փախաւ դնաց, ու հարիւր հոգի հեար առած՝ Սեան կողմն առանձնացաւ :

5. Ան միջոցին Յուսուփ նորէն ընդհանուր առախկան գրուելով ամիրապետան, Հայաստանի վերայ առանձին ստախկան գրու Նըսր անունով մեկը, որ անտէր գանալով Հայաստանը՝ շատ շարիք հասուց Հայոց . բայց քանի որ աւելի մեծ շարութեան մը ձեռք չէր զարկած՝ ետ կանչուեցաւ Յուսուփէն, ու իր տեղը եկաւ Բըշր ստախկանը : Ատկայ լսելով որ Աշոտ Սեան կողմն է քաշուեր՝ Գեղամայ ծովուն քովը իր անթիւ զօրքերը շարեց : Աշոտ իր մարդիկներէն ետժանասուն հոգի ընարեց ու ասոր նաւով սկսաւ ցամաքսիններուն հետ սրտակերպով, այնչափ որ թշնամիները բանակներն թողուցած փախան : Բըշր հոնկէջ փախելու տակն գնաց ուրիշ բերգի մը վրայ, ուր աւելի մեծ ջարդ կերպը Գեորգ, Մարգրեառանիէն, որ թեպէս և թի՛ բայց անպարտելի զօրքովը մեծամեծ միասներ հասուցեր էր թշնամեաց ուրիշ անգամներ ալ :

6. Բըշրին տեղը նորէն եկաւ Նըսր, բայց սկսաւ քաղցրութեամբ նայիլ Հայոց վրայ ու դուրս ջուրնէլ : Աշոտ ալ սիրաւ անելով եկաւ իր թագաւորութիւնը առաւ ու սկսաւ բարեկարգել . իր Աբաս եղբորը հետ ալ հաշտուեցաւ . բայց սմանաւ որ թագաւորութեան խաղաղիւք չիրցաւ վայելել, ու հիւանդանալով մեռաւ քսանըշորս տարի նե.

5. Ա՛վ է Նըսր, ու Բըշր ինչպէս Աշոտէն ու Գեորգ Մարգրեառանիէն յաղթուեցաւ :

6. Ա՛ր և ինչպէս մեռաւ Աշոտ երկամ ու ուրախ էն իրեն յառկութիւնները :

դուժեամբ թագաւորելն վերջը : Քաջ էր և միանգամայն խոհեմ, խաղաղասեր, ու ներողամիտ . բայց ժամանակը և նախարարաց անկարգութիւնը գրեթէ անպատշաճ ըրին իր առաքինութիւնները ու չթողուցին որ թէ ինքը ու թէ Հայաստան վայելին անանց արգիւնքը :

7. Արաս Աշտոց եղբայրը նախարարներուն հաւանութեամբ թագաւոր ընտրուեցաւ ու ամծող Կարա քաղաքը գրաւ . շատ շինութիւններ ըրաւ, ու այլ և այլ պառերազմներով Հայաստանը խաղաղաց : Մերձակայ ազգերը ըտելով Արասոյ փառաւորութիւն ու ըրած բարեկարգութիւնները՝ սկսան վրան նախանձիլ : մասնաւորապէս Ափխազներուն Բէր թագաւորը, որ նաև շատ զօրքով վրան պառերազմի էլաւ, ու յստորասնեք պատգամ խաւրեց թէ եկեր եմ Կարսի նոր շինած մայր եկեղեցին Արաց ծխով օծելու : Արաս զօրքերը ժողկեց ու պառերազմի պատրաստուեցաւ . յաղթեց Բերայ, բանեց զինքը տարաւ մայր եկեղեցին ու ըսաւ . « Ահա տա է ան եկեղեցին որ կ'ազէիր քրհնել Արաց ծխով . լաւ նայէ, որովհետև աղ պիտի չտեսնես » . առ ըտելով աչքերը փորել տուաւ . իսկ Ափխազները շատ ընծաներով ու աղաչանքով ազատեցին Բէրը գերութենէ : Արաս քսանըչորս տարի թագաւորելն ետքը խաղաղութեամբ մեռաւ . և ըրած շինութիւններն ու բարեկարգութիւնները իբրև մշտնէ արձան իր անուանը յիշատակ կանգնեց Հայաստանի ամեն կողմերը (354) :

8. Արասն շատ աւելի լաւ, առաքինի ու աղ

7. Արաս ինչպէս թագաւորեց ու ինչպէս յաղթեց Բէր Ափխազաց թագաւորին .

8. Ո՞վ է Աշտո Ոգորմած, ինչպէս թագաւոր օծուեցաւ ու ինչ պառերազմով ունեցաւ Հաղարացոյ Համառն զօրավարին հետ .

գասեր եղաւ իր յաջորդը որով ազգը երջանկա-
ցուց. ասիկայ էր Աշոտ իր որդին, որ իր բարե-
գործութիւններուն համար Աշոտ Աղորմածը ը-
սուեցաւ : Ասիկայ հօրը մեանելէն ետքը ութսուն
հազարի շաբ գործ ժողովեց, Գեորգ Մարգարեաու-
նիին Գ.ա. որդւոյն հետ միացաւ ու թշնամիները
վերնակց հայաստանէն մեծամեծ քաջութիւններ
ընելով. ինք տարի տա կերպով հայաստանը խա-
ղաղ սրահեց, ինչուան որ նախարարները ականե-
լով իրեն քաջութիւնները, ազգասիրութիւնը ու
բարեպաշտութեան հօգին, ժողովք ըրին ու թա-
գաւոր օժեցին զինքը բոլոր ազգին վրայ : Արբոր
Աշոտ ընդհանուր ազգին թագաւոր օժուեցաւ,
իրեն Մուշեղ եղբայրն ալ քանի մը նախարարնե-
րու գլուխ կենարով Կարաթի մեջ թագաւորեց. բայց
որովհետեւ միշտ Աշոտին կը հպատակէր և կ'օգնէր
անոր, ան սրտաճառաւ ձայն չհաննեց Աշոտ ու թա-
գուց որ թագաւորէ : Աշոտայ այսպէս ամէն կող-
մանէ խաղաղութեամբ և հայրաշար ազգը կառա-
վարած ասկեր՝ հազարացւոց համարուն սպարա-
պետը ազատամբելով ամիրայեակէն հայաստանի
վրայ վազեց. Աշոտ քաջութեամբ զօրաց զխնացը
եղաւ, յաղթեց թշնամւոյն ու բանեց սպաննեց
զինքը. ամիրայեաւոր ու բախանարով և հաւնելով
Աշոտին ըրած քաջութեանը՝ կրկին թագաւորա-
կան թագ ու շատ մեծազին սպարզներ խաւրեց
անոր :

Պ. Աշոտ քաջութեան հետ մեկտեղ բարեպաշ-
տութեամբ և ողորմածութեամբ զարգարաւած՝
բոլոր ունեցածը ազգատաց կը բաժնէր, որով մե-
նելէն ետքը գանձատանը մեջ ստակ չբանուեցաւ.
շատ հիւանդանոցներ ու ազգատանոցներ շինել

Ռ. Աշոտ իր քաջութենէն դուրս ինչ քրիստո-
նէական առարկնութիւններ ալ ունէր .

տաւաւ, որոնց մէջ մտած շատ անգամ ինքն ալ անձամբ կ'աշխատէր ու կը ծառայէր հիւանդացւորաց անգամ ալ աղքատներն ու ցաւազարները իրեն սեղանակից կ'ընէր. եկեղեցիներ, վանքեր ու սուլթաններն էր և ուրիշ բարեպաշտական տեղեր շինել տաւաւ : Իրեն պէս բարեպաշտ ու սղորմած էր իր Խոսրովանոյշ (Թագուհին ալ, որ շատ բարեպարծութիւններէ զաւ՝ վանքեր, եկեղեցիներ ու հիւանդանոցներ շինել տաւաւ :

ԳԱՍ Ի Ը.

Սմբատ երկրորդէն ինչուան Ռազրատունեաց վերջանալը :

1. Աշոտին իրէք որդւոցը մէջէն, որ էին Արմբատ, Գապիկ ու Գուրգէն, Սմբատը (Թագաւորեց, որ իրեն ըրած քաջութիւններուն համար Շահնշահ (Թագաւորաց Թագաւոր) և Տիկեղբակաւ ըստուցաւ : Ասիկայ շատ զարգարեց Անի քաղաքը՝ հարիւրաւոր եկեղեցիներ վանքեր ու խել մը պալատներ շինելով. բայց ամենէն մեծ ու յիշատակի արժանի շինուածքն է Անիին շքապատը քաջած պարխալը՝ որուն համար ութը տարի հազարաւոր հողի աշխատեցան. իսկ քաղաքին բոլոր եկեղեցեաց թիւը կ'ըսեն թէ հազար ու մէկ էր, և ասկից սովորութիւն մտած էր ասակայ մէջ Անիին հազար ու մէկ եկեղեցեաց վրայ երգում ընել : Սմբատ երկրորդ, առանձինք տարի Թագաւորեց

1. Սմբատ Ի. իր մեծաբարծութիւնը հետ ինչ անկրաւութիւններ ալ ըրաւ :

ու մեռաւ, խաղաղասէր ու աշխարհաշէն թագաւորի անուն ժառանգելով. բայց բարեպաշտութեան կողմանէ թագաւորութեան վերջի տարիները եկեղեցական օրինաց գէժ բաներ ընելով անունը արատաւորեց: Իսկ ըրած գործողութիւնները ասոնք են. նախ իրեն քրոջը ազջիկը կին աւատորուն շատ գէժ կեցան եկեղեցականք բայց անաստեց. թէպէտ և քիչ ատենէն կինը մեռաւ, որով և ինքն ալ մեծ սուգի ու արամուծեան մէջ ընկաւ: Ասկէ զատ ուրիշ անգթութեան ու անխրատութեան գործողութիւն մ' ալ ըրաւ, որ իրեն մեծ անձնութեանը չէր վայելեր: Անգամ մը թագաւորական խափ ու յարգի համբարանոցները այրեցան, որուն գործադիրը գտնելու համար շատ ետեւ եղաւ Սմբատ, բայց որոշ չկրցաւ խմանալ: Օր մը երբոր ժողովուրդը բազմութեամբ եկեղեցին ժողջուած հոգեւոր խորհրդին ներկայ էր. յանկարծ խենթ մարդ մը վազեց խորանը ու բուրձափն կրակարանը սանելով ժամէն դուրս սկսաւ փախչիլ. ժողովուրդը սա նորատեսիլ գործողութեան պատճառը հարցուց. անիկայ ալ սկսաւ պատառով ըսել թէ կ'երթամ Սմբատայ համբարանոցներն այրելու. սա խոսքս թագաւորին ահանջը համնելով բռնել ասաւ ան մարդը ու անանց բննելու ինչ տեսակ մարդ ըլլալը հրամայեց որ նախ աչքերը փորեն ու վերջը եղեգով պատել տալով այրեց, և խափն արգիլեց որ չթաղեն. զասիկայ քանի մը կրօնաւորներ տեսնելով, որոնք և ալ թագաւորին հրամանը գիտէին, վերուցին մարմինն ու թաղեցին քրիստոնէական ամէն պաշտամունքները կատարելով: Երբոր լսեց սա եղած գործողութիւնը Սմբատ շատ նեղացաւ և նորէն հրամայեց որ մարմինը հանեն ու դաշափ մէջ ձգեն. սա բանին բարեկացան ան կրօնաւորներն ու ըսին « Սմբատայ մարմինն ալ իր գերեզմանին մէջը պի-

աի շինաց Ծ. Ըսածնին կատարուեցաւ Սմբատայ մեանելէն քիչ մը առէն ետքը (1088) :

2. Գագիկ Ա. եղբորը տեղը յաջորդելով իր հօրը Աշոտին ու նախորդներուն քաջութեանցն ու սաստիկութեանցը հեռեւոյ եզաւ, և քան զանոնք ալ երևելի ըլլալով մեծագործութեանց կողմանէ, Բագրատունեաց թագաւորութեանը պարծանք եղաւ. նոյնպէս նաեւ իր Կատրամիակ թագաւորին որ լծրնցուց Սմբատին սկսած Անոյ մայր եկեղեցին : Գագիկ թագաւորելուն պէս՝ խնեթ կնիկան մը պատճառաւ խռովութիւն ընկաւ զօրաց մեջ. վասն զի առ կինս կը քարտէր ամենուն թէ Սմբատ թագաւորը տեսիլքով իրեն երեցեր ու ըսեր է թէ ինքը գերեզմանին մեջը գեռ ուլ է. Գագիկ առ խնեզիս ստութիւնը ջուշնէլաւ և թող վարդը հանգարտեցընէլաւ համար՝ Սմբատին մարմնը գերեզմանէն հանել սուտ որ ամենքը տեսնան. ստով խռովութիւնը իջաւ ու ամենքն ալ խաղաղացան : Գագիկ երեսուն տարի թագաւորեց միշտ քաջութեամբ, բարեկարգութեամբ ու բարեպաշտութեամբ (1013) :

3. Գագիկայ առէնը անուանի եղաւ Գաւիթ կիրաւաղաւ, որ Տայոց դաւառին իշխանն էր. Գաւիթ ձերութեան վերջի ապրիները Աորպասանկանի ամիրապետը Մամլուն հարիւր հազար զօրքով հայաստանի վրայ վազեց. Գաւիթ օգնութիւն ուղեց Գագիկէն և Արաց Գուրգէն թագաւորէն, անոնք ալ տասներհինգ հազարի չափ զօրք խաւրջին, որ Դաւիթայ զօրացը հետ միանալով քսան

2. Գագիկ Ա. ինչպէս ըրաւ իր թագաւորութիւնը ու ինչ զիտելիք կայ Կատրամիակ թագաւորին վրայ .

3. Ո՞վ է Գաւիթ կիրաւաղաւ ու ինչ նշանաւոր մահ տնկցաւ .

հազար եզան: Հայերն ու Արացիք տեսնալով իրենց քիչությունը, առջի բերանը ահի գողի մէջ էին. մէյ՛մ' ալ գորացան հաւատարով և զԱստուած սցնութիւն կանչելով թշնամեաց վրայ փազեցին, ու մեծ ջարդ տալով տաճկներուն, մնացածները շիրուցան ըրին ու իրենցմէ հինգ վեց Արացի միայն մեռան: Տայսց ուրիշ իշխանները տեսնալով Գաւթի այնչափ փառաւորութիւն սոյսղթուածեանն համար, սարսափելի անօրհնութեամբ մը հազորգութեան սուրբ խորհրդին մէջ թոյն խառնեցին: Գաւթի խնացաւ ըրած անզգամութիւննին, ներեց ամենուն ու մեռաւ սրբութեամբ, յանձնելով իր երկրին իշխանութիւնը Յունաց կոչսեր, որովհետեւ ինքը մերձաւոր ազգական չունէր:

4. Յովհաննէս Սմբատ, որ Գաղիայ անդրանիկ արդին էր, հօրը տեղը թագաւորեց. հանդարտաբարոյ, խահեմ, զիտուն էր, բայց միանգամայն զանգազամիտ, վախկտաւ և անգործունեաց. առ իրեն պակասութիւնները մեծամեծ խառութեանց պատճառ եղան ոչ միայն իր կենդանութեան տակներ, այլ և մեանելէն ետքն ալ որով և թագաւորութիւնն ալ վերջացաւ: Երբոր Յովհաննէս Սմբատ թագաւորեց, իր պզտիկ եղբայրը Աշոտ որ քաջ, աշխոյժ, արագամիտ ու գեղեցկատեսիլ երիտասարդ մըն էր շատ նախարարներ իր կողմը որտալով կ'ուզէր եղբորը տեղ թագաւորել: Արաց Գորգի թագաւորը ուզելով խնայունել թէ ինքը զՍմբատ օրինաւոր թագաւոր կը ճանչնայ Հայոց' ընծաներ ու թագաւորական պսակ խաւրեց Աբղբատայ. առ բանիս վրայ Աշոտ կրակ դարձաւ և յայտնի ապստամբելով գնաց Ասագուրականի

4. Ի՞նչ բնութեան տէր էր Յովհ. Սմբատ ու ի՞նչ պատերազմ ունեցաւ իր Աշոտ եղբորը հետ.

Սենեքերիմ թագաւորէն շատ զօրք օգնութիւն առաւ : Յովհաննէս , որուն կողմն էին բազոր ժողովուրդը և նախարարներուն մեծ մասը , վաժման հազարի շափ զօրք ժողոված՝ Աշտաին գիւմարը ելլաւ . բայց որովհետեւ վախկտա և պատերազմական բաներու մէջ վարժ չէր , Աշտաին ու անոր քիչ զօրաց քաջութիւնը տեսնելով սկսաւ յուսահատիլ . վրան զի Աշտա ինքը անձամբ շատ քաջութիւններ ընելով զօրքերը խրատուսեց ու թշնամոյն մեծ ջարդ տալով հաշածեց զիրենք , ինչուան եկաւ Անին ալ պաշարեց . քանի մը մեծ նախարարներ , Արաց թագաւորը և Պարոս կաթուղիկոս՝ Յովհաննէսին շաւաղի վիճակին վրայ խղճացին ու մէջ մանալով խաղաղացուցին երկուքն ալ , և պայման գրին որ Յովհաննէս նոյնպէս թագաւորէ , և Աշտա իր բն անոր երկրորդը՝ ուրիշ տեղերու իշխէ : Յովհաննէս իր վտառասիրա երկչտաութեամբը շատ նախարարներուն երեսէն ընկաւ , որ զինքը թագուցին ու Աշտաին կողմը անցան :

5. Բիչ մը ասենէն Աշտա զղջալով եղած դաշնագրութեանը վրայ՝ ուղեց նօրէն Յովհաննէսին տեղը ընդհանուր ազգին թագաւոր ըլլալ , բայց որպէս զի խառվութիւն չըլլայ՝ այսպիսի վարպետութիւն մը բանեցուց . ծանր հիւանդ ձեացաւ ու անկողնոյն քովը որդալթաւոր մեքենայ մը դրնել տուաւ . երբոր Յովհաննէս զինքը տեսնելու եկաւ՝ որդալթիւն մէջ բանուելով սկսաւ ազաչեղ որ կենացը խնայէ . ան ասին Ապիրաս իշխանը եկաւ կողակց զՅովհաննէս ու ձեացուց որ մեռցընելու կը տանի . բայց ընդ հակառակին տարաւ նօրէն թագաւորեցուց , ըսելով թէ . « Այաւ է խո .

5. Աշտա ինչ վարպետութիւն բանեցուց գար . ձեալ զՍմբասա իր թագաւորութենէն ձգելու ու ետքը ինչ վերջ ունեցաւ .

հեմ գլխով ու վախկոտ թաղաւոր մը ունենանք՝
քան թէ անխրաւ ու անդուժ բռնաւոր մը՝ թէ-
պէտ և քաջ » : Աշտին գործողութեանը վրայ
պժգալով նախարարները՝ ամէնքն ալ անողնական
ձգեցին զինքը ու հեռացան քովէն - ինքն ալ Կոս-
տանդնուպօլիս գնաց, Ա ասիլ կայսեր օգնութեամբ
բը շատ զօրքով եկաւ նախարարները նուաճեց, ու
շատ քաջութիւններ ընելով այլ և այլ տեղերու
տիրեց . բայց վերջը քաջութիւնը մէկգի ձգած՝
զեղխութեանց ետեւ եղաւ ինչուան իր մահը :

6. Հայաստան որ արգէն անդազար ներքին և
արտաքին թշնամիներու ձեռքէն սոսկալի ազեակց
տեսարան մը եղած էր, ան միջոցներուն ռանակոխ
եղաւ գաղանացեալ և արեան ծարաւի նոր ազգէ
մըն ալ, որ էին Սկիւթացիք, և երբեմն երբեմն
անթիւ բազմութեամբ յարձըկելով կ'ողողէին ա-
րեամբ Հայաստանը : Ասանք նախ վաղեցին Ա աս-
պուրական աշխարհքը ու շատ վտառ հասցրնելով
անցան գնացին : Ա ասպուրականի Սենեքերիս թա-
գաւորը կանխատես ըլլալով Սկիւթացւոց ընելու
չարեացը՝ թուղթ գրեց Ա ասիլ կայսեր, ազաւելով
որ Սեբաստիոյ գաւառը կայսրը իրեն տայ ու ինքը
Ա ասպուրական աշխարհքը ամեն - կայսրը հաճե-
ցաւ ու Սենեքերիսին խնդիրքը մէջերնին երգմուն-
քով հաստատեցին . այսպէսով Սենեքերիս Սե-
բաստիոս գնաց՝ հետը տանելով շորս հարիւր հա-
զար հոգի, ու Ա ասպուրական աշխարհքը Եսմուայ
անցաւ . Սկիւթացիք Ա ասպուրականէն վաղեցին
Կիզ գաւառին վրայ, որոնց գէտ եղաւ Ա ասակ
Պահլաւունի՝ Գրիգոր Մագիստրոսին հայրը, ու

6. Աս միջոցիս ինչ նոր արտաքին թշնամի մըն
ալ ունեցաւ Հայաստան ու ինչ գիտելիք կայ Գրի-
գոր Պահլաւունիին վրայ .

մեծ կատարած ընելով ցրուեց զիրենք • բայց երբոր
ինքն ալ առանձնացած ազգթք կ'ընէր Աստուծոյ,
քանի մը Սկիւթացիք հոն աեղ'րը պահուստած ը-
լալով քոր մը զարկին գլխուն ու ազաննեցին պա-
տուական ծերունին : Աս բաներս տեսնելով Յով-
հաննէս թագաւորը, և բնական երկշտուութեամբն
ալ վախնալով որ պիտի շարկենայ գեմ' գնել Սկիւ-
թացոց յարձակեանք, գաշինք դրաւ Առաիլ կայ-
սեր հետ որ մեռնելէն ետքը Անին կայսեր անցնի,
միայն թէ Յոյները ոգնեն Հայոց (1024) :

7 • Ան միջոցներուն տակալի հարուածներ եղան
Հայաստանի մէջ • այսինքն երկրաշարժ, սով, ու
արևու խաւարմունքներ, որով ամէնքն ալ սկսան
վախնալ • մանաւանդ որ աննշան մարդ մը ելած
պոսալով քաղաքէ քաղաք կը պարտէր ու կ'ըսէր •
« Այլ ինձ, եղուկ զիս » • և որովհետեւ երկեղի եր-
ան տակնները սրբութեամբ ու խնամաութեամբ
Յովհաննէս կողեան ըսուած վարդապետը, թա-
գաւորը մարդ խաւրեց ու ան երեւոյթներուն մեկ-
նութիւնը հարցուց • ինքն ալ զիրենք խրատեց՝
յայտնի ցուցնելով Աստուծոյ բարկութեան նը-
շանները :

8 • Յովհաննէսին մեռնելէն տասը տարիի շափ
առաջ Առաիլ կայսեր եղբայրը Կոստանդին՝ մե-
սաւ • տափկայ մեռնելու տակնը յիշելով Անին
համար եղած անիրաւ և ապօրինաւոր գաշնագրու-
թիւնը, Կիրակոս անուանով հայ քահանայ մը կան-
չել տուաւ ու գաշնքին թուղթը յանձնեց անոր
որ տանի Յովհաննէս թագաւորին մայ : Իսկ ան
արծաթասէր քահանան պահեց թուղթը, ու եր-
բոր Միքայէլ կայսրը թագաւորեց՝ տարաւ կայ-

7 • Ո՞վ է Յովհաննէս կողեան •

8 • Կիրակոս քահանային ըրած մասնութիւնը
որն է •

սեր տուաւ, և ինքը անօր փոխարէն շատ ստակ տուաւ. Երբայէլ կայսրն ալ օրէ օր կ'ստլաւեր Յովհաննէսին մեռնելուն որ Անին պահանջէ: Պատմութեանց մէջէն անհետ ընելու դեպք և անիծից արժանի մասնութիւն:

9. Ան միջոցներուն Յովհաննէս թագաւորին հօրեղբորորդին որ Դաւիթ Անհողին կը կոչուէր՝ անուանի եղաւ իրեն խելքովը և ինքնազուէս թագաւորեց Գուգարաց աշխարհքը. սա ըսնիս վրայ նախանձելով Դրւնայ Ապուսվար ամիրան՝ Պարսից Տուղթիլ թագաւորը գրգռեց, ու երկուքը մէկտեղ անթիւ բազմութեամբ Դաւթայ վրայ եկան: Դաւիթ օգնութիւն ուզեց Հայոց և Արիսազաց թագաւորներէն. երբոր ամէնքը մէկտեղ միացան ու պատերազմ պիտի սկսէին՝ հարիւրաւոր քահանաներ ու շատ եպիսկոպոսներ միաբերան սկսան տղազակել « Արի Տէր օգնեա՛ մեզ, և փրկես՛ զմեզ վասն անուան քո սրբոյ »: Աս ձայնէս բոլոր քրիստոնէաները սիրտ առած՝ վազեցին թըշնամեաց վրայ, մեծ շփոթութիւն ձգեցին մէջերնին ու սաստիկ ջարդ մը տալէն ետքը՝ հարուստ աւարով ամէնքն ալ իրենց տեղը դարձան:

10. Աս փառաւոր յաղթութեանս վրայ եղած ուրախութիւնը Բերկրի գաւառին մէջ հանդիպած անգթութեամբը զսոճացաւ. Բերկրին Սենէքերիմայ Յունաց տուած քաղաքներէն մէկն էր. Պարսիկք տիրեր էին անօր, ու խարիկ անուծով անգութ մարդ մը քաղաքապետ գրեր էին: Յոյներն ու Հայերը միացած վազեցին Բերկրիին վրայ, ու

9. Հայերը Դաւիթ Անհողինին հետ ինչ փառաւոր յաղթութիւն մը ըրին Պարսից և Ապուսվար ամիրային դէմ.

10. խարիկ ո՞վ է ու ինչ գազանային անգթութիւն մը կը պատմուի վրան.

քաղաքը ասնելով խորիկը բանա գրին . աս երբոր
խնացան մաս առեղերու ամիրաները՝ եկան նորէն
ասին Բերկրին ու խորիկը ազատեցին բանակն .
աս բանիս չգիմացաւ Գանձի անունով իշխանը .
չառ զորքով վազեց Տաճիկներուն վրայ , զորքեր-
նին ցրուեց , խորիկն ալ Բերկրին միջնաբերդը
փախուց , և վերջը անհագացած սկսաւ իրեններովը
կերուխուսի ետեւ ըլլալ : Ան ատեն քանի մը ա-
միրաներ նորէն միացան , վազեցին Գանձիին վրայ ,
զինքը սպաննեցին , զորքը ցիրուցան ըրին , խորիկն
ալ ազատելով ասջի իշխանութեանը հասուցին :
Խորիկ իր գազանացին վրէժը ասնելու համար՝
մարդաչափ խորութեամբ փոս մը փորել տուաւ ,
ձեռքը ինկած մարդիկը մորթել տալով արիւնով
ընցուց փոսը , ու ետքը մէջը մանալով լուացուե-
ցաւ :

11 - Ան ատենները մտաւ Յովհաննէս , քրան
տարի թագաւորելէն ետքը և որդի չթողուց . իր
զգուշաւորութիւնը անխոհեմութեան և երկչափու-
թեան փոխուեցաւ , որով Վեստ Սարգիս ըսուած
մարդուն ու անոր նմանեացը երես տուաւ : Վան զի
Վեստն Սարգիս Սիւնեաց փառամուլ ու ազգատեաց
իշխանը՝ ինքը ուզելով թագաւորել՝ ետեւ եզաւ
որ օրինաւոր յաջորդը չթագաւորէ . աս բանիս հա-
մար ամեն բանի մէջ սկսաւ Յունաց ձեռնառու ըլլալ .
որպէս զի անոնց ասջեր արդիւնք մը ցուցնելով իր
վախճանին հասնի . և որովհետեւ Սեբայէլ Յունաց
կայսրը լսեր էր ան միջոցներուն Յովհաննէսի մա-
հը , մեկէն զետպան խրիկեց նախարարներուն որ
Անին ասն . երբոր նախարարները յանձն շափին ,
կայսրն ալ չորս անգամ զորք խաւրեց Հայոց վրայ

11 - Յովհաննէսին մեանելէն ետքը ո՛վ գրգռեց
զՅոյիները Հայոց դէմ ու Գազիկ Բ . Ինչպէս թա-
գաւորեց .

որ երթան բռնութեամբ տիրեն Անիին . և որովհետև բոլոր նախարարները միաբանած չէին՝ անոր համար Յոյները շատ չարիք հասուցին հայոց՝ դուռը Սարգսին օգնութեամբը : Երկու տարի այսպէսով անցնելէն ետքը՝ նախարարները միաբանեցան , ու վահրամ Պահլավունին վասակայ եղբայրը որ կտրիճ ու առաքինի էր՝ իրենց գլուխ գրին . յիսուն հազարի չափ զբք ժողովելով քաջութեամբ յարձակեցան Յունաց վրայ , ու անանկ սոսկալի ջարդ տուին որ Ախուրեան գետը արեամբ ներկուեցաւ կ'ըսէ ժամանակակից պատմիչներէն մէկը : Ան յաղթութենէն վերջը Գագիկ երկրորդը կանչեցին ու թագաւոր օժեցին , որ Յովհաննէս թագաւորին Աշտա եղբորը որդին էր , ու վէստ Սարգսին բռնութիւններէն փախչելով թափառական կը սլորաբաէր :

Գագիկ Բ . երբոր թագաւորեց՝ տասնըվեց տարեկան էր . բայց իր կրթութեամբը , իմաստութեամբը , զգուշաւորութեամբը և խոհական ընթացքովը մեր երևելի թագաւորներէն մէկն եղաւ (1042) :

12 . Վէստն Սարգիս երբոր իմացաւ նախարարաց միաբանութիւնը և Գագիկայ թագաւորելը , փախաւ գնաց Անիին միջնաբերդը պահուելու . Գագիկ ելաւ մինակ քովը գնաց , ու խելացի խօսքերով յորդորեց ու ստիպեց զինքը որ միջնաբերդէն ելլէ . Սարգիս գնաց Սուրմառի բերդը քաշուեցաւ , ու երբոր հոն ալ սկսաւ իր անհանգարտ բնաւորութեամբը ասպատակութիւններ ընել՝ Գագիկ նեղացած զօրք ժողովեց , վրան գնաց բռնեց զինքը ու բանտ գրաւ . բայց վերջը ուրիշ նախարարաց աղաչանքին զիջանելով և անոր կեղծաւորութիւն

12 . Վէստ Սարգիս երբոր Գագիկայ թագաւորելը լսեց ինչ բրաւ .

ներէն խարուելով բանաէն ազատեց ու նորէն սկը-
սաւ հետը բարեկամութեամբ վարուիլ :

13. Գազիկ թագաւորութեան բաները հազիւ
թէ քիչ մը կարգի գրեր էր՝ Սկիւթացիք անհա-
մար զօրքով Հայաստանի վրայ վաղէջին . Գազիկ
տասնըփեջ հազար զօրքով կարծութեամբ պատե-
րազմելով սարսիկ ջարդ տուաւ թշնամեաց , բոլոր
բանակնին ցրուեց , ու յաղթութեամբ դարձաւ
իր աթոռը : Բայց զեռ հանդատութիւն չգտած՝ նո-
րէն իր թագաւորութիւնը տակն ու վրայ եղաւ
Վեառ Սարգսի ու Մանուախոս կայսեր պատճա-
ռաւը : Վասն զի երբոր Միջացիչ կայսեր տեղը
Մանուախոսը յաջորդեց , զիպուածով՝ ձեռքը ըն-
կաւ Յովհաննէսին Վասիլ կայսեր հետ ըրած դա-
շինքը : զեսպան խրկեց Գազիկայ որ Աֆին տայ .
Գազիկ սիրով ընդունեցաւ զեսպանները , ու իմա-
ցուց թէ ինքը առանց ընդհանուր ազգին հաւա-
նութեանը չէրնար Աֆին տալ : Կայսրը նեղացած
Գազիկայ առ կերպով իր խօսքը մերժելուն վրայ ,
Աֆիս զօրավարին ձեռքովը շատ զօրք խաւրեց թա-
գաւորին վրայ և Դրւնայ Լպուսվար ամիրան ալ
Գազիկայ գեմ պատերազմի գրգռեց . բայց բոլոր
յոյսը պարսապ ելաւ . վասն զի Յունաց զօրքը շա-
բաշար յաղթուեցան , Դրւնայ ամիրան ալ Գազ-
իկայ ընծաներովը հետը բարեկամացաւ : Իմանա-
լով Գազիկ որ Մանուախոսը գրգռողը Սարգիսն
է՝ կ'ուզէր սպաննել զինքը . բայց անիկայ յան-
ցանքը Գրիգոր Մազիսաբոսին վրայ ձգելով թա-
գաւորին աչքէն հանեց զինքը՝ որ ամեննին սա բա-
ներուս մէջ ձեռք չունէր : Իսկ Գրիգոր տեսնելով
որ իր կենացը վտանգ կայ՝ ելաւ Կոստանդնուպո-

13. Գազիկ ինչպէս յաղթեց Սկիւթացուց ու
Մանուախոսին զօրացը , ու ինչ զիտելիք կայ Գր-
Մազիսաբոսին վրայ .

լիս գնաց, և հան իր կատարելութիւններուն համար կայսրէն Մագիստրոսութեան պատիւ գտաւ. առով Գազկայ միայր ակելի հաստատուեցաւ թէ Գրիգոր Մագիստրոս կայսեր հեա համախոհ է, և կտա Սարգիսն ալ արգարացաւ :

14. Երբոր կայսրը յուսահատեր էր Անին առնելէն, և կտան Սարգիս ա իր կուսակիցները չար գաւաճանութեան խորհուրդ մը առին կայսեր որ Անին Գազկայ ձեռքէն յախշտակէ, այսինքն գուն զԳազիկ Կոստանդնուպօլիս հրաւիրէ, ըսին, բարեկամութեան համար, ա մենք ան միջոցին Անին կը մտանենք: Մոնոմախոս արախացաւ անոնց առած խորհրդին վրայ, և թուզթ գրեց Գազկայ՝ Կոստանդնուպօլիս հրաւիրելով զինքը: Բարակամիտ և հեռաակն թագաւորը խնացաւ գաւաճանութիւնը, ա յանձն շտաւ կայսեր հրաւերքը, բայց և կտան Սարգիս և ուրիշները շտա յորդորեցին խոստանալով որ իրենք Անին կը պաշտպանեն. երբոր ակտան թէ շէն կրնար համոզել զթագաւորը, պատարագի առին երգում ըրին հաւատարիմ մնալու թագաւորին, ա նամակով մը կաթուղիկոսին յանձնեցին: Գազիկ գիտնալով նախարարաց շարութիւնը՝ յանձն չէր ուզեր աննէլ. բայց վերջապէս ճարը հասած՝ ելաւ կայսեր գնաց, և Անին վերակացու գրաւ Ապիրատ իշխանը, որ իրէն շտա սիրելի ա հաւատարիմ էր, արքունական ընտանիքն ալ յանձնեց և կտա Սարգիսն:

14. Ինչ գաւաճանութեամբ և կտա Սարգիս ա նախարարները զԱնի Մոնոմախոսին մտանցին ա Գազիկ ինչպէս իր թագաւորութենէն ինկաւ:

15. Գազիկ մեծ պատու լուսն Մանուսիսուէն,
և իրեն գիտացը էրան Յունաց բարը մեծերը: Բայց
քանի մը օրէն սկսաւ կայսրը Անիս ուզել, երբոր
Գազիկ կ'ընդգիտանար անիրաւ պահանջմանը խե-
ղացի և իրաւացի պատճառներով, կայսրը զինքը
բանա գրաւ որ թերեւ անով կարենայ խանարհե-
ցնել զԳազիկը: Քանի որ զեռ առ գործողու
Թիւններուա հեռ էին, մէյո՛ւ ալ Մանուսիսու Գազ-
կայ գիտացը հանեց Անիսն ու իր արքունեաց բա-
նախները՝ նախարարաց մարան հաւանութեան
Թղթովը: Ազլեցաւ Գազիկ, խելքը կորսնցուց և
էր գիտեր ինչ ընելիքը. խնայաւ որ իր արգարու
Թիւնը, իրաւունք գիտնայր և գիտարաւութիւնը
յաղթուեցան, մանաւանդ թէ արհամարհուեցան
անօրէնութենէ, տիրաւեցութենէ, փառասիրու-
թենէ և ազգաւեցութենէ, որով և ստիպուեցաւ
Թագաւորութիւնը ձգել, հայրենիքը Թողուլ հե-
ռանալ ու աստանդակիան կեանք մը անցընելով
Հայաստանի ու Անիի աւերակներուն տակը Թա-
գել իր անունը (1045):

Մանուսիսու Հայաստանի տիրելէն ետքը Գազ-
կայ առաւ Պիզու քաղաքը Կասաղովկիայի մէջ,
և պաշտաւ մը Կասաղովկուպօլսոյ մէջ. Թագաւո-
րական դանձկն ալ եկամուտ կապեց իրեն: Գա-
զիկ քիչ մը ատեն Կասաղովկուպօլսու կենարէն
ետքը՝ հրաման խնդրեց կայսրէն՝ ու Պիզու իր քա-
ղաքը գնաց, ուր սիրաւ կը հաշեր ու կը մաշեր
տեսնելով ոչ այնչափ իր Թշուառութիւնը՝ որչափ
ազգին ողորմելի ու աւաղելի վիճակը, որուն պատ-
ճառ եղաւ իր մտանիչներուն ստակալի շարութիւ-
նը, որով իրենց շահուն համար բնութեան և ազ-

15. Գազիկ Թագաւորութիւնը կորսնցընելէն
ետքը ինչ վիճակ ունեցաւ ու Բագրատունեաց
Թագաւորութիւնը երբ վերջացաւ.

գաց օրէնքը տարի տակ տակն ու խեղճ ազգը Թը-
շուառութեան ու գերութեան մէջ ձգեցին: Աս
կերպով վերջացաւ Բաղրատունեաց Թագաւորու-
թիւնը 1045ին, մտա երկու հարիւր տարիի չափ
բշեղէն կայր:

16. Բաղրատունեաց Թագաւորութեան գոր-
ծանեղէն քիչ մը կայր սկիսն տեսնուիլ գլուխ ու
Թագաւոր չունենալուն ազեապէս հետեւանքները .
վասն զի ամէն կողմանէ սկսան Հայաստանի վրայ
կատաղարար յարձակիլ արեան ծարաւի գայլե-
րու պէս բիւրաւոր Թշնամիք ու իրենց զէմ ելլող
մը չգտնելով ամենայն շարիք հասուցին Հայոց:
Ասոնց առջինը եղաւ Տուղբիլ Պարսից Թագաւո-
րը, որ իրեք անգամ անհամար բազմութիւն խա-
րելով խիստ շատ մարդ Թրէ անցուց, եկեղեցիներ
ու վանքեր փլշրնել տուաւ ու շատ մարդ ալ գե-
րի ըրաւ . միայն Արծն քաղքին մէջի ըրած կառա-
րածէն կրնայ խնայուիլ մեկահիւնքն ալ: Աս քաղ-
քիս մէջ իրեք հարիւր հազար բնակիչ կար ու հա-
րիւրաւոր եկեղեցիներ . Տուղբիլին պաշարմանը՝
մէջինները զէմ կեցան ու չէին ուզեր անձնատուր
ըլլալ . բայց վերջապէս յաղթուեցան ու Թշնամի-
ները կատաղարար ներս լեցուեցան . հարիւր քա-
ռասուն հազար մարդ կտարեցին, մնացածները գե-
րի տարին, քաղաքն ալ այրեցին, որուն ազեապէս
աւերակները ինչուան հիմա կեցած են: Ալ թառն
հազարի չափ յոյն զօրք կային Հայաստանի մէջ
ան միջոցին, բայց փոխանակ օգնելու Հայոց՝ իրենք
ալ ձեռքերնէն եկած շարիքը կը հասցընէին: Այս-
պիսի գործողութեանց մէջ նշանաւոր է Հարպիկ
անունով իշխանին գիպուածը: Երբոր Յոյնք Չոր-
րորդ Հայոց բնակիչները պատերազմով ու հար-

16. Ո՞վ է Տուղբիլ ու ի՞նչ գիտե՞լք կայ Հար-
պիկ իշխանին վրայ .

կահանութեամբ կը նեղէին, Հարպիկ իրեն պղտիկ
գնդովը բերդ մը քաշուած՝ Յունաց վնասներ կը
հասցընէր. Պեոսս Յունաց զօրավարը տեսնելով
որ չկրնար բերդին տիրել՝ մտա գալով սկսաւ ը-
սել. Ով որ Հարպիկին գլուխը ինծի բերէ՝ բերդը
անոր կը պարգևեմ: Աս սոսկալի ձայնէս խեղճին
քունը աչքէն հեռացաւ, և արժամատակը մտանիչ-
ներէ վախնալով չորս հինգ որ ամենեկն շքնացաւ:
Բափի հաւասարիմ կարծուած մտորդիկը շատ յօր
զօրեցին որ քիչ մը քուն ըլլայ հանգչի. և հազի-
թէ երկիւզալեց ու վայրկենական քունը կոխեց
վրան ու աչքերը գոցեց, մէյ՛ս՝ ալ քովինները վա-
զեցին վրան ու անողորմաբար մօրթեղով, մահուան
խոր քունին մէջ թաղեցին: Բերդին մէջինները
իրենց արժանաւոր պատիժը գտնեցով, շղթայա-
կապ Պոլիս տարուեցան, Մանուսիտան ալ մեկէն
քշել տուաւ զիրենց: Ահա այսպէս միշտ մտանիչ-
ները մտանուողէն շատ աւելի գառն և ահաւոր
պատիժ ունեցեր են:

17. Տուզիլ Արծն քաղաքը հիմնայտաակ ընե-
լէն ետքը՝ երկրորդ տարին շատ զօրքով Բասեն
գաւառին վրայ յարձըրկելով մեծամեծ վնասներ
հասուց ան տեղերուն ալ. Գազիկ Արասեան, որ
ինչուան ան տակները կը թագաւորէր Կարսի
մէջ, զօրք ժողկեց թաթուլ քաջ սպարապետին
ձեռքը տուաւ, ու թշնամեաց գէմ խաւրեց: Ար-
շափ որ զօրք քիչ էր՝ քաջութիւնը այնչափ մեծ
կըսէ Հայոց կողմանէ, մամաւանդ թաթուլին ը-
րածները: Բայց երկար տակն թշնամեոյն ընդդի-
մանալէն ետքը յաղթուեցան Հայերը ու թաթուլ
բանուեցաւ. երբոր Տուզիլին զինացը կըսէ քաջ
սպարապետը, ըսաւ Տուզիլ. « Ինչ որ Ասուրան

17. Տուզիլ Բասեն գաւառը ինչ ըրաւ ու ինչ
կը պատմուի թաթուլին վրայ.

իշխանին որդին մահաւընէ խաղբսի՝ զքեզ կ'ազա-
տեմ, ապա թէ ոչ՝ պիտի մեռնիս » • պատասխան
տուաւ թաթուղ • « Թէ որ հարուածը խնէ՝ շաղ-
րիր • Հիմա հուընէ սպաննէ զիս » : Մեռաւ տղան ,
ու թաթուղ սպաննուեցաւ : Տուղբիլ անկէ զնոց
Մանագիերայի վրայ , որուն քաղաքապետը Վասիլ
անունով յոյն մըն էր • ասոր քովը հնարագէտ ու
խելացի հայ քահանայ մը կար որ թշնամեաց ա-
մէն հնարքները պարսապը կը հանէր իրեն գիւտե-
րովը , այնչափ որ Տուղբիլ յուսահատելով բար-
կուժեամբ թողուց զնոց , շատ մարդ ու երևելի
անձինք կորսնցնելէն ետքը : Գաղղխացի մըն ալ
գիւրազառ նիւթ մը գտաւ , ու անով այրեց Պար-
սից անագին բարանը՝ որ չորս հարիւր հոգի հա-
զիւ կրնային շարժել :

18 • Յաջորդ տարին մեռաւ Տուղբիլ , ու անոր
յաջորդեց իր եղբորորդին Ալփասլան , որ գիւ-
նալով Հայաստանի անաէր ըլլալը՝ անձիւ բազ-
մուժեամբ Հայոց վրայ եկաւ ու Վնին պաշարեց :
Տեսնելով Վնին պարխայններուն ամբուժիւնը ,
առջի բերանը յուսահատեցաւ • քայց վերջը խնա-
նալով պարսպին մէկ կողմին ակարուժիւնը՝ բոլոր
ուժը հան թափեց , ու բարանով անգաղար զար-
նելով քիչ մը անդ փլուց : Պարսիկները երբոր
սկսան ան պատաստուածքէն ներս մտնել՝ քաղա-
քացիք քաջուժեամբ դէմ գրին ու շատ շարժ ը-
րին իրենցմէ : Ալփասլան քանի մը անգամ ալ
փորձ ընելէն ետքը յուսահատեցաւ ու սկսաւ
քաղքէն հեռանալ : Բազարատ և Գրիգոր քաղ-
քին վերակացուները չիմանալով Ալփասլանին հե-
ռանալը՝ մտքերնին գրին որ պիտի չկարենան ին-
չուան վերջը Պարսից գէմ գնել • ուստի յուսա-

18 • Ալփասլան Վնին Բնչպէս տուաւ ու ինչ շա-
րիք հասուց Հայոց •

Հասած՝ իրենց զօրքովք միջնարեբոց քաշուեցան : Քաղաքացիք որոշ չգիտնալով թշնամեաց հեռանալը, սկսան վախերենէն կանչու ըստել, լալ ու ողբալ . առ ձայնէս ետ դարձաւ Ալբիասլան, ու տեսնելով որ ամենքը շփոթութեան մէջ են՝ կատաղաբար ջարդել առաւ թիւրաւոր մարդիկ . քաղքին մէջն ալ քանի մը հազար մարդ թողուց որ աւերակները նորէն շինեն :

19. Երբոր Ալբիասլան գեապան իրկեց Գաղիկ Աբասեանին որ իրեն հնազանդի, առաջուց իմանալով Գաղիկ գեապանին գալը՝ սուգի զղեսա հագաւ, ու մտիւրի վրայ նստած սկսաւ ողբ ու լաց ձեացընել . երբոր հարցուց գեապանը պատճառը, ըսաւ Գաղիկ . « Ի՞նչ սրտով կրնամ ուրախ ըլլալ երբոր իմ սիրելի բարեկամն Տուղթիլ մեռաւ » : Աս բանիս վրայ Ալբիասլանին գութը շարժեցաւ, եկաւ հեար սիրով պագատուեցաւ ու շատ պատիւ բրաւ անոր : Բայց Գաղիկ գուշակելով որ անկեց վերջը հանգստութիւն պիտի չկարենայ գանել Պարսից ձեռքէն, իր երկիրը կայսեր առաւ, ու տեղը առաւ իրեք քաղաք, Ծամնգաւ բերդը, հարիւր ալ գեղ (1065) :

20. Աս միջոցներուս Եւանայ՝ Հայոց գեմ ունեցած ասելութիւնը նորէն սաստկանալով շատ շարիք հասուցին Հայ իշխաններուն, և ամէն տեսակ նախաամիտք կրնէին ազգին . առ պատճառաւ Գաղիկ, Բագրատունեաց վերջի թագաւորը, Վեսարիոյ յոյն մետրապօլիտը սպաննեց, թէպէտ և ինքն ալ սպաննուեցաւ : Աս Մարկոս անունով մետրապօլիտը ուզելով զՀայերը նախատել՝ իր շա-

19. Գաղիկ Աբասեան ի՞նչ հնարքով բարեկամացաւ Ալբիասլանի հետ .

20. Գաղիկ ի՞նչ կերպով Մարկոս Եւանայ մետրապօլիտէն ազգերնուս ըրած վրէժը առաւ .

գուրս վազելով բանեցին զԳագիկը ու չզթայի զարկած բերգը տարին. իսկ քովի իրեք հոգին առանձն գանձելով փախան գնացին ուրիշ Հայ իշխաններու խնայուցին. անոնք ալ եկան ու սկսան բերգին հետ պատերազմել. բայց չկրնալով մնաա մը մը հասցընել անառիկ ըլլալուն համար՝ յուսահատած ելան գնացին: Ան ատեն Մանուաշեայ որդիքը զԳագիկը սաստիկ շարշարելով սպաննեցին, ու մարմինը պարսպին վրայ կախեցին որ Հայերը տեսնեն: Չորս հինգ ամիս ետքը Բանիկ անունով Հայ մը գնաց գիշերանց գերեզմանէն ասկորները հանեց, որ բերգին պարսպին տակը թաղուած էին, ու տարաւ Պիզու Գագիկին շինել տուած վանքին մէջը թաղեց: Ահա այսպէս մեռաւ այն թաղաւորը որ աշխարհքիս անուանի թաղաւորներէն մէկը պիտի ըլլար, և իր անուահական արգեամբքն յախտենական յիշատակներ պիտի առնենար. և հիմա անունը հազիւ թաղաւորաց մէջը յիշատակուեցաւ: Մէկ Ա կառ Սարգիս մը և իրեն պէս քանի մը փառամուլ և սխաւելոց մարդիկ այսպիսի շարեաց պատճառ եղան, և թողուցին մեզի իրենց ահաւոր մատնութեան պատգը 'ի խրատ և 'ի յանդիմանութիւն:

Ան ատենները վերջացան նաև Գագիկ Աբուսեանին, ու Արծրունեայ թաղաւորութեան ճիւղերը, որով բոլորովին ջնջուեցաւ Հայաստանի մէջէն թաղաւորութեան անունը (1070):

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Ռ Ո Ւ Բ Ի Ն Ե Ա Ն Յ

ԴԱՍ ԻԹ.

Ռաբբինեանց քաղաքաբարեան սկիզբը : ԹՊ.
րոս Ա. իշխանին քաղաքիսնեկրք :

1. Բագրատունեաց իննալէն վերջը երեսուն
սարի անիշխանութիւն ըլլալով այնպիսի աղետա-
լի խեղճութեան մէջ մնաց Հայաստան որ հայրե-
նասէր մարզուն աչքէն արասաւքը չգողրիք ին-
չուան որ աեանէ գէթ Ռաբբինեանց իշխանութեան
կանգնուիլը, որ թէպէտ և ընդարձակութեանն
ու զօրութեանը նայելով պզտիկ էր, բայց ըստ
քաջութեան, ըստ բարեպաշտութեան և ըստ խո-
հեմութեան մեծ էր, մանաւանդ այնպիսի գարե-
բու մէջ որ ամէն կողմանէ թշնամիք զօրացած, ու
ազգին ներքին և արատքին ուժը սկաբացած էին
(1080) :

2. Ռաբբին Ա. Գագկաց ազգականներէն մէկը .

1. Բագրատունեաց Թագաւորութեան իննալէն
կայքը ազգերնիս ինչ փնձակ ունեցաւ .

2. Ո՞վ ևն Ռաբբին Ա. ու Գող Վասիլ ու ինչ
գիտելիք կայ Մէլիք Շահին վրայ .

որ անոր բնուելու ասենք քովն էր, Վիլիկիա
փախչելով, հոն գանուած Հայոց իր կատարելու
Թիւններովն ու քաջութեամբը սիրելի եղաւ. քո-
վի կարիճները շատցուց ու սկսաւ քանի մը պղզ-
տի քաղաքներու ու բերդերու տիրել, շատ ան-
գամ Յուճաց ալ յաղթեց, ու Վիլիկիոյ մէջ գրա-
նուած Հայոց իշխեց: Ռուբենին օգնական ու գոր-
ծակից եղաւ Վասիլ անուանով քաջ ու հնարագէտ
իշխանը որ յանկարծ յանկարծ Թշնամեաց վրայ
յարձըրկելով շատ մնաս կը հասցընէր անոնց. ան
պատճառաւ անուռն ալ Գող Վասիլ գրեւ էին:
Վիլիկիոյ Հայերը Թէպէտ և իրենց ազգասէր իշ-
խանին առաջնորդութեամբը հանգիստ ու գոհ էին,
բայց բուն Հայաստանի բնակիչները շատ նեղու-
թիւն կը քաշէին Պարսիկ գործակալներուն ձեռ-
քէն, ինչուան որ Մելիք Շահ զՅոյները վանտեց
Հայաստանէն ու ինքը տիրեց. և լսելով որ Պար-
սից գործակալները զՀայերը կը նեղեն՝ սաստիկ
հրաման հանեց որ քաղցրութեամբ վարուին Հայ-
ոց հետ. ասով խաղաղ մնաց Հայաստան ինչուան
անոր մահը:

2. Ան միջոցներուն մեռաւ Ռուբեն Ա. տասնը-
հինգ տարի խելքով, արթնութեամբ, հայրաբար
ու քաջութեամբ ազգը կատարելէն ետքը: Կոս-
տանդին Ա. իր հօրը տեղը յաջորդելով նոյնպէս
անուանի եղաւ ընտիր բարեմասնութիւններովը,
մանաւանդ զգուշաորութեամբը, մեծամեծու-
թեամբը և պատերազմական հմտութեամբը. ո-
րով Յոյներէն պատերազմով շատ տեղեր առաւ ու
տերութիւնը ընդարձակեց: Ասոր ասենք Վասի-
նացիք հանեցին առաջին խաչակիր զօրքը Կո-
ստանդիասոսին առաջնորդութեամբը. ասանք էր որ

3. Ա՛վ յաջորդեց Ռուբեն Ա.ին ու Կոստան-
դին ինչ օգնութիւն բրաւ Խաչակրաց:

Մտախոր պաշարեր էին՝ պաշարներն ընկաւ ու սով
ընկաւ բանակին մէջ - Կոստանդին ու բիշ Հայ իշ-
խաններու հետ մէկտեղ առաւ պաշար խաւրեց
անոնց, որով զօրացած՝ Մտախոր ասին ու Կոս-
տանդինն շատ աղնիւ ընծաներով ասպետութեան
պատիւ խաւրեցին: Կոստանդին ասանկ լաւ կեր-
պով հինգ տարի իշխելէն ետքը մեռաւ, և իրեն
յաջորդեց Թորոս որդին (1099):

4. Թորոս շատ քաջութիւններով ու բարեկար-
գութիւններով իր անունը պայծառացուց, շատ
անգամ Յունաց յաղթեց ու Մարզաբա քաղաքն
ալ առաւ: Ըստր ասենը Պարսիկք անհամար բազ-
մութեամբ Ախիկիոյ վրայ եկան, ու շատ շարիք
հասցընելէն ետքը Թորոսէն վարձաուեցան. նոյն
պէս նաև Գող Ասաիւ, որ դեռ կ'ապրէր, երկու
անգամ Պարսից զէմ մեծ յաղթութիւն ըրաւ:
Հազիւ թէ Պարսիկք Ախիկիոյէն հալածուեցան՝
անթիւ զօրքով Սկիւթացիք լեցուեցան հոն: Թո-
րոս տեսնելով որ չկրնար մինակ զէմ գնել, օգնու-
թիւն կանչեց Տիգրան և Աղլաասթ Հայ իշխան-
ները: Պատերազմը խիստ սաստիկ ըլլալով, քա-
ջութեամբ պատերազմելու ասեն երկուքն ալ մե-
ռան. ան ասեն Վան Թորոսին եղբայրը երեսը
խաչակնքեց ու զԱստուած օգնութիւն կանչելով
մտաւ թշնամեաց մէջ, ու այնպէս քաջութեամբ
սկսաւ կռուիլ որ հաղարաւոր մարդ սպաննեց ու
թշնամիները հալածեց:

5. Ան միջոցներուն Թորոսի ու Մանուակայ ի-
րեք որդւոցը մէջ թշնամութիւն մը ծագեցաւ. ուս-
տի Թորոս զօրք ժողովեց, վրանին պատերազմի ե.

4. Թորոս ինչպէս Պարսից յաղթեց ու Սկիւ-
թացիքը հայաստանէն հալածեց.

5. Թորոս ինչպէս վարպետութեամբ Մանուա-
կայ որդիքը բռնեց ու բերդերնուն ալ արեց.

լաւ . բայց տեսնելով որ անասիկ է բերդերնին , ա-
նոր համար գիշեր ատեն գարանի գրաւ շատ մը
կարծի՞ մարդիկ բերդին քովերը , ու ինքը հեռա-
ցաւ գնաց : Աւաւտանց տեսան Մանասէայ որ
գիշը որ թորոս հոն չէ , կարծեցին թէ յուսահա-
տած ելեր գնացեր է . ուստի բերդին դռները բա-
ցին ու սկսան համարձակ զուրս ներս մտնել ու
ելլել . և ահա յանկարծ թորոսին գարան գրած
մարդիկը վրանին վազելով բոլոր հոն գտածնին
թրէ անցուցին , թորոս ալ իր զօրքերովը վրայ հա-
սաւ ու բերդին ակրեյ . վերջը Մանասէայ իրեք
ազաքը բռնեց ու հրամայեց որ Գազկայ թուրն ու
հագուստները բերին : Ան միջոցին իրեք եղբայր-
ներէն մէկը գնաց ինք գինքը բերդէն վար նետեց
ու մեռաւ . թորոս անանցմէ մէկը սպաննեց ծեծե-
լով , մեկայն ալ շղթայի զարկած հեռք տարաւ .
և քանի մը տարի ալ ապրելէն ետքը մեռաւ . քա-
նուիրեք տարի ազգը կառավարելէն ետքը (1122) :

6 . Որովհետեւ թորոս որդի չուներ , տեղը ան-
ցաւ Լեոն Ա . կարծի՞ ու առաքինի եղբայրը . ասի-
կայ , ինչպէս որ պատմեցինք , արդէն եղբորը ա-
տենն ալ մեծ քաջութիւններ ըրած էր Սկիւթա-
ցոց գէմ , ու ազգին կառավարութիւնը ձեռք առ-
նելով քաջութիւնն ու ինամքը աւելցուց . Մա-
մեատիա քաղաքը առաւ , և ուրիշ շատ քաղաքներ ,
որոնք Յոյները թորոսի ձեռքէն յափշտակեալ էին .
այնչափ անուըր մեծցաւ որ ամենքը կը գողային
իրմէ , և նոր Աժգահակ կ'ըսէին : Անտիրայ կամար
նախանձելով վրան , ու միանգամայն գիանալով
որ չկրնար բռնութեամբ յաղթել Լեոնին՝ սկսաւ
բարեկամութիւն ձեռացրնել . որ մը գինքը կոչուե-

6 . Լեոն Ա . ինչ քաջութիւններ ըրաւ Յունաց
գէմ ու ինչպէս Անտիրայ կամսին ձեռքէն խալը-
սեցաւ .

քի հրաւիրեց ու վերջը բանեց բանա գրաւ . Ահն նեղը մտած՝ շատ ստակ, երկու քաղաք, իր որ զիքներէն մէկն ալ պատանդ տալով ազատեցաւ . ու բանակէն ելլելուն պէս նորէն զօրք ժողկեց ու տուած քաղաքներուն վրայ վազելով բողբոն ալ ետ առաւ . այնչափ նեղը խաթեց Ղաախնացոց իշխանները, ու մասնաւոր կերպով Ամախոբայ կոմար, որ միաբանեցան ու շատ պատանդներ և ընծաներ տուին, ետ զարձրնելով իրեն պատանդ տուած որդին :

7 . Ահնին քաջութեան համբար հասնելով պատանդին Պերսիեռուժէն կայսեր ակամջը, ու զեց որ ինքը անձամբ ելլէ ու Ահնը ընկճէ : Ահն երբոր խնացաւ Յունաց մեծամեծ պատրաստութիւնները, ազգին կառավարութիւնը ձգեց ու գնաց ամուր և դժուարամտաց լեռները պահուրեցաւ իր ընտանիքովը : Կայսրը Ահնին ետեկն մարդ խաւրեց որ երթան զինքը պաշարեն, ու ան միջոցին ինքը այլևայլ քաղաքներու տիրեց . սասնց մէջ Անարզարան անելու համար շատ նեղութիւն քաշեց ու անբաւ մարդ կորսնցուց . վասն զի քաղաքացիք, որ ըստ մեծի մասին Հայ էին, պատերազմեցան պաշարողաց հետ ու Յունաց բանակը զրուեցին : Կայսրը աւելի մեծ պատրաստութեամբ նորէն պաշարեց, բայց քաղաքացիք ներսէն ամենայն հարբ կ'ընէին անոնց մեքենաները այրելու ու զիւրնք փռակու : Երեսուներեօթը որ պաշարելէն ետքը վերջապէս պարսպին մէկ կողմը փլուցին, ու Յոյնք կատաղարար սկսան ներս վազել : Բայց քաղաքացիք աւելի կատաղելով սոսկալի արագութեամբ ու քաջութեամբ կը պատերազմէին, որով

7 . Ահն ինչու Հայաստանէն փախաւ, ու Անարզարայի բնակիչքը ինչ քաջութիւններ ըրին Յունաց զօրաց զեմ .

բիւրաւոր մարդիկ մեռուցին Յոյներէն. ինչուան նաև կանայք ալ ամէն տեսակ կարասի և այրելու նիւթեր կը նեակին պատուհաններէն, որով շատ մարդ սպաննեցին: Ասանք ընելէն վերջը՝ Յունաց բազմութիւնը ձգեցցին, ու քաղաքը կայսեր թող լով իրենք ելան գնացին: Նեմէ Արշակունեաց ակբութեան իննալէն ինչուան վերջը տեսնուած ըլլալը մեր ազգին մէջ առ միարանական հոգին, առ ամենահարկաւոր առաքինութիւնը, տարակոյս չկայ որ միշտ կանգուն ու զօրաւոր կը մնար:

8. Պերսիեռութէն Անարզաբան ամենելէն ետև գնաց Առհայ ամրոցին վրայ որ ան ասանը Ռուբինեանց մայրաքաղաքն էր. ասոր քաղաքապետն էր Ռուբինեանց ցեղէն Կոստանդին անունով կրարի՞մ մը, որ նոյնպէս շատ մարդ ջարդեց ու նեղը խաթեց Յոյները. բայց վերջը երբոր ամրոցը առնուեցաւ, զինքն ալ բանեց կայսրը ու շղթայի զարկած Կոստանդնուպօլիս խաւրեց: Ճամբան նաւով երթալու ասուն՝ գիշեր մը շղթաները կտարեց, բոլոր պահապանները ջարդեց, ինքն ալ ցամաքը ելաւ. բայց ետքը քանի մը մարդկանց մատնութեամբը նորէն բռնուեցաւ: Կայսրը բոլոր Կիլիկիոյ տիրելէն ետքը՝ Ղևոնն ալ իր ընտանեքովը բռնեց ու շղթայի զարկած Կոստանդնուպօլիս տարաւ ու բանալը գրաւ. ուր տարի մը ձգելէն ետքը՝ ուրիշներու ազաւանքովը բռնուէն հանեց ու հանգիստ կը պահէր:

9. Ասուն անցնելէն ետքը օր մը թագաւորը բազմիք գնացեր էր. Ռուբին Ղևոնի որդին հան տեղի

8. Պերսիեռութէն Առհայ ամրոցը ինչպէս առաւ, ու զՂևոն ինչպէս բռնեց.

9. Կոստանդնուպօլիս ինչ ղէպքեր անցաւ Ղևոնի զլխէն. ինչ է թարսին տեսած երազը ու Ղևոն ինչպէս մեռաւ.

բարե աւագանը ջրով լեցուն՝ թէ թե բանի մը պէս
բանամ՝ մէկ շնչով թագաւորին առջևը բերաւ . ա-
մէնրը զարմացան առ բանիս վրայ ու սկսան գովել
Ռուբենին ու ժը . բայց վերջը ոմանք վրան նախան-
ձելով թագաւորը յորգորեցին որ խեղճին աչքե-
րը կուրցնէ, որն որ ցաւին չգիտանալով քիչ ա-
տենէն մեռաւ : Կայսրը նորէն բանա գրաւ Ղևոնը
որդւոյն հետ . հոն թորոս երազ մը տեսաւ . ու
քիչ մը միտթարուեցան երկուքն ալ , և երազը սա-
կր . փառաւոր մարգ մը տեսաւ որ եկեր իրեն հաց
մը կուտար՝ վրան ձուկ գրամ . թորոս առաւ ան
հացը՝ հօրը առաւ , բայց անիկայ չկերաւ : Երբոր
առաւօտ եղաւ՝ պատմեց հօրը տեսած երազը , ան
ալ ըսաւ . « Հացը կամ նկանակը կը նշանակէ թէ
նորէն պիտի տիրես դուն բոլոր մեր կորսնցուցած
երկիրներուն . իսկ ձուկը կը նշանակէ թէ ծովու ալ
պիտի տիրես . ասոնք պիտի ըլլան , բայց ես պիտի
չտեսնեմ » : Երկրորդ անգամ բանա գրուելէն ետ-
քը՝ Ղևոն տարիի մը չափ ապրեցաւ ու մեռաւ .
ետքը կայսրին ալ թորոսը բանտէն ազատեց ու լա-
ւաչքով կը նայէր վրան : Ղևոնին առջի քաջութեան
գործքերը որչափ որ գովելի ու զարմանալի են , մե-
զագորութենէ ազատ չէ վերջի գործքը՝ որ հարկա-
ւոր ժամանակ՝ կառավարութիւնը ու ազգը ձգեց
քաշուեցաւ . որ եթէ ինքը բոլոր ու ժողը գեւ զնե-
լու ըլլար թշնամւոյն՝ չէր կրնար թշնամին այնչափ
մտաւ հասցնել աշխարհքին . սարսական էր նաև
իրև հայր հասարակաց իր կեանքը զոհելով ժո-
ղովրդեան փրկութիւնը հողալ և տէրութեան վե-
ճակը ապահովելնէ (1342) :

ԴԱՍ Լ.

Թորոս Բ. իշխանին բաշտարխանները . Մշեհ ու
Ռուբեն Բ. :

1. Յովհաննէս Պերփեռուժէն կայսեր ասեւնը
ամենուն սիրելի ըլլալով Թորոս իր զարմանալի
կատարելութիւններովը, երբոր Վիս Մանուէլ
Յովհաննիսին տեղը յաջորդեց, Թորոս միայր զը-
րաւ որ Կոստանդնուպոլսէն փախչի ու զայ ազգը
գերութենէն ազատէ . ուստի ծածուկ իբրև վա-
ճառական ելաւ Պոլսէն Վասիոց երթալու համար
ու անկէ փախաւ Կիլիկիա . հոն ինքզինքը քահա-
նայի մը յայանեց՝ թէ Վեոնի որդին է . քահանան
երբոր ուրիշներէ ալ ստուգեց աս բանս՝ ու բախու-
թեամբ առաւ զինքը իր տունը տարաւ, ու հոն ա-
մենայն պատուով կը նայէր, միանգամայն իմա-
ցոյց հայոց մեծամեծներուն, որ Յունաց բնու-
թիւններէն ձանձրացած՝ կ'ուզէին առջի ազատու-
թիւննին ձեռք ձգել : Կամայ կամայ Թորոսին
գալը ամէն տեղ խմացուելով տասը հազարի չափ
մարդիկ քովը Եղվուեցան, ու իրեն առաջնոր-
դութեամբը վազեցին Վասրզաբա, Ատանա ու
Աահկայ բերդին վրայ, և ամենուն ալ տիրեցին՝
Յոյները վանտելով . ասանկ Թորոս Կիլիկիոյ հայոց
հաւանութեամբը իշխեց ազգին վրայ, ու գրեթէ
բոլոր Յոյները հալածեց իր տերութենէն :

1. Թորոս ինչպէս Պոլսէն փախաւ ու ինչպէս
սկսաւ նորէն հայոց տերութիւն մը ձևացնել .

2. Կիս Մանուէլ կայսրը Թորոսին ըրածնէ թուն վրայ նեղացած՝ մէկէն հրաման առաւ Վեգրոնիկոս զօրավարին որ շատ զօրքով Կիլիկիա երթայ, Թորոսը բռնէ ու երկրին բոլոր բնակիչները թրէ անցընէ: Իսկ Թորոս իր բնական լաւութեամբբ ու գիտնալով միանգամայն պատերազմին գէշ հետեանքները, գեապան զրկեց Վեգրոնիկոսին՝ իմացընելով թէ ինքը կայսեր հրամանինն և կամայք յօժարութեամբ կը հնազանդի՝ եթէ կայսրը արգարութեամբ կառավարէ երկիրը: Վեգրոնիկոս զտողութեամբ պատասխան առաւ. « Կայսեր հրամանը և արգարութիւնը ան է որ գրեզ ան շղթայով կապեն ու Պօլիս ասնին՝ որով քու հայրդ Ղևն կապուեցաւ »: Թորոս հնարագէտ ու բարակամիտ ըլլալով ձայն չհանեց, ունեցած հետեակ զօրքը տարաւ կիրճերուն մէջ՝ զարանի գրաւ, ուսկից որ Յոյները ստիպուած էին անցնելու, և ինքը ձիաւոր զօրքով ուրիշ ձամբով մը Յունաց կամ անցաւ: Երբոր հայր զՅոյները ամէն կողմանէ պաշարեցին՝ մեծ ջարդ մը տալէն ետքը Յունաց իշխաններէն շատ մարդ գերի բռնեցին: Կայսրը սաստիկ արածեցաւ այնչափ իշխանաց գերի բռնուելուն վրայ. հրաման խաւրեց Վեգրոնիկոսին որ ստակով գնէ գերի իշխանները. երբոր գեապանները խնայուցին Թորոսին կայսեր կամբը, պատասխան առաւ. « Կըզարմանամ որ այսչափ յարգի են եղեր կայսեր գիմացը իմ գերիներս, որ ես առանց արեան ու սակաւ աշխատութեամբ բռնեցի. իմ առջիս ստակով՝ ալ չեն արժեր. բայց երբոր կայսեր պիտանի են՝ թող ինչ որ կ'ուզէ զձարէ ու ասնէ »: Գեապանները գերիներուն նա-

2. Թորոս ինչպէս իր հնարացիտութեամբը Վեգրոնիկոսին յաղթեց ու ինչ կերպով Յունաց մէ բռնած գերի իշխանները ետ զարձուց.

խառնիք չընելու համար խիստ շատ ստակ առին ու ետ առին • բայց Թորոս վեհանաճնու թեամբ ան առան ստակը զօրքերուն բաժնեց զեպարանայ առ ջեր • երբոր անոնք զարմացան՝ ըսաւ Թորոս • « Կամաւ ըրի որ նորէն ձեր իշխանները քաջութեամբ բռնելով իմ առջև բերեն » : Այս յիրաւի, քանի մը սարի ետքը նորէն պատերազմ բացուելով Թորոսի և Յունաց մէջ, առջինին պէս Յոյներէն շատ իշխաններ գերի ընկան, և Թորոս առջինին պէս ծախեց զիրենք, որով առժամանակ մի հաշտութիւն եղաւ Հայոց և Յունաց մէջ :

3. Վիշ մը ատենէն նորէն թշնամութիւն ծագեցաւ՝ Թորոսին Սակփանէ կը բորը պատճառաւ • վասն զի ասիկայ անպատարելով Թորոսէն՝ ինքնազուխ սկսաւ իշխել, և շատ մը սրիկաներ գլուխը ժողովելով Յունաց մեծամեծ վնասներ հասուց • անոնք հետք թշնամանալով զարանի մասն, բռնեցին զինքն ու ետացեալ ջրի մէջ սպաննեցին : Սասանի տրամեցաւ Թորոս, ու սուգ մտաւ կը բորը մահուանը համար • բայց վերջը ուզելով Յոյներէն վրէժը առնել՝ շատ շարիք հասուց անոնց, և ձեռքը ընկածներուն քիթը ու ականջնին կտրելով Կոստանդնուպոլիս կը խաւրէր • ինչպէս որ ան ատենները սովորական անգթութիւն էր շատ տեղաս պատիժս առ զերիներու ու շարագործ մարդկանց : Կիւ Մանուէլ կայսրը անձամբ և ահեղ պատարասութեամբ Թորոսին վրայ ելաւ • Թորոս ականելով որ գէժ պիտի չկարենայ գնել անոր զօրաց բազմութեանը, հաշտութիւն խօսեցաւ կայսեր հետ ու բարեկամութեամբ քովը գնաց, ու շատ սիրով իրարու հետ տեսնուեցան : Այսպէս

3. Թորոս իրեն Սակփանէ կը բորը մահուան վրէժը առնելու համար ինչ ըրաւ ու ինչպէս մեռաւ :

Թորոս իշխանը խելքով, քաջութեամբ և հայրա-
բար քրտանըչորս տարի ազգը կառավարելէն ետքը
մեռաւ (1167) :

4. Թորոսին մեանելէն անմիջապէս ետքը ազգին
մէջ խռովութիւն ընկաւ՝ անոր Մլէհ եղբորը պատ-
ճառաւ. վասն զի Թորոս պզտի որդի մը ունէր՝ ու-
րուն խնամակալ դրեր էր մեանելու ասանը Թով-
մաս Պայլ անունով իր աները. սա բանս խնամա-
լով Մլէհ, որ արդէն ապստամբած էր, Բերիոյ
ամիրայէն շատ զօրք առած եկաւ Վիլիկիոյ վրայ .
առջի անգամուն Վիլիկիոյ մէջ ամէն տեղ խռովու-
թիւն ձգելէն ետքը՝ գործողութիւն մը չկրցաւ ը-
նել. ուստի գնաց Բերիոյ ամիրայէն նորէն շատ
մը զօրք առաւ ու եկաւ Թովմաս Պայլին վրայ :
Իշխանները տեսնելով որ սա գործողութեան ծայ-
րը գէշի պիտի երթայ, միաբանեցան և կանչեցին
Մլէհը իրենց իշխան գրին Թորոսին տեղը. բայց
անիկայ մէկէն ինքզինքը զեղխութեան ու անկար-
գութեան տուաւ, որով զօրքն ալ ձանձրացան ու
սպաննեցին զինքը՝ հինգ տարի իշխելէն ետեւ : Ո-
րովհետեւ Մլէհ որդի չունէր, անոր համար Ռու-
բէնը կանչեցին, որ Ստեփանէին որդին էր : Արի-
կայ իր քաղցր բնաւորութեամբը ամենուն սիրելի
եղաւ ու բոլոր մերձակայ և օտար ազգաց առջև ալ
մեծ անուն հանեց (1173) :

5. Փուճ պատճառի մը համար մեծ թշնամու-
թիւն ծագեցաւ Ռուբէն երկրորդին ու Լամբրանի
Հեթում իշխանին հետ. վասն զի Մանուկ կայ-
սեր մեանելէն ետքը նորէն թշնամացան Յոյները

4. Մլէհ ինչպէս իշխան եղաւ Վիլիկիոյ ու ինչ
գիտելիք կայ Ռուբէն Ստեփանէին որդւոյն վրայ .

5. Ի՞նչէն թշնամութի ծագեցաւ Ռուբէն Բ.ին
ու Լամբրանի Հեթում իշխանին մէջ ու ինչ վերջ
ունեցաւ .

Հայոց հետ. Ռուբէն ալ Տարսնի վրայ յարձա-
կելով, որ Յունաց ձեռքն էր, առաւ : Հեթում առ
բանս իրեն մեծ նախասիրք սեպեց, որովհետեւ Յու-
նաց բարեկամ էր, կայսրն ալ իրեն յանձնած էր
Տարսն գաւառին պահպանութիւնը : Երբոր էր-
կու կողմէն ալ պատերազմ բացուեցաւ, Հեթում
նեղը մտնելով օգնութիւն կանչեց Ամառացայ Պե-
մունդ կամըր. բայց որովհետեւ ան ալ կը վախնար
Ռուբէնէն, խորգախաւթեամբ բարեկամարար կո-
չունքի հրաւիրեց զՌուբէնը, և բանեց բանս գրաւ :
Ռուբէնին եղբայրը Անն մեկէն զօրք Ժողկեց ու
Լամբրոն բերգին վրայ երթալով ստասիկ նեղը
ձգեց Հեթումը, որ ճարը հասած հաշտութիւն
խօսեցաւ. վերջը Անն շատ ընծաներ տալով Պե-
մունդին՝ Ռուբէնն ալ ազատեց ու բերաւ նորէն
աթոսը նստեցուց : Աս գեղեցիկ և նախանձելի ա-
ռաքինութիւնները Աննին վրայ տեսնուելով, ան
ասենէն յոյս մը տալին որ ասենով ազգին ուրիշ
մեծամեծ բարիք ալ պիտի ընէ : Ռուբէն Բ. գո-
վելի կերպով տասնըմեկ տարի ազգը կառավարե-
լէն ետքը՝ Գրազարի վանքը քաշուեցաւ, ու հոն
քիչ մը ասենէն սրբութեամբ մեռաւ, իրեն յա-
ջորդ թողով Անն եղբայրը (1184) :

ԳԱՍ ԼԱ.

Լեւոն Բ. իշխանին քաչուսքիւններն ու քաղաւր-
րելը, և ինչուան Հերոսմ Ա.:

1. Լեւոն Բ. ազգին կառավարութիւնը ձեռք առ-
նելով սկսաւ ցուցնել իր քաջութեան ոգին ու
քարեպաշտութիւնը: Իրեն առջի յայտնութիւնը
եղաւ Իկոնիոյ Ռոստամ ամիրային դէմ, որ Լեւո-
նին քաջութեանը նախանձելով վրան պատերազ-
մի ելեր էր. բայց զեռ պատերազմը չսկսած՝ յան-
կարծակի մեռաւ Ռոստամ, որով զօրքն ալ շին-
թաճ սկսան փախչիլ: Լեւոն բոլորովին հալածեց
գիբնէք իր երկրէն, ու շատ հարստութիւն ժող-
վեց անոնց բանակէն:

Ետքը վաղեց ուրիշ տեղերու վրայ, Եթանա-
սունուերէնու բերդի տիրեց. Սիս քաղաքը գրեթէ
բոլորովին նորոգեց. հիւանդանոցներ՝ ուրիշ շատ
շէնքեր շինեց կարօտ մարդկանց համար: Կրօնա-
կան պաշտամանց ալ շատ ջերմեռանդ էր, մանա-
ւանդ սուրբ Աստուածամնայ. որով Աստուած ալ
իր ամեն բանը կը յաջողէր:

2. Լեւոնին իշխանութեան երկրորդ տարին Եու-
սուֆ Սալահաատին սաստիկ զօրանալով Երու-
սաղէմը առաւ Լաւինացւոց ձեռքէն՝ երկայն ու
արիւնահեղ պատերազմներ ընելէն ետքը: Երբոր
աս բանս իմացուեցաւ Եւրոպայ, Փրեզերիկոս Գեր-

1. Լեւոն Բ. ինչ քաջութիւններ ու քարեկար-
գութիւններ քրաւ Հայաստանի մէջ.

2. Լեւոն ինչ ոգնութիւն քրաւ Փրեզերիկոսի.

մանացոց կայսրը և ուրիշ շատ տերութիւններ մնացած՝ անհամար զօրքով նորէն վազեցին Երուսաղեմաց վրայ, և Բերթոյ տիրեցին. բայց պաշարնին ընցած ըլլալով Փրեզերիկոս թուղթ գրեց Ղևոնին ու խնդրեց որ իրենց օգնէ. Ղևոն ոչ միայն առատ պաշար խաւրեց իրենց, հասցա նաև շատ ազնիւ ընծաներ, ու առանձին թղթով մըն ալ կ'ի մացընէր իր պատրաստականութիւնը ամէն տեսակ օգնութիւն ընելու, նաև զիրենք ընդունելու յօժարութիւնը: Փրեզերիկոս շատ հաճեցաւ հայոց առ աստիճանի հիւրասիրութեանը վրայ և խոստացաւ որ Ղևոնը թագաւորեցընէ երբոր ինքը Եւրոպա գաանայ: Բայց զժրագգարար երբոր Սելևկիոյ գեաէն կ'անցնէր՝ խղզուեցաւ. մնացած Եւրոպացիք ալ առանց զօրագլխի մնալով շիրջան յաղթել Սալահատախնին, ու սրտերնին կտարած գարձան Եւրոպա:

3. Ղևոն տեսնելով իրեն գործոց յաջողութիւնը՝ գեապան իրկեց հասլմ՝ Կեղեսախանոս պապին և Հենրիկոս 2. Գերմանացոց Կայսեր, յիշեցընելով Փրեզերիկոսի խոսամուները: Կայսրը և պապը սիրով ընդունեցան գեապանները ու Փրեզերիկոսին խոսամուները կատարեցին. պապը փառաւոր թագ մը խաւրեց Մոզուկոսիոյ Կոնրատոս արքայիսկոպոսին ձեռքովը, Հենրիկոս ալ փառաւոր գրօշ մը խաւրեց՝ վրան առիւծ նկարած: Երբոր հասաւ եպիսկոպոսը Կիլիկիա, թագաւորն ու կաթողիկոսը հրաման հանեցին ամէն տեղ որ գան աղզին մեծերը Սիա ժողովուն, եպիսկոպոսներ, վանահայրներ, իշխաններ, զօրավարներ և ուրիշ շատ երևելի մարզիկ. և փառաւոր հանդիսով կա-

3. Ղևոն ինչ պարզե ընդունեցաւ Կեղեսախանոս պապէն ու Հենրիկոս 2. և, ու իրեն թագագրութեանը ինչ հանգէս եղաւ:

տարուեցաւ թագադրութիւնը Գրիգոր Ապիրատ
ըսուած կաթողիկոսին ձեռքով՝ Սոսո սուրբ Առ-
փիա եկեղեցւոյն մէջ (1198):

4. Հազարացւոց ամիրապետը և Յունաց Ալէքս
կայսրը լսելով Ղևոնին թագաւորելը՝ ուրախացան,
և իրենց ուրախութեան նշան, ամիրապետը շատ
ընծաներով գեսապան իրկեց, Ալէքս ալ մեծագին
թագ մը: Ղևոն առ ամէն յաջողութիւններս տես-
նելով ամենեկին իրեն քրիստոնէական ու թագա-
ւորական պարտքերէն չթուլցաւ, հապա մամա-
ւանդ շատ բարեպաշտական գործքեր ալ ըրաւ,
զամենքը արդարութեամբ, քաղցրութեամբ ու ս-
զորմածութեամբ կը խնամէր. իսկ օտար թշնամի-
ները որք որ նախանձնին կ'աւելցընէին և կ'ու-
ղէին իրեն վնաս հասցընել: Ասոնց գլխաւորներէն
մէկը եղաւ Իկոնիոյ Քայքաւուզ ամիրան, որ լսե-
լով թէ Ղևոն Ղաափնացւոց հետ բարեկամութիւն
ըրեր է, ու ամենէն պատիւ գտեր է, շատ զրբքով
Ղևոնին վրայ վազեց: Ղևոնի զօրաց մէկ մասը ի-
րենց յանդգնութեանը համար յաղթուեցան.
բայց Ղևոն փոխանակ շիտթելու մէկէն մնացած
զօրքովը վազեց ամիրային երկիրները ու սկսաւ
տակն ու վրայ ընել. Քայքաւուզ իսկոյն ձգեց Վի-
լիկիան ու Իկոնիա գարձաւ, և եղածին վրայ սաս-
տիկ ցաւելով հաշտութիւն խտեցաւ Ղևոնին հետ,
և ստած երկիրներն ու գերիները ետ տուաւ, ինչ-
պէս նաև Ղևոն իր առածները:

5. Ղևոնին երկրորդ նախանձողը եղաւ Բերիոյ
ամիրան, որ անհամար զօրքով Վիլիկիոյ սահման-

4. Ղևոն ուրիշ ինչ յաջողութիւններ ունեցաւ.
ու Քայքաւուզի հետ ըրած պատերազմը սրն է:

5. Ղևոն ինչ յաղթութիւն ըրաւ նաև Բերիոյ
ամիրային դէմ ու անոր գեսապաններուն հետ ինչ
պէս վարուեցաւ:

ները գալով զառիկ միջոցները, սպասնալեզք դե-
պան խրիկեց որ դայ իրեն հնազանդի, ապա թէ ոչ
արիւնով կը լուամ, ըսաւ, երկիրդ, և ուրախու-
թեան ասներդ արամու թեան կը գարձընեմ: Ղևոն
առաջուց իմանալով դեպքաննե րուն գալը, քանի
մը իշխան խաւրեց որ այլ և այլ ճամբաներէ ա-
ռաջնորդելով ուշացրնեն անոնց գալը, և ինքը շատ
զօրքով յանկարծակի ամիրայիս զօրացը վրայ յար-
ձըկեցաւ. անոնք ալ անպարաստ քլլալով շարա-
շար յաղթուեցան ու բոլոր բանակինն ձգեցին փա-
խան: Ղևոն գարձաւ Աիլիկիա հարուստ աւարնե-
րով, շատ վրաններ ու գրօշներ ձեռք ձգած, ա-
մէնն ալ կարգով բանակի ձեով շարեց և իւրա-
քանչիւր վրանին զիմացը գրօշն ուր անկեց: Երբոր
ամէն բան պարաստուեցաւ, դեպքաններն ալ
հասան, ու ան բաները տեսնելով Ղևոնին սաքը
ընկան որ գէթ կեանքերնուն խնայէ. Ղևոն շատ
պատուով վարուեցաւ հետերնին ու ետ ճամբեց
զերենք, ըսելով որ հիմա ես կը պահանջեմ ամի-
րայէն ան հարկը որ ամիրան ինձմէ կը պահանջէր:

Ե. Ղևոնին թագաւորութեան վերջի տարիները
մեծ թշնամութիւն ընկաւ Հայոց և Ղաաթնացւոց
մէջ՝ Ամախթայ իշխանին պատճառաւ: Ղևոն զի
Ամախթայ Պեմուեդ կամար մեանելէն շատ առաջ
իրեն յաջորդ որոշեր էր Պալաին իր որդին, որ
Ղևոնին Ռուբէն եղբորը ազնկանը հետ կարգուած
էր. բայց Պալաին կանուխ մեանելով հայրը իրեն
ժառանգ որոշեց Պալաինին Ռուբէն անունով պրզ-
աի որդին, և սա բանիս համար երգում առաւ Ամ-
ախթայ եպիսկոպոսներէն ու իշխաններէն: Երբոր
Պեմուեդ մեռաւ, Ռուբէն իր թոռը յաջորդեց ա-
նոր. սա բանիս վրայ նախանձելով Ճիւան Տրա-

Ե. Հայերը Ղաաթնացւոց հետ ինչու թշնամու-
ցան. ու Ղևոն ինչպէս մեռաւ.

պօրաց իշխանը՝ շատ զօրքով Անտիոքաց վրաց եկաւ ,
Ռուբէնը հալածեց ու Լաաին իշխան մը գրաւ քա-
ղաքապետ , որուն ձեռնառու եղան իշխաններն ու
եպիսկոպոսները : Լեոն առ բանիս սաստիկ նեղա-
ցաւ , բայց չուզեց պատերազմով առաջ տանիլ իր
կամքը . հապա Իննովկենախոս պապին թուղթ
գրեց որ առ բանս արգարութեամբ որոշէ : պապն
ալ զատաւոր և իրաւարար գրաւ առ բանիս Պետ-
րոս անունով կարգինալ մը որ արդէն ուրիշ ան-
գամ Վիլիկիոյ կողմերը եկած ըլլալով գիտէր ան
տեղի բաները . բայց կարգինալը Լաաինացւոց կող-
մը բռնեց , որով անոնք ալ հայոց գէմ դարձան .
առ բանիս նեղանալով Լեոն՝ բոլոր Վիլիկիոյ մէջ
եղած Լաաին իշխանները իրենց քահանաներովք
վանտեց հանեց Վիլիկիայէն , մէկ քանին ալ բռնե-
լով բանս գրաւ : Անտիոքաց եպիսկոպոսները ստի-
պեցին իշխանները որ նորէն Ռուբէնը ընդունին -
անով հաշտութիւն եղաւ Լեոնի ու Տրապօրոց
Ճիւան իշխանին հետ : Իսկ Լեոն երեսունուիրէք
տարի թագաւորեւէն ետքը՝ գովելի մահուամբ մե-
ռաւ , իրեն յաջորդ թողլով իր Չապէլ աղէիկը ,
որովհետեւ մանչ զուակ չունէր (1218) :

7. Չապէլ թագուհին տասներկու տարեկան ըլ-
լալով խնամակալ գրուեցաւ իրեն Կոստանդին իշ-
խանը : Ռուբէն , որ նորէն Անտիոքէն հալածուե-
ր , շատ մը մարդիկ գլուխը ժողովելով գնաց Չա-
պէլին քանի մը քաղաքներուն տիրեց : Կոստան-
դին գէմն ելաւ , բռնեց զինքը իրեն կուսակիցնե-
րովք մէկտեղ բանս գրաւ , և հոն մեռան : Իսկ Չա-
պէլը կարգեցին Անտիոքաց կամսին՝ Փիլիպպոս ա-
նունով որգուցնէ հետ , և զինքը թագաւոր օծեցին

7. Չապէլին թագուհի եղած միջոցը ինչ պա-
տերազմ հանդիպեցաւ . Փիլիպպոս ինչպէս ըրաւ
իր թագաւորութիւնը ու ս'ով է Հեթում .

Հայոց, երգում աննկող առաջուց որ ազգային ծէսերու և սովորութեանց շխառնուի: Բայց Վիլիսիոս երկու տարիէն սկսաւ երգմանը գէտ ընել: անով ալ գոհ չըլլալով սկսաւ պաշտօնին աղնիւ զարգերը Անտիոք կրել: Աշխատները առ բանիս նեղանալով բանեցին բանա գրին զինքը և ստիպեցին որ խաւրած բաները ետ զարձընէ: Ինքն ալ տարի մը բանաը կենալէն ետքը՝ սրտին ցաւէն մեռաւ: Ետքը Չապէլ ուրիշներուն յորդորելովը Կոստանդինին Հեթում որդոյն հետ կարգուեցաւ, և անիկայ օծուեցաւ Թագաւոր, որ Արշակունեաց ցեղէն կարիճ մըն էր, և Ռուբինեանց հետ ազգակցութիւն ընելով Թագաւորական ցեղէ կը սեպուէր:

8. Հեթում ցեղին աշնուականութեանը հետ նաև անարատ բարք և շատ գեղեցիկ յատկութիւններ ալ ունէր, որով Ռուբինեանց երեւելի Թագաւորներուն մէկը եղաւ, օտար ազգաց ալ շատ սիրելի: Հեթմայ Թագաւորութեան առջի տարիները՝ շատ խաղաղ էր Արիկիս, և Կոստանդին իր հայրը շատ բարեկարգութիւններ ըրաւ, Թէպէտ և Հայաստան այլ և այլ օտար Թշնամիներէ կը շարշարուէր: Աշնուաւոր եղան Ճէլալէաւին բանաւորը, ու Թաւթարաց Չարմաղան զօրավարը, որ Անին աննկող մեծ քարոյ ըրաւ անոր բնակչացը: Չարմաղան երբոր մեռաւ, իրեն յաջորդեց զօրավարութեան մէջ Բաշու, որ նոյնպէս շատ մլաս հասուց Հայոց: Հեթում աննկող որ Բաշու շատ կատարածներ ընելով գէտ ՚ի Արիկիոյ վրայ կուգայ, շատ ընծաներով մարդ խաւրեց ու անոր հըպատակեցաւ. Բաշու երգմունքով գաշինք գրաւ Հեթմայ հետ որ մլաս մը շհասցընէ իրեն. այն.

8. Հեթում ինչպէս ըրաւ իր Թագաւորութիւնը, ու Բաշուին կատարութիւնը ինչպէս իրեցուց.

պէտով ելաւ գնաց: Երբոր Թաթարաց Ռաթաթա
խանը մեռաւ, Հեթում անոր յաջորդին Գիուգ
խանին հետ ալ նոյն դաշինքը նորոգելով հաստա-
տեց, անով Կիլիկիա նեղութիւն մը չբաշեց Թա-
թարներէն:

Ծ. Երբոր Հեթում սա բաներուս զբաղած էր,
էր քեռին Կոստանդին Լամբրոնի իշխանը ապրա-
տամբեցաւ իրմէ, ու գնաց Իկոնիոյ ամիրային հետ
միացաւ, որ Հեթումին գեմ թշնամացած էր. Հե-
թում զօրք ժողկեց ու գնաց Կոստանդինի երկիր-
ներուն ամբեց. Կոստանդին նեղը մանկելով իրեք
չորս անգամ գետապան խաւրեց Հեթումին՝ հնա-
զանգութիւն խոստանալով. բայց Հեթում յանձն
չառաւ գիանալով Կոստանդինի խարզախութիւ-
նը: Կոստանդին նորէն խիստամասինին քովք փախ-
ելով շատ զօրք օգնութիւն առած յանկարծա-
կի Հեթումին մրայ վազեց ու շատ կոտորած բրաւ-
բայց Հեթում իրեն ցրուած զօրքերը ժողկէլէն
զատ՝ ուրիշ զրքեր ալ բերել տալով նորէն Կոս-
տանդինը Լամբրոն փախուց, ուր որ մեռաւ քիչ
ատենէն ետքը:

10. Կոյն ատենները Գիուգ խանը մեռաւ ու
տեղը անցաւ Մանգոյ, որ սկսաւ զհայերը նեղել
իր հարկապահանջներուն ձեռքովք. Հեթում չի-
մանալով ազգին խեղձութեանը՝ ելաւ անձամբ
Մանգոյ խանին գնաց, ու շատ ընծաներով անոր
սիրաբ վաստըրկեցաւ, շատ պատիւ գտաւ անկէ և
խաղբ առաւ Մանգոյէն որ արգիլէ հայերը նեղե-
լէն՝ ինչպէս որ ալ ըրաւ: Հեթումին փառասո-

Ծ. Կոստանդին Հեթումի քեռին ինչպէս ա-
պրատամբեցաւ ու ինչպէս մեռաւ.

10. Հեթում ինչպէս հաշտեցուց զՄանգոյ խա-
նը ու ինչ պատերազմ ունեցաւ Փնաուխաղբ Ե-
գիպոտոսի ամիրային հետ.

բուելուն ձայնը Նդիպատոսի Փնտուխաար ամիրային
սկաննը հասնելով նախանձը գրգռեց որ Հեթում
մին շարիք մը հասցընէ, և խանաղով որ Հայերը
տիրած են քանի մը քաղաքներու որ ասկենով Ն-
դիպատացուց ձեռքն էին, զեապան զրկեց որ Լա
տայ ան քաղաքները: Հեթում օրինաւոր սրա-
ճաններով ցրցուց թէ անոնք արգէն Հայոցն էին
ու Նդիպատացիք անիրաւութեամբ յափշտակե-
ր էին: Ամիրան կատգեցաւ աս բանիս, և առանց
ձայն հանելու զօրք խաւրեց Վիլիկիյ վրայ, որ
անպատրաստ գանելով Հայերը՝ շատ աւերմունք-
ներ ու արիւնհեղութիւններ բրին: Հեթում մե-
կէն ժողովեց զօրքը երկու զունգ բաժնեց, մէկը
Ղան՝ մէկաւր թորոս որգւոցը տուաւ, և ինքը
Մանգոյ խանէն օգնութիւն ասնելու գնաց: Ան-
միջոցին Ղան, և թորոս քաջութեամբ քանի մը
պատերազմներ բրին, ու թշնամիներէն շատ մարդ
չարգեցին: Բայց անգամ մ' ալ թորոս քաջու-
թեամբ պատերազմելու ասկէն զարնուեցաւ մե-
ռաւ, Ղան ալ գերի ընկաւ. ասով Նդիպատացիք
բոլոր Վիլիկիոյ տիրեցին քաց ՚ի բերդերէն. վերջը
Ղանն ալ Փնտուխաարին առջև տարին, որ խիստ
ախորժելով Ղանին ազնիւ սրտին ու կերպին՝ շնե-
գեց զինքը, ընդհակառակն խօսք տուաւ որ Վիլի-
կիս գարձընէ. քայց իշխանները թող շտախն:

11. Հեթում երբոր թաթար վարձուոր զօրքով
գարձած տեղաւ եղած ձախորդութիւնները՝ շատ
վշտացաւ, ու շատ անգամ ասանմին քաջուած
կ'ողբար իր օրդիքը: Օր մը բոլոր իշխանները քո-
վը ժողվուեալ էին. ուզելով Հեթում ամենուն սր-
աւը շարժել իր խեղճ վիճակին վրայ, հարցուց իշ-
խաններուն. « Հոս են ամէնքը », երբոր անոնք

11. Ղան Հեթումի եղբայրը ինչպէս գերու-
թենէ ազատեցաւ ու Հեթում ինչ մահ ունեցաւ.

պատասխան տուին միաբերան թէ Այն. պատաս-
խանեց թագաւորը ցաւած որտով ու արցունքով.
« Հապա մեր է Թորոս, մեր է Ղևոն, որոնցմէ մէ-
կը գերեզմանը անյիշատակ թագաւած, մէկալը գե-
րութեան տառապանաց մէջ է »: Իշխանները շար-
ժեցան թագաւորին աս խօսքերէն, միաբանեցան
մէջերնին ու շատ ստակ ժողովելով ամիրային խաւ-
րեցին. ան ալ Հեթումին խնդրեց որ իր Սղուր ա-
նունով ազգակիանը՝ որ Սկիւթացոց ձեռքը գերի
ընկած էր՝ ազատէ. երբոր յաջողեցաւ աս բանն
Հեթումին ձեռքովը, ինքն ալ իր խոստմունքը կա-
տարելով ազատեց Ղևոնը, որ ազգին մեծ ուրա-
խութեան պատճառ եղաւ: Հեթում մեռնելէն
քիչ մը ստաջ իր տեղը թագաւոր գրաւ Ղևոնը,
և ինքը Գրազարի վանքը քաշուելով կրօնաւոր ե-
ղաւ, ուր քանի մը ամիս ալ ապրեցաւ ու մեաւ,
քառասունըջինգ տարի թագաւորելէն ետքը: Ի-
րեն մեծ ու յաւերժական պարծանք է ազգին սի-
րոյն համար քաշած անհամար նեղութիւններն ու
վիշտերը (1268):

ԴԱՍ ԼԲ.

Լեոն Գ. ու Հերոսմ Բ.:

1. Լեոն երրորդ սաստիկ աքառելով հօրը մահաւանդ վրայ, իրեք չորս ամիսի շափ սուգի մէջ էր, այնչափ որ սրտին ցաւէն ծանր հիւանդացաւ: Եզիպատոսի և ուրիշ տեղերու ամիրաները լսելով սա բաներս՝ գեապաններ զտկեցին զինքը միմիժարելու համար, և յորդորեցին որ հօրը տեղը ազգին կառավարութիւնը ձեռք առնէ: Աս բաներէս յորդորուած՝ Լեոն Թագաւոր օծուեցաւ, ու սկըսաւ խելոյն բարեկարգութիւններ ընել, որդրմածութեան գործքերը աւելցընել ու շատ շինութիւններ ընել. ուսման ետեւ ըլլալով գարոյնի հաստատեց, խանգարած հին գրքերը նորոգել տալով վանքերուն մէջը պահել առաւ ու ետեւ եղաւ որ պիտանի գրքեր գրուին:

2. Երրոր Լեոն սա կերպերովս ազգին բարիք ընելու կ'աշխատէր, իր ազգականներէն ոմանք նա խանձելով վրան, գնացին Փնատւխտար Եզիպատոսի ամիրան Լեոնի գէմ գրգռեցին. ան ալ Արաբացոց ու Թիւրքմէններուն հետ միացած՝ Կիլիկիոյ վրայ վազեց, իրեն երգմունքը ոտքի տակ առնելով: Լեոն յանկարծակիի եկաւ, և տեսնելով

1. Լեոն Գ. ինչպէս Թագաւորեց ու ինչ բարեկարգութիւններ ըրաւ.

2. Փնատւխտար Եզիպատոսի ամիրան ինչպէս տիրեց Կիլիկիոյ ու ինչ վնասներ հասուց ու ետքը ինչպէս յաղթուեցաւ հայոցմէ.

իշխանաց անմիաբանութիւնն ու պաղուծիւնը, ամուր տեղուանք պահուրանցար: ան պատճառաւ ամիրային զօրքն ալ սոսանց արգելքի Նիւլիկիա մը. սանն ու շատ փնտա հասուցին՝ ամէն տեղ, մանաւանդ Տարսնն, ուր թագաւորական դանձն և ուրիշ շատ հարստութիւններ ալ կային: Ասոնք ընեւէն վերջը ֆնտուխտար անբաւ հարստութեամբ և շատ գերիներով Եգիպտոս գործաւ. բայց քիչ ատենէն առջինէն աւելի զօրք ժողովելով սկսաւ նորէն Նիւլիկիոյ վրայ գալ: Ասն տեսաւ որ պահուրանք օգուտ մը չըլլար, որչափ որ կրցաւ զօրք ժողովցը՝ ամէնքն ալ յորգորեց քաջաւերեց, և վեց գունդ բաժնելով այլ և այլ տեղեր խաւրեց. մէկ գունդը աուաւ իր հօրեղբօրը Սմբատ սպարապետին ձեռքը ու խաւրեց Եգիպտոսացոց դէմ. երկրորդը ինքը աուաւ և ուրիշ ձամբով մը Եգիպտոսացոց ետեւը անցաւ: Երբոր Եգիպտոսցիք Սմբատին բանակը տեսան, անոնց քիչւորութեանը նայելով անհող եղան. բայց Սմբատ յանկարծակի վրանին վազեց ու մէջերնին շփոթութիւն ձգեց, ան միջոցին Ասն ալ ետենէն յարձրկելով մեծ ջարդ արւին երկուքը մէկէն ու բոլոր Եգիպտոսացոց բանակը ցրուեցին: Ան հարուածին վրայ ֆնտուխտար հաշտութիւն ըրաւ Ասնին հետ:

3. Ասն հաշտութենէն վերջը թաթարաց Ալպաղա խանին դնաց, ու շատ սեր և պատիւ գտաւ անկէ իր հաւատարմութեանը համար. ուրիշ ամբրաներն ալ բարեկամութեամբ ու սիրով սկսան վարուիլ Ասնին հետ՝ ակնածելով իր քաջութիւններէն:

4. Արչափ որ արապին գործողութիւնները

3. Ասն հաշտութենէն վերջը ինչ ըրաւ.

4. Ասն ինչ ձախորդութիւններ ունեցաւ ու ինչպէս մեռաւ.

կարգի գրուեցան ու Վեներն երկիրը խաղաղացաւ ,
այնչափ ալ ընտանեկան ձախորդ զիպուածներով
փորձուեցաւ իր առաքինութիւնը . քիչ ատենի
մէջ մեռան իր սիրելի Ներսէս որդին , ազջ իկը ու
կինը . ինքն ալ ծանր հիւանդացաւ , Ախլիկիա ալ
փոխադրական հիւանդութիւն մը կ'ընայով շատ
ջարդ ըրաւ . բայց Վեներն ամենուն ալ սիրով համ-
բերելով երկու տարիէն երջանիկ մահուամբ մե-
ռաւ . քսան տարի թագաւորելէն ետքը :

5. Վեներն երրորդին որդին Հեթում Բ. հօրը յա-
ջարգեց , բայց խոնարհութեան համար չուզեց թա-
գաւոր օծուիլ . չէր ուզէր նաև կառավարութեան
հոգը իր վրան առնել . աւելի կը սիրէր կրօնաւո-
բայց հետ կենակցելով հոգևորապէս զբօսնուլ . ան
սրատառաւ քիչ մը ատեն ակամայ կամօք իշխե-
լէն ետքը՝ հրաժարեցաւ իրաւունքէն , ու իր Թո-
րոս եղբայրը իր տեղը թագաւոր օծել առաւ .
Թորոս՝ եղբորը խորհրդոցը կ'անտար , իշխաններն
ալ կը յարգէին զՀեթում . բայց Թորոս քիչ մը
ատենէն եղբորը փձակին նախանձելով թագաւո-
րութիւնը նորէն Հեթումին յանձնեց , ու ինքը
վանք մը քաշուելով կրօնաւոր եղաւ : Հեթում՝
երկրորդ անգամ թագաւորելով թաթարաց Ղա-
զան խանին գնաց աղաչելու որ քրիստոնէից զէմ
եղած հալածմունքը զազրեցընէ . Ղազան սիրով
ընդունեցաւ թէ աղաչողը և թէ աղաչանքը , ու
ինդիքը կատարեց (1295) :

6. Երրոր Սիս գարձաւ . քիչ ատենէն Թորոս
եղբորը հետ Աոստանգնուպօլիս գնաց , իր Սա-

5. Հեթում Բ. ինչպէս ըրաւ իր թագաւորու-
թիւնը ու ս՛վ է Թորոս .

6. Սմբատ ինչպէս թագաւոր օծուեցաւ ու ինչ
անիրաւութիւն ըրաւ Թորոսին ու Հեթումին
զէմ .

ըիամ քրոջմէն հրաւիրուելով որ կայսեր կինն էր :
Ան միջոցին որ իրենք Պօլիս էին՝ Սմբատ եղբայր-
նին, որուն յանձնած էին տէրութեան հօգը, իշ-
խանները ու կաթուղիկօսը համոզելով թագաւոր
օծուեցաւ . վերջը թաթարստան Ղազան խանին
ալ գնաց ու իր թագաւորութեանը հաստատու-
թիւն առաւ . նոյնպէս նաև սրբազան պապին հը-
պատակութեան թուղթ գրեց ու անկէ օրհնու-
թեան գիր առաւ . այսպէսով ամէն կողմանէ թա-
գաւորութիւնը սպառնացուց, և օրէ օր եղբայր-
ներուն գալստեանը կ'սպասէր : Երբոր թորոս և
Հեթում Վիլիկիա կը դառնային, Սմբատ իր զօր-
քովը զխմացնին ելաւ ու զիրենք վանտեց . անոնք
ալ սկսան Ղազան խանին երթալ որ անկէ օգնու-
թիւն ուզին Սմբատին դէմ . բայց Սմբատ ետևնէն
հասնելով երկուքն ալ բռնեց . իշխաններէն ոմանց
խորհրդովը թորոսը ըսպաննեց ու Հեթումն ալ
կուրցուց :

7 . Աս անողորմ գործքին վրայ Կոստանդին մէ-
կալ եղբայրը զօրք ժողովեց, ու եղբօրը դէմ պա-
տերազմի ելաւ . երկու կողմէն ալ շատ մեծ ջարդ
եղաւ, բայց վերջը Կոստանդին զօրանալով յաղ-
թեց Սմբատին ու բռնեց զինքը բանտ գրաւ, ետ-
քը Հեթումը հանեց բանտէն ու աղէկ նայելով
վիշտերէն ազատեց . իսկ ինքը եղբօրը տեղը թա-
գաւոր նստաւ : Երկու տարիի չափ թագաւորե-
լէն ետքը երբոր հրաշքով մը Հեթմոյ աչքերը
բացուեցան, ժողովուրդը ուղեց որ ինքը թագա-
ւորէ երրորդ անգամ . ինքը յանձն չառաւ, վանք
մը փախաւ ու պահուեալեցաւ, բայց զօրքը զինքը
բռնութեամբ վանքէն հանելով բերին թագաւո-
րեցուցին : Կոստանդինին ծանր գալով աս բանս՝

7 . Սմբատ ինչպէս թագաւորութենէն ինկաւ
ու Հեթում ինչպէս նորէն թագաւորեց .

վերաւ ետեւէ ըլլալ որ Հեթումին տեղք ինքը թա-
գաւորէ . առ պատճառաւ ետեւէ եղաւ որ Սմբա-
տը բանակէն հանէ աւ անոր հետ մէկտեղ Հեթու-
մը վանտէ . բայց Հեթում ջանալով որ խառվու-
թիւն չըլլայ՝ երկուքն ալ հնարքով մը բռնեց ու
Պոլիս կայսեր խաւրեց , ուր ինչուան իրենց մահը
մնացին (1300) :

8. Հեթում երրորդ անգամ որ թագաւորեց՝
չորս հինգ հեղ պատերազմ ըրաւ Եղիպտացոյ
ու Ղիպոնացոյ հետ և միշտ յաղթող գանուե-
ցաւ . վերջը ուզելով բոլորովին հրաժարիլ աչ-
խարհքէ , որովհետեւ ինքը կուսակրօն էր՝ իր եղ-
բորորդին Ղանը որդեգրեց իրեն ու ետքը զանի-
կայ թագաւոր օծել աուաւ . իսկ ինքը թէպէտ և
թագաւորահայր կ'ըսուէր՝ բայց վանք մը քաշուած
կը կենար (1304) :

9. Նոյն միջոցներուն Վոսիկոս ըսուած բերզին
Հեթում իշխանն ալ հրաժարեցաւ իր իշխանու-
թենէն ու Վիսրոս Ղաթինացոյ վանք մը քաշուե-
ցաւ . վերջը Հոսով երթալով թաթարաց պատ-
մուծիւն մը գրեց գաղղիարէն , որուն հայերէն նոր
թարգմանութիւնն ալ ունինք :

10. Ղան Գ. Հեթումին խրատներովն ու խոր-
հորդովք , իրեն ալ բնական ընտիր բարուքը և խ-
հեմութեամբը շատ լաւ սկսաւ կատարել աղ-
գը . բայց հաւատաց իննգիրններու համար եկեղեցա-
կանոց ազատութենէն մեծամեծ խառվութիւններ
ծագեցան Վիլիկիոյ մէջ . վասն զի Գրիգոր Ան-
ւարզեցի կամուզիկսը ուզելով քանի մը բարե-

8. Հեթում ինչ պատերազմներ ունեցաւ ու
ինչու թագաւորութենէն քաշուեցաւ .

9. Ինչ զիտելիք կայ Հեթում իշխանին վրայ .

10. Ղան Գ. Ինչպէս սկսաւ իր թագաւորու-
թիւնը՝ ու Սոյ ժողովքը ինչպէս եղաւ .

կարգութիւններ ու ազգային մէկ քանի ծխոց փոփոխութիւններ ընել, առ բանիս համար ուղեց որ ազգային ժողով մը գումարուի. բայց երբոր առաւ որ առաջնորդաց ու եկեղեցականաց մէջ առ բաներուս համար խռովութիւններ ու տարաձայնութիւններ կ'սկսին՝ Հեթում Թագաւորահօր Թուղթ մը գրեց, յորդորելով որ իր զխաւորութեանը առաջ երթալուն փոյթ ունենայ, զիանալով որ ամենքն ալ զինքը կը սիրեն և ըսածը անյայտ կը կատարեն. գաւանդութեան ձեռն ալ շարադրեց ու Ղևոնիս խաւրեց, բայց ինքը ան միջոցին հիւանդանալով մեռաւ: Ղևոն ու Հեթում մէջերնին մարբանած՝ հրաման հանեցին որ Սոյց մէջ ժողով մը ըլլուի, ուր եկան Ղիլիկիոյ ամէն եպիսկոպոսներն ու վանահայրները. հոն Գրիգոր Մնատարեցիին Թուղթը կարգաւով ինը զլեւաւոր ու հական բան որոշեցին ու Կոստանդին Կեաւրացին կաթուղիկոս գրին, որ ան որոշմանց ճիշդ պահանջութեանը ջանք ընէ. բայց ընդհակառակն շատ խռովութիւններ ու սպանութիւններ ալ եղան ան պատճառաւ:

11. Ինչ տարիէն նորէն Ասանայի մէջ ժողով գումարուեցաւ ու անցած ժողովին վճիռները նորէն հաստատուեցան. բայց հակառակաւ մարդիկ ետքը դէմ կեցան, և իշխաններուն մեծ մասը եկեղեցականներէն զրգուելով Ղևոն Թագաւորին ու Հեթում Թագաւորահօր հետ թշնամացան. և որովհետեւ ձեռքերնէն բան չէր գար՝ գնացին Թաթարաց Պիլարզու զօրավարը Ղևոնիս և անոր կուսակիցներուն դէմ զրգուեցին, որ հազար հոգւով Մարզաբա կը նստէր Ղիլիկիոյ պաշտպա-

11. Ղևոն ու Հեթում Թագաւորահայրը ինչպէս ասելի եղան եկեղեցւոյ ու իշխաններուն ու Պիլարզու ինչպէս զիրենք սպաննեց.

նութեան համար : Պիլարզու անձնելով իրեն զօրաց քիչ որութիւնը շահամարձակեցաւ պատերազմի ելլելու . խարեւութեամբ իրեն կանչեց Ղևոնք, Հեթումը և իրենց կուսակից իշխանները . երբոր եկան՝ զամենն ալ թրէ անցընել տուաւ , ու սկըսաւ Վիլիկիոյ վրայ գալով անիբել ան անկերուն (1308) :

ԴԱՍ ԼԳ .

Օշիհ , ու Ղևոն Ե :

1 . Հեթումին պզտիկ եզբայրը Օշին շտեղով Պիլարզուն ըրած անիրաւ սպանութիւնները , շատ ցաւեցաւ ու մեկէն գնաց Սիւ քաղաքը , մնացած իշխաններն ու զօրքերը ժողովեց , Պիլարզուն Վիլիկիայէն վճռակց , ու երկիրը անոր բանութիւններէն ազատեց : Իշխանները միարան զինքը թաղաւոր օժեցին , և սկսաւ բարեկարգութիւններ ընել . ետեւէ եզաւ որ Սոսյ մեջ որոշուած կանոնները պահօրի . բայց ան պատճառաւ նորէն խռովութիւն ընկաւ տղէս առաջնորդներու ու ժողովրդեան մեջ , թէպէտ և մեծ շարիք մը շահեակեցաւ : Օշին Ղաթինացւոց հետ ինտանութիւն ըրաւ , ու Սեկիլիացւոց թագաւորներուն ցեղէն իրեն կին առաւ . սասով բարեկամացաւ Եւրոպացւոց հետ ու անոնցմէ օգնութիւն ուղեց :

2 . Ան միջոցներուն Եզիպատոսի՝ Ղասար սուլզանը

1 . Օշին ո՞վ է ու Պիլարզուն ի՞նչպէս Վիլիկիոյէն վճռակց .

2 . Օշին ի՞նչ նշանաւոր յաղթութիւն մը ըրաւ Ղասար սուլզանին դէմ ու ի՞նչպէս մեռաւ .

շատ զօրք խաւրեց Վիլիկիոյ վրայ . Օշին յանկար-
ծակիի դալով շիրցաւ մեկէն զօրք ժողովել , ու հե-
տը ունեցած երկու հարիւր հոգւովք զիմացնին ե-
լաւ , բոլորովին Նատուծոյ սպաւինած . երբոր ա-
նոնք անհոգութեամբ ու առանց պատրաստու-
թեան կեցեր էին՝ վրանին վազեց , ու բանակին
կարգը շփոթելով վեց հազար հոգիի շափ ջար-
դեց , մնացածները փախուց , ու շատ մ' ալ գերի
բռնեց : Օշին ան յաղթութենէն ետքը տարի մ' ալ
ապրելով մեռաւ , իր տասուերկու տարեկան Վեոն
որդին իշխաններուն յանձնելով , և թագաւորա-
հայր դրաւ անոր Օշին պայլ իշխանը (1319) :

3. Օշինին մեռնելէն ետքը սաստիկ շարժ մը ե-
ղաւ . Հայաստան որ շատ տեղեր աւերակ դարձուց ,
Թնչպէս Մեին և ուրիշ քաղաքներ . ան աւերակ
դարձած քաղաքներուն բնակիչները Հայաստա-
նէն ելան թաթարստան գնացին . բայց հոն ալ
հանդիստ բնակութիւն չգտնելով անոնցմէ կէտը
Ղրիմ անցաւ , կէս մը Վեհաստան , կէս մը Ուլա-
հի երկիրը , մնացածներն ալ այլ և այլ տեղեր
ցրուեցան :

4. Վեոն տասուերկու տարեկան էր երբոր թա-
գաւոր օծուեցաւ Հայոց վրայ , ու քանիքմէկ տա-
րի թագաւորեց . ամսնս որ ամսամուսն ու անգութ
բնաւորութեամբք իր անունը նուազացուց , տե-
րութեան թշուառութիւնը աւելցուց և ցաւալի
թագաւորութիւն ու մահ ունեցաւ : Վասն զի Օ-
շին պայլ՝ իր սղխիկը Վեոն տուաւ , ու անոր Յով
հաննա լատին խորթ մայրը իրեն կին առաւ . Վա-
տինացիք աս բանիս նեղանալով Հայ իշխաննե-

3. Օշինին մեռնելէն ետքը Թնչ հանդիպեցաւ
ու Հայերը Թնչպէս ցրուեցան .

4. Վեոն Թնչպէս ազգերնիս աւելի թշուառա-
ցուց .

րէն մէկ քանին Աստիւն ու Օշինին դէմ գրգռեցին, ու երկպառասնութիւն ձգեցին ազգին մէջ: Աստիւն շատ զօրքով վազեց Տիւրասի վրայ ու յազմեց Տիւրացւոց որ աս խռովութեանց պատճառ եղեր էին:

5. Ան զիպուածները և Օշին թագաւորին մահը լսելով 'Նասր Եպիպատասի սուլքանը' ուղեց ասջի յազմուերուն վրէժը ասնել, զօրք խաւրեց որ երթան Արլիկիան աւարի ասնուն. բայց այլ և այլ տեղեր Հայերը յանկարծակի վրանին վազելով Արլիկիայէն վանակցին զանոնք, հինգ Հազար հոգիի շափ ալ սպաննեցին: Ան կտտորածէն փախած Եգիպտացիները՝ օգնութիւն ասին այլ և այլ բարբարոս ազգերէ, եկան նորէն Արլիկիոյ վրայ ու սկսան ասկն ու վրայ ընել աշխարհքը. աս բանս լսելով սրբազան պապը՝ յորդորեց Աստիւն որ Երուսաղիմներէն օգնութիւն ուղէ, բայց անոնք տեղերնէն չարժեցան:

6. Աստիւն Երուսաղեացմէ օգնութիւն ուղեւ իմանալով 'Նասր' աւելի կտաղեցաւ, ու անթիւ զօրք ժողովելով միաքը գրաւ որ Հայոց ազգը ջնջէ. իրեն հետ միացաւ Թիմուրգաշ Թաթարաց զօրավարը, որ Հայոց օգնութեան եկեր էր. ուստի իր ըն բաշեկամ մտաւ Արլիկիա ու սկսաւ աւրըշարհել երկիրը: Հազիւ թէ ասջի կտտորածին մեռելները գերեզմաններու մէջ ամփոփուեր էին, վազեցին Թուրքերը Արլիկիոյ վրայ ու Թաթարաց պէս ամէն շարիք հասուցին. երբոր ասնոնք ալ ա-

5. Հայերը ինչպէս յազմեցին 'Նասր սուլքանին' զօրքերուն ու Աստիւն ինչու Երուսաղեացմէ օգնութիւն ուղեց.

6. 'Նասր' ու Թիմուրգաշ ինչպէս Արլիկիա մտան, Թուրքերէն ինչ փասաներ քաշեց ազգերնիս.

ւարձերով ու գերութեամբ կը զառնային՝ վաղե-
ցին Եգիպտացիք, ու առջիններուն չբրած շարեք-
ները 'ի գործ գրին : Առ խեղճութեան միջոցները
իշխանները փոխանակ մէջերնին միաբանելով թըշ-
նամուտն գէտ՝ ելլելու, իրարու գէտ ունեցած ատե-
լութիւննին կը սնուցանէին :

7. Ահոն տեսնելով որ բոլոր Աիլիկիա այսպէ-
սով աւերակ պիտի զառնայ, սրբազան պապին
թուղթ գրեց և օգնութիւն ուզեց. պապը շատ
ստակ խաւրեց աւերակաց շինութեանը համար,
խրատական թուղթ ալ գրեց՝ յորդորելով որ միա-
բան սիրով վարուին իրարու հետ : Ահոն նոյնպէս
մարդ խաւրեց Թաթարաց Պուսայիտ խանին որ
օգնէ իրեն. ան ալ քսանհազար զօրք հասցուց
Աիլիկիոյ պաշտպանութեանը համար, Եգիպտոսի
ամիրային ալ հրաման ըրաւ որ հայերը չնեղէ, ու
հետեւնին սիրով վարուի. ասով քիչ մը հանգրս-
տացաւ Աիլիկիա :

8. Երբոր արտաքին թշնամիները զազրեցան,
սկսան նեղքին խառովութիւններ, որ ուրիշ անգամ-
ներու պէս աւելի միտասակար եղան հայաստանի
քան թէ արտաքին թշնամիները : Ահոն Օշին պայ-
լին հետ սաստիկ թշնամութիւն ունեցաւ. զօրք
խաւրեց Ասանայի վրայ ուր էր Օշին, բանեց զին-
քը Վոստանդին եղբորը հետ ու սպաննել տուաւ.
Վերջը իր կինն ալ սպաննել տուաւ՝ որ Օշին պայ-
լին ալ իկն էր, ու անոր տեղը լատինացի մը ա-
ռաւ. Օշինին գլուխը Նասրին խաւրեց, Վոստան-
դինինն ալ Պուսայիտին :

7. Առ հարուածներէն ետքը Ահոն որո գիտեց
ու Աիլիկիա ինչպէս քիչ մը հանգստացաւ .

8. Ահոն Օշին պայլին հետ ինչ թշնամութիւն
ունեցաւ ու ինչպէս զինքը ու իր կինը սպաննեց .

9. Նասր ու Բերիոյ ամիրան նորէն Վիլիկիոյ վրայ սկսան վազել. վասն զի շտեղծ որ Ղափնա-ցիք խաչակիր զօրք պիտի հանեն սուրբ երկիրը ազատելու համար՝ կարծեցին թէ Հայերուն զօրքս թեամբն է աս բանս, ուստի մտքերնին գրին որ Հայերը բոլորովն քնջեն. երկուքը մէկէն վազեցին Վիլիկիա, քաղաքներն ու գեղերը աւերակ դարձուցին, բնակիչները թրէ անցուցին ու հարստութիւնները ժողովելով ելան գնացին: Լեւոն վախցաւ զիմացնին ելելու. փախաւ գնաց Վիլիկիայէն, ինչպէս ըրին նաև իշխաններէն շատը. բայց Եզրապացիք նորէն եկան ու առջինէն շատ աւելի շարիք հասուցին Հայոց: Լեւոն ազաւանաց թուղթ գրեց Նասրին որ Հայերը չնեղէ ու հաշտութիւն ընեն մէջէրնին. սուլթանը յանձն առաւ՝ երգմունք ուզելով Լեւոնէն որ մէյր՝ ալ Եւրոպացոց հետ թղթակցութիւն չընէ. ինքն ալ գետապանաց առջև աւետարանին վրայ երգմունք ըրաւ. այսպէսով իրեք տարի Վիլիկիա խաղաղացաւ: Ա երջը Լեւոն նորէն ծածուկ սկսաւ թղթակցութիւն ընել պապին ու արևմտեան իշխանաց հետ. բայց խնայուելով աս բանս՝ Նասր նորէն շատ զօրք խաբեց, որ եկան ամէն տեսակ շարիք ըրին ու հարուստ աւարով ելան գնացին:

10. Աս խեղճութիւններս տեսնելով ընդհանուր ազգը՝ շատ ետևէ եզաւ որ ալ բարեկամութիւն չընեն Եւրոպացի իշխանաց հետ, մամուսանդ որ օգնութիւն մը չէին տեսած. բայց ոմանք ալ

9. Նասր ու Բերիոյ ամիրան ինչու նորէն Վիլիկիոյ վրայ վազեցին ու Նասր ինչ պայմանաւ հաշտութիւն ըրաւ.

10. Ինչպէս խաղութիւն ծագեցաւ Լեւոնին ու Յակոբ կաթուղիոսին մէջ ու Լեւոն երբ մտաւ.

Թագաւորին հետ միացած՝ կ'ուղէին անոնցմէ օգ-
նութիւն խնդրել, ու անոնց հետ բարեկամութիւն
ընել. ստով մեծ խառնութիւն ծագեցաւ Թագա-
ւորին ու կաթուղիկոսին մէջ, և աս պատճառաւ
Յակոբ կաթուղիկոսը պաշտօնէն ձգուեցաւ: Լեւոն
երկու տարի ալ Թագաւորելէն ետքը մեռաւ՝ ա-
ւանց քաջութեան յիշատակ մը ձգելու (1341):

ԴՍՍ ԼԴ.

Յովնանեկու Պայլէն ինչոտան Ռուքիսեանց
բազաւորութեան վերջանալը:

1. Որովհետեւ Լեւոն որդի կամ եղբայր չունէր,
իշխանները Վիպրասի Թագաւորին եղբորորդին
ընտրեցին, որ Յովնանեկա Պայլ կամ Ճիւան կ'ը-
սուէր և Թագաւորելով Կոստանդին Գ. ըսուե-
ցաւ. տսիկոյ մօր կողմանէ միայն Հայ էր, ան պատ-
ճառաւ ալ Հայոս ազգը կ'ատէր ու բնութեամբ
ալ խառնաբար մարդ էր. սկսաւ ազգին բարի սո-
վորութիւններն ալ արհամարհել ու փոխել. մա-
նաւանդ արքունեաց բաները, որով ամենուն ա-
տելի եղաւ. վերջը սկսաւ ստիպել Հայերը որ ազ-
գային ծէսը փոխեն ու լատինացւոցը ընդունին.
աս բանիս չցիմանալով ոչ իշխանները, ոչ ժողո-
վուրդը և ոչ զօրքը, վրան վազեցին սպաննեցին
զինքը՝ տարի մը Թագաւորելէն վերջը. և միաբան
խորհրդով Յովնանեկսին Գ.ուխանն եղբայրը կան-
չեցին ու իրենց Թագաւոր օժեցին:

1. Ո՞վ է Կոստանդին Գ. ու ինչպէս Հայոց ա-
տելի ըլլալով սպաննուեցաւ.

2. Գուխանի ասեւնը անթիւ բազմութեամբ Ալեկիկոյ վրայ վազեցին Նզխատացիք. որոնց զէմ եւ ընտ վախճալով Գուխան, փախաւ բերդի մը մէջ պահու ըսեցաւ որով Նզխատացիք ասանց արգելքի մասն Ալեկիկոս ասնախօս ըրին, կը տեսնէին ասամէն չարիքս իշխանները ու անհոգ կը կենային, վասն զի ազգին սէրը մարած էր սրտերնուն մէջ, իրենց միճախին պարտքերը մոռցած էին, ազխաութեան խաւարին մէջ թաղուած. մէկ խօսքով ամէնքը իրրե իրենց ազգին թշնամի՝ միայն իրենց ասնաճնական օգուաը կը մտածէին, որ ինչպէս յայտնի է, հասարակաց կործանումն է:

3. Նրբոր թշնամիները ելան գնացին Ալեկիկոյէն՝ Գուխան գուրս ելաւ պահու ըսած տեղէն, ու սկսաւ եզրօրը պէս անմտութեամբ ետէ ըէլալ որ ազգին ծէսը ու արտաքին սովորութիւնները փոխէ. իշխանները յորգօրեցին զինքը որ անանկ փուճ բաներու ետէ չըլլայ. բայց երբոր անիկայ արհամարհեց անոնց խրատը, իրենք ալ զինքը սպաննեցին երկու տարի թագաւորէն ետքը (1344):

4. Գուխանին տեղը Կոստանդին չորրորդը թաղաւոր գրին, որ թէպէտ և հօր կողմանէ լատին էր, բայց խեղացի ու զգուշաւոր ըլլալով խաղաղութեամբ կառավարեց ազգը: Նրբոր ասիկայ սիքսաւ լատինացւոց հետ թղթակցութիւն ընել, Նզխատոսի սուլզանը շատ զօրք խաւրեց Ալեկիկոյ

2. Ինչպէս նորէն Նզխատացիք տիրեցին Ալեկիկոյ և ազգին ասնեղութիւններուն ու հարուածներուն պատճառը ինչէն էր.

3. Գուխան ինչու սպաննուեցաւ.

4. Կոստանդին Գ. ինչպէս Աստուածատուր զօրապետին օգնութեամբ յաղթեց Նզխատացւոց ու քանի տարի թագաւորեց.

վրայ . Կոստանդին առաջուց իմանալով անոնց գա-
լը՝ ինքն ալ իր զօրքերը ժողվեց ու պատերազմի
պատրաստուեցաւ . օգնութիւն եկան իրեն Կիպրոս
սի Հուզոն թագաւորը և Հոռոգացոց Արաուածա-
տուր զօրապետը . ասոնք ամենքը միացած՝ վազե-
ցին թշնամեաց վրայ , սոսկալի ջարդ տաին իրենց
ու բոլորն ալ Կիլիկիայէն զնտակցին , թէպէս և
իրենցմէ ալ շատ մարդ մեռաւ : Կոստանդին խա-
ղաղութեամբ քանի մը տարի ալ ապրելով մեռաւ՝
տասներու թը տարի թագաւորեղէն ետքը (1364) :

Ե . Կոստանդինին մեռնելէն ետքը իշխանները
չկրնալով մէջերնին միարանիլ , քանի մը տարի ա-
ռանց թագաւորի մնացին : Ուրբանոս Ե . պապը
իշխաններուն յորդորանաց թուղթ մը գրեց որ
թագաւոր գնեն Վան Լուսինեան ըսուած իշխա-
նը՝ որ մեր կողմանէ միայն Հայ էր ու Գուխանին
և Ճիւանին ազգական . իշխանները միարանեցան
ու հրաւիրեցին Վանը որ թագաւոր օժեն . ինքն
ալ յանձն առաւ՝ պապին յորդորանքներէն ստի-
պուած : Բնութեամբ լաւ և թագաւորաժայել կա-
տարելութիւններով զարգարուած էր Վան . բայց
ազգին խեղճութիւնը և ժամանակին պարագանե-
րը՝ Ռուբինեան թագաւորներուն ամենէն ցաւա-
լին ու դժբաղքը ըրին զինքը :

Վ . Վան թագաւորելուն պէս՝ Եզիպտացիք ան-
թիւ զօրքով Կիլիկիա տարածուելով սկսան այրել
ու աւերըշտրկել քաղաքները . Վան քիչ զօրքով
թշնամեաց զեմ կըլաւ ու մեծ միաս Հասուց անոնց ,
բայց ինքն ալ պատերազմի աստէն մերաւորուելով
փախաւ գնաց անմատչելի լեաներու մէջ պահուը-

5 . Վան Լուսինեան ինչպէս թագաւորեց .

6 . Վան ինչ քաջութիւններ ըրաւ Եզիպտա-
ցոց զեմ ու ինչպէս թագաւորութիւնը նորէն
ձեռք առաւ .

անցաւ, որով և ձայն երաւ թէ մեռած է պատե-
րազմի ատեն: Իշխանները երկու տարիէն ետքը
ուզեցին Ոթոն անունով գուբար թագաւոր գնել
իրենց՝ պատկերով Լեոնին Մարիամ թագուհիին
հետ: Երբոր պատկի օրերը մօտեցան՝ իմացուեցաւ
որ Լեոն ողջ է եղեր, ու քիչ մը ատենէն ինքն ալ
գալով թագաւորութիւնը նորէն ձեռք առաւ, որ-
ով ազգին մեծ ուրախութիւն եղաւ: Բայց ափ-
սոս որ երկար չտևեց:

7. Երկու տարիէն Կշրէֆ Շապան անունով մե-
կը Եգիպտացւոց սուլթան ըլլալով, և քրիստո-
նէութեան սաստիկ թշնամի, շատ զօրք խաւրեց
Կիլիկիոյ վրայ, որ երթան հիմնադրատակ ընեն քա-
ղաքները ու թագաւորութիւնը վերցընեն: ասոնք
զայրացեալ գեափ մը պէս Կիլիկիա տարածուելով
արիւնով ողողեցին գաշտերը, որով շատ մարդ
փախաւ այլ և այլ օտար թագաւորութեանց ա-
պաւինեցաւ, շատն ալ լեռներն ու բերդերը պա-
հուրտեցան, մնացածները թրի բերան գնացին:
Եգիպտացիք ամէն տեղերու տիրելէն ու աւերակ
գարձընելէն ետքը, երկու ամիս շափ Սիս քաղա-
քը պաշարելով առին ու աւերակ գարձուցին: Թա-
գաւորաց և իշխանաց գերեզմանները բացին, ու
ան պատուական օսկորները այրեցին: և բոլոր Կի-
լիկիան, որ մեր վերջին թագաւորաց խանձարուրն
էր, այնպիսի ողորմելի և աւերակ փձակի մը հա-
սուցին որ սոսկաց թագաւորական գաւազանը ան
աւերակաց վրայ տիրելու:

8. Լեոն տեսնելով որ անկարելի է թշնամեաց
անհամար և կատաղի բազմութեանը առաջը առ-

7. Կշրէֆ Շապան ինչպէս տիրեց Կիլիկիոյ ու
ինչ խեղձութեան հասուց ազգերնիս:

8. Լեոն ինչպէս Եգիպտացւոց ձեռքը գերի ին-
կաւ:

նուչ իր քիչոր զօրքովն՝ իրեն ընտանիքովք Վա-
պան ասուր բերդին մէջ պահուրակցաւ : Թշնա-
միները եկան ու սկսան հեռը պատերազմիչ, բայց
չկրնալով մնաս մը հասցընել՝ ելան գնացին ու փոք-
րիկ դունդ մը Թողուցին բերդը պաշարելու հա-
մար : Ղևոն ինը ամիս բերդը կենալէն ետքը յու-
սահատելով զեապան խաւրից Եգիպտացոց զօ-
րավարին՝ խոստանալով որ անձնատուր կ'ըլլայ .
միայն թէ երգնու ինքն ալ մնաս մը չհասցընելու
իրենց կենացը : Երբոր երգում ըրաւ զօրավարը՝
բերդին դաները բացին, Թշնամիք մէջը մտան, զը-
տած բաներնին յափշտակեցին ու Թագաւորը և
իրեն ընտանիքը շղթայի զարկած Եգիպտոս տա-
րին : աս եղաւ 1375 ին :

9. Եշրէֆ Շապան եօթը տարի խիստ բանտի
մէջ պահեց Թագաւորական ընտանիքը հաւաք-
նին չուրանալնուն համար . վերջը հասփնայ քա-
հանայապետին և Սպանիացոց Յովհաննէս Թա-
գաւորին աղաչանքովք ազատեցան ամէնքն ալ բան-
տէն : ու Յովհաննէս Թագաւորին երաշխաւորե-
լովք հրաման ալ եղաւ որ ուր կ'ուզեն երթան :
Ղևոն մեկէն իր ընտանեօքը Երուսաղէմ Քրիստո-
սի սուրբ Գերեզմանին ուխտի գնաց . հոն Թողուց
իր կինն ու աղջիկը իրենց ուզելովք, և ինքը Ե-
րուսա անցնելով նախ հասփմ գնաց, ուր շատ պա-
տիւ գտաւ սրբազան պապէն : անկէ անցաւ Սպա-
նիա, ուր Յովհաննէս Թագաւորը շատ սիրով ըն-
դունեցաւ զինքը և բնակութեան տեղ տուաւ :
Հոն երկար ատեն կենալէն ետքը ճամբորդութեան
համար Գաղղիա ու Վնդղիա գնաց, ու վերջը Փա-
րիզ հասնելով հոն հիւանդացաւ և մեռաւ 1393ին,
Նոյեմբերի 22ին վաթսուն տարեկան : Մեծ հան-

9. Ղևոն ինչպէս իր բանտարգելութենէն ազա-
տեցաւ ու ինչպէս մեռաւ :

գիտով թագուեցաւ Վեդեասինեանց վանքին եկեղեցւոյն մէջ ուր որ փառաւոր դամբան շինած է վրան Գաղղիոյ թագաւորաց ու անուանի զօրավարներուն շարքին մէջ :

10 - Միակտուր սև մարմարիտնէ է դամբանը , որուն վրայ տարածուած կը կենայ Ղևոն թագաւորին արձանը ձերմակ մարմարիտնէ , թագաւորական վերարկուով ծածկուած : Գլուխը թագ , աջ ձեռքը թագաւորական գաւազան ու ձախ ձեռքն ալ թաթոյան : Իսկ ստքին կողմը երկու առիւծ իրարու կաթընած կը կենան : Տապանագրին արձանագիրն է ասիկայ .

- « Այս է տապան քաջատոհմիկ և ամենապա-
- » տիւ իշխանին Ղևոնի Ղուսինեան Հինգերորդի ¹
- » լատին արքայի թագաւորութեան Հայոց , որ
- » աւանդեաց զհոգին 'ի ձեռս Աստուծոյ 'ի Փա-
- » ըիզ 'ի 22 Նոյեմբերի յամի փրկութեան մե-
- » թոյ Հաղարեբորդի հարիւրերորդի իննաներոր-
- » դի երբորդի » :

10 . Ղևոնի դամբանը ինչպէս է ու ինչ արձանագիր գրուած է վրան .

1 Աս տապանագրին մէջ Ղևոն վեցերորդը Հինգերորդը ըսուեր է , Ղևոն երկրորդը Ռուբինեանց առաջին թագաւորն ըլլալուն համար Ղևոն Ա սեպեղով :

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ն

ՀԱՅՈՑ ԱՆԻՇԻԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՎԻՃԱԿԸ

1. Ռուբինեանց Թագաւորութեան վերջանալու ատենները Ասիոյ մէջ շատ զորացած էր Լանկեթամուր կամ Թխմուրէնի Կազպէք թաթարներուն Թագաւորը, որ Սմբղանա կը նստէր: Ասիկայ իր Թագաւորութեան երկոտասաներորդ տարին անհամար զօրքով վազեց Պարսկաստան ու Ասորեստան, և բոլոր ան տեղերը նուաճելով անցաւ Հայաստան, և հասած տեղերը ստակալի անգլծութիւններ բրաւ: Օրինակի համար, կը պատմեն թէ Լանկեթամուր Կարս քաղաքը առնելու ատեն այսպիսի գործողութիւն մը բրաւ. շատ մարդ ջարդել տալէն ետքը, թէ առձիկ և թէ հայ, հրաման տուաւ որ իրէք հարիւրական հազարով երկու խումբ կազմեն, մէկ խումբը առձիկ՝ մէկաւրջ հայերբոր զասոնք գիւնացը հանեցին՝ Լանկեթամուր բնաւ: Ար երկու խումբէն մէկը կ'ուզէի ջարդել

1. Լանկեթամուր մի է ու ինչ նշանաւոր գործողութիւն մը բրաւ Կարս քաղաքին մէջ.

աալ, որոշեցի որ քրիստոնեակաները թրէ անցընեմ: Հայերը սիրով յանձն առին մեանիլ քան տաճիկը. նալով ազատիլ. բայց մէջերնէն երկու հոգի Տաճիկներուն կողմը անցնելով հաւատքնին ուրացան. ան ատեն թագաւորը հրամայեց որ Հայոց տեղ Տաճիկները սպաննեն. սա որ տեսան ան երկու ուրացեալները՝ նորէն քրիստոնեից կողմը անցնելով սկսան կանչել, Մենք քրիստոնեայ ենք ու Քրիստոսի ծառայ. ան ատեն Լանկիթամուր յանդիմանելով ան երկուքին անհաւատութիւնն ու շարութիւնը՝ միայն զանոնք սպաննել տուաւ ու մէկալները ազատ թողուց:

2. Կարսէն գնաց Փոքր Ասիա Սերասախոյ վերայ. երբոր քաղաքացիք ընդդիմացան իրեն՝ դեսպան խաւրեց խաբէութեամբ երզում ընելով որ եթէ խաղաղութեամբ քաղաքը տան՝ բնակիչները թրէ շանցընէր: Խոստամուհքը պահելով թրով չըջարդեց զիրենք, բայց սոսկալի տանջանքներով սպաննեց. առէն տեսակ հասակի եւ վիճակի մարդկանց զատ տանջանքներ ու մահէր հնարելէն ետքը՝ բոլոր աղաքը ժողովեց, ու կապած ձեռքով ետաքով ձգեց դաշտի մը մէջ ու կապած ձիերու կոխկրասել տուաւ. ասով ան դաշտին անունը Սեհողեր կը կոչուի, որ ինչուան հիմայ Հայոց գերեզմաննայն է. ետքը զօրքերը բռնեց ու ողջ ողջ թաղեց, ըսելով թէ Երզուրնցեր եմ թրով շապաննելու: Իսկ քաղքին մէջ գանուած բորտաներն եւ որիչ պակասաւոր մարդիկը խլղել տուաւ ըսելով: Ես ողջերուն չմնայեցի, գուք ինչ բանի հարկաւոր էք: Աս անգթութիւններս ընելէն վերջը շատ մարդ ալ գերեւելով խորտաան տարաւ:

2. Սերասախա ինչ անգթութիւններ ըրաւ Լանկիթամուր.

3. Լանկեթանուքին թագաւորութեան վերջի տարիները Սիւնեաց կողմերը կը զօրանար Պելցինէ Ուսպելեան անունով կարիճ իշխան մը, որ Սիւնեաց աշխարհքին ու Վասպանի մէկ մասին կը տիրէր. իր իշխանութեան տակը վաթսուն հազարի շաքի հայ ունէր, ու հայրաքար զիրենք կը խնամէր, և փախչողներուն պատասխարան կ'ըլլար: Տեսնելով Պելցինէին յառաջագիտութիւնն ու մեծ նալը Վրաց թագաւորը սկսաւ վրան նախանձիլ, ու ետէ ըլլալ որ սպաննէ զինքը. սա բանիս համար Ամնագին անունով անզգամ ու արծաթատէր հայ մը գտնելով անոր ձեռքովը թոյն խմցուց Պելցինէին. մէկէն կարևոր զարմանները ըրին, բայց օգուտ մը չըլլալով մեռաւ Պելցինէ ու մեծ սուգի մէջ թողուց իր ժողովուրդը. իսկ Ամնագին իրեն արժանաւոր պատիժը գտնելով շարաշար սպաննուեցաւ Հայերէն:

4. Պելցինէին իշխանութեան տակները շատ զօրացած էր Սուլզան Մէհէմէտ Փաթիհ Օսմանցոց թագաւորը, որ Պոլիսը Յունաց ձեռքէն առաւ. և ուզելով որ հոն ալ գտնուին Հայեր՝ վաճառականութիւն և ուրիշ արհեստները ծաղկեցնելու համար, Պրուսայէն և այլ և այլ տեղերէ շատ Հայեր բերել տուաւ ու Պոլսոյ գանազան կողմերը բնակեցուց. ասանց վրայ Յովակիմ անունով պատրիարկ մըն ալ դրաւ իշխանութիւն տալով տիրել Փոքր Հայոց և Յունաստանի մէջ գանուած բոլոր Հայերուն:

5. 1453էն ինչուան 1603 մասնաւոր բան մը

3. Պելցինէի վրայ ինչ գիտելիք կայ.

4. Սուլզան Մէհէմէտ Փաթիհ ինչ բան ըրաւ ազգերնուս.

5. Շահարսա ինչ աւերմունք ու կոտորած հասուց ազգերնուս.

չպատմուիր Հայոց վրայ. իսկ առ միջոցներուն Շահաբաս Պարսից թագաւորը Օսմանցոց ձեռքն անկելով Հայաստանը՝ խիստ շատ աւերմունք ու կոտորած քրաւ հոն. որով և Աստուծոյ բարկութեան վերջի և սաստիկ պատիժը եղաւ մեզի: Երբոր Օսմանցիք խմայան որ Պարսիկք Հայաստանի տիրեր են, ճշդէզպատէ Սինան փաշային ձեռքը անհամար զօրք տաւին ու Հայաստան խաւերեցին Պարսից դէմ. Շահաբաս բոլոր Հայերը արտորանք իրենց քաղաքներէն ու բնակութիւններէն հանել տալով Այրարատայ գաշախն մէջ ժողովել տուաւ, որպէս զի անկէ Պարսկաստան անցընէ. քաղաքներն ու բոլոր արտերը այրել տուաւ, շէնքերը հիմնայատակ կործանեց, որպէս զի Օսմանցիք գալով ոչ պաշար գտնեն և ոչ բնակութիւն: Երբոր Օսմանցիք Պարս հասան, Շահաբաս հրաման տուաւ որ բոլոր ժողոված Հայերը Պարսկաստան քշեն տանին. և որովհետեւ Երասխ գետին կ'անցնէին, բաւական նաւակ ու լաստ չբլարով սկսան ժողովուրդը գետը ձգել որ կրցողը լողալով անցնի. ասով հիւանդոտ ու ծեր մարդիկ, կանայք, աղաք և ուրիշ լողալ չցիտցող անհամար մարդիկ խզուեցան: Շահաբաս գետին քովը նրստած կը տեսնէր ան խեղճութիւնները, առանց հոգ բնելու աւելի կը փութացընէր ժողովրդեան գետէն անցնիլը. հասան եղիեւթները ուրիշ անբաւ գժուարութեամբ ու վտանգով Պարսկաստան, և ըստ մեծի մասին Շահաբաս զերեւիք Ասպահան քաղաքը բնակեցուց. ամէնքը մէկէն տասուերկու հազար տուն էին՝ այնչափ կորսուածներէն զատ: Շահաբաս որպէս զի Հայոց սիրաջ վատարկի որ սիրով, կենան, սկսաւ գթութեամբ վարուիլ հետերնին ու հարկերը շատ թեթեւուց. ետքը ուրիշ շատ գաղթականներ ալ բերաւ Շահաբաս, որոնցմէ շատը օգին գելութիւննն մեռան, մեկալ

նանք ալ Պարօխ մէջ ցրուեցան • խկ ինչուան հիմա մնացածներն են Կոր Զուղայի բնակիչները , որ իրենք շինեցին ան քաղաքը հին Զուղային յիշատակ :

6. 1722ին ատենները երբոր Սիւնեաց աշխարհփին Հայերը կը նեղուէին երբեմն Օսմանցիներէն ու երբեմն Պարսիկներէն , Դաւիթ Սիւնի կորիճ ու հայրենասեր մարդը քանի մը հոգի ժողովեց գլուխը , շատ խելքով կառավարելով զանոնք՝ թըշնամեաց դէմ ելաւ ու սկսաւ իր ժողովուրդը խնամել • կամաց կամաց զօրքը ինչուան չորս հարիւր ըրաւ և անոնց զօրավար գրաւ Մխիթար անուանով իր անպարտելի օգնականը : Տաճիկները ըսելով Դաւիթին զօրանալը՝ իրենք ալ այլ և այլ անկերէ զրք ժողոված մեծ պատրաստութեամբ վազեցին Դաւիթ վրայ • քովի մարդիկը տեսնելով թշնամեաց բազմութիւնը՝ ձգեցին փախան , սմանք ալ թշնամեաց կողմը անցան , այնպէս որ Դաւիթ տասներեւ թը հոգւով մնաց • բայց ան միջոցին եկան հեռը միացան Հալիճօրոյ Մելիք Փարսաղան և տէր Աւետիք կորիճ պատերազմողները քանի մը հոգւով ասդիկէն անդիկէն խել մը մարդիկ ալ դալով նորէն չորս հարիւր յիսուն հոգի եղան :

7. Դաւիթ յորգորեց ամենքը հոգևորապէս ալ պատրաստուելու , ուստի ամէնքն ալ խոստովանեցան հաղորդեցան , ու քաջութեամբ պատերազմի պատրաստուեցան : Թշնամիները եօթանասուն հազարի չափ էին , մեծ մասը հայ , և ուրիշ շատ հասարակ ժողովուրդ • խկ Դաւիթ իրեքհարիւր հոգի միայն ունէր հեռը բերդին մէջ : Պատերազմը

6. Դաւիթ Սիւնիին վրայ ինչ գիտելիք կայ •

7. Դաւիթ իրեն կորիճ ընկերներովք ինչ ջարդ տուաւ Տաճիկներուն ու ինչ կը պատմուի Տէր Աւետիք ու Մխիթար քաջերուն վրայ •

վեց օր միակերպ տևեց. Թշնամիներէն գրեթէ ա-
մէն օր 300 հոգի շափ կը մեռնէին, իսկ Դաւթի
կողմէն օրը հազիւ մէկ հոգի. վասն զի բերդական-
ները գրսի եղածները կը տեսնէին ու գրսիները
զիրենք չէին տեսներ: Տաճիկները յուսաշատե-
ցան ան կերպով բերդը ասնելէն, ու սկսան ամէն
կողմանէ մեծամեծ ու բարձր գործիքներ գնելով
պարսպէն վեր ելլել. բերդականները երբոր տե-
սան աս բանս, քահանաներն, կանայք ու սպար-
ժամ վաղեցին ու կ'աղօթէին որ աս վասնզէն ա-
զատէ զիրենք Աստուած. իսկ Դաւթի ու իր քաջ
զօրքերն ու զօրավարները այնպիսի արագութեամբ
ու զարմանալի յաջողութեամբ կը պատերազմէին
որ մեկու մ' ալ չթողուցին որ բերդէն ներս մտնէ,
ու վեր եղածները թրով կամ հրացանով վար կը
գլորէին: Ան միջոցին տեք Աւետիք և Մխիթար
երկու հարիւր հոգի առած հեռերնին՝ ուրիշ ճամ-
բով մը բերդէն դուրս ելան ու Թշնամեաց ետեւն
սկսան պատերազմիլ. ասով տատուիրէք հազար
մարդ ջարդեցին ան օրը, և մնացածները փախու-
ցին, հարիւր քառասուն և ութ գրոշ ու շատ ա-
ւար առած յաղթութեամբ զարձան եկան: Այն-
չք փախչողներուն ետեւն գնացին Աւետիք և Մխի-
թար վաթսուն հոգևով, մեծ ջարդ մ' ալ տուին
անոնց Մեղրի քաղքին մէջ, ու զարձան Դաւթին
քովը եկան: Դաւթի իր հնարագիտութեամբը,
քաջութեամբը ուրիշ շատ յաղթութիւններ ալ
ըրաւ, որով Թշնամեաց սիրտը վախ ձգեց ու հա-
լածեց զիրենք. վեց տարի իշխեց իր պզտիկ տե-
րութեանը վրայ գովելի և զարմանալի խելքով ու
կառավարութեամբ, և մեռաւ խաղաղութեամբ
խառնըչորս տարեկան:

8. Դաւթի մեռնելէն ետքը իր մարդիկը միաբան

8. Դաւթի Միւնիին մեռնելէն ետքը ինչ խոս-
վութիւն ինկաւ հայոց մէջ.

Հաւանութեամբ մեկէն ընտրեցին Մխիթարը Իրենց առաջնորդ . բայց ետքէն մէջերնին խառնութիւն իյնալով ոմանք Տէր Աւետիքին կողմը եղան, ոմանք ալ ուրիշներու . այսպէսով իրենց միութիւնը սրով և զօրութիւնը պակսեցաւ : Իմացան Տաճիկները բերդականներուն անմիաբանութիւնը, եկան ստաշարեցին, ու սկսան նեղը խօթել մէջինները . բերդին Հայերը Մխիթարէն ծածուկ միաբանեցան որ բերդը մասնեն ու իրենք ազատին երթան . առ բանիս Համար պատգամաւոր խաւրեցին Տէր Աւետիքը : Տաճիկները երգմամբ յանձն առին, բայց բերդը մանեղէն ետքը մեծ մասը թրէ անցուցին, որ իրենց անմիաբանութեանը արժանաւոր պատիժ եղաւ . իսկ Տէր Աւետիքը ազատ թողուցին՝ որ ուր կ'ուզէ երթայ :

9. Մխիթար իրեններուն մասնութիւնը առաջուց խնամալով փախաւ գնաց, ու քիչ մը առնն պահուրտեղէն ետքը ելաւ նորէն շատ մը մարդ ժողովեց գլուխը, ու շատ քաջութիւններ ընելով քանի մը քաղաքներու ու բերդերու ախրեց : Երբոր ինծորէսք ըսուած բերդը պաշարէր էր, որ մը քնանալու առննը քովի մարդիկը սպաննեցին զինքը, ու գլուխը Դավթէժ նստող բղեշխին տարին . բղեշխը արգարութեամբ մտածելով պատժեց առնեց անպատմութիւնն ու անհաւատարմութիւնը և զամէնքն ալ սպաննել տուաւ, ըսելով որ «Դուք աշխարհքս այգպխի քաջ մարդէ մը զրկեցիք, և թէ որ անոր կեանքը անպիտան ու փրատակար սեպեցիք աշխարհի, ուրեմն ձերը ի՞նչ բանի պիտանի պիտի ըլլայ ո՞վ անպութ և զաւաճան մարդիկ » :

10. Մխիթարին քովի մարդիկը բոլոր ջրուէ .

9. Մխիթար ինչպէս սպաննուեցաւ .

10. Ի՞նչ գիտելիք կայ Յովհաննէս իշխանին վրայ, և թէ անկէ վերջը ի՞նչ վիճակ ունեցաւ մեր ազգը .

ցան, շատն ալ Յովհաննէս իշխանին քովը գնացին, որ շատ քաջութիւններ քրած էր Աւստրալոյ աշխարհքը Տաճկաց գէմ. բայց վերջէն կասկածելով իր մարդիկներուն զաւաճանութիւնէն, ինքիբնակ Տաճկաց յանձնեց իր քաղաքը, ինքը ելաւ Աթաերիսան գնաց ու հոն շատ պատիւ գտաւ :

Վերջի ատենները Ղահմազ Ղուլի կամ Նաւորըշահ խան Պարսից (Թաղաւորն ալ շատ շարիք հասուց հայոց. բայց մեք աւելորդ կը սեպենք այսուհետեւ այսպիսի խեղճութիւններ պատմելը, և միայն մեր ընթերցողաց կը (Թողունք իմաստասիրել՝ թէ ան ցաւալի գիպուածներէն շատին ալ բիւրն ու առաջին պատճառը ազխութիւնն եղած է, որով մեր պատուական ազգը բոլոր իր պարճանքները գրեթէ մոռցած, ու ազխութիւնէ աւելն տեսակ պակասութեանց մէջ քիչ շատ ինկած է : Կրաւ է որ իր մէկ քանի ազնիւ կատարելութիւններովը, որոնց գլխաւորներն են աստուած պաշտութիւն, հաւատարմութիւն, խոհեմութիւն, արթնութիւն, և ամէն տեսակ գիտութիւն և արուեստ սորվելու զարմանալի յարմարութիւն, օտար ազգաց ասլեր միշտ պատուաւոր ու սիրելի եղած է. բայց աս կատարելութիւնները շատ աւելի կրնան զարգանալ ու մեր ազգին վերջի փառքը քան զառաջինն ալ կերպով մը մեծ ընել՝ թէ որ ջանաց իր ուսումնասիրական նոր եռանդը օրէ օր շատցնել, և գովելի կերպով պողարեր ընել. իր քաջ և անուանի նախնեաց պատմութիւնները իրեն հայելի ու արագաց կենաց կանոն բանել, և որ պակասութիւններն որ իր խեղճութեանցը պատճառ եղեր են՝ անանցմէ իրրե ծանօթ և զնատակար թշնամիներէ զգուշանալ :

ՀԱՄԱՌՕՏ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՄԱՍԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ուշի ուշով և անաչառ սրբով աս համառօտ պատմութիւնս կարգացողը կրնայ առանց մեծ զը-
ժուարութեան մը՝ ինչ նիւթերու վրայ որ պիտի
խօսինք՝ անոնց սոցյգ պատճառները զանել իմա-
նալ։ բայց որովհետեւ տարածայնութիւն կարծեաց
կրնայ ըլլալ ինչպէս ուրիշ խնդրոց՝ առանկ ալ աս
նիւթիս մէջ, անոր համար հարկ համարեցանք մեր
կարծիքն ալ համառօտել հօս, և առանձին աս
խնդրոց վրայ թէ ինչ պատճառներով Հայկազանց
տէրութիւնը այնչափ երկար ատեն գիտացաւ, Ար-
շակունեացը անանկ քիչ ատենի մէջ զօրացաւ ու
պայծառացաւ մեծամեծ գործողութիւններով, և
թէ ինչպէս ընդհատեցաւ այնպիսի ցուալի կեր-
պով, ինչպէս նաև Բաղրատունեաց թագաւորու-
թիւնը, և ինչ բաներ եղան աս անկարգութեանց
պատճառները:

Տէրութեան մը կործանման պատճառ կրնան
ըլլալ մէյսը արտաքին թշնամիք, մէյս՝ ալ ներքին
թշնամիք։ Հայկազանց տէրութիւնը որ այնչափ
երկար ատեն տևեց՝ յայտնի կը ցուցնէ որ աս
երկուքէն ալ ազատ էր 1800 տարուան միջոցին

մէջ, որ գրեթէ միշտ յաջորդաբար իր Հայկազուն իշխանները ունէր: Պատմութենէն յայտնի կը տեսնենք թէ ինչուան Արամայ ատենները, որ 300 տարուան միջոց է, Հայերը կամ քիչ և կամ ամենեւին պատերազմ չեն ունեցած. ասոր պատճառն ան է որ ջրհէղեղէն ետքը ազգերը նոր ձևաւաւով, և իրենց քիչուորութեանը համեմատ երկիրնին ընդարձակ ըլլալով, հարկ մը չունէին օտար երկիրներու վրայ յարձակելու, առանց փառասիրութեան կամ ամբարտաւանութեան վախճան մը ունենալու, ինչպէս էր Նեբրովթայ պատերազմը. բայց որովհետեւ նախ ամբարտաւանն Նեբրովթաւաւ արդարութեան ու խաղաղասիրութեան հետ կառուելու՝ ու չարաչար յողթուեցաւ, տարակոյս չկայ որ ամենուն սիրաբը վախ ձգած էր արդար կողմին յաջողութիւնը: Դարձեալ, Հայերը ուշ գրած էին միայն իրենց բազմամարուն, որով և քաղաքաց շինութեան, ինչպէս իրենց գրած անուններն ալ կը ցուցնեն: Երեքհարիւրերորդ տարւոյն սկիզբները երբոր Ժողովուրդները բազմացան և զօրացան, այլ և այլ ազգեր սկսան նաև Հայաստանի վրայ վազել. բայց քաջն Արամ անոնց դէմ ելլելով ոչ միայն անոնց առաջ գալուն ընթացքը արգիլեց, հապա դեպ 'ի ետ հալածելով տիրեց բովանդակ անոնց երկիրներուն, որով և աշխարհահալ ըսուեցաւ ու ազգանց Հայաստանը օտար թշնամիներէ: Ան առաջին անգամն էր որ Հայերը օտար երկիրներու տէր եղան, և բարեբախտաբար կրնանք ըսել որ վերջինն ալ եղաւ միանգամայն. որովհետեւ Հայկազանց մէջէն ուրիշ մէկու մը վրայ ալ յիշատակութիւն չունինք որ երկրակալութեան ետեւ եղած ըլլայ: Բարեբախտաբար վերջինն եղաւ ըսինք, վասն զի ստոյգ է աս ճշմարտութիւնս՝ թէ ան տէրութիւնն որ ստակ աշխարհակալութեանը կը տարածուի՝ իրեն թշնամիներ կը շատ.

ցրնէ ու երկար շիրնար տակալ, ինչպէս Աղէքսանդրի և ուրիշ աշխարհակալներու տերութեանը վերայ փորձով տեսնուած է: Ասոր հակառակը, այսօրինքն իրենց ունեցածովք գոհ ըլլալը, հայոց շափաւորեալ խառնուածքէն ալ առաջ կուգայ, և ոչ եթէ իրենց քիչուորութեանէն և կամ տկարութեանէն, ինչպէս որ սմանց թերես այնպէս տեսնուի. վասն զի տերութիւն մը որ 1800 տարի իր ամբողջութեանը մէջ մնայ, ամենաքիչ պատերազմով ունենայ, մանաւանդ տեսական պատերազմներ, միշտ գրակն գաղթականներ ընդունի ու ինքը գաղթական շխաւրէ, պէտք է որ շատ բազմանայ. և մեր աշխարհքին տարածութեանը նայելով պէտք էր բնակիչը գէթ 15,000,000 ըլլար. և միթէ աս տասներհինգ միլիոնը, որոնց քաջութիւնը յայանի է ամենուն, չէին կրնար աշխարհակալութիւններ ընել Մակեդոնացւոց, Պարսից, ևս և Հռովմայեցւոց պէս, որ ՚ի սկզբան մեզի հաւասար և քան զմեզ ալ թերես քիչ էին բազմութեամբ: Ըսածներնէս յայանի կ'ըլլայ որ հայկազանց տերութեան երկար զխմանալուն առաջին և գլխաւոր պատճառն է մեր ազգին անաշխարհակալ և հանգարտաբարոյ ոգին, որով նաև երկայն ատեն ալ Ասորեստանեայց իշխանութեան տակն էին ու անոնցմէ պաշտպանուած իբրև մերձաւորագոյն և քան զմեզ ալ լեզի զօրաւոր ազգէ մը, ինչպէս խորենացւոյն խոսքերէն ալ յայանի է: Մեր հայկազուն նախնեաց աս հանգարտաբարոյութիւնը ինչպէս որ զիրենք արտաքին թշնամիներէ ազատ պահէց, ասանկ ալ ներքին միճակին վրայ մեծ ազդեցութիւն ըրաւ. այսինքն Ա. Ժողովրդեան իրենց իշխանաց վրայ ունեցած վստահութիւնն ու հանգարտաբարոյ հոգատակութիւնը. և անոր փոխարէն իշխաններուն Ժողովրդեան վրայ ունեցած հայրագութ խնամքը: Բ. Կուտակցութիւններ չըլլալը, որով 363 տարի

Հայկաց որդւոցմէ ընտրուեցան նահապետներք յա-
ջորդարար, և երբոր ան ջեզին յաջորդութիւնք
լինցաւ, Հայկաց մեկալ որդւոցք անցաւ ասանց
խառվութիւն մը ելլելու: ասով յայտնի կ'ըլլայ
իրենց խաղաղասիրութիւնն ու միաբանութիւնը.
Գ. Հիւրասիրութիւն և վեհանձնութիւն, որով
իրենց ապահովածները սիրով ու պատասով ընդ-
ունենլով աշխարհքին հզօր պաշտպաններ կ'աւել-
ցնեկին: Տարակոյտ շէպ որ պայտիսի հանդարտա-
բարոյ ու խաղաղասէր կանոններու վրայ հաստա-
տուած ժողովուրդը կամ տերութիւնք երկար
պեարք էր գիտանար: և թէ որ Ազեքսանդրի Մա-
կեդոնացւոյ բանաւորութեամբք իրեն զօրութիւնն
ու խաղաղութիւնք շայրայէր, շէք ընդհատէր ան
տերութիւնք, որ մերձակայ ազգերուն պատկա-
ռելի, հեռաւորաց բարեկամ, իրեն քիչովք գոհ,
զարիչները շինասող, խաղաղութիւն սիրող տե-
րութիւն մըն էր: Աս բանս միայն խոստովանելի է
որ քաղաքական և ուսումնական յառաջագիտու-
թիւն իրատ քիչ ըրած կ'երեկայ՝ այնչափ երկար
ժամանակ ինչնիչխան տերութիւն ունենալուն
համեմատ, որովհետև ուրիշներս՝ մանաւանդ ծաղ-
կած ազգերու հետ վերաբերութիւն չունենալով
իրենք իրենց գիտութեամբք մնացին ինչուան Տիգ-
րան Արուանդեանին տակնները, որ օտար ազգաց
հետ ունեցած հաղորդակցութեամբք և իր անձին
գեղեցիկ յասկութիւններովք ազգին յառաջագի-
տութեանը մեծ աղէտ պատճառ եղաւ: Հայկազանց
տերութեան վիճակին վրայ ուրիշ գլխաւոր բան
չունենալով խօսելու՝ անցնինք Արշակունեաց թա-
գաւորութեան վրայ համառօտիւ խօսելու:

Արշակունեաց թագաւորութեան շքեղ կեր-
պով պիտի ըն ու քիչ տակնի մէջ պայծառանալն ու
զօրանալը՝ շատ զարմանալի ու խելքէ վեր կրնայ
տեսնուիլ: բայց երբոր մտածենք թէ աս թագա-

ւորութիւնս բարորակն նոր չէր ան ժողովրդեան
ու ան աշխարհքին համար որ արդէն հազար ու
թը հարիւր տարի տերութիւն ունեցեր էր, և թէ
տերութիւնն ալ ընդհատելով միշտ իրեն ամբողջ
ութեանն ու ազգութեանը մէջ մնացեր էր, և
տերութիւնը կործաներ էր ոչ էթէ բարոյական
պահասութիւններով, հապա զիպուածական և օ-
տար թշնամիէ մը, ան ասին զարմանալի չիզար-
որովհետև այսպիսի տերութիւն մը հին, մեծաշէն
ու հաստահիմն տան մը կը նմանի, որ հնութեա-
նը պատահական միասնեւրուն պատճառաւ քիչ
մը նորոգութեան կը կարօտի: Արշակունեաց տե-
րութիւնը Հայկազանց տերութեանը վրայ այնչափ
աւելի նոր կատարելութիւններ աւելցուց որ ինչ-
պէս իրեն պայծառամտալուն՝ սասանկ ալ իր թշուա-
ռութեանն ու կործանմանը պատճառ եղաւ: Հայ-
կազանցը որչափ որ քիչ գործունեաց ու առանձ-
նացած տերութիւն մըն էր, Արշակունեացն ալ
անոր հակառակը պատերազմող, աշխարհ ու գոր-
ծունեաց եղաւ. և աս բանս սկսաւ նոյն իսկ Ար-
շակունեաց տերութեան առաջին տարիները: Ար-
շակունեաց ասին Հայերը Ազգարշակայ պատճա-
ռաւ նախ վերաբերութիւն ունեցան Պարթևաց
մեծ և հզօր ազգին հետ, որով նաև Պարսից և Մա-
րաց հետ. արդէն կուսակալաց ասկնը Սելևկիա-
ցւոց պատճառաւ՝ Հայերը իրեք հարիւր տարիի
չափ Յունաց հետ ունեցեր էին՝ չէ թէ պարզ բա-
րեկամական վերաբերութիւններ, հապա անոնց
հարատեւած ալ էին. վերջը Արտաշէս Ա.ին աշ-
խարհակալութեամբը գարձեալ խիստ շատ վերա-
բերութիւններ ունեցան Յունաց հետ, որով ին-
չուան անոնց շատուածներն ալ Հայոց մեհեան
ներուն մէջը կանգնուելով՝ Հայերէն պաշտօնեցան,
յայտնի են գարձեալ Արշակունեաց Համփայե-
ցւոց հետ ունեցած վերաբերութիւնները՝ Տիգրա-

նայ ու Միհրդատայ պատերազմներուն պատճառաւ : Ասանցմով յայտնի կ'ըլլայ թէ ինչպէս Հայերը հարիւր տարուան միջոցին մէջ աշխարհքիս խիստ զօրաւոր տէրութեանց հետ վերաբերութիւններ ունեցան, որ ինչպէս մեծամեծ օգուտներու՝ նոյնպէս ալ խիստ շատ փրատներու առիթ եղաւ :

Ծաղկեալ ազգերու հետ վերաբերութիւն ունեցող ազգը բնականաբար ինքն ալ կը ծաղկի . սուրանս ահա կը տեսնուի նաև Հայոց վրայ Արշակունեաց թագաւորութեան ատենը : Արդէն յայտնի է պատմութենէն Ազգարշակայ ըրած բարեկարգութիւնն ըրել և ուսումնասիրութեամբը Հայոց ուսումնական և քաղաքական յառաջագիծութիւնը . Արշակայ, Արտաշեսի և Տիգրանայ պատերազմատէր և կոսց պաշտօնատէր բարբոթը մեհենից զարգարութիւն և պատերազմական կարգերուն առաջ երթալը . Անանիի, Սանատրիկայ, Երուանդայ և Արտաշէս երկրորդին աշխարհաշինութեամբը Հայաստանի քաղաքաց ծաղկիւնը, գեղեցիկ շինուածքներով զարգարութիւնը, որանց շինութեանը համար՝ ինչպէս պատմութենէն գիտենք՝ օտարազգի Ծարաարապետներ ու բանուորներ եկան : Ասանց նման ուրիշ գրեթէ ամէն բան որը քիչ որը շատ առաջ գնաց, որ առանց աս կարևոր հազարգակցութիւններու չէր կրնար ըլլալ : Աս տեսակ վերաբերութիւններուն ինչպէս որ օգուտները յայտնի և մեծամեծ էին՝ ասանկ ալ փրատները յայտնի և պարզ են . օտար ազգի մը հետ եղած վերաբերութիւնները կամ անոնց գերի ու հպատակ ըլլալով է, կամ պատերազմական, և կամ բարեկամական . գերութեան կամ հպատակութեան վերաբերութիւնը ժողովրդեան քաջութեան սպին կը նուազեցնէ, երկհպատակութիւնները կը շատցնէ, կուսակցութեան խանդարիչ սպին կը

մտցրնէ : Աս բանս այնչափ փնասարեր չեղաւ Հայաստանի կուսակալաց իշխանութեան ժամանակը որովհետեւ վերաբերութիւննին քիչ էր Յունաց հետ, և իշխաններէն շատը Հայ էին՝ Սեւեկիացուց մեր աշխարհքէն հետու ըլլալուն պատճառաւ : Տեա-կան պատերազմներուն ըրած փնասները յայտ են որ ժողովուրդը կ'աղքատցրնեն, տերութիւնը կը տկարացրնեն, թշնամիները կը շատցրնեն և ուրիշ շատ կերպերով փնասակար կ'ըլլան նորակիրթ ազգի մը : աս փնասներէն խիստ շատը կրեց Հայաստան Արտաշէս Ա-ին և Տիգրանայ պատերազմներովը : Բարեկամական հաղորդակցութիւնը կ'աւելցրնէ ժողովրդեան մը մէջ ան պակասութիւնները որ բարեկամ տերութիւնն ունի, թէ իրեն կառավարութեան կերպին և թէ ժողովրդեան բարբին մէջ : Աս իրեք տեսակ հաղորդակցութիւններն ալ քիչ շատ փնասարեր եղան Հայաստանի, և կերպով մը նաև իրեն վերնաշուն պատճառ : Հպատակութեան վերաբերութիւնը մեծապէս փնասեց զՀայաստան՝ Արտաշէր Սասանեանին տիրապետութեան տակնը : Իսկ պատերազմականը փնասեց Արտաշէս Ա-ին աշխարհակալութեամբը, որուն շքեղ յաղթութիւնները Հայաստանի թշնամի յարուցին բոլոր հիւսիսային ազգերը, Պարսիկներն ու Հռովմայեցուց հզօր ինքնակալութիւնը, որ Հայաստանի անկախութիւնը վերցրնելով հարկատու ըրաւ զինքը, անոր մեծնալուն և զօրանալուն բոլորովին արգելք եղաւ, ու վերջապէս ներսէն և դրսէն շատ շարիք հասուց մեր աշխարհքին : և աս փնասներս սկսան Արշակունեաց Թագաւորութեան առաջին տարիները : Հիւսիսային ազգաց և Պարսից հասուցած փնասները պատմութենէն յայանի են ամենուն, որովհետեւ ըստ Խորենացուցն « Հանուրց Հիւսիսակա-նաց վեհագոյն » էր մեր ազգը, և անոր համար ա-

նանց աչքին փուշ եղած էր Հայաստանի մեծ նայր:

Հայոց նախարարներուն ևս և ժողովրդեան բարքին աւրուելուն առաջին պատճառ եղան պատերազմները, երկրորդ պատճառ առաջինէն շատ աւելի փրատակար՝ Արտաշրին Հայաստանի տիրելը՝ ինչպէս որ վերին ալ յիշատակեցինք: Արտաշիր և իր որդին Շապուհ երեսուն տարի իշխեցին Հայաստանի, և ամէն տեսակ շարիքով լեցուցին ըզՀայաստան, այսինքն փառասիրութեամբ, հուսակցութեամբ, տիրապետցութեամբ, ու ան ամէն շարիքներով որ աշխարհք մը գերութեան տակ էինալով կ'ունենայ. և աս բաներս հաստատուած են հին և նոր ազգաց պատմութեանց անթիւ և անհամար փորձերէն, անոր համար շէնք ուզեր երկարել հաս ան շարեաց վրաց զատ զատ խօսելով. միայն ասիկայ կրնան գիտնալ ամէն ընթերցողք թէ Մերութան և Վասակ Սիւնի ուրացող ազգատեաց և փառասէր նախարարներուն ըրած անողջամտութիւններն, ինչպէս նաև ուրիշ անոնց նմանադներունը, բոլոր վերի ըսածներնուս հետևանքներն են:

Ան միջոցին որ Հայաստանի մէջ մտան գերութենէ առաջ եկած աս գարշելի և կործանիչ աստերը, ուրիշ կողմանէ Հայաստանի կործանմանը երրորդ պատճառ եղաւ՝ Հոսովմայեցւոց կայսերութեան Աստանդանուսովիս փախադրուիլը, որով մերձաւորութեան և քրիստոնէութեան պատճառաւ՝ ազգեցութիւնին մեծցաւ ու աւելցաւ Հայոց վրաց. երթեկեկութիւններուն յաճախութեամբը բարեկամութիւնն ու ընտանութիւնը շատցաւ. որով մէկ կողմանէ Յունաց պակասութիւնները մը տան Հայոց մէջ, ուրիշ կողմանէ ալ նոր նոր հուսակցութիւններ աւելնալով Յունաց կողմը, սկըտաւ ան աստն Հայաստանի համար ան սակալի

երկրաշարժը որ կամաց կամաց աւերանդներ ընկելով շատ չունցաւ բոլորովին աւերակներու առկը թաղեց զՀայաստան : Աւ սով չգիտեր ան ասանի կայսերաց թուղանորթութիւնն ու վասութիւնը, անանց արքունեաց զեղխութիւններն ու ապահանութիւնները, և ընդհանրապէս Երանաց և Հընովմայեցաց բարուց արուիլը, որով մի և նոյն պատկասութիւնները մասն Հայոց մէջն ալ. և ասով է որ մենք ալ զժբախտարար ունեցանք ան վատ, զեղի ու անպիտան թագաւորաց շարքը, որոնք մեր թշուառութիւնը բազմապատկելով մեր կործանումը երազեցին : Թագաւորաց ան աստիճանի խեղճութեանը պատճառաւ նախարարները մեծցան ու զօրացան, որով շատ անգամ թագաւորին անկարգութիւններուն ընդգիտանալով կամաց կամաց սկսան նաև օրինաւոր ու արգարացի հրամաններուն ալ դէմ ելլել. ասով գրեթէ մէյմէկ ինքնազուխ իշխաններ ձևացան. և ահա ասիկայ ալ եղաւ շորթորդ պատճառ մեր ազգին թագաւորութեանը վերնալուն : Աս ամէն շարեաց առաջը միայն գիտութիւնն ու կրթութիւնը կրնար անուշբայց որովհետև երկուքն ալ ետև մնացին, և անանց հակառակ եկամուտ արտերը զօրացան, ասով օր օրուան վրայ Հայաստանի վիճակը վատթարացաւ. ասիկայ ալ եղաւ հինգերորդ պատճառ, և կերպով մը առաջին իրին մեծութեան նայելով :

Մեզի ստոյգ և իրական տեսնուած զլիաւոր պատճառները ասանք են, որոնցմէ զատ ուրիշներ ալ կրնան գտնուիլ, որ սա զլիաւոր պատճառներէն կրնան առաջ գալ : Ուստի մեզի բոլորովին ծուռ և սխալական կը տեսնուի անանց ըսելը թէ Հայոց տէրութիւնը կործանեցաւ իրենց բնասոր անվարանութենէն, նախանձատութենէն, քրութիւններէն, մասնաւորութենէն և ուրիշ ասանց նման

ստակալի պակասութիւններէ, որոնք ըստ ինքեան հետեանք են առջի ըսած պատճառներնուս, և երկրորդաբար միայն պատճառ եղան մեր կործանմանը • անոր համար ալ հարկաւոր սեպեցինք ստակասութիւններուն ինչ բաներէ առաջ դայը բացաարել հոս, որպէս զի մեր ընթերցողներն ալ մտքերնին չգնեն թէ ստակասութիւնները բնատուր են, հապա թէ եկամուտ և պատահական ստակասութիւններ, որոնք սակն տկարացած ու անիշխանութեան մէջ մնացած ազգերու կը պատահին և կը թուեթեամբ միայն կը շահուին :

Բազրատունեաց թագաւորութեան խեղճութեանը և շուտով կործանելուն պատճառներուն վրայ աւելորդ կը համարինք առանձին խօսիլը հոս, որովհետե մի և նոյն ստակասութիւններուն զարման շտանելով, մանաւանդ թէ անոնց անելովը եղած է, մանաւանդ որ առջի թշնամիներուն վրայ ունեցաւ Հայաստան Բազրատունեաց ատենը՝ որքիչ նոր նոր ահաւոր թշնամիներ ալ, որոնց գէժ կրնար գնել միայն ան ստակասութիւններուն հակառակ կատարելութեամբը, ինչպէս որ ընդգիմացաւ ինչուան Տրդատայ ատենները ունեցած սխերիմ թշնամիներուն :

Իսկ Ռուբինեանց տերութեան այլ և այլ հանգամանացը և վերնալուն վրայ խօսիլը կերպով մը մեր խնդրէն դուրս է, որովհետե ան իշխանութիւնը Հայաստանէն դուրս ըլլալով առջիններուն շարունակութիւնը չկրնար սեպուիլ, և միշտ մասնական թագաւորութիւն մըն է : Աս յայտնի է որ իրեն պղտիկութեանն ու տկարութեանը համեմատ՝ ամենէն աւելի շատ և կատաղի թշնամիներ ունեցաւ, մանաւանդ վերջերը, որոնց գէժ այնչափ զի մանալն ալ շատ մեծ բան պիտի սեպուի, և Ռուբինեան իշխանաց անսպարտելի քաջութեանը յայտնի սպառնոյց :

Կ Ա Ր Գ

ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ԻՇԽԱՆԱՑ

Հ Ա Ց Կ Ա Ջ Ո Ւ Ն Ք

Քննչ Անշ

- 2107 Հայկ Ծ.
- 2026 Արմենիայի ԽՁ.
- 1980 Արամայիս Խ.
- 1940 Անասիա ԱԲ.
- 1908 Գեղամ Ծ.
- 1858 Հարսնա ԱԲ.
- 1827 Արամ ԾԸ.
- 1769 Արայ ԽՁ.
- 1743 Կարգուս ԺԸ.
- 1725 Անուշանի Կ.
- 1662 Պարէա Ծ.
- 1612 Արթուր Խ.
- 1568 Զանան ԱԲ.
- 1531 Փանանի Ա. ԾԳ.
- 1478 Սուր ԻԵ.
- 1433 Հանանի Ա.
- 1403 Վարդանի ԱԲ.

- 1381 Հայկակ Ա. ժԸ.
1363 Ամբակ Ա. ժԴ.
1349 Աճեակ ժԷ.
1332 Շաւարշ Ա. Զ.
1326 Կորայր ԻԴ.
1302 Վասաճ ժԴ.
1289 Կար Դ.
1285 Գուակ ժԸ.
1267 Հրանտ Ա. ԻԷ.
1242 Ընձակ ժԵ.
1227 Գզակ Լ.
1197 Հօրոյ Գ.
1194 Զարմայր ժԲ.
1180 Շաւարշ Բ. ԽԴ.
1137 Պերճ՝ Ա. ԼԵ.
1102 Արբուն ԻԷ.
1075 Պերճ՝ Բ. Խ.
1035 Բազուկ Ծ.
985 Հոյ ԽԴ.
941 Յուակ ԼԱ.
910 Ամբակ Բ. ԻԷ.
883 Կայրակ ԽԵ.
838 Փանտուազ Ա. ժԷ.
805 Փանակ Բ. Խ.
765 Սկայրզի ժԷ.
748 Պարոյր Ե.
743 Պարոյր Թաղաւոր կը պատկառի ԽԴ.
700 Հրաչեայ ԽԲ.
678 Փանտուազ Բ. ժԳ.
665 Պաճոյճ՝ ԼԵ.
630 Կանակ Ը.
622 Փուտ ժԷ.
605 Հայկակ Բ. ԼԶ.
569 Երուանդ Ա. Դ.
565 Տիգրան Ա. ԽԵ.

- 520 Վահագն ԻԵ .
493 Ասուան ժԸ .
475 'Երսեհ ԼԵ .
410 Զարեհ ԽԶ .
394 Արմեդ Թ .
385 Բայրամ ժԴ .
374 Վան Ի .
354 Վահե ԻԳ .

ՎԱՍՄԱՆԻՆ

- 325 Մինքան Ե .
319 'Եկաղաղամես Բ .
317 Ազուարդ ԼԵ .
284 Հրանտ Բ, ԽԵ .
239 Արասուաղ Ծ .
189 Արասաշա Լ .
159 Արասապց ժ .

ԱՐՇԱԿՈՒՆԻՑ

- 149 Վաղարշակ Ա, ԻԲ .
127 Արշակ Ա, ժԳ .
114 Արասէս Ա, ԻԵ .
89 Տիգրան Բ, ԾԴ .
55 Արասապց Ա, Ե .
30 Արշամ Խ .
4 Աբգար ԼԸ .
Քնէ Եպր
30 Աբգար քրիստոնեայ կ'ըլլայ .
34 Անանե Դ .
38 Սանարուկ Լ .
68 Երուանդ Բ, Ի .
88 Արասէս Բ, ԽԱ .
129 Արասապց Բ, Բ .
131 Տիգրան Ա, ԻԱ .

- 152 Տիգրան Գ. ԻԲ.
194 Վաղարշ Ի.
214 Խաթրով Ա. ԽԵ.
257 Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կը ծնանի.
259 Արտաշէ: Հայաստանի եւ տէրե՛ ԻԵ.
283 Շահաբադ Երեւան Կաթի.
286 Տրդատ Ծ.Զ.
301 Սուրբ Հովհաննէանք կը նահատակուին.
302 Տրդատ ազգովիմք կը մկրտուի ու քրիստոնէայ կ'ըլլայ.
319 Տրդատ ու սուրբ Գրիգոր Հուովմ կ'երթան.
341 Տրդատ կը մեանի.
344 Խաթրով Բ. Բ.
353 Տիրան Բ. ԺԱ.
363 Արշակ Բ. ԺԸ.
381 Պատ Գ. կամ Է.
383 Մեծն Ներսէս կ'ապանեալի.
384 Վարազդատ Բ.
386 | Արշակ Բ. Գ.
| Վաղարշակ Բ. Ա.
388 Խաթրով Գ. Գ.
392 Վասիլապուհ ԻԱ.
406 Արքայն Մեսրոպայ ձեռքովք Հայու նշանազինները կը հնարուին.
415 Շապուհ Գ.
422 Արտաշէր Զ.

Թագաւոր Վերե՛ Հայոց
Ք. Ա.

- 27 Արտաշէս ԺԱ.
16 Տիգրան փոքր ԺԸ.
2 Երուազ 00
2 Տիգրան Գ.

- Քրիստոսէ ետքը .
6 Ազրամ արծրունի ժԴ .
19 | վնան Բ .
| Արշէս Բ .
21 Ջենան Արատէս ժԷ .
38 Արշակ ութ ամիս .
38 Միհրգատ ժԶ .
55 Համարից կօթը ամիս .
55 Տիրիթ Է .
60 Տիրգան Գ .
63 Տիրիթ (վերամին) Թ .

Մ-ՐԱՂԻՆ .

- 428 Վեհփնհրշապուհ ժԴ .
442 Վասակ ժ .
451 Վարդանանք կը նահատակուին .
452 Արտրմից ժԲ .
464 Արվնասպ ժԷ .
481 Սահակ Ա, Ա .
483 Շապուհ, վեց ամիս .
484 Անդեկան, կօթը ամիս .
485 Վահան ԻԶ .
511 Վարդ Գ .
515 Բուրգան Գ .
518 ՄԺԺ Լ .
548 Գենչապուհ Գ .
552 Վ շնամահրամ Զ .
Հայոց առնարը կը նորոգուի, և անկէ կը սկսի Հայոց Թուականը 552ին .
558 Վարազդատ Զ .
564 Սուրեն Է .
571 Վարդան Է .
578 Միհրան ժԵ .
593 Սմբատ Ը .

- 601 Դաւիթ ԻԴ.
625 Վարազափրոց Է.

Կիրազազար

- 632 Դաւիթ Դ.
636 Թեոզորոս Է.
643 Վարազափրոց, ութ ամիս.
644 Սմբատ Ժ.
654 Համազասպ Ե.
659 Գրիգոր ԻԴ.
685 Աշոտ Դ.
690 Ներսէս Դ.
695 Սմբատ Թ.
743 Աշոտ ԺԵ.
760 Սահակ Բ, 2.
835 Բազարատ ԺԴ.

Ոսրիներ

- 693 Աբղղա Բ.
704 Կաշմ ԺԴ.
717 Վիլի Ժ.
727 Մահմեդ Ե.
732 Աբղղայիզ Ժ.
742 Մբուան Ա.
758 Եղիս Ա, Բ.
766 Սիւլէյման Գ.
769 Պէքիբ Թ.
778 Հասան Գ.
786 Եղիս Բ, ԺԲ.
798 Խուզիսայ Ի.
818 Հոլ ԺԵ.
848 Ապուսէթ Ա.
850 Բուզայ Ե.
855 Շիխի Դ.

Բ Ա Գ Բ Ա Տ Ո Ի Ն Ի Ք

- 859 Աշոտ Ա, ԻԶ.
885 Աշոտ Ա. Թագաւոր կը պատկուի ամիրա,
պեակն, ու Հինգ տարի կը Թագաւորէ.
890 Սմբատ Ա, ԻԳ.
908 Գագիկ Արծրունի Թագաւոր կ'ըրջայ վաս,
պուրահանի.
914 Աշոտ Բ, ԺԴ.
928 Աբաս ԻԴ.
952 Աշոտ Գ, ԻԶ.
977 Սմբատ Բ, ԺԲ.
989 Գագիկ Ա, ԻԹ.
1020 Յովհաննէս Ի.
1042 Գագիկ Բ, Գ.
1046 Բաղրատունեաց տէրութիւնը կը վերջուի.
1079 Գագիկ Բ, կ'ապաննուի.
Թագաւորութիւնի և կարգի
908 Գագիկ արծրունի ԻԹ.
921 Աշոտ Շապուհեան ԺԵ.
937 Դերենիկ Աշոտ ԺԶ.
953 Աբուսահլ ԺԹ.
962 Մուշեղ ԻԳ.
972 { Աշոտ Սահակ ԺԴ.
Գուրգէն խաչիկ ԼԲ.
Սենեքերիմ ԾԵ.
1022 Սենեքերիմ Սեբաստիա կ'անցնի.

Ռ Ո Ի Բ Ի Ն Ե Ա Ն Ք

- 1080 Ռուբէն Ա, ԺԵ.
1095 Կոստանդին Ա, Ե.
1100 Թորոս Ա, ԻԳ.
1123 Լիւն Ա, ԺԵ.

- 1144 Թարոս Բ. ԻԻ.
1168 Թովմաս պալլ Ա.
1169 Մլեհ Ե.
1174 Ռուբեն Բ. ԺԱ.
1185 Լեոն Բ. ԺԳ.
1198 Լեոն Բ. Թագաւոր կը պատկուի և կը Թա-
գաւորէ ԻԱ տարի.
1219 Չապեղ Ա.
1220 Փիլիպպոս Բ.
1224 Հեթում Ա. ԽԵ.
1269 Լեոն Գ. Ի.
1289 Հեթում Բ. Գ.
1293 Թարոս Գ. Բ.
1296 Սեբաստ Բ.
1298 Կասաանդին Բ. Բ.
1300 Հեթում Բ. վերստին Ե.
1305 Լեոն Դ. Գ.
1308 Օշին ԺԲ.
1320 Լեոն Ե. ԻԲ.
1342 Կասաանդին Գ. Ա.
1343 Գաբասն Բ.
1345 Կասաանդին Դ. ԺԱ.
1365 Լեոն Չ. ԺԱ.



1380 Թովմաս Ե. ԺԲ.
1385 Թովմաս Զ. Ե.
1400 Թովմաս Զ. ԺԳ.
1450 Թովմաս Զ. ԺԴ.

ՑԱՆԿ

Մ Ա Ս Ն Ա

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԳՅՍ	Ա .	Հայկէն սկսեալ ինչուան Արամ	9
ԳՅՍ	Բ .	Արամէն ինչուան Պարոյր	13
ԳՅՍ	Գ .	Պարոյրէն ինչուան Հայկազանց թա- գաւորութե կարծանկը . և կա- սակալաց իշխանութիւնը	17

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

ԳՅՍ	Դ .	Արշակէն սկսեալ ինչուան Արտա- ւազց Ա	22
ԳՅՍ	Ե .	Արտաւազց Ա . Արշամ և Արգաթ	28
ԳՅՍ	Զ .	Անանէ , Սանատրուկ , և Երուանդ	32
ԳՅՍ	Է .	Արտաշէս երկրորդէն ինչուան Տրք- գաս	35
ԳՅՍ	Ը .	Տրգաս և Խոսրով Բ	39
ԳՅՍ	Թ .	Տիրան և Արշակ	43
ԳՅՍ	Ժ .	Պասյ և Վարապղաս	47
ԳՅՍ	ԺԵ .	Խոսրով Գ . Վաստէապուհ և Ար- տաշէս Գ	50

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿԸ

ԳՅՍ	ԺԲ .	Վէհմիհրապուհ և Վարդանանց պատերազմը	55
ԳՅՍ	ԺԳ .	Արործիկոյ և Արովնասայ և Վա-	

	Հանոց ըրած պատերազմները	60
ԳՆՍ ԺԴ .	Վարդէն ինչուան Սմբատին Վիւրապազաաութիւնը	65
ԳՆՍ ԺԵ .	Սմբատ Վիւրապազաաէն ինչուան Բաղրատունեաց թագաւորութեան կանգնուիլը	70

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԳՆՍ ԺԶ .	Աշոտ Ա. և Սմբատ Ա.	75
ԳՆՍ ԺԷ .	Աշոտ Բ. Երկաթ և Աբաս	79
ԳՆՍ ԺԸ .	Արծրունեաց կամ Վասպուրական աշխարհին թագաւորութիւնը : Աշոտ Ոգորեւած ու Սմատ Բ.	82
ԳՆՍ ԺԹ .	Գաղիկ Ա. և Յովհաննէս Սմբատ	85
ԳՆՍ Ի .	Գաղիկ Բ. և Բաղրատունեաց թագաւորութեան կործանիլը	87

ԻՐԽԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

ԳՆՍ ԻԱ .	Ռուբէն Ա. Կոստանդին Ա. Թորոս Ա. Լեան Ա. Թորոս Բ. Մլէհ և Ռուբէն Բ.	93
ԳՆՍ ԻԲ .	Լեան Բ. Փիլիպպոս ու Հեթում Ա. Լեան Գ.	97
ԳՆՍ ԻԳ .	Հեթում Բ.էն ինչուան Ռուբինեանց թագաւորութեան կործանիլը	100
ԳՆՍ ԻԴ .	Ռուբինեանց աւերութեան կործանելէն ինչուան մեր աստեմի եղած գիպուածները	105

Մ Ա Ս Ն Բ .

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԴԱՍ	Ե . Մեր ազգին սկիզբը . Հայկայ ապրատամբութիւնը , Բելայ հետ ըրած պատերազմը , և իրեն կատարելութիւններն ու մահը	109
ԴԱՍ	Բ . Հայկայ յաջորդները ինչուան Արամ	113
ԴԱՍ	Գ . Արամ և իրեն քաջութիւնները	115
ԴԱՍ	Դ . Արային Շամիրամայ հետ ըրած պատերազմը , ու Շամիրամայ դործքերը	119
ԴԱՍ	Ե . Պարեաէն սկսեալ ինչուան մեծն Տիգրան	124
ԴԲՍ	Զ . Մեծն Տիգրան ու իրեն քաջութիւնները	128
ԴԱՍ	Է . Վահագն ու անոր յաջորդները :— Հայկազանց թագաւորութեան վերջանալը	133

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

ԴԱՍ	Ը . Արշակունեաց թագաւորութեան սկիզբը :— Վաղարշակ , Արշակ Ա	136
ԴԱՍ	Թ . Արտաշէս Ա	141
ԴԱՍ	Ճ . Տիգրան Բ . և իրեն քաջութիւնները	144
ԴԱՍ	ՃԱ . Արտաւազդ Ա . ու Արշամ	152
ԴԱՍ	ՃԲ . Արշամ , և Արգարու դործքերը	154
ԴԱՍ	ՃԳ . Անանէ , Սանատրուկ , Երուանդ և Արտաշէս Բ	160
ԴԱՍ	ՃԴ . Թագաւորը վերին Հայոց	170

ԴՅՍ ԺԵ .	Արաւաւազց Բ . Տիգրան Ա . Տիգրան Գ . և Վաղարշ	173
ԴՅՍ ԺԶ .	Խոսրով Ա	176
ԴՅՍ ԺԷ .	Տրդատայ քաջու թիւնները ու թագաւորելը	180
ԴՅՍ ԺԸ .	Խոսրով Բ . Տիրան . Արշակ Բ	188
ԴՅՍ ԺԹ .	Մերուժան Արծրունիին ըրած անղգամու թիւններն ու մահը , Պատայ և Վարազդատայ թագաւորելը	197
ԴՅՍ Ի .	Արշակ Գ . Վաղարշակ Բ . Խոսրով Գ . Վասնշապուհ	202

ԻՇԻԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԶՊԱՆԱՅ

ԴՅՍ ԻԵ .	Վէհժիհրշապուհ առաջին Մարգարան, և Վարդանանց պատերազմը	211
ԴՅՍ ԻԲ .	Ատրվնասապայ մարզպանու թիւնը և Վահանայ պատերազմը	218
ԴՅՍ ԻԳ .	Վահանայ մեռնելէն ինչուան Հագարացոց Հայաստանի տիրելը	223
ԴՅՍ ԻԴ .	Հագարացոց Հայաստանի տիրելէն ինչուան Բաղրատունեաց թագաւորութեան սկիզբը	230

ԻՇԻԱՆՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ

ԴՅՍ ԻԵ .	Բաղրատունեաց թագաւորութիւն սկիզբը	236
ԴՅՍ ԻԶ .	Սմբատ Ա . իրեն ասենի խոսվու թիւններն ու մահը	239
ԴՅՍ ԻԷ .	Աշոտ Բ . Երկաթ , ու իր քաջու թիւնները	246
ԴՅՍ ԻԸ .	Սմբատ Բ . Են ինչուան Բաղրատունեաց վերջանալը	252

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՒՆԵԱՆՑ


ԳՅԱ ԻԹ.	Ռոսբինեանց թագաւորութեան սկիզբը: Թորոս Ա. իշխանին քաղութիւնները	271
ԳՅԱ Լ.	Թորոս Բ. իշխանին քաղութիւնները, Մլեհ ու Ռուբին Բ.	278
ԳՅԱ ԼԱ.	Լեոն Բ. իշխանին քաղութիւններն ու թագաւորեցը, և ինչուան Հեթում Ա.	283
ԳՅԱ ԼԲ.	Լեոն Գ. ու Հեթում Բ.	292
ԳՅԱ ԼԳ.	Օշին ու Լեոն Ե.	298
ԳՅԱ ԼԴ.	Յովհաննէս Պայլէն ինչուան Ռոսբինեանց թագաւորութեան վերջանալը	303
ՅՅԻԵԼՈՒԾԸ.	— Հայոց անիշխանութեան ժամանակի ընդհանուր վիճակը. Համառոտ խորհրդածութիւն Հայոց պատմութեան այլ և այլ մասերուն վրայ	309 317

3/11/1890

111 St. Margaret St. Glasgow
 1/12/90
 1/12/90
 1/12/90
 1/12/90

1/12/90
 1/12/90

1/12/90
 1/12/90
 1/12/90
 1/12/90



30n

2782

9010

